ՀԱՅԿԱԶԵՆ ՀԱՅՊԻՏԱԿԱՆ ՀԱՐԱՑ

ՊԷՅՐՈՒԹ, 1974

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳՈՒԼԷՃԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲՒՈՆԻ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՒԱՔ

ՀԱՏՈՐ Ե.

Խմբագիր
ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ

ՊԷՅՐՈՒԹ, 1974

PUBLISHED BY THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN COLLEGE

HAIGAZIAN

ARMENOLOGICAL REVIEW

VOLUME 5

EDITOR
YERVANT H. KASSOUNY

BEIRUT, 1974

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍի հինգերորդ հատորը հրատարակութեան յանձնելով, հինգամեակ մը պատուով բոլորած ըլլալու ուրախութիւնը կ'ապրինք այսօր: Հաւատով սկսուած գործ մըն էր այս, զոր կը շարունակենք, հաւատալով մեր առաջադրանքներուն՝ նման հանդէսի մը գոյութեան անհրաժեշտութեան, ու զայն հայագիտութեան տարբեր բնագաւառներով պարապող մեր մտաւորականներուն ժամադրավայրը դարձնելու իրաւութեան ու կարելիութեան:

Այս առիթով պարտք կը զգանք մեր անխառն շնորհակալութիւնը յայտնելու հայրենիքի ու սփիւռքի բոլոր այն մտաւորականներուն, եւ դեռ բոլոր անոնց, որոնք իրենց սիրայօժար ու թանկագին աշխատակցութեամբ, բարոյական ու գործնական աջակցութեամբ հնարաւոր դարձուցին ՀԱՆԴԷՍի գոյատեւումը: Շնորհակալութիւն նաեւ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէին, որուն բարեացակամ ուշադրութեան շնորհիւ, հնարաւոր դարձաւ ՀԱՆԴԷՍի մէջ հիւրընկալել հայրենի ծանօթ մտաւորականներու աշխատասիրութիւնները: Շնորհակալութիւն նաեւ սփիւռքահայ ու հայրենի մամուլին, որ անհնախապաշար ոգիով իր ուշադրութեան ու գուրգուրանքին առարկան դարձուց ՀԱՆԴԷՍը:

Հաւատով ու հաւատարմութեամբ կը շարունակենք մեր առաքելութիւնը, ու կը պահենք մեր խոստումը: ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍի էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք գիտեն գիտական հիմքերու վրայ հետեւած եւ առարկայօրէն ներկայացուած խօսքին արժէքը:

ԽՄԲ.

Հայկական հարցի հոլովոյթը 1921 թ.ի Լոնտոնի եւ Մոսկուայի խորհրդաժողովներուն

ԶԱՒԷՆ ՄՍԵՐԼԵԱՆ

1920 թ.ի երկրորդ կիսուն քաղաքական իրադարձութիւնները իրար յաջորդեցին Հայաստանի մէջ։ Այսպէս, մինչ Հայաստանի Հանրապետութիւնը կը բանակցէր Սովետական Ռուսիոյ հետ, 10 Օգոստոսի 1920 թ.ին Անդանդի պետութիւնները կը պարտադրէին Սեւրի դաշնագիրը Օսմանեան Թուրքիոյ, որով Թուղթի վրայ Արեւմտեան Հայաստանի մէկ կարեւոր մասին հայապատկան ըլլալը կը հռչակուէր։ Դաշնագրի ստորագրութենէն առաջ իսկ Անդանդի պետութիւնները պիտի չկարենային պիտի չըլլար այդ դաշնագրի պայմաններու իրագործումը, բացի եթէ զէնքի ուժով ուզէին այդ ընել։ Իսկ զինեալ ուժի գործածութեան դէմ էին, ու նոյնիսկ իրենցմէ քեմալականները սիրաչահիլ ուզողներ կային։ Այլապէս պատերազմները օգոստոսին, 23 Սեպտեմբերին, Քեազիմ Քարապեքիրի գլխաւորած 30,000 հոգինոց միլլիական բանակը կը յարձակէր Հայաստանի Հանրապետութեան դէմ։ Յաջորդաբար Թուրքերու ձեռքը կ'իյնային Սարըղամիշ, Կաղզուան, Կարս, եւ զինադուլի պայմաններու համաձայն՝ Ալեքսանդրապոլ քաղաքը։ Հայաստանի Հանրապետութեան քաղաքական վերջին աքսը կ'ըլլար Ալեքսանդրապոլի դաշնագրի ստորագրութիւնը, Երեւանի մէջ Մօրհրդային իշխանութեան հաստատութենէն ետք։ Ըստ դաշնագրին, Թուրքիոյ զինուորական գրաւման ենթակայ Կարսի նահանգը եւ Սուրմալուն վիճելի կը համարուէին մինչեւ երեք տարի, որուն ընթացքին պէտք էր հանրաքուէ կատարել (յոդ-

ուած 2), իսկ հայերը կը հրաժարէին Սեւրի դաշնագրէն (յօդուած 3)։

Այս բախտորոշ չրջանին երբ Հայաստան ճակատագրական օրեր կ'ապրէր, Անդանդի պետութիւնները հայկական հարցին կը մօտենային ոչ դարձնական աչակցութիւն բերելու, այլ՝ «ջուր ծեծելու» ձեւով։ 1920 թ.ի 26 Նոյեմբերէն 4 Դեկտեմբեր, Լոնտոնի մէջ կը կայանար բրիտանական, ֆրանսական եւ իտալական կառավարութիւններու ներկայացուցիչներու երկրորդ խորհրդակցական ժողովը։ Այս ժողովի 3 Դեկտեմբերի նիստին, երբ արդէն Հայաստան Ալեքսանդրապոլի դաշնագրով նուաստացած էր, սոյն դաշնակից պետութիւնները կ'ընդդիմանային Հայաստանի Ազգերու Լիկայի մէջ ընդունուելուն, հետեւեալ պատճառներով.

«Ա. Սեւրի պայմանագրի 88–րդ յօդուածէն բխող իրաւական դժուարութիւններէ պատճառով.

«Բ. Քանի որ Հայաստանի սահմանները դեռեւս որոշուած չեն»(1)։

Նորահաստատ Խորհրդային Հայաստանի Յեղափոխական Կոմիտէն իր 29 Նոյեմբերի 1920 թ.ի յայտարարութեամբ յայտ կը կապէր որ «իմպերիալիստական լծէն ազատագրուող ժողովրդական Տաճկաստանը (Թուրքիան) մեզ եւս իր հետ Սեւրի դաշնագրի հակառակորդ համարելով, մեզ եղբայրական ձեռք է մեկնելու այժմ...»(2)։ Հայ Յեղկոմը յայտ ունէր որ Թուրքիան հոգային հարցով զիջումներ ընէր նոր վարչաձեւի տիրացած Հայաստանին։ Այս լաւատես մօտեցումը ապագայնամոլ, չարդարար ու բռնագրաւիչ քեմալականներուն հանդէպ կու գար այն համոզումէն թէ «արեւելքը յեղափոխականացնող «աշխատաւոր Թուրքիան» Խորհրդային Հայաստանին բարեացակամութեամբ պիտի մօտենար։ Խորհրդահայ վարիչները չատ չուտով յուսախաբ կ'ըլլային։ Խորհրդային Հայաստանը նոր խորհրդաժողով հրաւիրելու եւ հայ–թրքական յարաբերութիւնները կարգաւորելու վերաբերեալ Յեղկոմի պահանջքը Թուրքիոյ դիւանագիտօրէն կը մերժէին, պատասխանելով թէ մօտ ապագային Թուրքիա Խորհրդային Ռուսիոյ եւ Հայաստանի ներկայացուցիչներուն հետ քննութեան կ'առնէ «Կովկասեան խնդիրներն ընդհանրապէս»։ Խոր-

---

1· Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում (1828–1923), խմբագրութեամբ Պրոֆ. Տ. Ս. Կիրակոսեանի, Երեւան, 1972, էջ 689։ (Յետ այսու՝ Հայաստանը Փաստաթղթերում)։

2· Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ Յեղափոխութեան եւ Սովետական Իշխանութեան Ցաղթանակը Հայաստանում, Երեւան, 1960, էջ 405։

Հրդեհային Հայաստանի վարիչներու առաջնահերթ չանքերէն մին կ'ըլլար Ալեքսանդրապոլի դաշնագրի վերացման համար աշխատիլ։ 5 Դեկտեմբերի 1921 թ.ին Հայ Յեղկոմի նախագահ Սարգիս Կասեանը(3) եւ Հայաստանի մէջ Սովետական Ռուսիոյ ներկայացուցիչ Լեկրանը Թուրքիոյ մօտ Սով. Ռուսիոյ լիազօր ներկայացուցիչ Մդիվանիին կը հեռագրէին որ պնդէ Սով. Ռուսիոյ միջնորդութեան ճանաչման անհրաժեշտութեան Ալեքսանդրապոլի դաշնագրի վերացման եւ Յեղկոմի պատուիրակութեան հետ նոր բանակցութիւններու անհրաժեշտութեան վրայ(4)։

Հոկտեմբերի Հայաստանի կառավարութիւնը 10 Դեկտեմբերի 1920 թ.ին յատուկ յուշագրով, հասցէագրուած՝ քեմալական արտաքին գործոց նախարար Ահմէտ Մուխթարին (եւ պատճէնը ուղարկուած Արեւելեան ռազմաճակատի հրամանատար Քեազիմ Քարապեքիրին և Ալեքսանդրապոլի ՌՍՖՍՀ–ի ներկայացուցիչին) կը յայտնէր թէ կը սպասէ որ Թուրքիան չեղեալ համարէ Ալեքսանդրապոլի դաշնագիրը, նպատակ ունենալով մօտ ապագային մէջ երկու ժողովուրդներու միջեւ նոր յարաբերութիւններ հաստատել եւ հնարաւորութիւն տալ երկու ժողովուրդներու խաղաղ աշխատանք սկսելու, կ'առաջարկէ նաեւ չատով խորհրդաժողով հրաւիրել՝ յեղափոխական յեղաշրջման նոր պայմաններէ բխող համաձայնութեան գալու համար(5)։

Հոկտեմբերի Հայաստանի կառավարութիւնը գործնական քայլերու ալ կը դիմէր։ Զիչերինի ուղղուած Լենինի 14 Դեկտեմբերի 1920 թուակիր մէկ նամակէն կը հասկցուի որ 13 Դեկտեմբերի 1920 թ.ին Սահակ Տէր Գաբրիէլեանը Լենինի մօտ կը ներկայանայ եւ կը յայտնէ թէ «կոտորածի ահեղ վտանգ» կայ եւ «(Ա.) թէ 600,000 հայ գաղթականներ են գոհւում։ (Բ) թէ առանց կարսի բաքուն վտանգի մէջ է»։

Լենին, որ որոշ յոյսեր կապած էր քեմալական ազգայնական չարժումին՝ իբր յեղափոխական չարժումի մը, 14 Դեկտեմբերին կը

3· Սարգիս Կասեան բեմալականներու մասին հետեւեալը գրած է· «Մուստաֆա–Քեմալեան շարժումը, որին բեմալականները անուանում են «ազգային»... ըա տանիկ պորտաբոյծ փաշաների, տգրուկ պաշտօնեաների եւ զանազան բալանչիների ձգտումն է պահպանել իրենց անբաժան գերիշխանութիւնը այսպէս կոչուած Տաճկաստանում, նրանց շարժումն է դէպի Անդրկովկաս» (Ս· Կասեան, *Ընտիր երկեր*, Երեւան, 1967, էջ 153։)

4· Է· Ա· Զոհրաբեան, *Հայ–Թուրքական յարաբերութիւնների պատմութիւնից* (1920 թ· Նոյեմբեր – 1921 թ· Փետրուար), «Լրաբեր Հասարակական Գիտութիւնների», Երեւան, 1971, թիւ 10 (346), էջ 16։

5· *Հայաստանը փաստաթղթերում*, էջ 466։

դրկ Չիչերինի. «Հարկաւոր է, ըստ իս, անջատել (Ա.)–ը (Բ)–էց, եւ ամէն կերպ օդնել (Ա.)–ուն»(6): Այլ խօսքով՝ Սովետական Ռուսիան կարսի համար Թուրքիոյ վրայ պօռաւոր ճնշում պիտի չբանեցնէր, ոչ ալ պատերազմէր:

Սովետական Ռուսիոյ կառավարութեան այս դիրքը աւելի կը պարզարանուէր Յարհրդային Հայաստանի պետական իշխանութիւններուն, երբ Յարհրդային Հայաստանի արտաքին գործոց նախարար Ալէքսանդր Բեկզատեան 26 Դեկտեմբերի 1920 թ.ին հեռաձայնային խօսակցութիւն կ'ունենար Մոսկուայէն նոր վերադարձած Հայկական ՍՍՀ գնկավարներէն Ասքանազ Մռամեանի եւ Ալրպէկեանի մօտ հայկական պետանպիտական ներկայացուցիչ՝ Ամթարեկովի հետ: Սոյն խօսակցութիւնը ըստ երեւոյթին լրտեսուած է Անդրկովկասի մէջ բրիտանական ներկայացուցիչ՝ Գնդապետ Թեդակալ Սթօքսի միջոցով, եւ 2 Փետրուարի 1921 թ.ին Լոնտոն՝ Ֆորէյն Օֆիս եւ կ. Պոլսոյ բրիտանական բարձր պոմիսերութեան «գաղտնի» մակագրութեամբ փոխանցուած(7):

Խօսակցութեան ընթացքին Մռամեան կը յայտնէ թէ այցելած են Լենինի, Թրոցքիի, Չիչերինի եւ Գարախանի, բայց չեն կրցած տեսնել Ստալինը, որ հիւանդ էր: Լենին իրենց յայտնած է որ «Ազգային կառավարութեան ընկերային կարեւորութիւնը կ'ըմբռնէ եւ համաձայն է որ այս ոյժը կոմունիզմի թշնամի է, բայց թէ համոզուած է թէ թրքական գիւղացիութեան մօտ անհանդարտութիւն մը կայ եւ իրը վտանգ կը նչէ Գոնիայի բոլշեւիկեան ապստամբութիւնը: Իր կարծիքով եթէ կարմիր բանակէ մխաւորներ թրքական բանակին հետ չմման պան, այս վերջիններուն ի վնաս պիտի ըլլայ»: Ապա՝ Մռամեան կը յայտնէ թէ մեր բոլոր յոյսակ եւ մեկին ժխտումներուն, թէ այս կարելի չէ ակնկալել, Լենին կը յայտնէր թէ «ինք այլապէս կը խորհի», աւելցնելով թէ «հասկցէք ընկերներ, նոյնիսկ եթէ այս չըլլար պարագան, այս պահուս Ռուսիան չ'ուզեր եւ չի կրնար կըռուէլ, մանաւանդ կարսի վրայ»: Մռամեան կ'աւելցնէ թէ Լենին կարսը թրքական քաղաք կը նկատէ: Մռամեան կը յայտնէ թէ երբ չեչանեցինք հայ ժողովուրդի սարսափելի կացութիւնը եւ որ հայ աշխատաւոր դասակարգին առջեւ կոմունիստ կուսակցութիւնը կրնայ վարկաբեկուիլ, Լենին կը յայտնէ թէ պատրաստ է աւտր, ու կ'աւելցնէ թէ ժամանակաւորապէս պարտաւորուած ենք զոհելու հայ աշ-

---

6. Նոյնը, էջ 468:

7. Traslations of crown-copyright records in the Public Record Office, London, appears by permission of the controller of H. M. Stationery Office, F. O. 371/6266 E 2303.

խոտաւոր դասակարգերու չահերը «Համաչխարհային Յեղափոխութեան» չահերուն(8)։

Մինչ այդ Թուրքերը Հայկական ՍՍՀ-ի 10 Դեկտեմբերի 1920 թ-ի յուշագիրը ստանալէ ետք մտահոգ էին թէ որքանով Մոսկուա թիկունք պիտի կանգնէր Նորահաստատ Սովետական Հայաստանի այս ծրագրին։ Ուստի՝ 15 Դեկտեմբերի 1920 թ-ին, Ահմէտ Մուխթար, Զիչերինին յղած իր հեռագրին մէջ կը հարցնէր. «Երեւանում սովետական իշխանութեան հաստատումից յետոյ Մոսկուայում ինչպիսի՞ քաղաքականութիւն են ուզում վարել հայկական հարցի վերաբերեալ»։ Ապա կը յայտնէր թէ Ալեքսանդրապոլի դաշնագիրը բռնի հաչտութիւն չէր, այլ հիմնուած «ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի վրայ», ապա՝ իր բուն մտահոգութիւնը կը պարզէր. «Մեզ լուրեր են հասնում, թէ Հայաստանում կարգերի փոփոխման հետեւանքով, որը ամենայն հաւանականութեամբ ժամանակաւոր է, Դուք ցանկանում էք վերանայել վերոյիշեալ պայմանագիրը եւ Հայաստանին վերադարձնել թուրք բնակչութեամբ տերիտորիաները, որի համար այդ որոշումը մօտ ապագայում բնաջնջման նախերգանք կը հանդիսանայ»(9)։

Զիչերին իր պատասխանին մէջ ի միջի այլոց կ'ըսէր. «Սովետական կառավարութիւնը հաստատ համոզուած է, որ Հայաստանի նոր սովետական կառավարութիւնը... արմատապէս փոխել է իր քաղաքականութիւնը Հայաստանի մուսուլման բնակչութեան նկատմամբ... Ռուսաստանի կառավարութիւնը նմանապէս հաստատ համոզուած է, որ թուրք ժողովուրդը եւ թուրքական կառավարութիւնը Հայաստանի սովետական կառավարութեանն ու բանուորներին եւ գիւղացիներին կը դիտեն որպէս բարեկամ կառավարութիւն ու բարեկամ ժողովուրդ եւ որպէս նրանց ու սովետական հանրապետութիւնների նկատմամբ բարի զգացմունքների վկայութիւն, անհրաժեշտ միջոցներ կը ձեռնարկեն որպէսզի թուրքական բանակը անյապաղ մաքրի Ալեքսանդրապոլի օկրուգը (մարզը) եւ Կարսի օկրուգից հիւսիս ու արեւելք ընկած չրջանները, որոնց օկուպացիան (գրաւման տակ պահուիլը), սակայն, մեր կարծիքով չպէտք է կանխորոշի հայ-թուրքական սահմանը»(10)։

Քեմալական Թուրքիոյ ղեկավարները այնքան ալ նպաստաւոր չէին գտած Զիչերինի այս պատասխանը, եւ ըստ երեւոյթին անտեղ-

---

8. Նոյնը։

9. Էդ. Զոհրաբեան, *Մոսկուայի Ռուս-Թուրքական կոնֆերանսի Նախօրէին*, «Քաղաքեր Երեւանի Համալսարանի», Երեւան, 1971, թիւ 3 (15), էջ 165։

10. Նոյնը, էջ 165-166։

եակ Սովետական Ռուսիոյ Կարսի հարցով դիջումի քաղաքականութեան, ու մտահոգ իրենց արեւելեան սահմաններու հարցով, վարպետ, երկդիմի քաղաքականութեան մը կը դիմէին: Այսինքն՝ կը մտենային Անդանդի պետութեանց եւ Սովետական Ռուսիոյ եւ իւրաքանչիւրին՝ թուրքերու յատուկ կեղծաւոր դիւանագիտութեամբ վախ կու տային միւս կողմին քաղաքական բարեկամ ըլլալու, որպէսզի առաւելագոյն կերպով օգտուէին իրենց ազգայնական նպատակներու իրականացման մէջ:

Այդպէս, Անդանդի պետութիւնները իւրաքանչիւրը իր չահուն հետամուտ, իրարու հետ դժուարութիւն ունէին համաձայն ըլլալու Թուրքիոյ վերաբերող հարցերուն մէջ: Թուրքերը հոս եւս կրցան այս տարբերութիւններէն օգտուիլ: Անդանդի պետութիւնները այլազան նկատումներով կ'ուզէին՝ Օգոստոս 1920 թ.ին, դեռ վեց ամիս առաջ ստորագրուած Սեւրի դաշնագիրը վերատեսութեան ենթարկել: Այս առհանդերձ իւրաքանչիւրի չարժառիթը տարբեր էր: Անգլիան թէեւ համաձայն էր, սակայն կ'ուզէր որ այդ վերանայումը ուշանայ, քանի կը կարծէր թէ ժամանակը, որ կը ծանրացնէր Թուրքիոյ տնտեսական դրութիւնը, կ'աշխատէր ի նպաստ Անգլիոյ: Այս տեսակէտը արտայայտած էր վարչապետ Լոյտ Ճորճ 22 Դեկտեմբերի 1920 թ.ին, Անգլիոյ խորհրդարանին մէջ(11): Ֆրանսան կ'ուզէր իր դրաւած տարածքային հողերը պահելով հանդերձ համաձայնիլ քեմալականներուն հետ իր այլազան չահերը պահպանելու մտօք: Անգլիան եւ Ֆրանսան հակասական դիրքերու վրայ գտնուելով հանդերձ հետամուտ էին մէկ կողմէ Սովետական Ռուսիոյ հետ քեմալական Թուրքիոյ քաղաքական դարձակցութեան կանխումը ապահովելու, եւ միւս կողմէ կ'ուզէին Սովետական Ռուսիան պատնիշել հարաւային կողմէն(12):

Քեմալական Թուրքերն ալ դիտակցելով իրերու այս վիճակին, Սովետական Ռուսիոյ բարեկամութիւն կը կեղծէին իրենց չարժումը ազգային–ազատագրական, հակա–սուլթանական, հակա–իմպերիալիստական, յեղափոխական ձեւացնելով, ու հուսկ՝ կոմունիստներուն եւ աշխատաւոր ու դիւղացի զանգուածներուն բարեկամ ներկայանալով ձգտելով կը ջանային իրենց դուռ ազգայնական ու փոքրամասնութիւններու նկատմամբ ցեղասպան քաղաքականութիւնը: Միաժամանակ, Անդանդի պետութիւններուն ներքին հակամարտութիւնները եւ չահերու տարբերութիւնները չահագործելով, ասոնց կը ներկայանային իբր բոլշեւիզմի դէմ պատուար: Իրենց այս երկդիմի քաղաքականութեան նպատակն էր, բացի արաբական երկիրներու կորուստէն,

---

11· Նոյնը, էջ 168:

12· Նոյնը:

պահել Օսմանեան կայսրութեան մնացեալ մասը, այսինքն՝ ոչ միայն Թուրքերէն բնակուած, այլ հայերէ, քիւրտերէ, լազերէ եւայլ ժողովուրդներէ բնակուած մասերը: Իսկ ամէն անգամ որ կողմերէն մին կասկածէր, Անգարան կ'անդիմանար եզածը, յայտնելով որ Անգարան տեղեակ չէր, կամ՝ եզածը անհատական նախաձեռնութեան արդիւնք, կամ՝ անհատական կարծիք էր, եւ թէ Անգարան այդ տեսակէտը կամ համաձայնութիւնը չէր բաժնեը:

Այլեւայլ պարագաներ, ինչպէս Վենիզելոսի կառավարութեան անկումը, Իւնէօնիի մօտ Թուրքերու արձանագրած յաջողութիւնը յոյներու վրայ, եւ սովետա-թրքական խորհրդաժողովի մը ի մօտոյ կայացման կարելիութիւնը, ի վերջոյ ստիպեցին Անգլիան միանալու Ֆրանսայի եւ Իտալիոյ, Սեւրի դաշնագիրը վերանայելու պնդումնեբուն: Ուստի Փարիզի մէջ 24–էն 29 Յունուարի 1921 թ.ին կայացած խորհրդաժողովին Լորտ Քըրզոնը Ֆրանսացի Պրիանին եւ իտալացի Սֆորցային կը տեղեկացնէր թէ Անգլիան համաձայն էր փետրուարի ընթացքին Լոնտոնի մէջ խորհրդաժողով կայացնելու: Այս խորհրդաժողովին պիտի հրաւիրուէին նաեւ Յունաստանի եւ Թուրքիոյ դոյդ կառավարութիւններու ներկայացուցիչները(13):

Հայկական հարցը արդէն իսկ երկրորդական հարցի տեղ դըրուած էր: Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան արխիւներուն մէջ գտնուող 18 Յունուարի 1921 թուակիր տեղեկագիր մը, ԱՄՆ–ի պետական քարտուղարութենէն Նորմըն Տէյվիսի կողմէ ղրուած՝ ուղղուած Փոլ Հայմանզի, որ նախագահն էր Ազգերու Լիկայի ընկերակցութեան, այդ մասին հետեւեալը կ'ըսէր. «Այնպէս կ'երեւի թէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ նեղութեան անմիջական պատճառն է Սեւրի դաշնագիրը: Ցիրաւի, այս դժուար հարց մըն էր, բայց դաշնագիրը դաշնակից ուժերուն կողմէ պատրաստուեցաւ եւ նեղութիւնը ծագած է այս դաշնագրին կարգ մը հատուածներու կողմէ չընդունելու ձախողութենէն եւ դաշնակիցներու զայն չպարտադրելէն(14):

Կ. Պոլսոյ բրիտանական բարձր դոմիսէր Հորաց Ռամպոլտը 29 Յունուարի 1921 թուակիր տեղեկագիր մը ղրկած է Լորտ Քըրզոնին, 21 Փետրուարի 1929 թ.ին Լոնտոնի մէջ կայանալիք խորհրդաժողովին առիթով օսմանեան արտաքին գործոց նախարար Սեֆա Պէյին հետ ունեցած իր զրոյցին մասին, Սեւրի դաշնագրի վերանայման հարցով: Ինչ կը վերաբերի հայկական սահմանագծին, օսմանեան արտաքին գործոց նախարարը կը յայտնէ թէ «պատրաստ է ընդունելու,

13. Նոյնը, էջ 169:

14. F. O. 371/6266.

որ ամէն մի չրջան, որը 55% կամ աւելի հայեր կը պարունակի, պէտք է յանձնուի Հայաստանին: Որպէսզի դիմագրաւի այն քննադատութիւնը, որ Թուրքերը սեփական դործողութիւններով (այսինքն ջարդերով) կանխամտածուած կերպով պակասեցրել են հայ ազգաբնակչութիւնը տարբեր չրջաններում, նա պատրաստ է հիմք ընդունելու այդ չրջանների բնակչութեան նախապատերազմեան վիճակագրութիւնը», (այսինքն Օսմանեան վիճակագրութիւնը, որ հայերու ճշդրիտ թիւը չէր ներկայացներ): Գալով նաւահանգիստի հարցին, կը խոստանայ Սեւ ծովի որեւէ նաւահանգիստ տանող երկաթուղի մը չէգոքացնել, եւ դիւրութիւններ տալ հայկական առեւտուրին(15):

Անդանդի պետութիւններուն այս դիրքաւորման ի տես Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը ձեռնածալ չէր մնար, մանաւանդ լոյս ճօրճի յայտարարութիւններէն ետք, թէ՝ «Ռուս-Թուրքական դաշինքը հակաբնական դաշինք է» իսկ «խղումը բոլշեւիկների և քեմալականների միջեւ ժամանակի հարց է»(16): 4 Փետրուարի 1921 թ.ին Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը յուշագիրով անդլիական կառավարութեան կը դրկէր. «Մենք Բրիտանիան ձգտում է, թէեւ առանց յաջողութեան, խանդարել բարեկամական յարաբերութիւնները Հաստատմանը Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ եւ Թուրքական ազգային չարժումն ուղղել սովետական հանրապետութիւններին թշնամական ուղու վրայ»(17):

14 Դեկտեմբերին Անգարայէն դէպի Մոսկուա ճամբայ ելած քեմալական պատուիրակութիւնը 15 Յունուարի 1921 թ.ին Կարս էր, սակայն Կարսէն չէր չարժած մինչեւ որ ՌՍՖՍՀ-ի Կարսի մէջ լիազօր ներկայացուցիչ Բուդու Մդիվանիի հետ քեմալականներու յարաբերութիւնները յաջողութեամբ պսակուած էին(18): Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմէտ Մուխթարը 30 Յունուարի 1921 թ.ին յուշագիրով մը Չիչերինին կը տեղեկացնէր. «Շտապում եմ Ձեզ տեղեակ պահել, որ այդ նամակում (կ'ակնարկէ Մդիվանիի Մոսկուայի մօտ քեմալական դեսպան Ալի Ֆուատ Փաչայի ուղղած նամակին) բովանդակած յայտարարութիւնները, որով մեր կառավարութեանը կից Ձեր ներկայացուցիչը ՌՍՖՍՀ-ի անունից պաշտօնապէս հաստատում է որ Թուրքիայի կողմից Հայաստանի տերիտորեալ պիղծումների մասին խօսք լինել չի կարող, մեզ ամբողջովին բաւարա-

---

15. Հայաստանը փաստաթղթերում, էջ 692–693:

16. Էդ. Զոհրաբեան, Մոսկուայի Ռուս-Թուրքական կոնֆերանսի Նախօրէին, էջ 169:

17. Նոյնը:

18. Նոյնը, էջ 166:

բում են։ ...Ոչ մի լուրջ արգելք այլեւս չի կարող դժուարացնել մոսկովեան բանակցութիւնները։ Այդպիսի պայմաններում մեր պատուիրակութիւնը հրահանգ է ստացել դուրս գալ Ղարսից եւ ամենայն արագութեամբ մեկնել Մոսկուա»(19)։ Հայրենի պատմագրող էդ. Զոհրաբեան արդարացիօրէն այս մասին կ'ըսէ. «Աստուած է պարզ եւ հասկնալի. Մոսկուայի ճանապարհին դլխաւոր դժուարութիւնը Հայաստանն էր»(20)։

Թուրքերը ապահով էին որ Մոսկուայի մէջ հայերու հող պիտի չգիջէին, այսուհանդերձ, թուրքերը ունէին այլապան պահանջներ, ինչպէս՝ Իգդիրի հարցը, որոնք կ'ուզէին լուծել Անդանդի պետութեանց հետ։ Արեւմտեան երկիրներու մէջ ալ թուրքերը քայլերդներ եւ անոնց կողմնակիցները կային։ «Վիքթուար» թերթը իր 8 Փետրուարի 1921-ի թիւով կը գրէր. «Ախալցխայում ռուսական բոլշեւիզմի լաւագոյն պատուարը ազգայնական Թուրքիայի հետ համաձայնութեան գալն է։ ...Թուրքական բանակը կը կասեցնի բոլշեւիզմը ամբողջ Ախալցխայում եւ որպէս դրա սկիզբը կ'ապաստարդի Բաքուի նաւթարեր հօրերը»(21)։

Գնդ. Սթոքս Թիֆլիսէն 4 Փետրուարի թուակիր հեռագրով կ'իմացնէր թէ Հայկական ՍՍՀ կառավարութիւնը 18 Յունուարի թուակիր յուշագրով Անգարայէն պահանջած է Ալեքսանդրապոլի չրջանին եւ կարսի նահանգին՝ թուրք պինուորներու կողմէ քանդումին դադրեցումը, եւ թրքական զօրքերուն քաշուիլը։ Գնդ. Սթոքս կ'աւելցնէր թէ թուրքեր մերժած են իրենց ուժերը ետ քաշել(22)։

Արդէն 2 Փետրուարին, Գնդ. Սթոքս Լոնտոն փոխանցած էր Հայկական ՍՍՀ նախարարներու իրարու հետ 26 Դեկտեմբերի 1920 թ.ին ունեցած հեռաձայնային խօսակցութեան արձանագրութիւնը, ուր Լենին կը յայտնէր թէ, թէեւ կարսի համար ռուսերը չէին ուզեր եւ չէին կրնար կռուիլ, Հայաստանի պիտի օդնէին նիւթապէս, ապրանքներով եւ բաւարար չափով ուժերու կեդրոնացումով, Անգարան ստիպելի ձկուն դարձնելու համար(23)։

Այս տեղեկութեան կիսդ հետաքրքրական են Ֆորէյն Օֆիսի եզրակացութիւնները, որոնք կը կրեն Օգոստոսի ստորագրութիւնը։

---

19. Նոյնը։

20. Նոյնը։

21. Ռ. Գ. Սահակեան, Թուրք-Ֆրանսական Յարաբերութիւնները եւ Կիլիկիան, 1919-1921 թթ., Երեւան, 1970, էջ 94-95։

22. F. O. 371/6266/1713.

23. F. O. 371/6266.

«Այնպէս կը թուի թէ հայերը անյաջող կերպով կը փորձեն ռուսական նեցուկ ապահովել (թուրք) ազգայնականներուն եւ վրացիներուն դէմ։ Հայերը վերջնականօրէն ռուսերուն կողմն են եւ այսպէս պիտի թուի թէ Ուիլսընեան դաշնագիրը փորձել իրենց տալ, պիտի ըլլայ ռուսական ազդեցութիւնը Կ. Պոլսոյ աւելի մօտ բերել, ինչ որ ոչ մէնք, ոչ ալ թուրքերը կ'ուզեն։ Կը կարծեմ որ ներուս մէնք պէտք է կեդրոնանանք Կիլիկիոյ թրքահայերուն վրայ»(24)։

Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան արխիւներուն մէջ 8 Փետրուարի 1921 թուակիր առենագրութիւն մը կայ, ուր կը տեղեկացուի թէ ձեմալ հեռագրած է Յունուարի 30–ին որ իթթիհատական ղեկավար, նախկին պատերազմական նախարար Ինվեր, աֆղաններուն միջոցով կ'ուզէ անգլիացիներէն հասկնալ թէ, ճի՞շդ է որ Հայաստանը Ճեմալի վերջնագիր տուած է կարսի վերադարձուելը պահանջելով, եւ թէ տարակարծութիւն կա՞յ դաշնակիցներու եւ Ռուսիոյ միջեւ։ Ասոր ներքեւ Օզպորն հետեւեալ արձանագրութիւնը ձգած է. «Ռուսերուն կողմէ Թուրքիոյ աւերուիլը կէտ մըն է զոր մէնք կրնանք թուրքերու հետ մեր խօսակցութեան ընթացքին օգտագործել։ Իրենց (թուրքերուն) ընտրութիւնը դաշնակիցներուն եւ Ռուսիոյ միջեւ է»(25)։

Վերոյիշեալ արձանագրութենէն յստակ է թէ Օզպորնը չէր հետաքրքրեր թէ կարսը հայոց կը վերադարձուի թէ ոչ, սակայն իր երկրին շահերը կը պահանջէին որ թուրքերը դաշնակիցներուն կողմը ըլլային։

Ահա այսպիսի մտածումներով է որ անգլիացիք կը մօտենային Լոնտոնի խորհրդաժողովին։

Գնդ. Սթօքս Թիֆլիսէն՝ 16 Փետրուարի 1921 թուակիր հեռագրով Լոնտոն կը տեղեկացնէր թէ Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ եւ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրողներէն Ալեքսանդր Խատիսեան իրեն հաղորդած է թէ «արգե՞ք կըլլայինք մենք (կ'ակնարկէ անգլիական կառավարութեան) հայ–թըրքական հասկացողութիւն մը կարգադրել, որ դիրենք ազատ պիտի ձգէր բոլշեւիկներու դէմ քայլեր առնելու»(26)։ Այդ քայլը կ'առնուէր երկու օրեր ետք, Երեւանի մէջ։

Օզպորն ու Նիքոլսըն, 17 Փետր.ի 1921 թ.ին, Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան համար կը պատրաստէին հետեւեալ յուշագիրը.–

---

24. F. O. 371/6266/1712.

25. F. O. 371/6266/E1885/23/58.

26. F. O. 371/6266/E2077.

«Ճարմար կը լինի սկսել սահմանափակելով բանավէճը հնարաւորին չափ նեղ շրջանակներում, սկզբից եւեթ բացառելով պայմանագրի այնպիսի բաժիններ, որոնք ճեւափոխութեան ենթակայ չեն...

Խնդիրներ, որոնց առնչութեամբ պայմանագրում
կարելի կը լիներ փոփոխութիւններ մտցնել

...III. Հայաստան (բաժին VI)

Հրաժարուել Ուիլսոնի սահմաններից եւ փոխարինել հետեւեալ յօդուածներով.

ա) «Թուրքիան ճանաչում է Երեւանի հայկական հանրապետութեան անկախութիւնը նախապատերազմեան ռուսական սահմաններում եւ հրաժարւում է Կարսի, Ալեքսանդրապոլի եւ Արտահանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից ի ճանաչումն այն բանի, որ Հայաստանը հրաժարւում է պահանջներից Թուրքական վիլայէթների նկատմամբ»:

բ) «Թուրքիան ճանաչում է թուրքական տերիտորիայում հայերի ինքնավարութեան իրաւունքը եւ պարտաւորւում է Ազգերի լիկային դիմելու սուվերեն իրաւունքները եւ իրաւունք կիլիկիայում բաւարար տերիտորիայի վրայ ամփոփելու հրկրում գտնուող Թուրքահայերին ալակցելու հայ փախստականներին վերադարձին դրսից: Այս տերիտորիան, որը կառավարուելու է հայերի կողմից Լիկայի դերակայութեան ներքոյ, տարածուելու է մօտաւորապէս Մերսին–Թարսուս–Ատանա–Օսմանիէ սահմանագծից մինչեւ Համըն–Զէյթուն–Մարաշ սահմանագիծը, այն շրջանակներում, որը որոշուելու է Ազգերի լիկայի նշանակուած յանձնաժողովի կողմից եւ ներառնելու է Թուրքիայի ու Հայաստանի ներկայացուցիչներին»:

գ) «Թուրքիան պարտաւորւում է դիւրացնել Թուրքիայի միւս մասերից բոլոր հայերի տեղափոխումն այս տերիտորիան, ովքեր կը ցանկանան գնալ այնտեղ, ինչպէս նաեւ օգնել բոլոր Թուրքերին, ովքեր կը կամենան հեռանալ այս տերիտորիայից եւ հաստատուել Թուրքիայի այլ վայրերում...»(27):

Այս յուշագրով կը թաղուէին Սեւրի դաշնագրով Թուղթի վրայ հայոց խոստացուած հողամասերը, իսկ յառաջ կը քշուէր Օզպորնի առեսակէտը հայկական կիլիկիա մը ստեղծելու, որ ռուսական ազդեցութեան ենթակայ պիտի չըլլար:

21 Փետրուարի 1921 թ.ին կը սկսէր Լոնտոնի խորհրդաժողովը, որ կը տեւէր մինչեւ 14 Մարտի 1921 թ.: Խորհրդաժողովին կը

---

27. *Հայաստանը փաստաթղթերում*, էջ 696:

հրաւիրուէին Ճունաստանի եւ Թուրքիոյ ներկայացուցիչները։ Թուրքիոյ կը թոյլատրուէր երկու պատուիրակութիւններով հանդէս գալ։ Կ. Պոլսոյ Յանքերը՝ որ սուլթանական եւ քեմալական կառավարութիւնները մէացեալ պատուիրակութեամբ ներկայանան, ձախողած էին։ Սուլթանական ներկայացուցիչները, այսուհանդերձ, քեմալական պատուիրակութեան մխալառնուեցան, եւ Կ. Պոլսոյ պատուիրակութեան պետ Ռեչիտ Փաշան յայտարարեց թէ քեմալական արտաքին գործոց նախարար Պեքիր Սամի պէյը լիազօրուած է արտայայտելու Թրքական տեսակէտը։ Թուրքիոյ մէւս պատուիրակներն էին Կ. Պոլսոյ Հռոմի մօտ ներկայացուցիչ Օսման Փաշա եւ Մունիր պէյ։

24 Փետրուարի 1921 թ.ին Թրքական մէացեալ պատուիրակութիւնը ներկայացուց իր պահանջները.

ա) Եւրոպական մասին մէջ Թուրքիան վերականգնել 1913 թ.ի սահմաններուն մէջ։

բ) Թուրքիոյ հարաւային սահմանները պէտք է անցնին այն գիծով, որ կը բաժնէ Թուրքիան արաբական մեծամասնութեամբ բնակուած շրջաններէ։ Այդ գիծէն հիւսիս վայրերը, որոնց չարքին կիլիկիան, պէտք է պարպուին օտար զօրքերէ եւ վերադարձուին Թուրքիոյ։

գ) Թուրքիոյ արեւելեան սահմանը պէտք է անցնի Թուրք-պարսկական սահմանագծով եւ Թուրքիոյ ու Հայաստանի մէջեւ կնքուած պայմանագրի համաձայն։

դ) Ճունական զօրքերէն մաքրել Իզմիրի եւ Փոքր Ասիոյ յոյներէ գրաւուած հողերը եւ յանձնել Թուրքերուն։

ե) Նեղուցները ազատ հռչակելու պարագային երաշխաւորել Կ. Պոլսոյ անվտանգութիւնը եւ Թուրքիոյ գերիշխանութիւնը։

զ) Փոքրամասնութիւններու կրօնի եւ լեզուի պաշտպանութիւնը կ'ապահովուի։

է) Օսմանեան գերիշխանութեան յարգուիլը։

ը) Զինուորական եւ ծովային ուժերու չափը որոշելու առեն նկատի առնել երկրի տարածութիւնը, հարեւան երկիրներու քաղաքական վիճակը, որպէսզի ապահովուին ներքին կարգն ու կանոնը եւ սահմաններու անվտանգութիւնը։

թ) Թուրքիոյ ելեւմտական ու անտեսական անկախութեան ճանաչումը capitulation-ի ջնջումով(28)։

Թուրքեր իրենց պահանջներու երրորդ կէտով կը դիմէին Սեւրի պայմագրի 89-րդ յօդուածը, եւ Հայաստանի հետ իրենց սահմանը կ'ուզէին որ ըլլայ ըստ Ալեքսանդրապոլի դաշնագրին։

28· Ռ· Գ· Սահակեան, Նշ· աշխ·, էջ 97-98։

Անգլիական «Թայմզ» ազդեցիկ թերթը իր 25 Փետրուարի թիւով Թրքական պահանջները կը նկատէր «անհեթեթ»։

Լոնտոնի խորհրդաժողովի 26 Փետրուարի 1921 թ.ի նիստին հայերն ալ հրաւիրուեցան իրենց տեսակէտը ներկայացնելու։ Հայկական պատուիրակութեան անդամներն էին Պօղոս Նուպար Փաշա (Ազգ. պատուիրակութեան նախագահ), Ալեքս Ահարոնեան (Հայաստանի Հանրապետութեան պատուիրակ), Մալքոլմ եւ Զօր. Բագրատունի (Լոնտոնի մօտ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչը)։ Այդ նիստին ներկայ էին Թուրքիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Ճափոնի պատուիրակները(29)։

Լորտ Քըրզոնը ժողովի սկիզբին կը յայտարարէր թէ Սեւրի պայմանագրի վերաբերեալ տեղի ունեցող բանակցութիւններու կապակցութեամբ կ'ուզէր իր տեսակէտները յայտնել։ Ապա Լորտը կ'ուզէր պիտակ թէ ով հայերու անունով պիտի խօսէր։ Պօղոս Նուպար Փաշա պատասխանելով կը յայտնէր թէ իւրաքանչիւրը իր պատուիրակութեան անունով կը խօսէր, բայց Պօղոս Նուպար հանգէս պիտի գար իբր գոյք պատուիրակութեանց նախագահ(30)։

Պօղոս Նուպար յուզուած չեչոով հետեւեալ միտքերը կը պարզէր.

«Հայկական ծրագրի հիմքը Սեւրի պայմանագիրն էր։ Հայկական պատուիրակութիւնը պահանջում է պահպանել պայմանագիրն այնքանով, որքանով այն վերաբերում է Հայաստանին։ Իրենք գըտնում են, որ այս պահանջքը ներկայացնելու համար ունին կոնֆերանսի հաւանութիւնը, քանի որ կոնֆերանսն էր պայմանագրի նախագծողը, եւ քանի որ պետութիւնները Հայաստանի վերաբերեալ յօդուածները նախագծելիս, ոչ միայն ցանկանում էին վերջ տալ ծայրայեղութիւններին, որոնց զոհերն էին հայերը, այլեւ արմատախիլ անել ապագայ բախումների սաղմերը։ Երբեմն հարց է բարձրացւում այն մասին, թէ արդեօք պէտք է թոյլ տալ, որ բոլշեւիկեան ռեժիմի հաստատումը Երեւանում ազդի սաեղծելու մի հայկական պետութիւն, ինչպէս ուրուագծուած է Սեւրի պայմանագրում։ Պէտք է մոռնալ, որ պայմանագրով նախատեսուած անկախ Հայաստանը պէտք է ձեւաւորուէր Կովկասի հայկական հանրապետութեան եւ Թուրքիայի հայկական չորս վիլայէթների միաւորմամբ, որի սահմանագծումը յանձնուած է պրեզիդենտ Ուիլսոնին։ Այն փաստը, որ Հայաստանին սովետական կարգեր են պարտադրուել, չպէտք է ետ պահի տէրութիւններին երկրի միւս մասերը, այն է՝ Թուրքական

---

29. Հայաստանը Փաստաթղթերում, էջ 697։

30. Նոյնը, էջ 698։

չորս վիլայէթները ազատագրելուց: Պէտք է յիշել անկասկած, որ հայկական հարցը ծագեց Թուրքիայում. Թուրքիայում հայկական ջարդերն էին, որոնք դրդեցին ազրութիւններին ջանալու հայերի ազատագրութեան համար: Պարտուած Թուրքիայի հետ էր եւ ոչ թէ նախկին դաշնակից Ռուսաստանի, որ ազրութիւններ կնքեցին Սեւրի պայմանագիրը: Ռուսական Հայաստանը մացուեց հայկական պետութեան մէջ պարզապէս այն պատճառով, որ նա զէնքերի բերումով անկախ հռչակուեց: Ճիշդ է, անշուշտ, որ չորս վիլայէթներն օկուպացուած (գրաւուած) են քեմալական զօրքերի կողմից, բայց դաշնակիցները ճնշում գործ դնելու տարբեր միջոցներ ունեն, որոնք կարող են օգտագործել էվակուացումն (զօրքերու պարպումը) ապահովելու համար: Պարտադրուելիք սանկցիաների (պատիժներու) թւում ամենից կիրառելին այն աերխտորիաների (հողամասերու) օկուպացումը (գրաւումը) չարունակելն է, որոնք այժմ գտնւում են դաշնակիցների ռազմական հսկողութեան ներքոյ, բայց որոնք, եթէ Թուրքիան իրագործի իր յանձնառութիւնները, վերջին հաշուով կարող են էվակուացուել (պարպուիլ)»(31):

Գալով Կիլիկիոյ հարցին, Պօղոս Նուպար Փաշա յայտնեց թէ հայերը կ'ընդունէն որ Կիլիկիոյ հողամասի մեծ մասը մնայ Թրքական գերիշխանութեան ներքեւ: Իսկ նկատելով որ Կիլիկիոյ մէջ հայերը փոքրամասնութիւն չեն, այլ մեծամասնութիւն, հայերը կը դիմեն Ֆրանսայի որպէսզի ան չլքէ հայ ազգաբնակչութիւնը, այլ Կիլիկիոյ համար ձեռք բերէ վարչական ինքնավարութեան վարչաձեւ, խառն (քրիստոնեայ եւ մահմետական) ժանտարմերիով: Նման վարչաձեւ մը անձեռնմխելի կը թողու Թրքական գերիշխանութիւնը երկրի վրայ(32):

Ապա խօսք առնելով Աւետիս Ահարոնեան կը յայտնէր թէ ինք հանդէս կու գայ Սեւրի պայմանագրով ճանչցուած հայկական պետութեան անունով, որու կառավարութիւնը քանի մը օր առաջ, 18 Փետր.ի 1921 թ.ին, վերականգնուած է, փոխարինելով սովետական վարչաձեւը(33):

Այս նախաբանէն ետք Աւետիս Ահարոնեան կը չարունակէ.

«Քեմալականների ներխուժումը Հայաստան իրականում ուղղուած էր Սեւրի պայմանագրի եւ դաշնակիցների դէմ: Դա ապա-

---

31. Նոյնը, էջ 698–699:

32. Նոյնը, էջ 700:

33. Նոյնը:

ցուցում է պարտութիւնից յետոյ Հայաստանին պարտադրուած առաջին իսկ պայմաններով, որպէսզի Հայաստանի կառավարութիւնը հրաժարուի Սեւրի պայմանագրից: Կային մարդիկ, ովքեր ասում էին, թէ քանի որ Ռուսահայաստանը բոլշեւիկացուել է, այլեւս կարիք չկայ հայկական պետութիւն ստեղծել: Նրանք մոռանում են, սակայն, որ Թուրքիայի ոչ բոլոր հայերն են բնաջնջուել: Նրանցից մօտ 300,000-ը ապաստան են գտել Կովկասում եւ ապաստում են այն պահին, երբ կը կարողանան վերադառնալ իրենց տները: Պէտք է յիշել, սակայն, որ Վանի, Պիթլիսի եւ Էրզրումի երեք վիլայէթներում, համաձայն վերջին տեղեկութիւնների, միայն 96,000 մահմեդականներ են մնում:

«Ինք ընդունում է, որ Երեւանի կառավարութիւնը բանակցութիւնների մէջ է մտել քեմալականների հետ, բայց ինքն անձամբ կարեւի անկումից յետոյ եւ նախքան (Ալեքսանդրապոլի) պայմանագրի կնքումը նամակ է ստացել, որով իր կառավարութիւնը յայտնում էր իրեն, որ իրենք չըջապատուած են եւ հարկադրուած կը լինեն ընդունել իրենց թշնամիների պայմանները, բայց ետրոպայում իրենց ներկայացուցչին հրահանգում են չճանաչել այդ անխուսափելի պայմանագիրը և մերժել բոլոր պարտաւորութիւնների օրինականութիւնը... Թուրքերն այժմ աւերում են իրենց ներխուժած չըջանները եւ սիստեմատիկ կերպով ջանում են հայկական տարրը փոխարինել մահմեդականով: Հայկական պատուիրակութիւնը կ'ողջունի դաշնակից-ների յանձնաժողովի ուղարկումն այդ վայրերը՝ ստուգելու համար իրերի ներկայ կացութիւնը: Թուրք ազգայնականները, ներխուժելով Հայաստան, ճգնում են ցոյց տալ, որ անհնարին է Սեւրի պայմանագրի իրագործումը, իսկ նրանց իղձն է հայկական տերիտորիայի վրայով ձեռք մեկնել թուրանական տարրերին:

Աւետիս Ահարոնեան ապա կը յայտարարէ. «Սեւրի պայմանագիրը Հայաստանը տուել էր հայերին իրրեւ փոխհատուցում այն տառապանքների, որ կրել էին հինգդարեայ հալածանքների, 30 տարուայ պայքարի եւ վեց տարուայ պատերազմի ու կոտորածների ընթացքում: Սեւրի պայմանագրի 218-րդ յօդուածն ապահովում է օսմանեան տերիտորիայում այն դերեզմանատների պաշտպանութիւնը, որտեղ դաշնակից պետութիւնների զինուորներն են թաղուած. հայերի համար Թուրքահայաստանն ինքը մի լայնածաւալ դերեզմանոց է, մի սրբազան հողակտոր, որը պահանջելուց նրանք երբեք չեն դադարի: Աւելին, թող դաշնակիցները չմոռանան, որ եթէ 1,500,000 հայեր կոտորուել են, ապա դեռեւս մնում են 2,000,000 հայեր Ռուսահայաստանում եւ 1,000,000 էլ սփռուած են արտասահմանում: Այդ վերապրող հա-

յերը բնաւ չեն հանդարտուի, մինչեւ որ Թուրքահայաստանի այդ սրբազան հողը չվերազարձուի նրանց»(34):

Ապա Լորա Քըրզոն կը յայտնէր թէ Սեւրի դաշնագրի իրագործման ճամբուն վրայ լուրջ դժուարութիւններ կային: Առաջին, բոլշեւիզմը Ռուսահայաստանի մէջ, երկրորդ՝ Մուսթաֆա Քեմալի ուժերուն կողմէ հայկական հողամասի մեծագոյն մասի գրաւումը, եւ երրորդ՝ մեծ տէրութիւններու անզօր ըլլալը մեծ ուժեր ուղարկելու Հայաստանի օգնութեան համար: Ուստի՝ Լորդը կ'ուզէ հայկական պատուիրակութենէն իմանալ Հայաստանի «էական» հողային սահմանները, նախապէս իրենց յայտնելով որ ԱՄՆ–ի նախագահ Ուիլսըն արդէն գծած է հայկական սահմանագիծը ներառելով Տրապիզոնը(35):

Պօղոս Նուպար Փաշա իր պատասխանին մէջ կը յայտնէր թէ տեղեակ չէր Նախագահ Ուիլսընի որոշումին (որ 22 Նոյեմբերի 1920 թ.ին պատրաստ էր եւ Ուաշինկթընի մէջ հրատարակուած էր 2 Յունուարի 1921 թ.ին), սակայն հայերը պատրաստ էին զայն ընդունելու եւ թէ հայերը Տրապիզոնը չեն պահանջեր(36):

Լորդ Քըրզոն ապա Աւետիս Ահարոնեանէն կ'ուզէր տեղեկանալ Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին:

Աւետիս Ահարոնեան պատասխանելով կ'ըսէր թէ պայմանագիրը պարտադրուած է ուժով եւ կարականապէս կը մերժուի հայերու կողմէն, իսկ պարով ճշդրիտ սահմաններուն, ինչ ճիշդ չի գիտեր, բայց սահմանը մօտաւորապէս կ'անցնի Արփաչայ գետով մինչեւ ա–նոր Արաքսի մէջ թափուիլը(37):

Լորդ Քըրզոն Ֆրանսական պատուիրակութենէն կ'ուզէր իմանալ թէ Կիլիկիոյ մէջ հայերու պաշտպանութեան վերաբերեալ Պօղոս Նուպարի տեսակէտներուն չուրջ Ֆրանսայի տեսակէտը ի՞նչ էր: Ֆրանսայի պատուիրակը կը յայտնէ թէ Կիլիկիոյ համար յատուկ վարչաձեւ հնարաւոր չէ պահանջել, իսկ իրենց երկիրը հայկական փոքրամասնութիւնը ապահովելու երաշխիք կու տայ:

Պօղոս Նուպար Փաշա կ'առարկէ թէ հայերը Կիլիկիոյ մէջ փոքրամասնութիւն չեն: Կիլիկիոյ Ատանայի վիլայէթի ազգաբնակչութիւնը 215,000 քրիստոնեաներէ եւ 185,000 մահմետականներէ բաղկացած է: Ֆրանսայի պատուիրակներէն կամերլեր կը պնդէ թէ

34· Նոյնը, էջ 700–702:

35· Նոյնը, էջ 702:

36· Նոյնը, էջ 703:

37· Նոյնը:

1914 թ.ին Առանձին վիլայէթին բնակչութեան 314,000–ը մահմետականներ էին եւ միայն 55,000–ը հայ քրիստոնեայ, եւ որոշ թիւով յոյն ազգաբնակչութիւն: Երբ Պօղոս Նուպար կ'ուզէ այս կէտին պատասխանել Լորա Քըրզոն չի թոյլատրեր, յայտնելով թէ նիստը պէտք է չարունակէ քննարկել իր ղրկուած ծրագիրը(38):

Ֆորէյն Օֆիսէն Օպզօրն՝ բրիտանական արտաքին գործոց նախարարութեան 28 Փետրուարի 1921 թուակիր տեղեկագրութեան մէջ, հայկական պատուիրակութեան խորհրդաժողովին ներկայացուցած երկու օր առաջ միայն, կը գրէ. «Պր. Ահարոնեան եւ Պօղոս Նուպար Փաչա իրարու հետ անհամաձայն էին: Ըստ Ահարոնեանի հայկական ազգային օճախը կրնար հիմնուիլ միայն Թրքական վիլայէթներու մէջ եւ ոչ Կիլիկիոյ մէջ. Երեւանի Հանրապետութեան հայերը բոլշեւիկեան լուծը, որ իրենց զգացումներուն խորշելի է, պիտի տապալեն, եւ յետոյ կրնան միանալ Թրքահայաստանին հետ: (Սեւրի) դաշնագիրը պէտք է պահուի եւ (Լոնտոնի) խորհրդաժողովը պէտք է տեղծէ Հայաստան մը Թրքական վիլայէթներուն մէջ: Ես ցոյց տուի դժուարութիւնը հազարաւոր մղոններով հազարաւոր մը եւ քանի մը հազար անօգնական բնակչութեամբ ինքնաբաւ եւ անկախ պետութիւն մը ստեղծելուն, առանց Ամենակալին ուղղակի միջամտութեան եւ առանց (Նիւթական) աղբիւրներու եւ զեկավարներու: Ան կրկին անդրադարձաւ Կովկասեան համադաշնակցութեան մը, որպէս հակա–ռուսական պատնէշ... Ան բաւական անտարբեր կը թուէր Կիլիկիոյ նկատմամբ»(39):

4 Մարտի 1921 թ.ին Լոնտոնի խորհրդաժողովը կը լսէր թուրքերու պատասխանը: Թուրքերը լաւատեղեակ եւրոպական դաշնակից պետութեանց ներքին տրամադրութիւններուն, կը պնդէին իրենց սկզբնական պահանջներուն վրայ: Լորա Քըրզոն իր պատասխանին մէջ կրկին կը չեշտէր թէ դաշնակիցները տրամադրութիւն չունէին հրաժարելու Հայաստանի նկատմամբ իրենց որոշումէն(40):

Լսելէ եաք բոլոր չհաղորդուող կողմերը, Լոնտոնի խորհրդաժողովը, 12 Մարտի 1920 թ.ին, յոյներուն և թուրքերուն առաջարկի ձեւով կը յայտնէ իր վերջնական որոշումները, որոնք տասը կէտերէ կը բաղկանային: Այս առաջարկները, որոնք ընդհանրապէս թուրքերուն կարեւոր զիջումներ կը պարունակէին, պէտք էր

---

38. Նոյնը, էջ 704:

39. F. O. 371/6266/E2669.

40. Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը, Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1968, էջ 340:

ամբողջապէս ընդունիլ կամ մերժել(41)։ Սոորեւ տրուած 9–րդ կէտը կը վերաբերի Հայաստանին։

«9· Հայաստան.— Ինչ կը վերաբերի Հայաստանին, ներկայ պարտաւորութիւնները կրնան յարմարցուիլ, պայմանով, որ Թուրքիան ճանչնայ թրքահայերու իրաւունքները Ազգային Օճախի մը համար Ախիական Թուրքիոյ արեւելեան սահմաններուն մէջ, եւ համաձայնի ընդունիլ այս յանձնաժողովի որոշումը, որ կը նշանակուի Ազգերու Լիկայի Խորհուրդէն, նպատակ ունենալով տեղւոյն վրայ ուսումնասիրել այն հոգամասերու խնդիրը, որոնք արդարացի պիտի ըլլար այդ նպատակի համար փոխանցել Հայաստանին»(42)։

Թուրքերը եւ յոյները այս որոշումները երբեմն պատկան խորհրդարաններուն պիտի ներկայացնէին առ ի քննութիւն։ Իսկ զալով հայերուն, անոնք յուզումի մատնուած էին Սեւրի պայմանագրի հայոց աննպաստ կերպով վերանայման առաջարկներուն պատճառով։

Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը դէմ էր օճախի գաղափարին, իսկ Ազգային պատուիրակութիւնը կը հաշտուէր օճախի գաղափարին հետ, այլ ելք չտեսնելով(43)։

Լոնտոնի խորհրդաժողովը չաւարտած, Պէքիր Սամիի ճիգերը յաջողութեամբ կը պսակուէին զաշնակից պետութիւններուն հետ անջատ համաձայնութիւններ կնքելու։ 9 Մարտի 1921 թ·ին Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Արիսթիտ Պրիան եւ քեմալական արտաքին գործոց նախարար Պէքիր Սամի Պէյ կը կնքէին անջատ համաձայնութիւն մը, ըստ որուն, Ֆրանսա կը կրճատէր իր ազդեցութեան գօտին Սուրիոյ մէջ ի նպաստ Թուրքիոյ, եւ ատոր փոխարէն կը ստանար չարք մը թոյլտուութիւններ եւ այլազան մենաշնորհներ Կիլիկիոյ, Տիարպէքիրի եւ Սերաստիոյ մէջ(44)։ Հայկական արդար իրաւունքները բնականաբար կը զոհուէին, որպէսզի այս համաձայնութիւնը իրականանար։

12 Մարտի 1921 թ·ին Պէքիր Սամի անջատ համաձայնութիւն մը կը կնքէր Իտալիոյ արտաքին գործոց նախարար Կոմս Սֆորցայի հետ։ Արդէն 23 Յունուարի 1921 թ·ին (երբ Կարսի մէջ քեմալականներ կը բանակցէին սովետ ներկայացուցիչ Մդիվանիի հետ) քեմալական Ալի Ֆուատ Փաշան իտալացի պատերազմին կը հասկցնէր թէ ինքը կը դերադասէր համաձայնութեան գալ ոչ թէ Մոսկուայի, այլ

41· Նոյնը, էջ 341։

42· Նոյնը։

43· Նոյնը, էջ 342։

44· Ի· Գ· Սահակեան, Նշ· աշխ·, էջ 100–102։

Անդանդի պետութիւններուն հետ, որովհետեւ Իտալիան կը պաշտպանէ Թուրքիոյ պահանջները Հայաստանի եւ Վրաստանի հարցերուն մէջ: Ըստ Մարտի համաձայնագրին, Իտալիան կը պարտաւորուէր վերջնական հաշուեթեան պայմանագրի պատրաստութեան միջոցին պաշտպանել Թուրքիոյ բոլոր պահանջները(45):

Պէքիր Սամի փորձեց նաեւ Անգլիոյ հետ որոշ համաձայնութեան գալ անհետեւական կարգ մը զիջումներ խոստանալով եւ Սովետական Ռուսիոյ դէմ իբր ուժ ներկայանալով: Լոյտ Ճորճի հետ անդրքուլիսային բանակցութիւններու ընթացքին քեմալական արտաքին գործակալը առաջարկեց «բոլշեւիզմի դէմ պայքարելու նպատակով Թուրքիայի գլխաւորութեամբ միաւորել Կովկասի ժողովուրդներին մի ֆեդերալ (դաշնակցային) բուֆերային (համեմատաբար ոչ մեծ եւ անհետեւական, քաղաքական եւ ռազմական տեսակէտէն թոյլ պետութիւն, որ ինկած է երկու խոշոր պետութիւններու միջեւ եւ կ'օգտագործուի որպէս բուֆեր (միջանկեալ օղակ) անոնց յարաբերութեանց մէջ) պետութեան մէջ եւ անհրաժեշտութեան դէպքում այն ուղղել Սովետական Ռուսաստանի դէմ»(46): Այս առաջարկը մերժուեր էր Լոյտ Ճորճի կողմէ ոչ իր հակա-խորհրդային քնոթթին համար, այլ քանի որ այն կ'ենթադրէր Անատոլուէն յունական զօրքերու պարպումը: Իսկ Լոյտ Ճորճ կը յուսար որ յունական զօրքերը յաջողութիւն կ'արձանագրեն եւ կ'իրագործեն Սեւրի դաշնագիրը: Հետաքրքրական է դիտել տալ որ Պէքիր Սամին Լոնտոնէն Անգարա իր գործի ճամբուն՝ Փարիզի մէջ, 23 Մարտի 1921 թ.ին հանդիպում կ'ունենայ Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ Աւետիս Ահարոնեանի հետ հիւսիսային Կովկասի գործիչի մը տան մէջ: Աւ. Ահարոնեան այս մասին կը գրէ թէ Պէքիր Սամի չեշտեց «թէ միայն կովկասեան հանրապետութիւններու սերտ միութիւնը կրնար ապահովել այդ հանրապետութիւններու եւ մասնաւորապէս Հայաստանի յաջողութիւնը: Բեքիր Սամի ինքն ըսաւ նաեւ, թէ միայն Հայաստանին Թուրքիան պիտի չզիջի երբեք ո՛չ Կարսը, ո՛չ Սուրմալուն, ուր մնաց թրքական վիլայէթները, որովհետեւ այդ պիտի նշանակէր պիտի Ռուսաստանին, որու կազմի մէջ այժմ կը մտնէ Հայաստանը: «Բայց, – աւելցուց ան, – եթէ ստեղծուի կովկասեան հանրապետութիւններու դաշնակցութիւն մը(47), որ կարենայ ուժեղ

---

45. Աւ. Ահարոնեան, Նշ. աշխ., էջ 342–343:

46. Halide Edib, **The Turkish Ordeal**, London, 1928, p. 255.

47. Այդպիսի մտադրութեամբ, Անդրկովկասեան իշխանութենէ հեռացուած նախկին վարչաձեւերուն ներկայացուցիչները 10 Յունիսի 1921 թ.ին կը ստորագրեն «յայտարարութիւն» մը, ըստ որուն, Հայաստանի, Վրաստանի, Ազրպէյճանի

մարմին պահանջ, Թուրքիան կրնայ անոր այժ տալ, թէկուզ աննշան հողային զիջումներով»(48):

Թուրքերը թէեւ դժ էին որ Սեւրի պայմանագրին Հայաստանի վերաբերող արամադրութիւնները լքուած էին Անդանդի պետութեանց կողմէ, բայց դժ չէին հայկական ազգային օճախի դաղափարէն, որ կ'ներթափդրէր իրենց դրաւած հողամասերէն որոշ մասի մը հայոց վերադարձումը: Քեմալական Թուրքիան ամէն գնով կ'ուզէր Ալեքսանդրապոլի դաշնագրով գծուած սահմաններէը ունենալ ապեւելի մէջ: Էդ. Զոհրաբեան լաւ կը բնաճեւէ երբ այս մասին անդրադառնալով կը գրէ. «Թուրքիան ինչ չէր գտել Լոնդոնում, սկսեց որոնել Մոսկուայում»: Քեմալական Թուրքիան 7 Մարտին յատուկ յուշագրով սովետ արտաքին գործոց Չիչերինի կը փոխանդէր Լոնտոնի խորհրդաժողովի առաջարկութիւնները այն յոյսով որ աւելի լաւ պայմաններ պիտի ստանար Ռուսիայէն:

Հայկական ՍՍՀ-ի արտաքին գործերու նախարար Ա. Բեկզադեանը, հակառակ անոր որ սովետական իշխանութիւնը առժամաբար տապալած էր (18 Փետրուար – 2 Ապրիլ 1921 թ.), 8 Մարտի 1921 թ.ին քեմալական արտաքին գործոց նախարար Ահմէտ Մութթարին յուշագիր մը կը յղէր թէ իր 19 Դեկտ. 1920 թ.ի յուշագիրը ստացուած էր 31 Դեկտեմբերին: Ապա կը յայտնէր թէ «յուզմունքով երիտասարդ Հայաստանը հետեւում է Անատոլիայում ժողովրդական յեղափոխութեան ծաւալման պրոցեսին» եւ թէ «Թուրքիայի ազգային-ազատագրական չարժումը ի դէմս նրա կրողի՝ ճնշուած աշխատաւոր բնակչութեան, որն ապստամբել է Անատոլի իմպերիալիզմի դէմ, մենք համարում ենք մեզ ոգեկից եւ նրան կ'օգնենք ու կ'օժանդակենք հակառակ ամէն ինչի», ապա կը յայտնէր իր բուն ըսելիքը, թէ՝ «Հայաստանի Սոցիալիստական Սովետական Հանրապետութեան կառավարութիւնը չի կարող չարտայայտել իր տարակուսանքն այն բանի առթիւ, որ մեզ ընդհանուր բաժին ընկած պատասխանատու պատմական խնդրում՝ անցեալ վէճերը վերջնականապէս կարգաւորելու եւ մեր երկու աշխատաւոր ժողովուրդների միջեւ ամուր եւ անխախտ բարեկամութիւն հաստատելու գործում, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութիւնը հնարաւոր է համարում ելնել Ալեքսանդրապոլի պայմանագրից և յենուել նրա վրայ, որը, մեկ կողմից, բնորոշ էր ասկ Թուրքիայի պատերազմական յաջողութիւններից

եւ հիւս. Կովկասի նախկին կառավարութեանց ներկայացուցիչները անհրաժեշտ կը գտնէին «իրարու հետ սերտ միութիւն՝ թէ տնտեսական եւ թէ հաղաքական գետնի վրայ»: (Տես՝ Ալ. Խատիսեան, Նշ. աշխ., էջ 345):

48. Ալ. Խատիսեան, Նշ. աշխ., էջ 344:

առաջացած սպեցիֆիկ (մասնայատուկ) պայմանների և որոշակի մոմենտի (վայրկեանի) համար եւ, միւս կողմից, պայմանաւորուած էր պաշնակցական նացիոնալիզմի հոգեվարքով»: Ցուշադիրը ապա կը յայտնէր թէ թրքական ուժերու կողմէ զրաւուած չրջաններու ապագայ պոյավիճակը ճշդելու համար կատարուելիք հանրաքուէն համոզիչ չէ, քանի որ նախ՝ ռազմական զրաւման պայմաններու տակ տեղի կ'ունենայ եւ ապա՝ «Հայաստանին եւ Թուրքիային կից չրջաններում համաչխարհային պատերազմի եւ հայկական բնակչութեան դէմ սուլթանական կառավարութեան գործադրած վերջին տարիների հրէչաւոր հալածանքների հետեւանքով ստեղծուած պայմաններում հանրաքուէն մեզ չափով կորցնում է ինչպէս իր նորմալ-քաղաքական նշանակութիւնը, նոյնպէս եւ իր գործադրման պրակտիկ (գործնական) հնարաւորութիւնը»: Ցուշադիրը կ'եզրափակուէր այն համոզումով թէ երկու կառավարութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող բոլոր վիճելի հարցերը իրենց սպառիչ լուծումը կը ստանան մօտ օրէն Մոսկուայի մէջ բացուող խորհրդաժողովին մէջ, եւ այն յոյսով որ Թուրքիան իր զօրքերը կը հեռացնէր Ալեքսանդրապոլի պաւառէն եւ չրջակայքէն(49):

Միւս կողմէ Մոսկուա լուր կը հասնէր Պեքիր Սամիի կնքած թուրք եւ ֆրանսական համաձայնութեան մասին: Չիչերին Մոսկուայի մօտ քեմալական դեսպան Ալի Ֆուատին 12 Մարտի 1921 թ.ին յուշագրով մը կը տեղեկացնէր թէ ֆրանսական կառավարութիւնը Սովետական Ռուսիոյ «ամենաանհաչտ ու ամենահետեւողական թշնամին է, որը երբեք չի տատանուել ու չի նահանջել» եւ ապա հարց կու տար թէ Պեքիր Սամին կ. Պոլիսը թէ՝ Անգարան կը ներկայացնէր(50):

Թրքական կեղծաւորութեամբ եւ վարպետութեամբ, ու հետամուտ իրենց երկդիմի քաղաքականութեան, դեսպան Ալի Ֆուատ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Չիչերինի կը պատասխանէր յաջորդ օրն իսկ, 13 Մարտի 1921 թ.ին, նամակով մը, ուր ի միջի այլոց կը գրէր. «Ինձ թոյլ եմ տալիս Պրն. Կոմիսարի ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վրայ, որ մենք այստեղ, Մոսկուայում հաւաքուել ենք կոնֆերանսի եւ, որ մեր ընդհանուր թշնամիները՝ արեւմտեան կապիտալիստները կոնֆերանսի աշխատանքի մէջ չփոթութիւն մտցնելու համ թէ այն ի սպառ վիժեցնելու համար բաց չեն թողնում ոչ մի առիթ: ...Արդեօք պէտք չէ ենթադրել, որ Մոսկուայի կոնֆերանսի վրայ կործանարար ազդեցութիւն գործելու նպա-

---

49. Հայաստանը փաստաթղթերում, էջ 493–496:

50. Նոյնը, էջ 497–498:

տակ ունի այն իրազութիւնը որ իբրեւ թէ Բեքիր Սամիի ապած յայտարարութիւնները հրապարակուած են այն երկրի մամուլի էջերում, որը, Ձեր կարծիքով, հանդիսանում է Ռուսաստանի երդուեալ թշնամին»...(51):

Մոսկուայի մէջ կը բացուէր թուրք եւ ռուս խորհրդաժողովը(52): Թէեւ Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը մասնակցութեան հրաւէր ղրկած էր Ազրպէյճանական եւ Հայկական Սովետական կառավարութիւններուն, Սովետական Հայաստանի կառավարութիւնը չկրցաւ մասնակցիլ խորհրդաժողովին: Խորհրդաժողովի 12 Մարտի 1921 թ.ի արձանագրութիւններուն համաձայն քեմալական թուրք պատուիրակները մերժած են հայ պատուիրակներուն հետ կլոր սեղանի շուրջ բանակցիլ «լիազօրութիւններու բացակայութիւն» պատրուակելով, խախտելով իրենց տուած համաձայնութիւնը(53): Բացասական դեր կատարած է նաեւ երեւանի նոր իշխանութեան «Հայրենիքի փրկութեան կոմիտէ»ի նախագահ Սիմոն Վրացեանի 10 Մարտի 1921 թ.ի հեռագիրը Մոսկուայի խորհրդաժողովին, որ կը յայտնէ թէ Ա. Բեկզադեան իրաւունք չունէր Հայաստանի անունով խօսելու(54): Այս պարագան պատճառ կ'ըլլայ որ Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը չկարենայ ապահովել Հայկական ՍՍՀ-ի պատուիրակութեան մասնակցութիւնը: Խորքին մէջ թուրքերը ամէն գնով կ'ուզէին խորհրդաժողովը վերածել զուտ ռուս-թրքական խորհրդաժողովի: Թուրքերը կ'ուզէին անջատ բանակցութիւններ վարել Անդրկովկասի սովետական իւրաքանչիւր հանրապետութեան հետ եւ իրենց պայմանները պարտադրել: Երբ Մոսկուայի խորհրդաժողովին լիազօրագրութիւններու բացակայութիւն կը պատրուակէին, իրենք ի մաի ունէին որեւէ հայկական կառավարութիւն (սովետական կամ դաշնակցական): Թուրքերը կը յուսային անջատ բանակցութեան եւ համաձայնագրի կնքումին՝ Ալեք-

---

51. Նոյնը, էջ 498:

52. Սովետական Ռուսիոյ պատուիրակներն էին արտաքին գործոց նախարար Գէորգի Չիչերին, եւ Համառուսաստանեան Կեդրոնական Գործադիր Կոմիտէի անդամ Զեյալ-Էդդին Կորկմասով, իսկ էմեալական Թուրքիան կը ներկայացնէին ժողովրդական տնտեսութեան նախարար Եուսուֆ Քեմալ Պէյ, լուսաւորութեան նախարար Դոկտոր Ռիզա Նուր Պէյ, եւ Մոսկուայի մօտ դեսպան Ալի Ֆուատ Փաշա:

53. Լ. Զոհրաբեան, *Հայ-Թուրքական Յարաբերութիւններ Պատմութիւնից*, էջ 10:

54. Գեղամ Ահարոնեան, *Մեծ Երազի Ճամբուն Վրայ*, Պէյրութ, 1964, էջ 162:

սանդրապոլի դաշնագիրը վերջնականօրէն պարտադրել Հայաստանին (ինչ վարչաձեւ ալ ունենար ան)։

Մոսկուայի խորհրդաժողովին ելքը արդէն իսկ յայտնի էր ժողովի սկզբնաւորութենէն առաջ։ Թուրքերը Մոսկուա ճամբայ ելած չէին առանց նախօրօք ապահովելու իրենց բարենպաստ ելքը, ինչ որ ապահոված էին կարսի մէջ Մդիվանիի հետ բանակցելով։ Եթէ որեւէ կասկած կար, այդ ալ փարատեցաւ, երբ Սովետական Ռուսիոյ ազգային դործերու ժողովրդական կոմիսարիայի Մոսկուայի մէջ հրատարակուող օրկանը՝ «Ժիզն Նացիոնալիստէյ», Ա. Սկաչկո–ի ստորագրութեամբ՝ 4 Մարտի 1921 թ·ին կը գրէր· «Ցանուն արեւելքի յեղափոխութեան զարգացման» աշխատաւոր Ռուսիան եւ Սովետական Հայաստանը «կարող են յայտնի զիջումներ անել Թուրքիային», այսուհանդերձ Թուրքիան պէտք է հայկական սովետական իշխանութեան եւ անոր նախորդող հայկական իշխանութեան մէջ տարբերութիւն մը դնէր եւ թէ «անմտութիւն էր Սովետական Հայաստանի նկատմամբ ցուցաբերել թշնամական վերաբերմունք»(55)։

Գլխաւորաբար սովետներու թիւր համոզումը, թէ՝ Թուրքիոյ հետ վէճերու լուծումով «արեւելքում յեղափոխութեան համար կը բացուի աշխարհը ճնշող իմպերիալիզմի դէմ անդադար յաղթանակների փայլուն դարաշրջան», միւս կողմէ՝ Հայաստանի մէջ այդ օրերուն տիրապետող հակա–սովետ կառավարութեան դոյութիւնը եւ ՌՍՖՍՀ–ի ընդհանուր քաղաքական–զինուորական անյապաստ կացութիւնը պատճառ եղան որ Սովետական Ռուսիա եւ քեմալական Թուրքիա յաջողութեամբ բանակցութիւններ վարեն եւ սարքադրեն Մոսկուայի 16 Մարտի 1921 թ·ի ռուս եւ թուրք պայմանագիրը։ Հարցին նամանաւորնակ ելքի մը հասնելուն մէջ հիմնական դեր կը խաղար նաեւ Թուրքիան Անդանդի պետութիւններէն հեռացնելու Սով· Ռուսաստանի ցանկութիւնը։

Այսպէս, առանց հայկական մասնակցութեան կնքուած ռուս եւ թուրք պայմանագիրը իր յօդուած Ա·ի պայմաններով Ալեքսանդրապոլի դաշնագիրը ինքնաբերաբար չեղեալ կը համարէր, կարսի նահանգի եւ Սուրմալուի (ուր մինչեւ երեք տարի հանրաքուէ պիտի կատարուէր ըստ Ալեքսանդրապոլի դաշնագրին) վիճելի հոդամասերը ու Արտահանը տը ժիւրէ կ'ըլլային Թուրքիոյ, Նախիջեւանը Ազըրպէյճանի հովանաւորութեան տակ ինքնավար հոդամաս կը յայտարարուէր եւ ժե· յօդուածով՝ Սովետական Ռուսիան կը պարտաւորէր անհրաժեշտ քայլերու ձեռնարկել՝ Անդրկովկասեան հանրա–

55· «Ժիզն Նացիոնալիստէյ», 4 Մարտի 1921 թ·։

պետութիւններուն վերաբերեալ պայմանագրի յօդուածները վերջին-ներուն կողմէ ճանչցնելու համար։

Սովետական Ռուսիոյ դեկավարներն ալ կ'ուզէին քեմալական-ները իրենց կողմը չտեսիլ եւ չթոյլատրել որ անոնք Անգարայի պե-տութեանց կողմը անցնին։ Հոս եւս գոհը Հայաստանն էր։ Պաքուի Սովետի 11 Ապրիլի 1921 թ.ի նիստին Գ. Կ. Օրջոնիկիձէն, այն հար-ցին թէ ի՞նչպէս կը բացատրուէր Կարսի, Արտահանի եւ Արդուինի դիջումը թուրքերուն, հետեւեալ կերպով կ'արտայայտուէր. «...Այս-տեղ մենք ստիպուած էինք հաշուի նստիլ կատարուած փաստի հետ։ Դաշնակիները արդէն համապատասխան պայմանագրեր էին կնքել, թուրքերը զրաւել էին իրենց յանձնուած մարզերը եւ Մոսկուայում մեզ հետ բանակցութիւններ վարելու ժամանակ կտրականապէս հրա-ժարում էին վերադարձնել զրանք մեզ։ Այդ բանի համար մենք թուրքերի հետ բախտուել չէինք ցանկանում։ Դա ձեռնտու կը լինէր մեր-ձային Անգլիային եւ Ֆրանսային(56)։

Թուրքերը պատճ էին այն ինչ որ կը վիճտէին։ Ուստի երբ քեմալական արտաքին գործոց նախարար Պեքիր Սամիի Լոյտ Ճորճի հետ ունեցած հակա-սովետական բնոյթի անդրքուլիսային բանակ-ցութեան, եւ Պրիանի եւ Կոմս Սֆորցայի հետ կնքած անջատ հա-մաձայնագրերուն պարագան յայտնի կ'ըլլայ Մոսկուայի մէջ, թուր-քերը կեղծաւորութեամբ կ'ըսէն. «Անգարան անտեղեակ էր բանակ-ցութիւններէն», «Պեքիր Սամին գործած է անձնական նախաձեռնու-թեամբ», եւ իբր հաստատում այս բոլորին, Պեքիր Սամին կը զաղ-ութեցնէն արտաքին գործոց նախարարի պաշտօնէն եւ զայն կը փոխա-րինէն Ֆեվզի Փաշայով եւ ապա՝ Եուսուֆ Քեմալ Պէյով, Մոսկուա-յի դուս եւ թուրք պայմանագրութեան կնքումէն ետք(57)։ Իրակա-նութիւնը այն էր որ Անգարան հետապրական ուժիզ կապ կը պահէր Լոնտոնի հետ, եւ ամէն տեղեկութիւն մանրամասնօրէն կը ստանար եւ համապատասխան հրահանգներ կը զրկէր(58)։ Ֆրանսայի եւ Ի-տալիոյ հետ անջատ համաձայնութիւնները դէպքին յաջորդ օրն իսկ արդէն կը հրապարակուէին «Թայմզ»ի, «Թան»ի եւ այլ թերթերու մէջ։ Իսկ Լոյտ Ճորճի հետ տեղի ունեցած զաղանի բանակցութիւն-ներու մասին օրին տեղեակ եղած էր Մուսթաֆա Քեմալ, խօսակ-ցութիւններու սպագրութեան թարգմանութիւնը ստանալով։ Թուրքե-

---

56. Պրոֆ. Շ. Ի. Ցարուքիւնեան, Հայ ժողովրդի Պատմութիւն, հատոր չորրորդ, երեւան, 1970, էջ 142։

57. Halide Edib, **The Turkish Ordeal**, p. 13.

58. Նոյնը։

ը վարպետօրէն կիրարկած էին իրենց երկդիմի(59) քաղաքականութիւնը, եւ ապահոված իրենց արեւելեան սահմանը, զբաղելով հայկական հողերը։

Ռուս եւ Թուրք պայմանագրի ստորագրութեան օրն իսկ, ռուսները Անգլիոյ հետ ստորագրեցին համաձայնութիւն մը, ըստ որուն, ռուսները կը հրաժարէին անգլիական գաղութներու մէջ քարոզչութենէ, իսկ անգլիական կառավարութիւնը կը պարտաւորուէր նախապէս Ցարական Ռուսիոյ մաս կազմող, ու այդ չրջանին անկախ, նորակազմ պետութիւնները չպաշտպանել։ Ալեքսանդր Խատիսեան իր անկիւնէն դիտելով կը գրէ թէ «այդ առաջին հարուածն էր Հայաստանին, որովհետեւ Անգլիան արդէն կը պարտաւորուէր չօգնել Հայերուն՝ իրենց անկախութիւնը վերականգնելու պայքարին մէջ(60)։

Երեւանի նոր իշխանութեան ակը՝ «Հայրենիքի փրկութեան կոմիտէ»ի պետը՝ Սիմոն Վրացեան, վստահօրէն անտեղեակ վերեւի համաձայնութենէն, 17 Մարտի 1921 թ.ին Անգլիոյ կ'իմացնէր «Մօր-հըրդային վարչաձեւի տապալումը Հայաստանի մէջ եւ Նորին Վեհափառութեան կառավարութեան կը թելադրէր ճնշում բանեցնել ռուսական կառավարութեան վրայ որպէսզի Հայաստանի վրայ յարձակումը կեցնէր եւ Կարսի ու Ալեքսանդրապոլի պարպումը ապահովէր Թուրքերէն»(61)։ Անգլիական կառավարութիւնը 29 Մարտի 1921 թ.ին Հայաստանի Հանրապետութեան Լոնտոնի մօտ ներկայացուցիչ Զօր. Բագրատունիին կը տեղեկացնէր թէ Լորտ Քըրզըն կը ցաւէր որ ներկայ ժամանակին Նորին Վեհափառութեան կառավարութիւնը ի վիճակի չէ պէտք եղած ազդեցութիւնը բանեցնելու՝ ըլլայ Մոսկուայի, եւ ըլլայ Անգարայի վրայ(62)։

Առանց Լոնտոնի ըրած իր աղերսանքին պատասխանը ստանալու, Մոսկուայի պայմանագրի ստորագրութենէն երկու օրեր ետք, 18 Մարտի 1921 թ.ին, Սիմոն Վրացեան Թուրքիոյ Ազգային մեծ ժողովին կառավարութեան, որ ճանչցած էր «Հայրենիքի փրկութեան կոմիտէն» որպէս միակ իշխանութիւնը Հայաստանի մէջ, կ'ուղղէր դիմում մը։ Դիմումին մէջ Ս. Վրացեան կը խնդրէր որ իր բանակը համալրելու համար Թուրքեր վերադարձնեն իրենց մօտ եղող հայ պատերազմական գերիները, եւ ցոյց տան ռազմական օգնութիւն Հայաստանի Հանրապետութեան։ Սիմոն Վրացեան իր դիմումը կը հիմնէր Ալեքսանդրապոլի դաշնագրին վրայ։ Վրացեան կը գրէր. «Սոյն

---

59. Նոյնը։

60. Ալ. Խատիսեան, Նշ. աշխ., էջ 343։

61. F. O. 371/6266/3476.

62. Նոյնը։

դիմումն անելով, Հայաստանի կառավարութիւնը հիմնուում է այն բարեկամական յարաբերութիւնների վրայ, որոնց հիմք են դրուած Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած եւ որոնք խանդարուած էին բոլշեւիկեան իշխանութեան ժամանակ»(63)։

Այդ օրերուն «Հայրենիքի փրկութեան կոմիտէի» օրկան «Ազատ Հայաստան» թերթը կը գրէր թէ «իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատութեան իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը(64)։ *Որովհետեւ Տաճկաստանն է միակ իրական մերձաւորագոյն քաղաքական ոյժը, որն անմիջապէս եւ կենսապէս շահագրգռուած է Անդրկովկասի ժողովուրդների կատարեալ ազատագրութեամբ»*(65)։ *Թուրքիա թէեւ դեռ որ երեւանի մէջ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ընդունող կառավարութիւնը վերատին իշխանութեան գլուխ էր, սակայն Մոսկուայի պայմանագրութեամբ ազահոված ըլլալով իր արեւելեան սահմանը, չուզեց խախտել Սովետական Ռուսիոյ հետ հաստատած իր բարեկամական յարաբերութիւնը, օգնելով հակա-սովետ Հայաստանի Հանրապետութեան։*

Ալեքսանդր Խատիսեանի քեմալական արտաքին գործակալ Պեքիր Սամիի հետ Բարիզի մէջ ունեցած խօսակցութենէն երեք օր ետք, 26 Մարտի 1921 թ.ին, Սիմոն Վրացեան, որուն կառավարութեան իշխանութեան տակ եղող հողամասերը Մարտի կէսերուն կարմիր բանակի յարձակման ենթարկուած էին, հետեւեալ հեռագիրը ուղղեց Անգլիոյ, խնդրելով զայն փոխանցել Լոնտոնի խորհրդաժողովին, որ արդէն 14 Մարտին ւսարտած էր.

«Հայաստանը կ'ուզէ ապրիլ խաղաղութեամբ եւ բարեկամութեամբ իր հարեւան Թուրքիոյ հետ, ան կ'ուզէ ուրեմն որ Լոնտոնի խորհրդաժողովին տալիք որոշումները փոխադարձ անվստահութիւն չբերեն Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, եւ կամ՝ դժգոհութիւն։ Վերջ։ Նախագահ կառավարութեան եւ արտաքին գործոց գործակալ Հայաստանի Հանրապետութեան Վրացեան»(66)։

Վերոյիշեալ հեռագիրը Լոնտոն՝ Ֆորէյն Օֆիսը ստացած էր 29 Մարտի 1921 թ.ին։ Ֆորէյն Օֆիսի բարձրաստիճան պաշտօնատարներէն Օզպորն, 30 Մարտին հետեւեալ նկատողութիւնը կ'արձա-

---

63. Պրոֆ. Շ. Ռ. Ցարուքիւնեան, *Նշ. աշխ.*, էջ 154, Պրոֆ. Մ. Գ. Ներսիսեան խմբ., *Հայ ժողովրդի պատմութիւն*, Երեւան, 1972, էջ 472։

64. 1920 թ.ի Նոյեմբերի 20-ին Երեւանի «Ցառաջ» թերթը կը գրէր թէ հայ ժողովուրդը պէտք է ունենայ «ոչ թէ ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»։

65. Պրոֆ. Շ. Ռ. Ցարուքիւնեան, *Նշ. աշխ.*, էջ 154։

66. F. O. 371/6267/3698.

նպրէկը արտաքին գործոց նախարարութեան առենապրութիւններուն մէջ, հեգնական ոճով մը· «Այնպէս կը թուի թէ գէնքով թուրք մը կեցած էր Պր· Վրացեանի կռնակը երբ այն այս հեռագիրը ղրկեց»(67)։ Անգլիական կառավարութիւնը Զօր· Բաղրատունիի նամակ մը կը ղրկէր բացատրութիւններ պահանջելով, բայց այս հարցով պատասխան չէր ստանար։

Քեմալականները՝ Մոսկուայի եւ Լոնտոնի խորհրդաժողովներուն իրենց ներկայացուցիչներուն հետ խորհրդակցելէն ետք այն եզրակացութեան եկած էին թէ արեւմտեան պետութիւններու ըրած զիջումները անբաւարար էին, իսկ Մոսկուայի դաշնագիրը թուրքիոյ ապահոված էր իր վախճած արեւելեան սահմանները, ուստի՝ Ազգային մեծ ժողովը չվաւերացուց Լոնտոնի անջատ համաձայնութիւններէն ոչ մէկը, եւ չընդունեց Լոնտոնի խորհրդաժողովի առաջարկները։

Անդին, 2 Ապրիլի 1921 թ·ին սովետական զօրամասերու Երեւան մուտքով «Հայկական փրկութեան կոմիտէի» ղեկավարներն ու զօրքերը նահանջեցին Զանգեզուրի ուղղութեամբ, եւ Հայկական ՍՍՀ–ն վերահաստատուեցաւ։ Անգլիոյ Ֆորէյն Օֆիսէն Սեսիլ Հարմըզուարթ, 20 Ապրիլի 1921 թ·ի առենապրութեան մէջ իր տեսանկիւնէն կը պրէր· «Երեւանի մէջ Պր· Վրացեանի կողմէ հակա–բոլշեւիկ կառավարութեան մը վերահաստատումը անկասկած չատ հերոսական ճիգ մըն էր, բայց նկատի առած իր երկրին կատարեալ մեկուսացումը, կը վախնամ ձախողութեան դատապարտուած էր»(68)։

Իսկ Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը Ալեքսանդրապոլի եւ Երեւանի ամբողջ շրջանը կրկին հայկական սովետական կառավարութեան ձեռքին է դանուում, հասել է թուրքական զօրքերի սահմանի այն կողմն անցնելու ժամանակը, որ սահմանուած է Մոսկուայի պայմանագրով, եւ մենք հաստատ յոյս ունինք Զեղնից չտալ պատասխան ստանալու այն մասին, որ հայկական տերիտորիայից թուրքական զօրքերի էվակուացումն (պարպումն) աւարտուած է»(69)։ Նոյն օրը Զիչերին՝ սովետ ղեկավար Գ· Կ· Օր–

67· Նոյնը։

68· Նոյնը։

69· Հայաստանը փաստաթղթերում, էջ 507–508։

Ջոնիկիձէին կը տեղեկացնէր. «Ալի Ֆուատը ինձ խոստացել է անյապաղ ազատել Ալեքսանդրապոլը: Ներան խոկոյն եւեթ հաղորդում եմ կարապետբերի խուլիգանութեան մասին, մատնանշելով, որ Թուրքիայի եւ Սովետական Հայաստանի միջեւ պատերազմը կը նշանակի պատերազմ Թուրքիայի եւ Սովետական Ռուսաստանի միջեւ»(70):

Բեմալական Թուրքիոյ ռազմական նախարար Բեմալ Ֆեվզի Փաշա այդ օրերուն կը յայտարարէ թէ Արեւելեան ռազմաճակատի Թըրքական բանակը, մնալով Կովկասի մէջ պէտք է այնտեղ կատարէ հաւասարակշռութեան տարրի դեր... թէ Հայաստանի այն մասը, որ տակաւին Թրքական զօրքերու գրաւման տակ է, կը պարպուի Ալեքսանդրապոլի գաշնադիրը գործադրութեան մէջ դնելէն յետոյ միայն(71): Այս յայտարարութիւններուն վրայ 8 Ապրիլի 1921 թ.ին Զիչերին Մոսկուայի մօտ Թրքական դեսպան Ալի Ֆուատին յուշագիր մը կը ղրկէ, ուր ի միջի այլոց կ'ըսէ. «Ես ինձ թոյլ եմ տալիս Ձեզ յիշեցնել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքուել է դաշնակցական կառավարութեան կողմից այն պահին, երբ արդէն հռչակուած էր Հայաստանի սովետական կառավարութիւն եւ որ դա ռատիֆիկացուած (վաւերացուած) չէ, թէպէտեւ, ըստ այդ պայմանագրի տեքստի (բնագիրի), դրա գործադրութեան մէջ դնելու պայմանը հանդիսանում էր ռատիֆիկացիան մէկ ամսում: Բայց եթէ նոյնիսկ մի կողմ թողնենք այդ նկատառումը, ապա Ալեքսանդրապոլի պայմանագրի բոլոր հիմնական դրոյթները մասամբ վերացուած են Մոսկուայի պայմանագրով, մասամբ Սովետական Ռուսաստանի բացարձակ եւ լիակատար սուվերենիտետի (գերիշխանութեան) պահպանման վերաբերեալ երկու պատուիրակութիւնների յայտարարութիւններով: Ալեքսանդրապոլի պայմանագրի կատարումը ցանկալը հաւասարազօր է Մոսկուայի պայմանագրի վերացմանը»(72):

22 Ապրիլ 1921 թ.ին թրքական զօրքերը եւս կը քաշուին Ալեքսանդրապոլի գաւառէն, որ այսօր մաս կը կազմէ Հայկական ՍՍ Հանրապետութեան:

---

70. Նոյնը, էջ 508:

71. Նոյնը:

72. Նոյնը, էջ 509:

THE ARMENIAN QUESTION IN THE CONFERENCES OF LONDON AND MOSCOW IN THE YEAR 1921

ZAVEN MESSERLIAN

(Summary)

On August 10, 1920, by the Treaty of Sèvres, the Allied Nations oblige the Ottoman Empire to return a good part of the Armenian territories to the Armenians. But the treaty remains on paper only, while the Milly Armies of Turkey rush upon the Republic of Armenia, whose government signs the Treaty of Alexandrapole with Turkey, yielding new territories to her. While the Allied Nations were following the course of the Armenion Question with indifference, Soviet Russia had adopted the policy of winning over the Kemalists, pushing the Armenian Question to a secondary plan. The leaders of Kemalist Turkey having adopted a bifarous policy, were dealing with the Allied Nations and Soviet Russia at the same time, pursuing their own gains on both fronts.

The London Conference began on February 21, 1921. The Armenians joined the conference on February 26, with two separate delegations, lead by Boghos Nubar Pasha and Avedis Aharonian. The positions and demands presented by the Armenian delegations seemed contradictory. The Turks refused the Armenian demands, while the Allied Nations with their separate agreements with Turkey were trying to gain her over to their side. On March 1921, a Russo-Turk conference was held in Moscow, to which the Armenians were refused attendance because of Turkish opposition. The resulting Russo-Turk Treaty of Moscow automatically annulled the Treaty of Alexandrapole. On April 2, 1921, upon the reestablishment of the Soviet regime in Armenia, the Soviets demanded the evacuation of the Turks from the newly occupied territories in Armenia. On April 22, 1921, Turkish armies retreated from Alexandrapole, which was then annexed to Soviet Armenia.

Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու հաղաբական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր

ԶՕՐ. Ա. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա. Աշխարհամարտի (1914–1918 ԹԹ.) ընթացքին, ազգային բանակներու մէջ օտարներու կամաւոր յանձնառութեանց տարածումը ստացաւ հաւաքական բնոյթ, մինչեւոյն ազգին պատկանող օտարներէ բաղկացած ամրողջական միաւորներու կազմութեան պատճառով: Այս իրողութիւնը կը բացատրուէր գերեվարելով ժողովուրդներուն պատերազմին մասնակցելու փափաքով՝ թշնամի ճակատներու վրայ այն պետութեան կողքին, որուն ակամայ հպատակներն էին: Ժողովուրդներ, որոնք այդ ձեւով, այսինքն զիրենք ճնշող պետութեան պարտութեամբ, կ'ուզէին մօտեցնել իրենց ազգային ազատագրութեան ժամը: Ցիշենք ամենէն աւելի ծանօթ պարագաները. Լեհերը եւ չեխոսլովաքները՝ Եւրոպայի մէջ, արաբները՝ Մերձաւոր Արեւելքի մէջ:

Բայց մենք կ'ուզենք խօսիլ քիչ ծանօթ պարագայի մը մասին, որ հետաքրքրական է սակայն մէկէ աւելի պատճառներով: Խօսքը կը վերաբերի Արեւելեան Լեգէոնին: Այս միաւորին կազմութիւնն ու գոյութիւնը տեղի տուաւ իրաւական խնդիրներու, որոնք կապ ունէին նաեւ քաղաքականութեան հետ: Սակայն իրողութիւնները հաստկընալու համար անհրաժեշտ է յիշել կարգ մը պատմական դէպքեր:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1914 թ.ի Նոյեմբերին, Թուրքիա, կեդրոնական կայսրութեանց կողքին, պատերազմի կը մանկը Դաշնակիցներու դէմ: Թուրք կառավարութիւնը, օգտուելով այն իրողութենէն որ Եւրոպայի մէջ հանրային կարծիքը զբաղած էր տեղի ունեցող պատերազմով, ուզեց իրագործել իր տիրապետութեան տակ ապրող հայերու ամբողջական բնաջնջման իր ծրագիրը: Դիւային ծրագիր մը, որուն մշակման իրենց մասնակցութիւնը բերին գերման խորհրդականներ, դործադրութեան դրուեցաւ: Աւելի քան մէկուկէս միլիոն հայեր ջարդուեցան Արեւմտեան Հայաստանի մէջ, 1915–1918 թթ.(1): Հայերը իրենց տակաւ միջոցներով, դիմադրեցին Թուրք պաշտպոդութեան եւ բանակին, հոն, ուր կարելի եղաւ, սակայն պարտուեցան գրեթէ միշտ Թուրքերու Թուական գերադասութեան հետեւանքով: Հազուագիւտ չըջաններէն մէկը, որուն բնակիչները փրկուեցան, եղաւ Մուսա–Տաղը, կամ՝ Ճեպէլ–Մուսան:

Այս անունով կը կոչուի, Ալեքսանտրէթի ծոցին դիմաց, Հիւսիսային Սուրիոյ մէկ չըջանը, ուր հայ գիւղացիները կ'ապրէին անյիշատակ ժամանակներէ ի վեր(2): Շուրջ հինգ հազարի հասնող այս լեռնցիները մէկուկէս ամիս չարունակ կատաղօրէն դիմադրեցին ջարդարարներուն(3): Սակայն իրենց զինամթերքն ու պաշարը սպառելով, անոնք ալ պիտի ենթարկուէին իրենց հայրենակիցներուն ճակատագրին, երբ հրաչալի դիպուածով մը յայտնեցան կապ հաստատել Ֆրանսական ռազմանաւերու հետ, որոնք կը չրջէին Ալեքսանտրէթի ծոցին մէջ: Շնորհիւ Սուրիոյ նաւաբաժինի հրամանատար ծովակալի վճռակամութեան եւ անոր նաւազներու քաջութեան, բոլոր վերապրողները նաւ առնուեցան եւ փոխադրուեցան Փոր–Սայիտ, ե-

---

1. Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին Թուրքերու կողմէ հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան մասին տես՝ J. Bricaud, **L'Arménie qui Agonise**, Paris, 1916. H. Gibbons, **La Page la Plus Noire de l'Histoire Moderne**, Paris, 1916. J. Lepsius, **Rapports Secrets**, Paris, 1920. J. de Morgan, **Contre les Barbares de l'Orient**, Paris, 1918. H. Morgenthaw, **Les Faits les Plus Horribles de l'Histoire**, Paris, 1918:

2. Ճեպէլ–Մուսան, որ Սուրիոյ մաս կը կազմէ, Թուրքիոյ փոխանցուեցաւ 23 Յունիսի 1939 թ.ի ֆրանսո–թուրք դաշնագրով: Ալեքսանտրէթի Սանճաքի փոխանցումը Թուրքիոյ, հոգատար պետութեան կողմանէ, օրինական չէր: Սուրիա չճանչցաւ զայն:

3. Frantz–Werfel, **Les Quarante Jours de Moussa Dagh**, Traduction française, Paris, 1934.

դիպաւոս, 1915 թ.ի Սեպտեմբերին(4): Բոլոր անոնք, որոնք զինք վերցնելու ընդունակ էին, երախտապիտութենէ մղուած, ուզեցին պինուարպրուիլ Ֆրանսական բանակին մէջ, կռուելու համար Թուրքերուն դէմ եւ ազատագրելու իրենց օճախները: Ֆրանսական կառավարութիւնը տեղեակ պահուեցաւ հայերու այս վախճանին, եւ, սպասելով Բարիզի որոշումին, կամաւորները սոսցան իրենց նախնական վարժութիւնները, Ֆրանսացի հաւատնեռու կողմէ(5):

Սակայն Ֆրանսական դրօշի տակ հայ պինուորական միաւորի մը կազմութիւնը ամրողջ տարի մը ուշացաւ քաղաքական պատճառներով: Անգլիա, որ այն օրերուն տոանձնած էր Եգիպտոսի հոգատարութիւնը, ինք կ'ուզէր հայերը մուծել Արեւելքի իր բանակին մէջ: Սակայն հայերը կը պնդէին Ֆրանսական բանակին մէջ ծառայել: Խնդիրը լուծուեցաւ միայն 1916 թ.ին, երբ Ֆրանսա եւ Անգլիա, Ժորժ Փիքօ–Սայքս համաձայնագրով, հասկացողութեան եկան Միջին Արեւելքի իրենց ապագայ քաղաքականութեան մասին:

Անգլիացիներուն հետ համաձայնութիւն մը պոյացաւ հայկական կամաւորական զօրախումբի մը կազմութեան մասին: Ֆրանսական կառավարութիւնը իւրացուց Լոնտոնի թելադրութիւնը՝ «կիպրոսի մէջ համախմբելու այն հայերը, որոնք կը վախճաքէին զործակցել, Ֆրանսական դրօշի տակ, իրենց հայրենիքի ազատագրութեան»(6): Բարձրաստիճան սպայ մը ղրկուեցաւ Փոր–Սայիտ՝ ուսումնասիրութեան համար: «Նոր տեղեկութիւններ սոսցուած ըլլալով, որոնք ցոյց կու տային, թէ սուրիացիները եւս վախճաք կը յայտնեն կռուելու Թուրքերու դէմ», նոյն սպան հրաւիրուեցաւ «ընդլայնելու իր ուսումնասիրութիւնը Եգիպտոսի, Ֆրանսայի եւ Ամերիկայի մէջ ապրող սուրիացիներու հաւանական օգտագործման հարցին վրայ»(7):

Մինչ այդ՝ Հայ Ազգ. Պատուիրակութիւնը զործը ձեռք առած

---

4. Ծովակալ Տարքիժ Տը Ֆուրնէ ուզեց ազատեալները կիպրոս տանիլ, սակայն տեղւոյն անգլիական իշխանութիւնները ասոր հակառակեցան: Ծովակալը այս վերջինները կատարուած իրողութեան առջեւ դրաւ հայերը ցամաք հանելով Փոր–Սայիտ առանց արտօնութիւն ուզելու: (Տես՝ Commandant Benoist d'Azy, **L'Origine de la Légion d'Orient**, Paris, 1939, p. 5):

5. Նոյնը, էջ 7:

6. Տեղեկագիր պատերազմական նախարարին, թիւ 7549–9/11 եւ 14 Նոյեմբերի 1916 թուակիր (*Ֆրանսական Բանակի Պատերազմական Սպասարկութեան Արխիւներ* (յետ այսու, Ֆ. Բ. Պ. Ս. Ա.) **Levant**, Carton 1, L. O.):

7. Նոյնը:

էր այն բանակցութեանց չրջագիծին մէջ, զոր կը վարէր Դաշնակից պետութեանց հետ Հայկական Հարցին շուրջ(8)։ 27 Հոկտեմբերի 1916 թ.ին, ան երբեակ համաձայնութիւն մը կնքեց Կիլիկիոյ մասին, Լոնտոնի մէջ, ուր Անգլիա եւ Ֆրանսա ներկայացուած էին Սայքսի եւ Ժորժ Փիքոյի կողմէ, երկու դիւանագէտներ, հեղինակները իրենց անունը կրող եւ Օսմանեան կայսրութեան բաժանման մերձաբերեալ հռչակաւոր դաշնագրին։ Երկու պետութիւնները կ'ենթաշխատուէին հայերու ինքնորոշման իրաւունքը Կիլիկիոյ մէջ, որ պիտի դրուէր Ֆրանսական հովանաւորութեան տակ։ Հայ Ազգ. Պատուիրակութիւնը յանձն կ'առնէր, Ասիոյ մէջ Թուրքիոյ դէմ կռուելու համար, բոլոր հայ գաղութներէն կամաւորներ հայթայթել։

15 Նոյ.ի 1916 թ.ին, նախարարական որոշումով առեղծուեցաւ կամաւորներու դունդը։ Որոշման առաջին յօդուածը կը տարամագրէր. «Կիպրոսի մէջ պիտի առեղծուի Արեւելեան Լեգէոն մը, օսմանեան ծագումով կամաւորներէ, որոնք յանձն պիտի առնեն իբրեւ օժանդակ ծառայել Ֆրանսական զրօշի տակ, պատերազմի ընթացքին, օգտագործուելու համար Ասիական Թուրքիոյ մէջ»(9)։ «Արեւելեան Լեգէոն» անունը արուեցաւ անոր Ազգ. Պատուիրակութեան առաջարկով, խուսափելու համար Թուրք կառավարութեան մը ընդդիմութենէն՝ Թուրքիոյ հայոց մնացորդացին դէմ։ Նոյն պատճառով, հայ բառին փոխարէն, գործածուեցաւ «օսմանեան ծագումով կամաւորներ» արտայայտութիւնը։

Կամաւորներու թիւը չէր ճշդուած. նախարարական որոշման երկրորդ յօդուածը կը նախատեսէր որ «զօրակներու թիւը համեմատական պիտի ըլլայ օտանձնուած յանձնառութեանց»։

Հայ կամաւորները եկան ամէն կողմէ։ Շատ հասկնալի է որ պէնճի ընդունակ ճեպէլ-մուսացիները, որոնք բնակած էին Փոր-Սայիտի մէջ, Լեգէոնի կորիզը կազմեցին։ Ամերիկահայ գաղութը շատ մեծ թիւով կամաւորներ տուաւ մինչեւ 2 Ապրիլի 1917 թ., երբ Միացեալ Նահանգներ պատերազմի մէջ մտան, եւ արգիլուեցաւ ամերիկահայերու կամաւոր ծառայութիւնը Արեւելեան Լեգէոնին։ Ուրիշ կամաւորներ եկան Եգիպտոսէն, Ֆրանսայէն։ Միջագետքի եւ Սինայի ճակատներէն անգլիացիներու կողմանէ թրքական բանակէն առնուած հայ ռազմագերիները եւս կամաւոր արձանագրուեցան։

---

8. Այս պատուիրակութիւնը, որուն վստահուած էր հայկական դատին պաշտպանութիւնը մեծ պետութեանց մօտ, հաստատուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ի կողմէ, 1914–1918 թթ. պատերազմի նախօրեակին։

9. Նախարարական Որոշում, 15 Նոյեմբերի 1916 թ.ի (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 1, L. O.)։

կազմուած եւ մարզուած Կիպրոսի մէջ, Լեգէոնը Պաղեստինի ճակատը մեկնեցաւ մինչ 1918 Թ·ին: Այս ուշացումին պատճառը մասնաւորաբար անգլիացիներու ձգտումն էր, քաղաքական յեսին մտքով, խուսափելու այս ճակատին վրայ Ֆրանսական զօրքերու ներկայութենէն: Արեւելեան Լեգէոնը, կազմուած իբրեւ արշաւադունդ, 1918 Թ·ի Սեպտեմբերին վայրկեան մասնակցութիւն մը բերաւ զօրավար Ալենպիի յարձակողականին(10): Օգտագործելով ճակատին քայքայումը, սրարշաւ, ան գրաւեց Լիբանանը: 30 Հոկտ·ի 1918 Թ·ին, Թուրքիոյ հետ Մուտրոսի զինադադարի(11) ստորագրութենէն ետք, Արեւելեան Լեգէոնը, զօրացուած չորրորդ գումարտակով մը, որ տեղւոյն վրայ կազմուեցաւ Թուրք բանակէն դերի առնուած հայ զինուորներէ, ձեռնարկեց Կիլիկիոյ գրաւման: 1918 Թ·ի Դեկտեմբերի վերջը այդ գրաւումը աւարտած էր(12):

Մինչ այդ, Հայ Ազգային Պատուիրակութիւնը, արուած ըլլալով որ օրուան քաղաքական կացութիւնը այլեւս արդէլք չէր, պահանջած էր որ Արեւելեան Լեգէոնը առնէ Հայկական Լեգէոն անունը: Արեւելքի Ֆրանսական քաղաքային եւ զինուորական իշխանութիւնները, Բարիզի այս մասին հարցուցած խորհուրդին նպաստաւոր կարծիք յայտնած էին: Այսպէս, 1919 Թ·ի սկիզբը, Արեւելեան Լեգէոնը իրաւականօրէն երկու մխաւորներու վերածուեցաւ. Հայկական Լեգէոնը՝ չորս գումարտակներով եւ Սուրիական Լեգէոնը՝ մէկ գումարտակով(13): Այս բաժանումը իրականութեան մէջ

10· Արեւելեան Լեգէոնը գրաւեց Արաբայի կարեւոր դիրքը Բաֆաքի մօտ: Զօրավար Ալենպի իր 20 Սեպտեմբերի 1920 թուակիր օրակարգին մէջ կը յայտարարէր· «Արեւելեան Լեգէոնը կամ Հայկական Լեգէոնը կարեւոր բաժին մը ունեցաւ 19 Սեպտեմբերի 1918 թ·ի Պաղեստինի ճակատին վրայ տեղի ունեցած մեծ ճակատամարտի ընթացքին: Ես ասով հպարտ եմ» (Colonel L'Hospitalier, **Historique des Anciens Combattants Arméniens, 1914-1918**, Paris, 1956, p. 41):

11· Մուտրոսի զինադադարի պայմանագրութիւն, 30 Հոկտեմբերի 1918 (Martens, **Nouveau Recueil Général de Traités 3e Série**, t. 2, p. 159):

12· Արեւելքի Ֆրանսական Զօրագունդերու հրամանատար զօրավարին թիւ 9018/3 եւ 28 Դեկտեմբերի 1918 թուակիր տեղեկագիրը ուղղուած անգլիական Իվ· Զօրամարմինի հրամանատարին, որուն ենթակայ էր (Ֆ· Բ· Պ· Մ· Ա· **Levant**, Carton 5, L. O.):

13· Պատերազմական նախարարին թիւ 546-9/11 եւ 18 Յունուարի 1919 թուակիր ծանօթագիրը Արեւելեան Լեգէոնի կազմութեան եւ ապուր Հայկական Լեգէոնի եւ Սուրիական Լեգէոնի բաժանման մասին (Ֆ· Բ· Պ· Մ· Ա· **Levant**, Carton 5, L. O.):

արդէն եղած էր, քանի որ բոլոր հայ կամաւորները Կիլիկիա ղրկուած էին, մինչ սուրիացիները պահուած էին Լիբանան(14)։ Այսպէս կազմուած երկու միաւորները պահեցին Արեւելեան Լեգէոնի իրենց իրաւական վիճակը։ Հայկական Լեգէոնը Կիլիկիոյ մէջ մասնակցեցաւ Ֆրանսական բանակին կողմէ քեմալական զօրքերու դէմ մղուած կռիւներուն, եւ լուծարքի ենթարկուեցաւ 1 Սեպտեմբերի 1920 թ.ին։ Իսկ Սուրիական Լեգէոնը աւելի ուշ վերածուեցաւ «Արեւելքի Մասնաւոր Զօրախումբերու», – բաղկացած սուրիացի եւ լիբանանցի կամաւոր պինուորներէ – որոնք ծառայեցին Ֆրանսական դրօշի տակ եւ այս երկու երկիրներու անկախութենէն ետք, հիմը կազմեցին անոնց ազգային բանակներուն։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԳԷՈՆԸ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Արեւելեան Լեգէոնի կազմութիւնը յարուցեց մէկէ աւելի իրաւական խնդիրներ, զորս հետաքրքրական է ուսումնասիրել։

Առաջին հերթին, միջազգային իրաւունքի տեսակէտէն, օրինականութեան հարցը կար այն մասին, թէ Ֆրանսա կրնա՞ր ծառայութեան կոչել օտարներ, հպատակները պետութեան մը, որուն դէմ ինք պատերազմի մէջ էր։ Արտօնուա՞ծ էր նման քայլ մը։ Կարելի է դրական պատասխան տալ։ Ազգերը զօրծնականին մէջ միշտ ընդունած են որ պատերազմի մէջ գտնուող պետութիւն մը իր բանակին մէջ առնէ թշնամի պետութեան հպատակները։ Ցեղափոխական կամ ազատագրական պատերազմներու ընթացքին թշնամի կողմի քաղաքացիները յաճախ պինուորագրուեցան հակառակորդներուն կողմէ։ Օրինակ՝ Ֆրանսացի տարագիրներ, որոնք անգլիական բանակին մէջ ծառայեցին Ֆրանսական Ցեղափոխութեան ընթացքին, և աւստրիահպատակ իտալացիներ՝ փիեմոնթական բանակին մէջ, 1859 եւ 1866 թթ.ու պատերազմներու ընթացքին։ Եւ միջազգային պայմանագրական իրաւունքի մէջ ոչինչ կ'արգիլէ նման արարք մը։ Ճիշդ է, որ Լա Հէյի 18 Հոկտեմբերի 1907 թ.ի Դ. պայմանագրութեան յատկացուածի 23–րդ յօդուածը վերջաւորութեան կը արամադրէր որ «պատերազմող կողմին արգիլուած է նոյնպէս թշնամի կողմին հպատակները ստիպել մասնակցութիւն բերելու իրենց դէմ ուղղուած

14· Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին թիւ 53/G եւ 12 Յունուարի 1919 թուակիր հեռագիրը, ուղղուած պատերազմական նախարարին, հետեւեալ թուանշանները կու տայ Արեւելեան Լեգէոնի միաւորներուն համար· հայկական չորս գումարտակներ, 4124 գինուոր· սուրիական մէկ գումարտակ՝ 698 գինուոր (Ֆ. ֆ. պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

պատերազմական գործողութիւններու, նոյնիսկ այն պարագային, երբ անոնք իր զինուորական ծառայութեան մէջ կը դտնուէին պատերազմը սկսէր առաջ»· սակայն կարելի է ուշադրութեան յանձնել որ այս որոշումը չէր վերաբերեր Արեւելեան Լեգէոնի զինուորներուն: Արդարեւ, լեգէոնականները Դաշնակիցներու կողմէ բռնադատուած չէին կռուելու Թուրքիոյ դէմ· Արեւելեան Լեգէոնը բաղկացած էր հայերէ եւ սուրիացիներէ, որոնք կամաւորաբար յանձն առած էին պատերազմիլ զիրենք ճնշողին դէմ: Մնաց որ Ֆրանսան չէր ծածկած ազգութիւնը անոնց, որոնք եկած էին զինուորագրուելու իր դրօշին տակ: Նախաբարական որոշումը յստակօրէն նշած էր անոնց «օսմանեան ծագում» ունենալու հանգամանքը: Եթէ այս կամաւորներուն ցեղին անունը տալէ խուսափած էին, այն միակ մտահոգութեամբ էր. որ անոնց հայրենակիցներուն խնայուի թրքական վրէժխնդրութիւնը:

Ընդհակառակը, Արեւելեան Լեգէոնի կազմութիւնը Ֆրանսական ներքին իրաւունքի տեսակէտէն կէտէր յարուցեց: Բանակի զինուորագրութեան 21 Մարտի 1905 թ·ի օրէնքը (յոդ· 3) միայն Օտար Լեգէոնին մէջ կը թոյլատրէր օտարներու ընդունումը եւ հինգ տարուան չրջանի մը համար: 3 Օգոստ·ի 1914 թ·ի հրամանագրով կառավարութիւնը արտօնած էր օտարներու ընդունումը այս միաւորին մէջ պատերազմի տեւողութեան համար, սակայն, այնուհետեւ, 16 Օգոստ·ի 1915 թ·ի օրէնքը նախատեսած էր· «Ներկայ պատերազմի ամբողջ տեւողութեան եւ Ֆրանսական հողամասի ամբողջ տարածքին վրայ արգիլուած է Ֆրանսական բանակին մէջ ընդունիլ, Օտար Լեգէոնի անունով, Ֆրանսայի կամ անոր դաշնակիցներուն հետ պատերազմի մէջ գտնուող պետութեանց հպատակներ»(15):

Այսպիսով, այս օրէնսգրութիւնը արգելք մըն էր Օտար Լեգէոնին մէջ հայերու եւ սուրիացիներու զինուորագրութեան, որովհետեւ, իրրեւ օսմանեան հպատակներ, Դաշնակիցներուն հետ պատերազմի մէջ գտնուող պետութեան մը հպատակներն էին: 16 Օգոստ·ի 1915 թ·ի օրէնքի լայն մեկնաբանութիւնը կը թոյլատրէր Փոր–Սայիտի հայերու եւ Եգիպտոսի մէջ անգլիացիներու ազատագրած ռազմագերիներու զինուորագրութիւնը, որովհետեւ տեղի կ'ունենար Ֆրանսական հողամասէն դուրս: Սակայն բոլոր անոնք, որոնք կը գտնուէին Ֆրանսայի մէջ, եւ գլխաւորաբար Ամերիկայէն եկող հայերն ու սուրիացիները, որոնք լեգէոնականներու մեծամասնութիւնը կազմեցին եւ որոնց արձանագրութիւնը տեղի կ'ունենար Մար–

15· 16 Օգոստոսի 1915 թ·ի օրէնքը (Duvergier, **Collection Complète des Lois, Décrets, Ordonnances**, Nouvelle série, t. 15, p. 244):

սկյռի եւ Պորտոյի մէջ, իբրեւց ցամաք ելլելէն եաք, չէին կրնար պինուորագրուիլ Օսաք Լեգէոնին։ Կը թուի թէ Ֆրանսական կառավարութիւնը մտածած է չրջանցել օրինական արգելքը՝ հայերն ու սուրիացիները բանակի մէջ մուծելով իբրեւ օժանդակներ(16)։

Սակայն դժուար էր պնտանալ, թէ այս բառը ինչ կը նշանակէր։ Ֆրանսական պինուորական իրաւունքը կ'անդիտանար օժանդակ պինուորի վիճակէն բխող իրաւական կացութիւնը, վիճակ մը, որ հատարակաց աչինչ ունէր «օժանդակ ծառայութեանց» սահմանուած պինուորի վիճակին հետ՝ իր փիլիքական անընդունակութեան պատճառով(17)։ *Այս բառին ընթացիկ իմաստը եւս մեզ չի լուսաբաներ։ Լիթրէի համաձայն, օժանդակը, պինուորական տեսակէտէն, ան է, «որ կ'օգնէ իր զէնքերով»*(18)։ *Այս բնորոշումին համաձայն, եթէ պէտք է պատերազմի մէջ երկրորդական դեր մը վերապրել օժանդակին, ինչպէս հաղորդակցութեանց պիծերու և պահեստներու պահպանութիւնը, ասիկա չի համապատասխաներ Արեւելեան Լեգէոնի պինուորներուն իրաւական կացութեան, որոնք պինուորագրուած էին պատերազմելու համար. Ֆրանսական հետեւակազօրքի զուտարատակի ոլոգով մխաւորներով կազմուած էին, եւ որոնք իրապէս պատերազմ ըրին Թուրքերուն դէմ Պազեստինի ճակատին վրայ, եւ Կիլիկիոյ մէջ։ Միւս կողմէ, լեգէոնականին ստորագրած յանձնառութեան աթոռ կը պարունակէր հետեւեալ արտայայտութիւնը. «Ան յայտարարեց... թէ կ'ուզէ պինուորագրուիլ Արեւելեան Լեգէոնի մէջ պատերազմի տեւողութեան, կռուելու համար Թուրքիոյ դէմ»*(19)։

---

16. Պատերազմական նախարարի 15 Նոյ·ի 1916 թուակիր որոշումը (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 1, L. O.)։

17. Օժանդակ ծառայութեան մէջ պինուորագրուիլը Ֆրանսական բանակին մէջ առաջին անգամ հաստատուեցաւ 27 Յուլիսի 1872 թ·ի օրէնքով։ Այս դրութեան վերջ տրուեցաւ 7 Յունուարի 1959 թ·ի օրէնքով։

18. Պատմաբաններ «օժանդակ գունդեր» բառերը կը գործածեն երբ կ'ակնարկեն Հռոմի կողմանէ իր կայսրութեան սահմաններուն մէջ պինուորագրած գունդերուն։ Իսկ իրաւաբաններ նոյնը կ'ընեն կռուող կողմերուն, պատերազմի յայտարարութենէն առաջ գոյացած դաշնագրի մը տրամադրութեանց համաձայն, երբորդ պետութեան մը կողմանէ հայթայթուած գունդերուն։ Բայց որեւէ բազդատութիւն կարելի չէ վերոյիշեալ գունդերու եւ օտար բանակի մը մէջ կամաւոր կերպով ծառայող «օժանդակ» պինուորներու միջեւ։

19. Նախարարական հրահանգ, թիւ 7966–9/11 եւ 26 Նոյ·ի 1916 թուակիր. Արեւելեան Լեգէոնի կազմակերպութեան մասին։ – Յարակից մաս, թիւ 2 – (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

Գիտնալու համար թէ պատերազմական նախարարութիւնը ինչ կը հասկնար «օժանդակ» ըսելով, պէտք է ուսումնասիրել թիւ 7966–9/11 եւ Նոյ· 1916 թուակիրը նախարարական հրահանգը, որով կը հշդորոշուէին Արեւելեան Լեգէոնի կազմակերպութեան մանրամասնութիւնները, չատ ամփոփ կերպով կը բնորոշուէր լեգէոնականի իրաւասիճակը եւ կը ճշդուէին այն տարբեր յատկացումները, որոնց իրաւունք ունէր ան: Բազմաթիւ սրբագրութիւններն ու յաւելուածները զուտ կատարուեցան այս հրահանգին մէջ, ցոյց կու տան այն խնդիրները, որոնք յառաջ եկան առեղծուած դրութեան անորոշութենէն, եւ հաստատուած տարակարծութիւններէն:

Ինչ կը վերաբերի պինուորագրութեան, հակառակ լեգէոնականներու իրաւական կացութեան տարտամութեան, ոչ մէկ դժուարութիւն ծագեցաւ ուղուած թիւով կամաւորներ արձանագրելու: Հայերը անհամբեր էին օր առաջ կռուելու Թուրքերուն՝ մեծ ցեղասպանութեան ընթացքին իրենց անմեղ ծնողներու ջարդարարները դէմ· այն ցեղասպանութեան, որ դեռ անպատիժ կը մնայ, հակառակ Դաշնակիցներու յայտարարութեան թէ պատասխանատու պիտի բռնեն, «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ Թուրքիոյ գործած այս նոր ոճիրներուն համար, օսմանեան կառավարութեան բոլոր անդամները, ինչպէս նաեւ անոր այն գործակալները, որոնք փաստօրէն մասնակցած պիտի ըլլային նման ջարդերու»(20): Այսպէս, ոչ կամաւորները, ոչ Հայ Ազգ· Պատուիրակութիւնը նուազագոյն ուշադրութիւն ըրին այն իրաւական դրութեան, որուն Ֆրանսական կառավարութիւնը կ'ենթարկէր լեգէոնականները: Արեւելեան Լեգէոնի գոյութեան ամբողջ տեւողութեան կամաւորներ չպակսեցան:

Զինուորագրութեան համար պահանջուած պայմաններուն զալով, կը բաւէր օսմանեան հպատակ ըլլալ, բարի վարուց վկայական ներկայացնել եւ ընդունակ ըլլալ Փիզիքապէս: Տարիքի սահման ճշդուած չէր:

«Օժանդակ»ի իրաւական կացութենէն բխող առաջին մէկ դժուարութիւնը երեւան եկաւ հրամանատարական իրաւունքի կիրարկման մէջ: 26 Նոյ·ի 1916 թ·ի նախարարական հրահանգի Ե· հատուածը կը տրամադրէր, որ «անոնք (կամաւորները), ինչ ալ

20· «Դաշնակից Պետութիւններու 24 Մայիսի 1915 թ·ի յայտարարութիւնը որով թուրք կառավարութիւնը պատասխանատու կը նկատեն Հայաստանի մէջ Թուրքիոյ կողմանէ կատարուած ջարդերու» (P. Fanchille, **La Guerre de 1914**, **Recueil Intéressant le Droit International**, Paris, 1915–1919, t. 1, p. 328):

*ըլլայ իրենց ասոիճանը, համահաւասար չեն ո՛չ Ֆրանսական զինուորականներուն, ոչ ալ իրրեւ օտար ծառայող նոյնասոիճան զինուորականներուն, եւ իրենց հրամանատարութիւնը, հետեւաբար, կրնան կիրարկել մեայն օժանդակ լեգէոնականներուն վրայ»: Նման տարամարդութեան մը պայմութիւնը անհաւատալի կը թուի: Ըստ կանոնադրութեան, լեգէոնականները կրնային բարձրանալ օժանդակ հարիւրապետի ասոիճանին, ուրեմն՝ հրամանատար ըլլալ դասակի, որ իր չարքերուն մէջ կրնար ունենալ սպաներու, ենթասպաներու եւ մասնագէտ զօրքերու Ֆրանսական անձնակազմ մը: Այսպէս, կրնար էր պանուիլ հետեւեալ կացութեան առջեւ որ զինուորականօրէն անըմբռնելի է. մխուրի մը հրամանատարը չէր կրնար հրաման տալ բաժնակի իր պետին, ոչ ալ իր պահեստապետին, ոչ նաեւ իր երկրորդ կարգի հետախոսի զինուորին, եւ ասիկա՝ զօրանոցի մէջ թէ կռուի դաշտին վրայ(21): Հաւանական է որ երբ օժանդակ ասոիճանաւորներ հասան կամ անուանուեցան Լեգէոնին, այս տարականոնութեան ծանր անպատեհութիւնները յատակօրէն երեւան եկան, որովհետեւ 1918 թ.ի Մայիսին, 26 Նոյ.ի 1916 թ.ի նախարարական հրահանգին վրայ կատարուած սրբագրութիւն մը հետեւեալ ձեւով բարեփոխեց օժանդակ զինուորականներուն կանոնադրութեան հրամանատարական իրաւունքի վերաբերեալ մասը. «Ինչ ալ ըլլայ իրենց ասոիճանը, անոնք համահաւասար են նոյնասոիճան զինուորականներուն, որոնք իրրեւ օտար կը ծառայեն. հրամանատարութեան տեսակէտէն անոնք կը վայելեն ուրեմն Ֆրանսական անձնակազմին հաւասար նոյն իրաւունքներն ու առանձնաշնորհումները, այն վերապահութեամբ որ հաւասար ասոիճանի վրայ հրամանատարութիւնը միշտ կը պատկանի Ֆրանսացի ասոիճանաւորին»(22):

15 Նոյ.ի 1916 թ.ի նախարարական որոշումը, որ կը հաստատէր Արեւելեան Լեգէոնը, իր Գ. յօդուածին մէջ կը տրամադրէր. «Ծառուկ հրահանգ մը պիտի ճշդէ լեգէոնականներուն յատկացումները, որոնք սկզբունքով համարժէք պիտի ըլլան Ֆրանսացի զինուորի ունեցածին»: Արդ, 26 Նոյ.ի 1916 թ.ի թիւ 7966–9/11 հրահանգը թէեւ ճշդած էր կամաւորներու թոշակի ու պարէնի չատկա-

---

21. Այս միջոցառումները ցեղային խտրութեան արդիւնք չէին, արդարեւ Արեւելեան Լեգէոնի այն հայ զինուորները, որոնք առաջ Օտար Լեգէոնի մէջ զինուորագրուած եւ յետոյ՝ Արեւելեան Լեգէոն անցած էին, նոյնպէս չէին ենթարկուէր «օժանդակ» անուան տակ ծառայող իրենց հայրենակիցներու հրամանին:

22. Սրբագրութիւն թիւ 3431–9/11 եւ 13 Մայիսի 1918 թուակիր, թիւ 7966–9/11 եւ 26 Նոյ.ի 1916 թուակիր նախարարական հրահանգին (Ֆ. բ. պ. Ս. Ա. Levant, Carton 1, L. O.):

ցումները, սակայն լուռ կը մնար հանգստեան թոշակի, ընտանեկան յատկացումներու եւ այլ իրաւունքներու մասին: Օժանդակի վիճակէն բխող իրաւական դրութեան տարտամութեան անպատեհութիւնը անգամ մը եւս երեւան եկաւ: 11 Հոկտ·ի 1917 թ·ի թիւ 7468–9/11 հրահանգը(23) կը յայտարարէր· «Լեգէոնականները կը ծառայեն իբրեւ օժանդակ, անոնք մտցուած չեն Ֆրանսական բանակին մէջ: Կը հետեւի ուրեմն որ

«– Արեւելեան Լեգէոնի կամաւորները իրաւունք չունին հանդստեան թոշակի, նաեւ պարգեւի, առողջական պատճառով վնասուրակական ծառայութենէ արձակման պարագային:

«– Թոշակի իրաւունք դոյութիւն չունի անոնց այրիներուն եւ որբերուն համար:

«– Անոնց ընտանիքներուն, երբ որ կարիքաւոր են, չեն ըլլար այն յատկացումները, որոնք նախատեսուած են Ֆրանսացի զինուորականներու ընտանիքներուն համար»:

Այս հրահանգին բովանդակութիւնը դժուար ընդունելի կը թուի: Որ լեգէոնականը իրաւունք չունենայ որոշ յատկացումներու, զորս կը վայելեն միւս զինուորականները, կրնար ընդունուիլ իրաւահաւօրէն, պայմանով որ մասնաւորուած ըլլային պաշտօնական դրութեան մը մէջ, բայց ինչպէ՞ս կարելի է ուրանալ անոր մտցուած ըլլալը Ֆրանսական բանակին մէջ, երբ յանձնառութեան աթոռը ստորագրած ատեն, ենթական կը խոստանար «պատուով եւ հաւատարմութեամբ ծառայել Ֆրանսական դրօշի տակ»: Գնդապետ Պրեմոն, Կիլիկիոյ Գրաւեալ Գօտիի հրամանատարը, 18 Օգոստ·ի 1919 թուակիր իր նամակին մէջ, ուղղուած Արեւելքի ընդհանուր հրամանատար անգլիացի զօրավարին, կը յայտարարէր· «Հայկական Լեգէոնի զինուորները իրաւունք ունին Ֆրանսացի զինուոր կոչուելու, քանի որ անոնք ծառայած են Ֆրանսական զօրագունդերու մէջ, Ֆրանսացի պետերու հրամանատարութեան տակ»(24):

Նախարարական հրահանգը կ'աւելցնէր· «Զկարենալով լեգէոնականներուն տալ Ֆրանսական բանակի կանոնադրային յատկացումները, կառավարութիւնը այսուհանդերձ յանձն առաւ հատուցում տալ անոնց, որոնք կրնան կորսնցնել կամ նուազած տեսնել աշխա-

---

23· Նախարարական հրահանգ թիւ 7468–9/11 եւ 11 Հոկ·ի 1917 թուակիր Արեւելեան Լեգէոնի հայ եւ սուրիացի օժանդակ զինուորներու ընտանիքներուն ըլլալիք օգնութիւններու եւ յատկացումներու մասին (Ֆ· Բ· Պ· Մ· Ա· **Levant**, Carton 1, L. O.):

24· Ֆ· Բ· Պ· Մ· Ա· **Levant**, Carton 5, L. O.:

տանքի իրենց կարողութիւնները զինուորական ծառայութեան չբերջանկին, եւ օգնել ամենէն աւելի կարիքաւոր ընտանիքներուն»: Կը հետեւէր չարքը նախանշումներու «օգնութեանց» տակերուն եւ պայմաններուն այն անձերուն համար, որոնք կը պտուղէին վերոյիշեալ երեք պարագաներուն մէջ: Սակայն այս ձեւով լեգէոնականներուն տրուած «օգնութիւնները» հետու կին համարժէք ըլլալէ, 1914–1918 թթ. պատերազմի ընթացքին, ֆրանսական բանակին մէջ ծառայած օտար զինուորականներուն չնորհուած իրաւունքներուն: Անարդարութիւն մը եղած էր իրենց, երբեւ հետեւանք օժանդակի իրենց հանդամանքին, իրաւական կացութիւն մը, որուն ստեղծման մէջ անոնք ոչ մէկ դեր ունէին:

Պատերազմէն ետք, պատերազմական նախարարը մերժեց դրծագրել, Արեւելեան Լեգէոնի օժանդակներուն, 31 Մարտի 1919 թուակիր օրէնքով ճշդուած հատուցումներու օրէնսդրութիւնը(25): 2 Յունիսի 1921 թուականին, հատուցումներու, պարգեւներու եւ յատկացումներու նախարարէն պատերազմական նախարարին ուղղուած նամակ մը, անդրադառնալով «Հայկական Լեգէոնի նախկին զինուորներուն» տրուելիք հատուցումներուն, կը հաստատէ թէ 31 Մարտի 1919 թ.ի օրէնքի տրամադրութիւնները կիրարկելի չեն անոնց համար, տրուած ըլլալով որ այդ օրէնքի 75–րդ յօդուածը զանոնք չի յիշեր նպաստաւորուող օտարներու չարքին: Նախարարը այս կէտը անարդար կը գտնէ: Ըստ իրեն, «անկարելի կը թուի առանց տպրուստի միջոցի ձգել Հայկական Լեգէոնի փիզիքական անկարողութեան մատնուած նախկին զինուորականները: Զինուորներ, որոնք ֆրանսական համազգեստ կրած են, զեկավարուած են ֆրանսացի հրամանատարներով, չեն կրնար նուազ նպաստաւոր վերաբերումի ենթարկուիլ, քան այլ ազգերու կամաւորները»: Ան առաջ կը բերէ նաեւ այն փաստարկութիւնը թէ Արեւելեան Լեգէոնը կազմակերպելու կոչուած ֆրանսական զինուորական առաքելութիւնը խոստացած էր «որ կամաւոր յանձնառուները իրաւունք պիտի ունենային, պատերազմի ընթացքին եւ անկէ ետք, ենթարկուելու նոյն վերաբերումին, ինչ որ ֆրանսական զինուորականները»(26): Նախա-

---

25· «31 Մարտի 1919 թ.ի օրէնքը, որ կը փոխէ ցամաքային եւ ծովային բանակներու կենսաթոշակի օրէնսդրութիւնը պատահած մահերու, ստացուած վէրքերու եւ զինուրական ծառայութեան ընթացքին առնուած կամ ծանրացած հիւանդութեան տեսակէտէն» (*Ֆրանսական Հանրապետութեան Պաշտօնաթերթ*, 2 Ապրիլի 1919 թուակիր):

26· 15 Նոյեմբերի 1916 թուակիր նախարարական որոշումը, որ կը հաստատէր Արեւելեան Լեգէոնը, իր Գ. յօդուածին մէջ կը տրամադրէր որ «յատուկ

բարը կ'առաջարկէր իր պաշտօնակիցին «յետադարձաբար մտցնել Հայկական Լեգէոնի զինուորականները Օտար Լեգէոնին մէջ, ինչ որ թոյլ պիտի տար անոնց հատուցումներ ընդունիլ, բան մը, որ ամենայն արդարութեամբ անկարելի է մերժել»(27)։

Հատուցումներու նախաբարը յաջողութիւն չունեցաւ։ Թեեւս աւելի քաղաքական մօտեցում ցուցաբերած կ'ըլլար իր կողմէ, եթէ պահանջէր 31 Մարտի 1919 թ.ի օրէնքի 75–րդ յօդուածին մէջ աւելցնել Արեւելեան Լեգէոնին անունը, եթէ առիկա անհրաժեշտ էր։ Սակայն մեղի կը թուի թէ նման իրաւական թեքնիքի մը դիմելը անհրաժեշտ չէր, որովհետեւ 31 Մարտի 1919 թ.ի օրէնքին ճիշդ մեկնաբանութիւնը թոյլ պիտի տար Արեւելեան Լեգէոնի նախկին զինուորներուն օգտուելու անոր արամադրութիւններէն։ Այս օրէնքը, իրականին մէջ, ֆրանսական բանակի ամբողջ անձնակազմին վերաբերող հասարակաց իրաւունք մը կը հաստատէր. զինուորական միաւորներու թուարկում չկար, հետեւաբար Արեւելեան Լեգէոնի զինուորականները եւս պէտք է նկատի առնուէին անոնց մէջ։ Եթէ 75–րդ յօդուածը յատուկ յիշատակութիւն ըրած էր լեհական եւ չեխոսլովաքեան բանակներուն մասին, պատճառը այն էր որ այդ միաւորները մաս չէին կազմեր ֆրանսական բանակին. անոնց ընտելդման վերաբերեալ հրամանագիրներուն մէջ կը ճշդուէր, որ խօսքը «ինքնակամ» զօրագունդերու մասին էր, որոնք «կը կռուէին իրենց սեփական դրօշին տակ»(28)։

Նոյնը չէր պարագան Լեգէոնին, բայց պատերազմական նախարարը կարճած մնաց իր սխալ ըմբռնումին, թէ՝ արեւելեան լեգէոնականները մտցուած չէին ֆրանսական բանակին մէջ։ Զարմանալի

հրահանգ մը պիտի ճշդէ իրենց յատկացումները, որուն սկզբունքով համարժէք պիտի ըլլան ֆրանսացի զինուորին ստացածին»։ Թիւ 7966–9/11 եւ 26 Նոյ.ի 1916 թուակիր նախարարական հրահանգը, որ կը կազմակերպէր Արեւելեան Լեգէոնը, ճշդած էր թոշակներու եւ պարէնի յատկացումները, սակայն լուռ կը մնար հանգրստեան թոշակի մասին։ Թիւ 7468–9/11 եւ 11 Հոկ.ի 1917 թուակիր հրահանգն էր որ հաստատեց միւս յատկացումները։

27. Նամակ թիւ 1165 եւ 2 Յունիսի 1921 թուակիր (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. Levant, Carton 1, L. O.)։

28. Հրամանագիր, 4 Յունիսի 1917 թուակիր, Ֆրանսայի մէջ լեհական բանակի մը ստեղծման վերաբերեալ (*Ֆրանսական Հանրապետութեան Պաշտօնաթերթ*, 5 Յունիսի 1917 թուակիր)։ Հրամանագիր, 16 Դեկտ.ի 1917 թուակիր, չեխոսլովաքեան բանակի մը ստեղծման վերաբերեալ (*Ֆրանսական Հանրապետութեան Պաշտօնաթերթ*, 19 Դեկտ.ի 1917 թուակիր)։

է նկատել որ Պետական Խորհուրդը հաստատած է այս մօտեցումը։ Այս առեանին կոզմանէ տրուած առնուազն երկու վճիռ կայ(29), որոնցմով կը մերժուի Արեւելեան Լեգէոնի նախկին զինուորականներուն կենսաթոշակ տալ։ Պետական Խորհուրդը ջնջեց կենսաթոշակներու գաւառային գատարաններու որոշումները՝ նախկին լեգէոնականներու հատուցումներ տալու մասին։ Ան նկատեց որ մասնաւոր արեւմտահայութիւն նախատեսուած չէր Արեւելեան Լեգէոնի զինուորականներուն համար, ինչպէս որ եղած էր «Ֆրանսայի մէջ ստեղծուած լեհական եւ չեխոսլովաքեան բանակներուն» պարագային, եւ թէ անկարելի է որ պահանջողը «երբեք չէ պատկանած Ֆրանսական ցամաքային եւ ծովային բանակներու զինուորական կազմի մը»։

Նշենք տակաւին լեգէոնական կանոնադրութեան մէկ ուրիշ մանրամասնութիւնը, այն, որ կը վերաբերի յանձնառութեանց ջնջումին։ Համաձայն վերոյիշեալ 26 Նոյեմբերի 1916 թ.ի նախարարական հրահանգի տրամադրութեանց, զօրագունդի պետը կրնար ջնջել լեգէոնականին յանձնառութիւնը ֆիզիքական անընդունակութեան եւ կարգապահական պատճառներով։ Այս վերջին դրդապատճառը, որ լեգէոնականին համար ստեղծուած իրաւական աննպաստ դրութեան հետեւանքն էր, կրնար տեղի տալ չարաշահութեանց, մանաւանդ, երբ արտակարգապահական այլ նկատումներ առաջնորդին լեգէոնականին պետերը։

Լեգէոնականին յանձնառութեան ջնջումը կրնար հետեւանք ըլլալ նաեւ Լեգէոնի զօրացրումին։ Ահա 26 Նոյ.ի 1919 թ.ի նախարարական հրահանգի մէկ ուրիշ տրամադրութիւնը, որ, իր կարգին, կրնար տեղի տալ չարաշահման արարքներու։ Ան թոյլ կու տար լեգէոնականին զօրացրումը նոյնիսկ պատերազմի աւարտէն առաջ, երբ պարագաները այլեւս անհրաժեշտ չէին դարձներ Լեգէոնին պոյութիւնը։ Արդէն այս է որ պատահեցաւ, երբ քաղաքական նկատառումներու հետեւանքով վերջ տրուեցաւ զինուորական այս միաւորին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Շատ մը հարցեր պիտի չյատականային, եթէ Արեւելեան Լեգէոնի կեանքին մէջ քաղաքականութեան դերը չվերլուծուէր դէթ

---

29. Վճիռ Պետական Խորհուրդի, 8 Նոյ.ի 1932 թուակիր։ Հանգստեան թոշակի նախարարը ընդդէմ Գուլոթեանի (**Recueil Lebon**, 1932, p. 925)։ Վճիռ Պետական Խորհուրդի, 15 Յունիսի 1933 թուակիր։ Հանգստեան թոշակի նախարարը ընդդէմ Մանուէլեանի (**Recueil Lebon**, 1933, p. 632)։

հակիրճ կերպով։ Քաղաքականութիւնը դեր ունեցաւ Լեգէոնի ծրագրումին, գոյութեան եւ անոր վախճանին մէջ։

Արեւելեան Լեգէոնի կազմութիւնը քաղաքական նպատակ մը ունէր։ Եթէ Ճեպէլ-Մուսայի հայերը ինքնաբուխ կերպով ուզեցին զինուորագրուիլ ֆրանսական դրօշի տակ, առ ի երախտագիտութիւն ֆրանսական ծովոյժին կողմէ իրենց փրկումին, այս միաւորման առեղծումը այնպէս, ինչպէս որ տեղի ունեցաւ, քաղաքական նպատակ մը կը հետապնդէր։ 1916 թ.ի Լոնտոնի երրեակ համաձայնութիւնը նպատակ ունէր Կիլիկիոյ մէջ հայերուն ինքնավարութիւն մը տալ, եւ Լեգէոնը հիմը պիտի կազմէր հայկական բանակի մը՝ Կիլիկիոյ մէջ։ Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահին կողմէ 27 Հոկտ.ի 1916 թ.ին, համաձայնութեան կնքումէն ետք, Գահիրէի Ազգային Միութեան ղրկուած հեռագիրը բաւական յստակ է. «Կը հաստատեմ կամաւորներու հարցի մասին 6 Հոկտ.ի նամակս։ Բացայայտ երաշխիք ստացած ըլլալով որ Դաշնակիցներու յաղթանակէն վերջ, մեր ազգային բազձանքները պիտի գոհացուին, կը յանձնարարեմ ձեզի ձեռք առնել տալ բոլոր միջոցները քաջալերելու եւ դիւրացնելու համար կարելի ամենամեծ թիւով կամաւորներու զինուորագրութիւնը»(30)։ Հայ պատուիրակներ ղրկուեցան քիչ մը ամէն տեղ, մասնաւորաբար Մ. Նահանգները, հայկական փոքր գաղութներէն քան հնարաւորի մեծ թիւով կամաւորներ զինուորագրելու համար։

Կազմուած 1916 թ.ին, Արեւելեան Լեգէոնը ճակատ մեկնեցաւ 1918 թ.ի Օգոստոսին միայն(31)։ Բրիտանական կառավարութեան բռնած դիրքը, որ ուշացուցած էր Լեգէոնի կազմութիւնը ֆրանսական դրօշին տակ, պատճառ եղած էր նոյնպէս զինուորական այս միաւորի պատերազմի մասնակցութեան ուշացումին։ Անգլիացիները ֆրանսական զօրագունդեր չէին ուզեր Արեւելքի մէջ(32)։ Ցամե-

---

30· Հեռագրին պատճէնը կայ Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւներուն մէջ (**Guerre 1914-1918**, **Légion d'Orient**, թղթածրար թիւ 580, թերթ 191)։

31· Այս թուականէն առաջ, Սուրիոյ Նաւահաժիները, որուն ենթակայ էր Ալեքսեանը, լեգէոնականներէ կազմուած փոքր խումբեր գործածած էր բազմաթիւ անգամներ արշաւանքներ ընելու թրքական ծովեզերքին վրայ, հաղորդակցութեան միջոցները կործանելու, եւ Գասթէլ-Րիզօ եւ Բուատ կղզիակներու մէջ զօրանիստ հաստատելու համար (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 2, L. O.)։

32· Մեր ճիւղէն դուրս է պատմականը ընել անգլօ-ֆրանսական յարաբերութեանց, Միջին Արեւելքի մէջ, 1914–1918 թթ.ի պատերազմի ընթացքին եւ երկու

նայն դէպս, Ֆրանսական զօրագունդերը մասնակցեցան 1918 թ.ի Սեպտեմբերի մեծ յարձակողականին Պաղեստինի ճակատին վրայ եւ Արեւելեան Լեգէոնը մինակը զբաւեց Լիբանանն ու Կիլիկիան։

Կիլիկիոյ գրաւման մասին պատերազմական նախարարութեան յղած իր տեղեկագրին մէջ, Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարը կը գրէ. «կարծեցի պարտականութիւնը ստանձնել Թրքական բանակի նահանջին հետեւիլու մինչեւ Տաւրոսեան լեռներ եւ ապահովել վիճակագրի տրամադրութեանց գործադրութիւնը՝ ձերբակալելով ուշացած տարրերը եւ ստանձնելով պատերազմական իրեղէններու յանձնումը»(33)։ Այս գրաւումն է, զոր անգլիացիները, արդէն գաղնացած Ֆրանսական ներկայութենէն Լիբանանի մէջ, չներեցին Ֆրանսացիներուն եւ Արեւելեան Լեգէոնն էր, որ Հայկական Լեգէոն դարձած, կրեց Դաշնակիցներու անհամակցողութեան հետեւանքը։

1919 թ.ի Յունուարի սկիզբը զօրավար Ալենպի հրահանգ տուաւ Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատարին՝ Արեւելեան Լեգէոնը քաշելու Կիլիկիայէն, զայն փոխարինելու համար հնդկական պրիկատով մը(34)։ Բանի որ այս հրահանգը չգործադրուեցաւ, անգլիական հրամանատարութիւնը ուրիշ միջոցի դիմեց. հրահանգեց Կիլիկիայէն քաշել Հայկական Լեգէոնը եւ զայն Մարաք դրկել(35), միաժամանակ ընդգիմանալով, որ Ֆրանսական պրաւման զօրախումբը զօրացուի Ֆրանսայէն եկող դիւնուրներով,

---

համաշխարհային պատերազմներու միջեւ ինկող ժամանակամիջոցին, սակայն կրնանք յիշել փոքր դէպք մը, որ կապ ունի այս լեգէոնին հետ։ Այս միաւորը չունեցաւ իր դրօշակը մինչեւ 1919 թ., բանզի անգլիական հրամանատարութիւնը միշտ մերժած էր որ ֆրանսական դրօշակներ տեսնուին զօրահանդէսներու ընթացքին։ Արեւելքի Ֆրանսական Գունդերու հրամանատար զօրավարին թիւ 282/G եւ Ապրիլի 1919 թուակիր նամակը ուղղուած պատերազմական նախարարին (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

33. Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին թիւ 22/G եւ 4 Յունուարի 1919 թուակիր հեռագիրը (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

34. Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին թիւ 31/G եւ 5 Յունուարի 1919 թուակիր հեռագիրը (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

35. Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին թիւ 331/G եւ 5 Մարտի 1919 թուակիր հեռագիրը (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

որոնք պիտի ապահովէին Ֆրանսայի ներկայութիւնը Կիլիկիոյ մէջ(36)։

Իրաւունքը օգնութեան հասաւ Ֆրանսական հրամանատարութեան։ Անգլիացիներուն պատասխանուեցաւ որ «Հայկական Լեգէոնի կանոնադրութիւնը չէր թոյլատրեր անոր օգտագործումը Կիլիկիայէն դուրս»։ Արդարեւ, լեգէոնականները իրենց յանձնառութիւնը ստորագրած էին՝ Թուրքիոյ դէմ կռուելու համար, եւ ինչպէս որ Ֆրանսական Բարձր Կոմիսէրը կը նշէր Բարիզ ուղարկած էր հեռագրին մէջ՝ «կամաւորները զանգուածով պիտի պահանջէին ջրնջել իրենց յանձնառութիւնը», եթէ Մարոք ղրկուէին(37)։

Չկարենալով ոչ քաշել եւ ոչ ալ Մարոք ղրկել տալ Լեգէոնը, զօրավար Ալենպի պահանջեց անոր լուծարքը։ Առաջ քշուած պատըրուակը հայ պինուորներու այսպէս կոչուած օրինազանցութիւններն էին թուրք բնակչութեան նկատմամբ։ Մտնակի զոհացում մը տրուեցաւ անգլիացիներուն՝ զօրացրումովը Հայկական Լեգէոնի Դ. դումարտակին, որ դեռ նոր կազմուած էր հայ նորազատ ռազմագերիներով(38)։ Այս դումարտակի անձնակազմին մէկ մասը զօրացրուեցաւ եւ միւս մասը ցրուեցաւ մնացեալ երեք դումարտակներուն մէջ։ Բանակի Պատմական Սպասարկութեան թղթածրարներուն մէջ մենք չգտանք վաւերաթուղթեր, որոնք տային պատճառը եւ իրաւական հիմնաւորումը այս զօրացրումին։ Կրնայ ըլլալ որ այս միաւորը կազմուած էր եւ անոր պինուորները զէնքի տակ առնուած էին առանց անգլիական հրամանատարութեան արտօնութեան, եւ որ այս իրողութիւնը իբրեւ դրդապատճառ նկատի առնուած էր անոնց պայմանագրութեան ջնջումին համար։ Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատարին կողմէ մէկ ամիս ետք Հայֆայի անգլիական հրամանատարութեան ուղղուած նամակ մը, որով արտօնութիւն կը խնդրուէր հայեր պինուորագրելու՝ ամբողջացնելու համար պինուորներուն թիւը, նախապէս անգլիական արտօնութեան մը անհրաժեշտութիւնը ցոյց կու տայ եւ կրնայ հիմնաւորել մեր առջեւ բերած թեզը(39)։

36· Արեւելքի Ֆրանսական Բարձր Կոմիսէր ժորժ Փիճոյի թիւ 242 եւ 3 Մարտի 1919 թուակիր հեռագիրը (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

37· Արեւելքի Ֆրանսական Բարձր Կոմիսէր ժորժ Փիճոյի 8 Մարտի 1919 թուակիր հեռագիրը (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

38· Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին 27 Մարտի 1919 թուակիր տեղեկագիրը ուղղուած Անգլիական Իւ. Զօրամարմինին (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 5, L. O.)։

39· Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին թիւ

Մէկ ամիս ետք, զօրավար Ալենպի կրկին անդրադարձաւ նոյն հարցին. ան երկրորդ անգամ ըլլալով պահանջեց Հայկական Լեգէոնին զօրացրումը(40): Տրուած ըլլալով որ դարձեալ խօսք կ'ըլլար թուրք բնակչութեան նկատմամբ հայ գինուորներու վերաբերումի մասին, հակառակ անոր որ մենք պատմութեան դիրք չէինք պրեր, պէտք է թերեւս պատասխանել թուրքերու այս ամբաստանութեան, որոնց անպիսցիները ականջ կու տային չատ հաճոյակատարօրէն(41). կը պատասխանենք, պարզապէս ապացուցանելու համար որ քաղաքականութիւնը ուժեղ կերպով կը միջամտէր Արեւելեան Լեգէոնի կեանքին: Սխալ պիտի ըլլար կարծել որ հայ գինուորները, եթէ անվախ էին, նաեւ անմեղապրելի եղան միչտ: Պահանջել անոնցմէ տարեկան գինուորապրելաձներու յատուկ ընթացք մը՝ պարզամտութիւն պիտի ըլլար, եւ ոչ մէկ գինուորական պետ երբեւէ պահանջած է եւ յաջողած է ձեռք բերել նման ընթացք մը իր ռազմիկներէն: Այն քանի մը օրինազանցութիւնները, զորս լեգէոնականները գործեցին, նոյնիսկ եթէ բացատրելի էին այն քօղարով, զորս թուրքերը ըրած էին հայերուն, չէնցան սահմանները որեւէ երկրի մէջ որեւէ յաղթական բանակի յոռի վարքերուն: Եզրակացնելու համար, կարելի է մէջբերել Կիլիկիոյ գրաւման մասին Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու ընդհանուր հրամանատարի տեղեկագրին այն հատուածը՝ որ կը ցոլացնէ հայ գինուորներուն հոգեվիճակը այնքան, որքան անոնց ընթացքը: Զօրավարը կը գրէ թէ Կիլիկիան գրաւելու համար միայն «հայ գինուորներ ունէր, որոնք կ'այրէին այնքան տարիներ իրենց կրած անիրաւութեանց վրէժը լուծելու փափաքով: Երկաթեայ կարգապահութիւն պէտք էր պանոնք ստիպելու համար, որ իրրեւ գինուոր վարուին, եւ նա տրամադրութեանս տակ նոյնիսկ Ֆրանսական մէկ դումարտակ չունէի հնազանդութիւն պարտադրելու համար հայկական հա-

---

11027/1 եւ 26 Սեպտ.ի 1919 թուակիր նամակը (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 5, L. O.):

40. Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին թիւ 578/G եւ 29 Ապրիլի 1919 թուակիր հեռագիրը (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 5, L. O.):

41. Արեւելքի Ֆրանսական Բարձր Գոմիսէր Ժորժ Փիճոյի արտաքին գործոց նախարարին ուղղած թիւ 342 եւ 3 Մարտի 1919 թուակիր հեռագրէն հատուած մը ցոյց կու տայ անգլիացիներու կողմնակալութեան չափը. «Անգլիական կառավարութեան համար միշտ դիւրին պիտի ըլլայ պնդել թէ այս զօրաժողովը (հայերու) կը խռովէ թուրքերը եւ կրնայ ստեղծել խռովիչ վրդովմունք» (Ֆ. Բ. Պ. Մ. Ա. **Levant**, Carton 5, L. O.):

կազդեցութեան սանձազերծման պարագային, և կարգը վերահաստատելու համար դեռ հնարաւոր ծանր խռովութեանց պարագային: Նման պայմաններու մէջ, ես պիտ երջանիկ պիտք է նկատեմ, վախ ապդելու միջոցով եւ առանց ծանր միջադէպի, կիլիկիոյ թուրք պետուորական եւ վարչական իշխանութիւնները Ֆրանսական պրաւման ենթարկել յաջողելուս համար»(42):

Հայկական Լեգէոնը լուծարքի ենթարկելու անպլիական պահանջը իրաւական ոչ մէկ հիմք ունէր: Հայերը յանձնառու եղած էին ծառայելու պատերազմի ընթացքին, որ դեռ վերջ գտած չէր, եւ քանի մը պետուորներու անհատական յանցանքները, որքան ալ ծանր եղած լլային, չէին կրնար առաջնորդել հաւաքական պատժարկումի մը: Հայկական Լեգէոնի լուծարքին քաղաքական եւ պետուորական անպատեհութիւնները. չէին խուսափած Արեւելքի Ֆրանսական իշխանութեանց ուշադրութենէն, որոնք դանդաղ հաղորդեցին Բարիզ(43):

Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատարը պատասխանեց անպլիացիներուն. «Առանց պատերազմական նախարարութեան արտօնութեան՝ իրաւունք չունիմ լուծելու Հայկական Լեգէոնը եւ անկէ նման բան կրնամ պահանջել միայն Բարձր Գոմիսէր Պրն. Ժորժ Փիքոյի համաձայնութեամբ, որուն մօտալուտ Պէյրութ ժամանման կը սպասեմ»(44):

Հայկական Լեգէոնի լուծարքը տեղի չունեցաւ անպլիական ուղղակի ճնշման տակ, սակայն տեղի ունեցաւ աւելի ուշ՝ Մերձաւոր Արեւելքի Ֆրանսական քաղաքականութեան մէջ եղած փոփոխութեան հետեւանքով: Մինչ որ այն օրէն ի վեր, երբ Արեւելքի մէջ Անգլիոյ եւ Ֆրանսայի դրամման գօտիները յստակօրէն ճըշդըւեցան, եւ երբ ամէն երկիր գրաւեց իր գօտին, Ֆրանսական գունդերը դադրեցան անպլիական հրամանատարութեան ենթարկուելէ. այսուհետեւ, վերջինս չէր կրնար հրահանգներ տալ այլեւս Ֆրանսական հրամանատարութեան: Սակայն 1919 թ.ի վերջերը Ֆրանսական արեւելեան քաղաքականութեան մէջ չատ թրքանպաստ արեւելում մը սկսաւ երեւան գալ(45): *Այս նոր քաղաքականութեան*

---

42. Հեռագիր թիւ 22/G եւ 4 Յունուարի 1919 թուակիր, արդէն յիշուած:

43. Հեռագիր թիւ 578/G եւ 29 Ապրիլի 1919 թուակիր, արդէն յիշուած:

44. Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին թիւ 7203/3 եւ 23 Ապրիլի 1919 թուակիր հեռագիրը (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.):

45. Յատկանշական է նկատել այն տարբեր տիտղոսները զոր ունեցան Արեւելքի Ֆրանսական բարձր գոմիսէրները. «Ֆրանսական Հանրապետութեան Բարձր

մուրհակը վճարողը հայերը եղան, իսկ օգտագործողները՝ քեմալական թուրքերը: Այս քաղաքականութիւնը ճակատագրականօրէն առաջնորդեց Հայկական Լեգէոնի լուծարքին, եւ մէկ տարի ետք, Ֆրանսայինեաու կողմէ Կիլիկիոյ լքումին(46): 1919 թ.ի վախճանին, Հայկական Լեգէոնի երկու նոր մխաւորներու կազմութեան արտոնութեան մասին խնդրանքի մը արդէն կը պատասխանուէր հետեւեալ ձեւով, Ֆրանսայի վարչապետ եւ պատերազմական նախարարին կողմանէ. «Մենք չահ չունինք մեծցնելու, ոչ իսկ պահպանելու թիւր այս Լեգէոնին, որուն կարեւորութիւնը, արդարացուած՝ պատերազմի գործողութեանց ընթացքին, այլեւս չի համապատասխաներ խազագեցման գործին, զոր պարտաւոր ենք չարունակելու Սուրիոյ եւ Կիլիկիոյ մէջ ամենայն անկողմնակալութեամբ»(47):

Արեւելքի Ֆրանսական իշխանութիւնները զուր փորձեցին պղտոտել Կիլիկիոյ մէջ հայկական ուժեղ զօրախումբի մը անհրաժեշտութիւնը քեմալականներուն դէմ իրենց պայքարին մէջ. Ֆրանսական կառավարութիւնը հրահանգեց ստիճանարար եւ գաղտնօրէն նուազեցնել Հայկական Լեգէոնին թիւը: Պէյրութէն համապատասխան հրահանգներ տրուեցան Ատանայի զօրաբաժնի հրամանատարին եւ պարբերաբար յիշեցումներ եղան այդ մասին: Ատիճանաբար Հայկական Լեգէոնի երեք դումարտակները մէկի իջան(48): Իրաւականօրէն ասիկա կարելի էր. օգտագործուեցան 26 Նոյեմբերի 1916 թ.ի նախարարական հրահանգի տրամադրութիւնները, որոնք

Գոմիսէր Սուրիոյ եւ Հայաստանի», «Բարձր Գոմիսէր Սուրիոյ եւ Կիլիկիոյ», եւ ապա՝ «Բարձր Գոմիսէր Սուրիոյ եւ Լիբանանի»:

46· Անգարայի դաշնագիրն է, ստորագրուած 20 Հոկ·ի 1921 թ·ին, որ վերջ դրաւ պատերազմական վիճակին Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ եւ որոշեց Կիլիկիոյ պարպումը ֆրանսական զուգդերէն: Անգլիա պաշտօնապէս բողոքեց Ֆրանսայի մօտ Թուրքիոյ հետ անջատ խաղաղութիւն կնքուելուն համար, քանի մը, որ հակառակ էր 30 Նոյ·ի 1915 թ·ի յայտարարութեան, որով Դաշնակիցները «կը պայմանաւորուէին, իրարու հետ, անջատ խաղաղութիւն չկնքել ներկայ պատերազմի ընթացքին»: (Յայտարարութեան պատճէնը տեսնել Փ· Ֆոշէյ, Նշ· աշխ·, հտր· Բ·, էջ 104):

47· Ֆրանսայի վարչապետ եւ պատերազմական նախարարին թիւ 10349-9/11 եւ 17 Դեկտ· 1919 թուակիր պաշտօնագիրը ուղղուած Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին (Ֆ· Բ· Պ· Մ· Ա· **Levant**, Carton 5, L· O·):

48· Արեւելքի Բանակին ընդհանուր հրամանատարին թիւ 373/21 եւ 22 Ապրիլի 1920 թուակիր հեռագիրը Ֆրանսական Ա· Զօրաբաժինի հրամանատարին (Ֆ· Բ· Պ· Մ· Ա· **Levant**, Carton 5, L· O·):

կը թոյլատրէին իրենց կարգապահական մէկոգառում ընդել յանձնառութեան պայմանագրութիւնները: Զինուորական կանոններէն նուազագոյն չեղումը պատրուակ ծառայեց ճամբելու համար լեգէոնականները, որոնք, պատրանաթափ՝ դէպքերու դարձուածքէն, իրենց կարգին, չխուսափեցան անոր առիթ տալէ(49): Բազմաթիւ լեգէոնականներ անձամբ պահանջեցին իրենց արձակումը: Վերջապէս, 1 Մայիսի 1920 թ.ին Պէյրութէն եկաւ վերջին դումարտակին զօրացրման հրահանգը: Այդ օրերուն անոր կէսը կը պաշտպանէր պահեստած զօրանիստ մը, որուն հետ հաղորդակցութիւնները կարուած էին: Այս պատճառով, անոր զօրացրումը ուշացուեցաւ մինչեւ 1 Սեպտ.ի 1920 թ.(50): Իրականին մէջ զօրացրումը աւարտեցաւ միայն 27 Սեպտ.ի 1920 թ.ին(51): Պէտք է նկատել որ Արեւելքի բանակի զլխաւոր հրամանատարին կողմէ տրուած զօրացրման հրահանգը սրեւէ ակնարկութիւն չէր պարունակեր նախապարակական որոշումի մը մասին: Կը թուի թէ նախաձեռնութիւնը կատարուած է Պէյրութի մէջ, Կիլիկիոյ մէջ Ֆրանսական քաղաքականութեան ընդհանուր արեւելեայմէն ներշնչուած: Լեգէոնականներուն արձակումը հետեւանք չէր անոնց յանձնառութեան պայմանագրութեան պայմանաժամի աւարտին: Ապրպարեւ, 24 Հոկտ.ի 1919 թ.ի հրամանագիրը – գրուած 23 Հոկտ.ի 1919 թ.ի օրէնքի 2–րդ յօդուածի տրամադրութեանց հիման վրայ, օրէնք, որ իրաւականօրէն վերջ կու տար պատերազմական վիճակին Թրանսալբ մէջ –, իր առաջին յօդուածին մէջ կը տրամադրէր որ «Հայկական եւ Սուրիական լեգէոններուն օժանդակ լեգէոնականներուն պատերազմի տեւողութեան համար ստորագրած

---

49. Բարիզէն հրահանգներ տրուեցան որպէսզի հայեր զինուորագրեն Օտար Լեգէոնի համար: Ատանայի շրջանի հրամանատար զօրավարին թիւ 2428/1 եւ 27 Մարտի 1920 թուակիր նամակը կը տեղեկացնէ անկարելիութիւնը հայերը զինուորագրելու Օտար Լեգէոնի համար, բացի անոնէ կ'ուզեն կռուիլ մի միայն իրենց երկրին ազատագրման համար (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.):

50. Կրկնակի հրամանագիրներուն, զորս Պէյրութէն կը ստանար, Ատանայի շրջանի հրամանատար զօրավարը պատասխանած էր. «Զօրացրման գործողութիւնը կը պարտադրէ որ նախ հաղորդակցութիւնները վերահաստատուին Ատանայի եւ Ճիհանի միջեւ: Ես չեմ կրնար արձակել հայերը, որոնք Ճիհան կը գտնուին, բացի անոնէ չեն կրնար ճգել այդ վայրը: Հեռագիր թիւ 1402/3 եւ 17 Յուլիսի 1920 թուակիր (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.):

51. «Վերջին հայ կամաւորներու գինաթափութիւնը եւ զօրացրումը ամբողջական կերպով լրացաւ 27 Սեպտ.ի 1920 թ.ին»: Կիլիկիոյ Զօրաբաժինի հրամանատար զօրավարին թիւ 1871/3 եւ 1 Հոկտ.ի 1920 թուակիր հեռագիրը Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատարին (Ֆ. Բ. Պ. Ս. Ա. **Levant**, Carton 5, L. O.):

յանձնառութեան պայմանագրութեանց վաւերականութիւնը երկարաձգուած է մինչեւ այն թուականը, որ պիտի ճշդուի հրամանագրով եւ որ պիտի չկրնայ անցնիլ թուականէն անդին այն օրէնքին, որ պիտի վաւերացնէ խաղաղութեան դաշինքը Թուրքիոյ հետ»:

Այս զօրացրումը համապատասխան էր 26 Նոյ·ի 1916 թ·ի նախարարական հրահանգի տրամադրութիւններուն, որ յառաջօրէն կ'ըսէր· «Լեգէոնը կրնայ գինացրուիլ պատերազմական նախարարին կողմէ»(52), եւ լաւ կը յարմարէր իրենց օժանդակի հանգամանքին պատճառով լեգէոնականներուն համար առեղծուած իրաւական առնորոշ կացութեան: Ընդհակառակն, համապատասխան չէր ո՛չ տաճկին եւ ոչ ալ ոպիին Դաշնակիցներուն եւ Հայ Ազգային Պատուիրակութեան միջեւ 1916 թ·ին կնքուած համաձայնութեան, որ կը վերաբերէր Կիլիկիոյ մէջ հայերուն ինքնավարութեան տուչութեան եւ ազգային բանակի մը կազմութեան, որուն հիմը պիտի կազմէր Լեգէոնը: Սակայն պատմութեան մէջ առաջին անգամ չէ որ քաղաքականութիւնը յաղթանակ կը տանէր իրաւունքին վրայ:

ՆՕԹԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ՄԱՍԻՆ ՔԱՂՈՒԱԾ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԷՆ

Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւները Արեւելեան կամ Հայկական Լեգէոնի մասին կը կրեն հետեւեալ վերնագիրը·

Guerre 1914–1918
Légion d'Orient

Վաւերաթուղթերը գետեղուած են հոս թղթածրարներու մէջ, որոնք կը կրեն հետեւեալ թիւերը·

52· Կիլիկիա իր կատարած ճնուրեան ընթացքին Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Կուրոն իր 19 Օգոստոսի 1920 թուակիր օրագրին մէջ կը յայտարարէր· «Սպաներ, ենթասպաներ, տասնապետներ եւ լեգէոնականներ· Ձեզմէ բաժնուելու նախօրեակին պարտք կը զգամ ձեզի արտայայտել երախտագիտութիւնս ձեր փառապանծ ծառայութիւններուն համար: Պիտի պահեմ սքնչելի յիշատակը ձեր քաջութեան եւ եռանդին: Վեհանձն Ֆրանսան հպարտութեամբ պիտի յիշէ որ պատիւն ունեցաւ Հայաստանի զաւակներուն վստահելու մաս մը սուիններ, զոր անոնք գործածեցին խանդավառութեամբ»:

– Թիւ 890, Սեպտեմբեր 1915–էն Նոյեմբեր 1916,
– Թիւ 891, Դեկտեմբեր 1916–էն Մայիս 1917,
– Թիւ 892, Յունիս 1917–էն Հոկտեմբեր 1917,
– Թիւ 893, Նոյեմբեր 1917–էն Ապրիլ 1918:

Ըստ արխիւներու ցուցակին, Ապրիլ 1918 թ.էն վերջի վաւերաթուղթերը կորսուած են երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքին: (Ծանօթ. Ֆրանսական Բանակի Պատմական Սպասարկութեան արխիւներուն մէջ Լեգէոնի վերաբերեալ վաւերաթուղթեր գոյութիւն ունին մինչեւ այս միաւորին լուծարքի թուականը):

Կրկնութիւններէ խուսափելու համար Արտաքին Գործոց Նախարարութեան վաւերաթուղթերը բնորոշելու համար պիտի գործածեմ երկու թիւեր, որոնցմէ առաջինը թղթածրարին թիւն է, իսկ երկրորդը՝ թերթին թիւը. օրինակ 890–15 կը նշանակէ թէ խնդրոյ առարկայ գրութիւնը թիւ 890 թղթածրարին 15–րդ թերթն է: Երբ վաւերաթուղթը մէկէ աւելի թերթեր կը պարունակէ, պիտի նշուի հետեւեալ ձեւով. 890–22, 23, 24, այսինքն՝ թիւ 890 թղթածրարին 22, 23 եւ 24–րդ թերթերը:

890–1· *Պաշտօնագիր 11 Սեպտ.ի 1915 թուակիր Ծովային Նախարարէն Արտաքին Գործոց Նախարարին: Կը հարցուի թէ ճիշդ–Մուսայէն ազատագրուած հայերը ո՞ւր պէտք է տարուին:*

890–2· *Հեռագիր 10 Սեպտ.ի 1915 թուակիր, «Ժան Տարք» զրահաւորի հրամանատարէն Ծովային Նախարարութեան: Կը յայտնէ թէ Կիպրոսի անգլիական իշխանութիւնները չեն ուզեր հայերը ընդունիլ կղզիին մէջ:*

890–3· *Հեռագիր թիւ 220 եւ 14 Սեպտ.ի 1915 թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ: Կը յայտնէ թէ 3450 հայեր ցամաք հանուեցան Փոր–Սայիտ:*

890–4· *Հեռագիր թիւ 2069 եւ 14 Սեպտ.ի 1915 թուակիր, Լոնտոնի Ֆրանսական դեսպանէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ: «Սըր Նիքոլսըն յայտնեց որ Եգիպտոսի եւ Կիպրոսի անգլիական իշխանութիւնները անկարելիութեան մէջ են հայերը հոն ընդունելու, բնակարանի չգոյութեան պատճառով: Յանձնարարեց որ զիմուի Իտալիոյ, որ կրնայ թերեւս հայերը ընդունիլ Հռոդոս կղզիին մէջ»:*

890–5,6· *Նամակ 14 Սեպտ.ի 1915 թուակիր, Բարիզի անգլիական դեսպանէն Ֆրանսական արտաքին գործոց նախարարին: Դեսպանը կը յայտնէ թէ «Նորին Վեհափառութեան Կառավարութիւնը բոլորովին անտեղեակ էր այն պարագաներուն, որոնց մէջ*

Ֆրանսացի ծովակալը կատարեց ցամաքահանումը յիշեալ տարածքներուն եւ կ՚ուզէ մատնանշել Ֆրանսական կառավարութեան թէ Եգիպտոս եւ Կիպրոս արդէն պաղեստինցիներով լեցուած են եւ հոն դիւրութիւններ չկան նոր, աւելի մեծ թիւեր ընդունելու։ Ասկից պատճառաբանելով այս երկու երկիրներու մէջ դոյութիւն ունեցող պայմաններու ներկայ վիճակը, շատ անբաղձալի պիտի ըլլար որ Թուրքերու եւ քրիստոնեաներու միջեւ ըմբոստական կռիւներու պոռթկումը հոն ցամաք հանուին։

«Այս պատճառով Նորին Վեհափառութեան Կառավարութիւնը չի կրնար հաւանիլ ընդունելու տարագիրները ո՛չ Եգիպտոս եւ ոչ ալ Կիպրոս։ Ան կը յուսայ որ Ֆրանսական կառավարութիւնը պիտի կարողանայ կարգադրել անոնց առժամեայ տեղաւորումը Հռոդոս եւ կամ գոնէ փոխադրել Ալժերիա»։

890–8· Հեռագիր թիւ 2075 եւ 15 Սեպտ·ի 1915 թուակիր, Լոնտոնի Ֆրանսական դեսպանէն արտաքին նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ թէ ըստ անգլիական կառավարութեան «Գահիրէի կառավարիչին մերժումը (հայերը Եգիպտոս ընդունելու) կ՚արդարացուէր նաեւ քաղաքական պատճառներով։ Եգիպտոսի մուսլիմանները Ակնուսներու կողմանէ գրգռուած են եւ արուած ապաստանը հայերուն՝ որոնք Սուլթանին դէմ ըմբոստ կը նկատուին, կրնայ եղեր խռովութեան պատճառ ըլլալ։ Ուրեմն ինձ անկարելի կը թուի ձեռք ձգել անգլիական կառավարութեան դործակցութիւնը»։

890–9· Հեռագիր թիւ 1354 եւ Սեպտ·ի 1915 թուակիր, արտաքին գործոց նախարարէն Հռոմի Ֆրանսական դեսպանին։ Կը հարցուի թէ արդեօ՞ք Իտալիա կրնայ հայ տարագիրները ընդունիլ Հռոդոս կղզին։

890–11· Հեռագիրներ թիւ 92, 205 եւ 264 եւ 16 Սեպտ·ի 1915 թուակիր, արտաքին գործոց նախարարէն Ալժերիոյ, Թունուզի եւ Մարոքի կառավարիչներուն։ Յայտնելէ ետք որ անգլիական կառավարութիւնը չ՚ուզեր հայ տարագիրները պահել Եգիպտոսի մէջ, կը հարցուի· «Պիտի ուզէի գիտնալ թէ ձեր կառավարած երկիրներու մէջ կարելի՞ է ընդունիլ որոշ թիւով այս տարագիրները... Հաղորդեցէք թէ քաղաքական տեսակէտէն որեւէ անպատեհութիւն կը տեսնէ՞ք օսմանեան կայսրութենէն դադրած այս օսմանցի քրիստոնեաներու տեղաւորման»։

890–12· Հեռագիր թիւ 2909 եւ 17 Սեպտ·ի 1915 թուակիր, արտաքին գործոց նախարարէն Լոնտոնի Ֆրանսական դեսպանին։ «...կը կարծեմ որ չարմար է հարցնել ռուսական կառավարութեան թէ արդեօ՞ք կը կարծէ որ կարելիութիւն կայ այս հայերը Կովկաս

փոխագրելու, ուր անոնք իրենց կրօնակիցներու մօտ պիտի գտնէին օգնութիւն եւ նեցուկ»։ «...Հարցուցէք Սըր Կրէյին թէ պիտի ուղէ՞ր ընկերակցիլ այն խնդրանքին, զոր մխոք ունիմ ընել այս մասին Փեդրոկրատ»։

890–13· Հեռագիր թիւ 135 եւ 17 Սեպտ.ի 1915 թուակիր արտաքին գործոց նախարարէն Գահիրէի Ֆրանսական մինիստրին։ Տեղեկութիւններ կ'ուզուի Փոր-Սայիտի ճեպէլ-մուսայիներու մասին (թիւ, արհեստ եւլն.) եւ «...պիտացուցէք մանաւանդ թէ կրնա՞ է անոնցմէ գինուոր արձանագրել Արեւելքի մեր օտար բանակին համար»։

890–15· Հեռագիր թիւ 217 եւ 18 Սեպտ.ի 1915 թուակիր, Թունուզի Ֆրանսական կառավարիչէն արտաքին գործոց նախարարին։ Կառավարիչը քաղաքական անպատեհութիւններ կը տեսնէ հայերու Թունուզ ընդունուելուն մէջ եւ կ'առաջարկէ դանոնք տանիլ Բորսիբա կղզին։

890–16· Հեռագիր թիւ 224 եւ 19 Սեպտ.ի 1915 թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիսարէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ թէ ճեպէլ-մուսայիներու մէջ 869 այր մարդ կայ, 15–60 տարեկան, որոնցմէ 500 հատը կրնան լաւ գինուորներ ըլլալ։ «Զօրավար Մաքսուէլ (Ծանօթ. Եգիպտոսի անգլիական ուժերու ընդհանուր հրամանատար) առաջարկած է հայերու պետին որ 500 կամաւորներով հայկական լեգէոն մը կազմուի, որ կրնայ զօրացուիլ Ամերիկայի հայերով, եւ որ կրնայ գործածուիլ արշաւանքներ ընելու Թրքական ծովեզերքի վրայ, Ալեքսանդրէթի շրջանին մէջ։ Հայերուն պետը յայտնեց որ շատ չփոթած էր այս առաջարկէն, քանզի ինք կ'ուզէ աւելի մեր կողքին կռուիլ»։ (Ծանօթ. Ըստ Ֆրանսացի տեղակալ Սենթ Քէնթէնի մէկ գրութեան, նոյնպէս նախարարին ուղղուած, հայ պետին անունն է Փիէր Տիմլազեան)։

890–17· Հեռագիր թիւ 236–G եւ 20 Սեպտ.ի 1915 թուակիր, Մարոքի կառավարիչէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ չի կրնար հայերը Մարոք ընդունիլ քաղաքական պատճառներով. «Այս արարքին մէջ պիտի տեսնուէր հաստատ փաստը մեր ձախողութեան Արեւելքի մէջ եւ թուրքերուն յաղթանակը Դաշնակիցներու վրայ»։

890–21, 22, 23· Երեք հեռագիրներ, թիւ 226, 227, 228 եւ 22 Սեպտ.ի 1915 թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիսարէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։

Փոր-Սայիտ բանակած հայերու թիւն է 4083 անձ, որոնցմէ 912 այր մարդ, 1296 կին, 697 մանչ, 547 աղջիկ, 631 մանուկ։ 500 անձ կռուելու կարող են։

«Իրենք կ՚ուզէին զէնքեր եւ ռազմամթերք, կռիւը չարունակելու համար։ Ծովակալը չկարողանալուն իրենց դահացում տալ, անոնք յօժարած են նաւ ելլել։ Ես անձնապէս տեսայ եւ հարցաքննեցի իրենց պետերէն չատերը. բոլորն ալ կ՚ուզեն գինուիլ եւ երթալ իրենց վրէժը առնել Թուրքերէն։

«Հայ պետերը ինձի ըսին որ բոլորին փափաքն է գործել Ֆրանսացիներու հետ, բայց եթէ անդլիացիները իրենց գործակցութիւնը ուզեն, իրենք պիտի չկրնան մերժել։ Պետը նոյն իսկ իմ խորհուրդը հարցուց թէ ինչ պէտք էր պատասխանէր հաստատ ահանջի մը։ Ես իրեն պատասխանեցի որ Ֆրանսական եւ անդլիական կառավարութիւնները պիտի խորհրդակցին հայերու մասին եւ խորհուրդ տուի համբերել եւ սպասել ինչ որ պիտի որոշուի։

«... Հայերը լեռնային երկիր են, վատահօրէն կրնան դիմագնդ բարդիպաններ ըլլալ. կը կասկածիմ որ կարողանան լաւ հեռաւոր գինուորներ ըլլան»։

890–25· Հեռագիր թիւ 231 եւ 23 Սեպտ·ի 1915 թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտ. գործոց նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ որ զօրավար Մաքսուէլ կ՚առաջարկէ զէնք տալ հայերուն եւ պիրենք զրկել իրենց լեռները «ուր անոնք ապստամբութեան բոյներ կրնան առեղծել, ինչ որ իրեն պիտի քաշէ հայ կամաւոր բոլոր երկիրներէն»։ Զօրավարը կ՚ուզէ որ Ֆրանսական կառավարութիւնը իր վրայ առնէ հայերու քեռը։

890–29·30· Նամակ 29 Սեպտ·ի 1915 թուակիր Աբչակ Զօպանեանէն արտ. գործոց նախարարին։ Ձեպէշ–Մուսայի հայերուն իրր զինուոր օգտագործման մասին. «Հայերու անջատ չարժումը այս տաեն ինձ անխոհեմ կը թուի։ Ես չատ փափաքելի կը դանեմ որ Դաչնակիցներու գործողութիւն մը՝ հայերու գործակցութեամբ, չուշանայ եւ նոյնիսկ ան զուգադիպի այն մեծ հիպին հետ որ տեղի պիտի ունենայ կ. Պոլսոյ դէմ։ Ես չեմ կարծեր որ Թուրքերը նեղկայիս չատ ուժեր ունենան կիլիկիոյ մէջ»։

890–32–ին 36· Տեղեկագիր թիւ 286 եւ 17 Սեպտ·ի 1919 թուակիր, Միջերկրականի Ֆրանսական 3–րդ նաւատորմիղի առաժամեայ հրամանատար դեր–ծովակալ Տարիէնէն ծովային նախարարին. «Եպիսկոպոսի հայ տարագիրներու բնակութիւնը եւ սնունդը ապահովելու համար առնուած առաժամեայ կարգադրութեանց մասին»։ Տեղեկագրին մէջ գրուած է նաեւ հետեւեալը. «Մինչեւ հիմա չկրցայ հաւաքել կատարեալ փաստարկութիւն որ պէտք է պիտցնել տալու այն չարժառիթները, որոնք որոշել տուին Տեսէ զրահաւորի հրամանատարին՝ 3–րդ նաւատորմիղի հրամանատար ծովակալին արտօնու-

թեամբ, հայ բնակչութեան անմիջական պարպումը, եւ նաեւ կատարուած գործողութեանց մանրամասնութիւնները»։

890–39, 40· *Նամակ 11 Հոկտ·ի 1915 Թուակիր Բարիզի անգլիական դեսպանէն Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ իր կառավարութեան դժգոհութիւնը եգիպտոս գտնուող հայերու մասին եւ կը նշէ զանոնք տեղւոյն վրայ օգտագործելու անկարելիութիւնը։ Ֆրանսական իշխանութիւնները պէտք է չուտով կարգադրեն այս հարցը։ Եգիպտոսի անգլիական իշխանութիւնները «կ'առաջարկեն որ ինդրոյ առարկայ անձինք պէտք է ղրկուին գործելու Կալիբոլիի ծովեզերքը, ուր անոնք կրնան չատ օգտակար ըլլալ»։*

890–41· *Հեռագիր Թիւ 152 եւ 12 Հոկտ·ի 1915 Թուակիր, արտաքին գործոց նախարարէն Գահիրէի Ֆրանսական մինիստրին։ Վերոյիշեալ նամակին պարունակութիւնը կը հաղորդէ եւ իրմէ կը պահանջէ դիւրացնել գործադրութիւնը այն միջոցներուն, որոնք ձեռք պիտի առնուին հայերը ղրկելու աշխատանքի Մուտրոսի նաւահանգիստը, եւ որոնց մասին պատերազմական նախարարը պէտք եղած հրահանգները ղրկած է Գահիրէի Ֆրանսական զինուորական մարմինին։*

890–43· *Հեռագիր Թիւ 254 եւ 13 Հոկտ·ի 1915 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին։ «Հայերը ցաւով միայն պիտի ընդունին իրր բանուոր ծառայել։ Այսուհանդերձ իրենցմէ չատեր լինձի յայտարարեցին որ պիտի համակերպին ատոր, քանզի մեզի հանդէպ երախտապիտութեան պարտք մը ունին»։ Հայերը կը յայտնեն նաեւ որ պէտք չէ որ իրենք իրր թուրք ռազմագերիներ նկատուին Դաշնակիցներու կողմանէ։*

890–45· *Հեռագիր Թիւ 33, եւ 29 Հոկտ·ի 1915 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ դժուարութիւններ կան Փոր–Սայիտի տարագիրներու պէտքերը Եգիպտոսի հայ գաղութին կողմանէ հոգալ տալու մէջ։ Մինչեւ հիմա հանպանակուած դումարով կարելի է միայն հագուստ եւ ծածկոցներ բաշխել ճեպէլ–մուսայիներուն։ Մնունդը միշտ կ'ապահովուի անգլիացիներու կողմանէ։*

890–48, 49, 50, 51· *Տեղեկագիր 2 Նոյ·ի 1915 Թուակիր, Միջերկրականի Ֆրանսական 3–րդ Նաւատորմիղի հրամանատարէն ծովային նախարարին, Բարիզ։ Հակառակ կ'արտայայտուի հայերուն իրր բանուոր գործածուելուն։ «Ճեպէլ–Մուսայի հայերը չեն անոնցմէ, որոնք թոյլ տուին որ զիրենք ջարդեն։ Անոնք բնաւ չեն այն կրաւորական անձերէն, զորս Եւրոպան վարժուած է տեսնելու տանելին, զրեթէ առանց քրթմնջիւնի, ամենազարհուրելի լուծը»։*

Ծովակալը կ'առաջարկէ զինել հայերը եւ զրկել զանոնք փոքր արշաւանքներ ընելու Թրքական երկաթուղիի գծին վրայ, Պաքչէի փապուղին եւ կամ Ռաճուի կամուրջը։

890–60, 61, 62· Նամակ թիւ 50 եւ 10 Փետրուարի 1916 թուակիրը, Գահիրէի Ֆրանսական մինիսարէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ որ Առաքել Պէյ Նուպար եկած է զինք տեսնելու իրեն հաղորդելու համար Դոկտ. Կիպսլընղի (նիւ եորք Թայմզի խմբագիր) կողմանէ, յանուն ամերիկեան յանձնախումբերու, որոնք կը հետաքրքրուին Թուրքիոյ հայոց ճակատագրով, որ իրենք ցաւալի եւ վտանգաւոր կը դանեն հայերու զինուորագրութիւնը Դաշնակիցներու կողմանէ, քանզի ասիկա կրնայ վրիժառութեան տեղի տալ դեռ Թուրքիոյ մէջ գտնուող հայերու հանդէպ։ Մինիսարը կը յայտնէ Առաքել Պէյ Նուպարին թէ հայերու օգտագործումը նախատեսուած է իրենց իսկ վախաքին վրայ եւ «Թուրքիոյ հայերու բնաջնջումը հասած կը Թուի իր վերջին ծայրին եւ Դոկտ. Կիպսլընղի նկատողութիւնները ժիրախտաբար այլեւս քիչ արժէք ունենալ կը Թուին»։

Նամակին մէջ գրուած է նաեւ հետեւեալ դէպքի մասին։ Ծովակալ Մորօ (Միջերկրականի Ֆրանսական 3–րդ Նաւատորմիղի հրամանատար) այցելութիւնը կ'ընդունի Հնչակեան կուսակցութեան պատկանող երկու անձերու, որոնք իրենց եւ Պօղոս Նուպար փաշայի անունով «կը խնդրեն արտացոլել Փոր–Սայիտի հայ տարագիրներուն զինուորական վարժութիւնը, զինումը եւ անոնց օգտագործումը Ասիոյ մէջ»։ Ծովակալը յիշեալ երկու անձերը կը զրկէ կապի անգլիական սպային, որ անոնցմէ կը պահանջէ իրենց խնդրանքը ներկայացնել գրաւոր կերպով։ Գրաւոր խնդրագիրը առանձէ վերջ, կապի անգլիացի սպան, կարծելով որ իրեն ներկայացող անձերը Հայ Ազգ· Միութիւնը կը ներկայացնեն, նամակով մը կը հարցնէ իրենց թէ ի՞նչ պայմաններու մէջ հայերը կրնան օգտագործուիլ։ Այս նամակին զրկուելէն ծովակալ Մորօ անտեղեակ կը մնայ։ Վերոյիշեալ երկու անձերը իրենց ստացած գրութիւնը կը փոխանցեն Առաքել Պէյ Նուպարի, որ կը կարծէ թէ ծովակալ Մորոյի կողմանէ առնուած նախաձեռնութեան մը առջեւ կը գտնուի։ Եղած քննութիւններէն այնպէս կը հետեւի որ երկու կուսակցականները ինքնանկախ գործած են, ուզելով Դաշնակիցները ստիպել հայերու զինուորագրման եւ այսպիսով՝ Գահիրէի Հայ Ազգ· Միութիւնը դնել կատարուած իրողութեան առջեւ։

Ֆրանսայի մինիստրը կը յայտնէ իր նամակին մէջ որ յիշեալ երկու հայերը (որոնց անունը չի տար) Հայ Ազգ· Միութեան անդամ են, սակայն համակարծիք չեն միւս անդամներուն հետ։ Առա-

ջիններըը կ'ուզեն ուղղակի գործունէութիւն մը՝ կռուելով, մինչդեռ միւսները «կ'ուզեն իրենց պահանջքները հետապնդել պարապանեքուն ներածին չափ օրինաւոր գործունէութեամբ մը, եւ հարցը կը ձգեն Դաշնակիցներուն՝ ապագային առնելիք որոշումներուն»։

Մինիսթրը իր նամակին վերջաւորութեան կը յայտնէ թէ ծովակալ Մորօ իմանալով որ ուզած են դինք խաղի բերել «քիչ համամիտ կը թուի հայերու դինուորական վարժութիւնը չարունակելու»։

890–67· *Նամակ 22 Մարտի 1916 թուակիրը, Պօղոս Նուպար Փաշայէն ծովակալ Մորոյի։ Հակառակ կ'արտայայտուի հայերուն Թուրքիոյ դէմ առանձնապէս գործածուելուն։ Կը յիշէ կ. Պոլսոյ Պատրիարքին ուղերձը, որով կը պահանջուի բոլոր հայ զաղութներէն ետ կենալ ամէն քաղաքական գործունէութենէ։ Նամակին մէջ կ'ըսուի նաեւ որ «եթէ կան հայեր, որոնք կ'ուզեն եւ կարող են կռուիլ, անոնք պէտք է դինուորագրուին Դաշնակիցներու դրօշին տակ եւ մաս կազմեն անոնց կանոնաւոր զօրագունդերուն»։*

890–69, 70, 71· *Տեղեկագիրը 8 Ապրիլի 1916 թուակիրը, տեղակալ Սէնթ Քէնթինէն պատերազմական նախարարին։ Փոր–Սայիտի տարագիրներուն մասին տեղեկութիւններ կու տայ եւ ի մէջ այլոց կը յայտնէ որ հայերուն Թուրքիոյ երկաթուղիի դիծին դէմ գործածութեան ծրագիրը մէկդի դրուեցաւ Պօղոս Նուպար Փաշայի պահանջքին վրայ։ Ներկայիս մօտ 250 անձ նաւաստիներու կողմանէ կը մարզուին եւ կը յանձնարարէ Օտար Լեգէոնի մէջ ընդունիլ այն հայերը, որոնք կ'ուզեն կռուիլ։*

890–72· *Նամակ թիւ 3221–9/11 եւ 21 Մայիսի 1916 թուակիրը, պատերազմական նախարարէն արտ. գործոց նախարարին։ Պօղոս Նուպար Փաշայի ծովակալ Մորոյի ուղղած դրութեան պատասխանելով, կը յայտնէ որ կարելի չէ հայերը ընդունիլ Օտար Լեգէոնի մէջ։ (Ծանօթ· 16 Օգոստոսի 1915 թուակիր ֆրանսական օրէնքը ասիկա չէր թոյլատրեր։ Տես՝ Ատտ, էջ 45)։*

890–74· *Հեռագիր թիւ 837 եւ 4 Յուլիսի 1916 թուակիրը, Լոնտոնի ֆրանսական դեսպանէն արտ. գործոց նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ թէ Ամերիկայի հայերը կ'ուզեն որ անգլիացիներու մօտ Հնդկաստանի մէջ գտնուող, թուրք բանակէն առնուած հայ ռազմագերիները ազատ արձակուին, որպէսզի դաշնակից բանակներու մէջ կռուին թուրքերու դէմ։ Դեսպանը կը հարցնէ թէ Ֆրանսան կրնա՞յ յանձն առնել յիշեալներուն ծախքերը, եւ կ'աւելցնէ· «Կիպրոսի մէջ հայկական զօրախումբի մը միացն ներկայութիւնը կրնայ ինքնին մտահոգել թուրքերը»։*

890–76· Նամակ 19 Յուլիսի 1916 Թուակիր, արտ· գործոց նախարարէն պատերազմական նախարարին: Կը յայտնէ թէ նկատի առնելով Արեւելքի ներկայ կացութիւնը (կ'ակնարկէ արաբական ապստամբութեան) Ֆրանսան չհամ ունի ներկայ ըլլալու այդ հողամասին վրայ: Կը հարցնէ թէ արդեօք կարելիութիւն կա՞յ հայթայթելու զէնքերը և անձնակազմը, որոնք հարկաւոր են 5000 հոգիէ բաղկացած հայ զօրախումբի մը կազմութեան:

890–85, 86, 87· Նամակ թիւ 150 եւ 1 Օգոստոսի 1916 Թուակիր, Ֆրանսական բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Ժոֆրէէն պատերազմական նախարարին: Այն կարծիքէն է որ պէտք է կազմել չորս դումարտակներէ բաղկացած հայկական զօրախումբ մը Ֆրանսացի սպաներէ ղեկաւարուած: Այս միաւորը պէտք է ղրկուի Սուրիոյ Նաւարաժինի հրամանատարութեան տակ, քանզի Արեւելքի բանակը վայրկեան հեռու է կարողանալ լաւ պայմաններու մէջ օգտագործելու համար այս զօրախումբը:

890–93· Նամակ թիւ 5140 եւ 10 Օգոստոսի 1961 Թուակիր, պատերազմական նախարարէն արտ· գործոց նախարարին: Կը յայտնէ թէ համաձայն է Կիպրոսի մէջ հայկական միաւորի մը կազմութեան: Կ'առաջարկէ անգլիական կառավարութեան հաւանութիւնը առնել այս մասին եւ դիւանագիտական առաքելութիւն մը ղրկել Արեւելք՝ խնդիրը տեղւոյն վրայ քննելու համար:

890–99· 22 Օգոստոսի 1961 Թուակիր նօթով մը արտ· գործոց նախարարը կը պատասխանէ սուրիացի պետերէ եղած առաջարկի մը, Հարաւային Ամերիկա բնակող, իրենց հայրենակիցներէն միաւոր մը կազմելու համար Ֆրանսական զօրքին տակ: Նախարարը կը յայտնէ թէ Ֆրանսան չի կրնար ուղղակի, տեղւոյն վրայ դիւանագրել սուրիացիները եւ կ'առաջարկէ սուրիացի կամաւորներէ կազմել զումարտակ մը եւ զայն կցել Կիպրոսի մէջ կազմուելիք հայկական միաւորին:

890–107· Նամակ թիւ 356 եւ 10 Սեպտ·ի 1916 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիսարէն արտաքին գործոց նախարարին: Կը փոխանցէ Ֆրանսական դիւանագիտական առաքելութեան պետ՝ գեր–գընդապետ Պրեմոնտի մէկ դրութիւնը, որ կը յանձնարարէ հայերը օգտագործել, զանոնք Կիպրոսի մէջ մարզելէ յետոյ: Արդէն 200 հոգի բոլորովին մարզուած են եւ 200 հոգի ալ կրնան պատրաստ ըլլալ քիչ առենէն: Կը յայտնէ թէ անգլիացիները կ'ուզեն 200 հայ ղրկել Սալոնիկ՝ գործածուելու համար իբր Ջորեպան իրենց բանակին մէջ:

890–114· Հեռագիր թիւ 1203, եւ 13 Սեպտեմբերի 1916 Թուակիր, Լոնտոնի Ֆրանսական դեսպանէն արտ· գործոց նախարա-

բին, Բարիզ։ Անգլիական կառավարութիւնը համաձայն է որ հայ կամաւորները մարզուին Կիպրոսի մէջ։

890–123–էն 149· Տեղեկագիրներու եւ նամակներու շարք մը կայ, տարբեր անձերէ եւ տարբեր թուականներով, մեզի ծանօթ վերի հարցերու մասին (հայերու ազատումը ֆրանսական նաւատորմիղի կողմանէ, անոնց հաստատումը Փոր–Սայիտ, անոնց օգտագործման համար մինչեւ հիմա առաջ քշուած ծրագիրները, եւայլն, եւայլն)։ Հարկ է յիշել ծովային զօրքերու հարելուցեալ ժիրոյի տեղեկագիրը 18–5–1916 թուակիր, ուր մանրամասնութիւններ կան ճեպէլ–մուսացիներու վիճակորոշական վարժութեան մասին։ 208 հոգի արդէն բոլորովին մարզուած են եւ կրնան անմիջապէս օգտագործուիլ· «Հայ կամաւորներու միջինը կը կազմէ երեւելի կերպով խելացի խումբ մը· թերեւս քիչ մը չատ խելացի կատարեալ կերպով կարգապահ ըլլալու համար։ Իրական կարգապահութիւնը հայու նկարագրին չի համապատասխաներ»։

Նոյն հարիւրապետը Թուրքիոյ դէմ կատարուելիք որեւէ վիճակորոշական գործողութեան համար հայ կամաւորներու կողմանէ, կ'առաջարկէ հետեւեալ անձերը·

Խումբին պետը՝ Եսայի Եպրուպեան եւ օգնականներ՝ Սերոբ Գասապեան, Պօղոս Գիւտճեան, Սարգիս Արկայեան, Մարտիրոս Պետճեան, Միհրան Աչգարեան, Սարգիս Գասպարեան։

890–151· Հեռագիր թիւ 337 եւ 22 Սեպտ·ի 1916 թուակիր Գահիրէի ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին։ Կը խնդրէ որ հայերու օգտագործման հարցին լուծում մը տրուի չուտով, «քանզի այս խնդիրը պատճառ կը դառնայ որոշ տհաճութեան մը ֆրանսական նաւային ուժերու եւ անգլիական վիճակորոշական իշխանութեան միջեւ»։

890–152 Հեռագիր թիւ 6173–9/11 եւ 23 Սեպտ·ի 1916 թուակիր, պատերազմական նախարարէն Գահիրէի ֆրանսական մինիստրին։ Կը յայտնէ թէ հազարապետ Ռոմէօ Եղիպտոս կը ղրկուի պէտք եղած քննութիւնները կատարելու, եւ անգլիական իշխանութեանց հետ հաղորդակցելու համար։

890–159, 160· Ցուչագիր մը արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Փ· ոը Մարժըրիի կողմէ նախարարին ուղղուած։ Որոշ թուական դրուած չէ, սակայն դրութեան մէկ անկիւնը աւելցուած է «Հոկտ· 1916»։

Քարտուղարը կը յայտնէ Պօղոս Նուպար Փաշայի իրեն տուած այցելութեան մասին։ Պօղոս Նուպար Փաշան այն կարծիքէն է որ եթէ կոչ ըլլայ հայ կամաւորներ զինուորագրելու ֆրանսական դուն–

դի մը մէջ, կարելի է եգիպտահայերու եւ ճեպէլ–մուսացիներու մէջ բաւականաչափ թիւով կամաւորներ գտնել դումարտակ մը կազմելու համար: Ան այլեւս նախկին եղծիչ ընդդիմութիւնը չ'ըներ հայ կամաւորներու Ֆրանսայի կողմանէ զինուորագրութեան, սակայն կը խնդրէ զղայչ ըլլալ որպէսզի թուրքերուն պատրուակ չի տրուի ջարդերը արդարացնելու: Ան կը մաղթէ որ Ֆրանսան իրեն բաժին ըլլալիք թրքական հողամասերուն մէջ ընդունի շատ մեծ թիւով հայեր: Փաչան կը խնդրէ զինք ապահովել որ Կիլիկիան Սուրիայէն պիտի անջատուի կազմելու համար առանձին նահանգ մը, ուր հայերը պիտի ունենան երաշխիքը իրենց կրօնական եւ մշակութային ազատութեան: Ընդհանուր քարտուղարը կը պատասխանէ Նուպար Փաշային որ ինք լիազօրուած չէ այսպիսի հարցերու մասին վիճելու, եւ թէ կանխահաս է որոշել վերջնական բաժանումները հողամասերու, որոնց սեփականութիւնը դեռ անստոյգ է: Բայց կ'ըսէ որ յայտնի է թէ Ֆրանսան միշտ արդարութեան հոգը ունեցած է իր խնամքին վստահուած բնակչութեանց հանդէպ, եւ Փաչան կրնայ վստահ ըլլալ որ հայերը Ֆրանսական դրօշին տակ պիտի գտնեն խաղաղութիւն, հեշտ կեանք եւ պատիւ:

Ընդհ. Քարտուղարը կ'առաջարկէ նախարարին որ առանց վարանելու, Ֆրանսա՝ ճեպէլ–Մուսայի հայերու ծախքը յանձն առնէ և պատրաստէ զանոնք Ֆրանսական ազգեցութեան ռահվիրաները ըլլալու Մերձաւոր Արեւելքի մէջ: «Հայերը աշխատասէր են, խելացի եւ շահի հակամէտ: Եթէ պիտանի զինենք մեզի բարեբացնել, եւ յաւ ծրագրուած կրթութեամբ մը եւ խիստ անօրէնութեամբ մը զինենք ազատել այն թերութիւններէն, զորս ստացան դերութեան աաեն, անոնք Փոքր–Ասիոյ մէջ մեր իշխանութեան լաւագոյն տարրերը պիտի կազմեն: Այն ինչ որ պիտի ընենք ներկայիս, ճամբայ պիտի պատրաստէ իրենց հետ ունենալիք մեր ապագայ գործունէութեան»:

Ընդհ. Քարտուղարը կ'առաջարկէ նաեւ որ Պատերազմական Նախարարութեան մօտ մշտամուտ որպէսզի հազարապետ Ռոմէօ աշխատի Եգիպտոսի հայ կամաւորները եւ Հնդկաստան գտնուող հայ ռազմագերիները միացնել ճեպէլ–մուսացիներուն, հայկական գունդի մը կազմութեան համար:

890–162· Հեռագիր 26 Սեպտ·ի 1916 թուակիր, Գահիրէի Ֆրանսական գինուորական կցորդէն պատերազմական նախարարին: Կը յայտնէ թէ ըստ անգլիացի զօրավար Մըրրէյի յայտարարութեան, հայերը մերժած են Սալոնիկ երթալ իբր Ջորեպան ծառայելու համար անգլիական ուժերու մէջ:

890–172· *Հեռագիր թիւ 421 եւ 19 Հոկտ·ի 1916 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ զօրավար Մըրրէյ ընդհմտութիւն չ'ըներ որ հայ կամաւորներ զինուորագրուին եւ հաւաքուին Կիպրոսի մէջ. սակայն անոնց մեկնումին հրաման տալէ առաջ կը սպասէ որ Լոնտոնէն լուծեն պաշտօնապէս հաղորդուի Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ այս մասին գոյացած համաձայնութիւնը։*

890–174· *Հեռագիր թիւ 1402 եւ 19 Հոկտ·ի 1916 Թուակիր, Լոնտոնի Ֆրանսական դեսպանէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ անգլիական կառավարութիւնը պէտք եղած հրահանգները ղրկեց Եգիպտոսի անգլիական իշխանութեանց որպէսզի դիւրացուի հայ կամաւորներու մեկնումը Կիպրոս։*

890–191· *Հեռագիր թիւ 392 եւ 30 Հոկտ·ի 1916 Թուակիր, արտաքին գործոց նախարարէն Գահիրէի Ֆրանսական մինիստրին։ «Պօղոս Նուպար Փաշան խնդրեց Հանրապետութեան Լոնտոնի դեսպանէն որ հեռեւեալ հեռագիրը ղրկենք ձեզի, յանձնելու համար Ա. ռաքել Պէյ Նուպարի.*

«Կը հաստատեմ կամաւորներու հարցի մասին 6 Հոկտեմբերի նամակս։ Բացայայտ երաշխիք ստացած ըլլալով որ Դաշնակիցներու յաղթանակէն վերջ, մեր ազգային բաղձանքները պիտի գոհացուին, կը յանձնարարեմ ձեզի ձեռք առնել տալ բոլոր միջոցները՝ քաջալերելու եւ դիւրացնելու համար կարելի ամենամեծ թիւով կամաւորներու զինուորագրութիւնը։ Պօղոս Նուպար»։

890–193· *Նամակ թիւ 468 եւ 19 Նոյ·ի 1916 Թուակիր Նամակով Գահիրէի Ֆրանսական մինիսարէն արտաքին գործոց նախարարին։ Կը յղէ հազարապետ Ռոմէոյի երկու տեղեկագիրները։*

Առաջինը (թերթ 194–202) տեղեկութիւններ կու տայ հետեւեալ կէտերու մասին.

– Հայ կամաւորներու կազմութեան խնդրին արդի վիճակը։
– Փոր–Սայիտ կայանին հայերը։
– Փոր–Սայիտ կայանին կիները եւ տղաքը։
– Կիպրոսի կայանին վիճակը։
– Զօրագրուելիք հայերուն մարզահամարը։

Երկրորդ տեղեկագիրը (թերթ 203–212) կը վերաբերի հետեւեալ կէտերուն.

– Նիւթական միջոցները, որոնք պէտք է ապահովուին։
– Եգիպտոսի հայ պետերուն հոգեկան տրամադրութիւնը։ Բոլորին քով անխտիր Թուրքին հանդէպ զօրաւոր ատելութիւն մը

կայ: (Կու տայ անունները Թորգոմ Սրբազանի, Առաքել Պէյ Նուպարի, եւ այլոց):

– Փոր-Սայիտի կայանին մէջ, բոլոր հայերուն մօտ զօրաւոր բարի կամեցողութիւն մը կայ զործին յաջողութեան համար:

– Իր տեսակցութիւնը սուրիացի պետերուն հետ, սուրիացի կամաւորներ պինուորագրելու մասին:

Հայարարեալ Ռամէօ կ'եզրակացնէ որ եթէ հարցը կը կայանայ միմիայն ձեպէշ-Մուսայի մէջ պինուորական արշաւանք մը ընելու, ճեպէշ-մուսայինները բաւարար են: Սակայն եթէ այդ ձեռնարկը կը կապմէ յառաջապահ խումբը իսկական պինուորական զործողութեան մը Սուրիոյ եւ Կիլիկիոյ մէջ, պէտք է հասկացողութեան զալ հայ եւ սուրիացի պետերու հետ աւելի լայն աշխատանքի մը համար:

Թիւ 890 Թղթածրարին մէջ կան մէկական օրինակ 15 Նոյեմբերի 1916 Թուակիր պատերազմական նախարարի որոշումէն, եւ թիւ 7966–9/11 եւ 26 Նոյեմբերի 1916 Թուակիր նոյն նախարարին հրահանգէն: (Այս վաւերաթուղթերու մասին տես՝ Աստ, էջ 42, 47):

891–6· Հեռագիր 600 թիւ եւ 10 Դեկտ·ի 1916 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին զործոց նախարարին: Կու տայ անունները այն եղիպտահայերուն, որոնք Ազգային Միութեան կողմանէ նշանակուած են Միացեալ Նահանգներ երթալու, հոն հայ կամաւորներ արձանագրելու համար. Թէքէեան՝ Ռամկավար կուսակցութեան, Սապահզիւլեան՝ Հնչակեան կուսակցութեան եւ Հանըմեան՝ Դրօշակի կողմանէ:

891–21, 22, 23, 24, 25· Նամակ թիւ 526 եւ 18 Դեկտ· 1916 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին զործոց նախարարին: Կը փոխանցէ հարազապետ Ռամէոյի թիւ 3 եւ 4 Դեկտ·ի 1916 Թուակիր տեղեկագիրը հայ կամաւորներու մասին: Տեղեկագիրը կը յայտնէ թէ·

– Հայերը չատ համերաշխ կերպով կ'աշխատին եւ իրը փաստ կը նշէ Թէքէեանի պարագան, որ կը զործակցի անցեալին մէջ իր աչքերէն մէկուն կորուստին պատճառ եղող կուսակցութեան հետ:

– Թորգոմ Սրբազան մեկնած է Հնդկաստան, հոն զտնուող հայ ռազմագերիներու կամաւորագրուելուն հարցով:

– Հայ կամաւորներուն առաջին խումբը Կիպրոս մեկնած է 30 Նոյ·ի 1916 Թ·ին:

891–45· Հեռագիր թիւ 25 եւ 8 Յունուարի 1917 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին զործոց նախարարին: Կը յայտնէ թէ Հանըմեան եւ Սապահզիւլեան Մարսէյլ մեկնեցան 2 Յուն·ի 1917 Թ·ին:

891–65· *Հեռագիր թիւ 24 եւ 11 Յուն·ի 1917 Թուակիր, արտաքին գործոց նախարարէն Ուաշինկթընի Ֆրանսական դեսպանին։ Կը յայտնէ որ Հանըմեան եւ Սապահտիւլեան Նիւ–Եորք մեկնեցան, Միացեալ Նահանգներու մէջ հայ կամաւորներ արձանագրելու համար, բոլոր հայ կուսակցութիւնները համաձայն են այս գործին։*

891–77· *Հեռագիր թիւ 62 եւ 20 Յուն·ի 1917 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ Տամատեան մեկնած է Մարսէյլ, Միացեալ Նահանգներ անցնելու համար։*

891–110· *Նամակ թիւ 127 եւ 11 Փետրուարի 1917 Թուակիր, Ուաշինկթընի Ֆրանսական դեսպանէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Զարմանք կը յայտնէ որ հայ պատուիրակներ կը ղրկուին Միացեալ Նահանգներ, հոն հայ կամաւորներ արձանագրելու համար։ Այսպիսի արարք մը հակառակ է երկրին օրէնքներուն, եւ միջազգային իրաւունքին, քանի որ Միացեալ Նահանգներ չէզոք են։*

891–119· *Հեռագիր 22 Փետրուարի 1917 Թուակիր, արտաքին գործոց նախարարէն Ուաշինկթընի Ֆրանսական դեսպանին։ Կը յայտնէ թէ Միացեալ Նահանգներու Ֆրանսական հիւպատոսները իրենք անձնապէս կամաւորներ պիտի չարձանագրեն, այլ պիտի տան պէտք եղած տեղեկութիւնները զինուորագրութեան պայմաններուն մասին եւ պիտի յանձնեն բոլոր վարուց վկայական մը կամաւորներուն։*

891–128· *Հեռագիր թիւ 209 եւ 2 Մարտ 1917 Թուակիր, Ուաշինկթընի Ֆրանսական դեսպանէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ թէ երեք հայ պատուիրակներ հասան Ուաշինկթըն եւ իրեն խոստացան որ խոհեմութեամբ պիտի չարժին իրենց արուած պաշտօնին մէջ։*

891–165· *Նօթ մը 7 Ապրիլի 1917 Թուակիր եւ որ J· W· տառերը կը կրէ իբր առորակութիւն։ Կը յայտնէ թէ Պօղոս Նուպար Փաշան արտաքին գործոց նախարարութիւն եկած է խնդրելով որ Ֆրանսական բանակին մէջ գտնուող հայ կամաւորները Սուեւեցեան Լեգէոնին փոխանցուին։*

891–200· *Հեռագիր թիւ 348 եւ 16 Մայիսի 1917 Թուակիր, արտաքին գործոց նախարարէն Նիւ–Եորքի Ֆրանսական հիւպատոսին։ Կը հրահանգէ որ Պոստոն՝ Պրն· Սիմապլիին փոխանցէ հեռագիր մը, որով զինքը կը շնորհաւորեն իր ունեցած փայլուն յաջողութեան համար, սակայն իրմէ կը խնդրեն որ ապագային կամաւորները Ֆրանսա ղրկէ աւելի փոքր խումբերով։*

891–209· *Հեռագիր թիւ 360 եւ 15 Մայիսի 1917 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին։*

կը յայտնէ թէ Գահիրէի Ազգային Միութիւնը Պատոնէն՝ Պրն. Համեհանէն հեռագիր մը ստացած է։ Ըստ այդ հեռագրին 5,000 հայ կամաւորներ պատրաստ են, սակայն, մեկնումի դժուարութիւններ կան։ Ազգային Միութիւնը կը խնդրէ որ Ֆրանսական կառավարութիւնը միջամտէ այս մասին Միացեալ Նահանգներու կառավարութեան մօտ։

892–15· Թիւ 621 եւ 13 Յունիսի 1917 թուակիր, հրահանգ Ֆրանսայի վարչապետէն ներքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ Ամերիկայէն եկած կամաւորներէն անոնք, որոնք ֆիզիքապէս անկարող կը նկատուին զինուորական ծառայութեան, պէտք է կոչուին ծառայելու իրենց բանուոր զինուորական գործարաններու մէջ։ Անոնք որ այս լուծումին կողմնակից չեն, պէտք է վերադառնան Միացեալ Նահանգները, եթէ ապրուստի միջոցներ չունին։

892–96· Նամակ 26 Յուլիսի 1917 թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիսարէն արտաքին գործոց նախարարին։ Կը յղէ գօրավար Պայլուլի մէկ տեղեկագիրը Կիպրոս՝ Ափեւելեան Լեգէոնի մօտ անոր կատարած քննութեան չուրջ։ Տեղեկագրէն կը յայտնուի որ արդէն վեց հայկական եւ մէկ սուրիական գասակներ կան պատրաստ, իւրաքանչիւրը 200 հոգիէ բաղկացեալ։ Ըստ գօրավարին՝ հայ կամաւորները պիտի չտան իրենցմէ սպասուած արդիւնքը, եթէ զանոնք չդործածեն Ալեքսանտրէթի չրջանին մէջ, վերապրուելու համար իրենց հայրենի օճախները։

892–210· Հրահանգ թիւ 7576–9/11 եւ 15 Հոկտ.ի 1917 թուակիր, պատերազմական նախարարին։ Կը հրահանգէ որ յետ այսու Միացեալ Նահանգներէն Ֆրանսա ղրկուող հայ կամաւորներու առաքումը տեղի ունենայ Ֆրանսական հիւպատոսներու միջոցով։ (Ծանօթ· Հայ կամաւորները Միացեալ Նահանգներէն Ֆրանսա կը ղրկուէին հայ յանձնախումբի մը միջոցով եւ փոխադրութեան համար ծախսուած դումարը կը փոխադարձուէր Ֆրանսական կառավարութեան կողմանէ։ Թիւ 892 Թղթածրարին մէջ 9 Հոկտ.ի 1917 թուակիր նամակ մը կայ, Պօղոս Նուպար Փաշային արտաքին գործոց նախարարին ուղղեալ, որով կը պահանջուի 20,798·50 տոլարի դումար մը որպէս ճամբու ծախս, Միացեալ Նահանգներէն մինչեւ այդ Ֆրանսա ղրկուած հայ կամաւորներուն համար)։

892–220· Նամակ 19 Հոկտ.ի 1917 թուակիր, Պօղոս Նուպար Փաշային արտաքին գործոց նախարարին։ Կը դանդաղի որ փոխադրութեան միջոցներու պակասին պատճառով հայ կամաւորներ երկար ատեն կը սպասեն Մարսէյլ՝ Կիպրոս ղրկուելու համար։ Կը

խնդրէ որ կամաւորները զրկուին պատերազմական պիտոյքներ փոխադրող նաւերով։

892–233, 234, 235· *Նամակ 24 Հոկտ·ի 1917 թուակիր, Պազտատի Ֆրանսական հիւպատոսէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Կը յղէ Գահիրէի Հայ Ազգ· Մխիթեան անդամ Տոքթ· Նէվրուզի 20 Հոկտ·ի 1917 թուակիր մէկ զրուխիւնը, որով այս վերջինը հիւպատոսին հովանաւորութիւնը կը խնդրէ Պազտատի մէջ հայ կամաւորներ արձանագրելու համար Արեւելեան Լեգէոնին։ (Ծանօթ· Հարցը կը վերաբերի անգլիացիներու մօտ գտնուող հայ ռազմագերիներուն Լեգէոնի մէջ զինուորագրուելուն)։*

892–249· *Նամակ թիւ 7984–9/11 եւ 31 Հոկտ·ի 1917 թուակիր, պատերազմական նախարարէն արտաքին գործոց նախարարին։ Կը յղէ հատուածները Արեւելեան Լեգէոնի քննութեան համար Կիպրոս զրկուած զօրավար Պայլուլի տեղեկագրէն։*

– Զօրավարը գովեստը կ'ընէ Կիպրոսի մէջ մարզուող հայ կամաւորներուն, սակայն կը մատնանշէ որ Միացեալ Նահանգներէն եկած հայ կամաւորները նուազ կարգապահ եւ նուազ խանդավառ են քան իրենց ընկերները։ Ան կ'ենթադրէ որ անոնք ազդուած ըլլան ամերիկեան կառավարութենէն, որ որոշ նկատումներ ունի Արեւելքի հանդէպ։

– Զօրավարը հակառակ է Արեւելեան Լեգէոնին փոքրաթիւ խումբերով գործածութեան Թրքական ծովեզրեայ հողերուն վրայ, քանզի այդ հողամասերը լաւ պաշտպանուած են։ Ան կողմնակից է որ Լեգէոնը Պաղեստինէն մեկնող մեծ յարձակողականի մը մաս կազմէ։

893–15· *Հեռագիր 16 Նոյ·ի 1917 թուակիր, Պոսթայի Ֆրանսական հիւպատոսէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ թէ անգլիական իշխանութիւնները դժուարութիւններ կը յարուցանեն հայ կամաւորներու արձանագրութեան համար։ Անոնք նոյն ձեւով կը վարուին նաեւ տեղացիներու մօտ գտնուող հայ կիներու եւ մանուկներու հաւաքման գործին մէջ։*

893–33, 34· *Ցուշագիր 23 Նոյ·ի 1917 թուակիր, արտաքին գործոց նախարարութեան քաղաքական անօրէնէն, նախարարին ուղղուած։ Տնօրէնը կը յայտնէ թէ այցելութիւնը ընդունած է Պօղոս Նուպար Փաշայի եւ Վ. Թէքէեանի։ Այս վերջիններէն եկած են յայտնելու իրենց յուզմունքը զօրավար Պայլուլի առաջարկին մասին, որ կը նախատեսէ Արեւելեան Լեգէոնի գործածութիւնը Պաղեստինի ճակատին վրայ։ Հայերը կ'ուզեն կռուիլ Սուրիոյ հիւսիսը, ազատելու համար իրենց հայրենակիցները։ Տնօրէնը կ'ապահովցնէ երկու*

հայերը որ զօրավարին առաջարկը պէտ ընդունուած չէ Ֆրանսական իշխանութեանց կողմէ։

Քաղաքական անօրէնը իր յուշագրին մէջ կը գրէ նաեւ հետեւեալը. «Պօղոս Նուպար Փաշան անգամ մը եւս պնդեց վուեթկոտ հարկաւորութիւնը յայտարարութեան մը, ի նպաստ հայերուն, Ֆրանսական կառավարութեան կողմէ, եւ նաեւ վերաբերեալ Ֆրանսական հանրապետութեան հաստատ կամքին պահպանք ապագային պէտք կացուցանելու թուրքերու բռնակալութենէն եւ բռնութիւններէն, եւ անոնց ապահովելու, իր հովանիին տակ, ինքնավարութիւն մը, որ իրեն թոյլ պիտի տայ եւս քան զեւս մոռնակից ըլլալ քաղաքակրթութեան բարիքներուն։ Պօղոս Նուպար Փաշան մօտ օրէն ունկնդրութիւն մը պիտի ուզէ Պրն. Փիշոնէն։

«Այս յայտարարութիւնը, ինչպէս յայտնի է, նոյն անհամբերութեամբ կը սպասուի նաեւ սուրիացիներու կողմանէ։ Պրն. Շուքրի Ղանէմ, Սուրիական Կեդրոնական Կոմիտէի Նախագահը, ինք ալ իր կարգին պիտի ուզէ նախարարին ունկնդրութիւնը։

«Անգլիացիներու յառաջացումին պատճառով Երուսաղէմի հիւսիսը, պէտք է որ Ֆրանսական կառավարութեան կողմէ չուտափոյթ յայտարարութիւն մը ըլլայ, որ պիտի ապահովէ Սուրիոյ մեր բարեկամները եւ վերջ պիտի տայ անգլօ–եգիպտական կուսակցութեան գաւերուն, որոնք կը ձգտին Անգլիոյ եւ մեր միջեւ 1916 թ.ին պայացած համաձայնութիւնը ապարդիւն դարձնել»։

893–66· Նամակ թիւ 9259–9/11 եւ 26 Դեկտ.ի 1917 թուակիր, պատերազմական նախարարէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ Պրն. Սմաճեան, Նախագահը Հայ Կամաւորներու Կեդրոնական Կոմիտէի, կ'ուզէ որ իրեն վճարուի հայ կամաւորներու Միացեալ Նահանգներէն Ֆրանսա փոխադրութեան ճամբու ծախքը։ Պօղոս Նուպար Փաշան ալ իր կարգին կ'ուզէ որ նոյն գումարը իրեն վճարուի։ Ֆրանսական դանձատունը Պրն. Սմաճեանին չի վճարեր, քանզի անոր կոմիտէն պաշտօնական հանդամանք չունի։ Եւ որովհետեւ Պրն. Սմաճեան կը պնդէ թէ Հայ Ազգ. Պատուիրակութիւնն ալ նոյն կացութեան մէջ է, պատերազմական նախարարը կը խնդրէ արտաքին գործոց նախարարէն որ իրեն դիտցուի թէ յիշեալ դրամը որու պէտք է վճարուի։

893–161· Վկայական 27 Դեկտ.ի 1917 թուակիր, արտաքին գործոց նախարարէն, Պօղոս Նուպար Փաշայի պաշտօնական հանդամանքը հաստատող։ «Արտաքին Գործոց Նախարարը կը հաստատէ որ Ն. Վ. Պօղոս Նուպար Փաշան, – որ կը բնակի Բարիզ, թիւ 12 Թրոպատէրօ պողոտան –, լիազօրուած է Էջմիածինի Կաթողիկո-

ակն՝ բոլոր երկիրներու հայ լուսաւորչականներու հոգեւոր պետը, Դաշնակից Պետութեանց եւ մանաւանդ Ֆրանսական կառավարութեան մօտ, իբր նախապահը Հայ Ազգ. Պատուիրակութեան, քաղաքական կազմուածք մը, որ պաշտօն ունի վերաքննել ներկայացնել եւ պաշտպանել Թուրքիոյ եւ Կովկասի հայերուն չահերը»:

893–171· *Հեռագիր թիւ 142 եւ 9 Մարտի 1918 Թուակիր, Ժորժ Փիքոյէն (Գահիրէ) արտաքին գործոց նախարարին: Կը յայտնէ թէ Միացեալ Նահանգներու մէջ 4000 հայ կամաւորներ, սպասելէ յոգնած, կը վերադարձուին ամերիկեան բանակին մէջ:*

893–179· *Հեռագիր 14 Մարտի 1918 Թուակիր, արտաքին գործոց նախարարէն Ուաշինկթընի Ֆրանսական դեսպանին: Կը պահանջէ որ միջամտէ ամերիկեան կառավարութեան մօտ որպէսզի հայ կամաւորներու Ֆրանսա մեկնումը դիւրացուի: Նախարարը կը նշէ քաղաքական կարեւորութիւնը Ֆրանսական գործին ներկայութեան Արեւելքի մէջ:*

893–182· *Նամակ 15 Մարտի 1918 Թուակիր, Պօղոս Նուպար Փաշայէն արտաքին գործոց նախարարին: Կը խնդրէ որ Ֆրանսական կառավարութիւնը միջամտէ Միացեալ Նահանգներու կառավարութեան մօտ որպէսզի ամերիկեան բանակին մէջ գտնուող հայ կամաւորները Արեւելեան Լեգէոն զրկուին:*

893–189· *Հրահանգ թիւ 2177–9/11 եւ 23 Մարտի 1918 Թուակիր, պատերազմական նախարարէն ծովային նախարարին: Կը յայտնէ թէ այսուհետեւ Արեւելեան Լեգէոնը կ'անջատուի ծովային ուժերէն, կ'ենթարկուի ուղղակի ցամաքային ուժերուն եւ մաս կը կազմէ Պաղեստինի Ֆրանսական Զօրախումբին: Հայ կամաւորներէ պիտի կազմուի հետեւակազօրքի զօրագունդ մը, բաղկացած երեք գումարտակներէ, որոնցմէ երկուքը արդէն պատրաստ են, իսկ երրորդը՝ մարզուելու վրայ է:*

893–248· *Հեռագիր թիւ 264 եւ 30 Ապրիլի 1918 Թուակիր, Գահիրէի Ֆրանսական մինիստրէն արտաքին գործոց նախարարին: Կը յայտնէ թէ Գահիրէի Հայ Ազգ. Միութիւնը կը խնդրէ որ հետեւեալ հեռագիրը փոխանցուի Պօղոս Նուպար Փաշայի:*

– «Կոչ ըրէք զաղութներու հայերուն, որպէսզի ընդհանուր զօրակոչի ենթարկուին, ինչպէս եղաւ Կովկասի մէջ:

– «Հրահանգեցէք որ Միացեալ Նահանգներու մէջ կամաւորներու վերադարձութեան չարժումը վերսկսի»:

Հայկական Լեգէոնի վերաբերեալ չորս թղթածրարներէն զատ, որոնց պարունակութեան կարեւոր մասերը տուինք նախորդ էջերուն

մէջ, Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւներուն մէջ կը գտնուին երեք ուրիշ Թղթածրարներ, որոնց մէջ եւս կան վաւերաթուղթեր հայերը հետաքրքրող, նոյն ժամանակամիջոցին վերաբերեալ։ Այդ Թղթածրարներու վերնագիրն է.

Guerre 1914–1918
Turquie – Arménie

Թղթածրարներու թիւերն են.

– Թիւ 887, Օգոստոս 1914–էն Դեկտեմբեր 1915
– Թիւ 888, Յունուար 1916–էն Մարտ 1917
– Թիւ 889, Ապրիլ 1917–էն Մայիս 1918։

Այս Թղթածրարներէն քաղած եմ չատ քիչ թիւով նօթեր, զորս կու տամ ստորեւ։

887–95· Հեռագիր թիւ 951 եւ 16 Մայիսի 1915 թուակիր, Լոնտոնի Ֆրանսական դեսպանէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ թէ Սըր Նիքոլսըն կողմնակից չէ որ Դաշնակիցները յայտարարութիւն մը ընեն Թուրքերու կողմէ եղած հայկական ջարդերը դատապարտող։ Սըր Նիքոլսըն կ'ըսէ որ հայերը Թուրքիոյ դէմ ըմբոստութեան մէջ ըլլալ կը թուին։ (Ծանօթ· 24 Մայիսի 1915 թ·ին Դաշնակից պետութիւնները բրին այդ յայտարարութիւնը, այդ մասին տես՝ Աստ, էջ 47)։

887–132· Նամակ 27 Մայիսի 1915 թուակիր, Պօղոս Նուպար փաշայէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Իր շնորհակալութիւնները կը յայտնէ Դաշնակիցներու 24 Մայիսի 1915 թուակիր յայտարարութեան համար։

887–241· Նիւ Եորք Թայմզ թերթի 1 Դեկտ·ի 1915 թիւէն կտրօն մը, որ կը պարունակէ նախկին նախարազահ Թ· Ռուզվելթի 24 Նոյ·ի 1915 թուակիր նամակին պատճէնը։ Ճիչեալը յաւ կը յայտնէ որ «իր երկիրը աւելին չ'ըներ իրենց վայրագութեամբ եւ ծաւալով աննախընթաց եղող այն ոճիրներուն առիթով, որոնք են Հայաստանի ջարդերը»։

888–91· Նամակ 11 Հոկտ·ի 1916 թուակիր Ֆրանսայի պետական նախարար Տենիս Քոչէնէն արտաքին գործոց նախարարին։ Կը յղէ «Փոր–Սայիսի ճեպէլ–Մուսայի հայ տարագիրներու կայանին Հայ Երիտասարդութեան անդամներուն» կողմանէ իրեն ղրկուած պրուժիւն մը, որով անոնք կը յայտնեն իրենց պատրաստակամութիւնը ծառայելու Ֆրանսական դրօշի տակ։ Գրութեան հետաքրքրական կողմը անոր հայատառ թուրքերէն ըլլալն է։ Ստորագրողները

են Մարտիրոս Պաճանեան, Ք. Գոչունեան, Սերոբ Գապագեան եւ Սարգիս Աջտոնեան։

888–123· Նամակ 8 Նոյ·ի 1916 թուակիր, Պօղոս Նուպար Փաշայէն Պրն· Պրիանի (վարչապետ եւ արտաքին գործոց նախարար)։ Ամնարկելով Պրն· Պրիանի 14 Հոկտ·ի 1916 թ·ին, ձերակուտական Լուի Մարթինի ուղղուած նամակին, Պօղոս Նուպար Փաշա կ'ըսէ·

«Դուք անդամ մը եւս մեզի կու տաք կազդուրիչ ապահովութիւնը թէ «երբ արդար հատուցումներու ժամը հնչէ Ֆրանսան պիտի չմոռնայ հայ ազգին կրած ցաւագին աղէտները եւ Ան, իր Դաշնակիցներուն հետ համախորհուրդ, պիտի առնէ հարկ եղած միջոցառումները անոր ապահովելու համար խաղաղութեան եւ զարգացումի կեանք մը»։ Արդարեւ Հայաստան իր ճակատագիրը դրաւ ձեռքերուն մէջ Ֆրանսայի եւ իր Դաշնակիցներուն, որոնք կը կռուին իրաւունքի, արդարութեան եւ ազգայնութեան սկզբունքին յաղթանակին համար»։ (Ծանօթ· Պօղոս Նուպար Փաշայի դրութեան չափերի մէջ դրուած մասը Պրն· Պրիանի նամակին բառերն են)։

889–5· Նամակ 14 Ապրիլի 1917 թուակիր, Արշակ Զօպանեանէն Ֆրանսայի վարչապետին։ Կը խնդրէ որ չէզոք երկիրներ իրենց վրայ առնեն Սուրիոյ եւ Միջագետքի մէջ գտնուող հայերու պաշտպանութիւնը, փոխանակ Միացեալ Նահանգներու, որոնք պատերազմին կը մասնակցին այլեւս։

24 Ապրիլի 1917 թուակիր դրութեամբ մը վարչապետը Պրն· Զօպանեանի նամակը կը յղէ արտաքին գործոց նախարարին խնդրելով որ պատշաճը անօրինուի այդ մասին։

889–7· Նամակ արտաքին գործոց նախարարէն Ֆրանսական դեսպանին, Ուաշինկթըն։ Պրն· Զօպանեանի նամակին մէկ օրինակը կը յղէ, հրահանգելով որ դիմէ Միացեալ Նահանգներու կառավարութեան, տեղեկանալու համար թէ այս վերջինը ինչ կը խորհի ընել այդ մասին։ (Ծանօթ· Այս նամակին թիւը եւ թուականը չունիմ· չեմ յիշեր թէ անոնք դրութեան վրայ չկա՞ին, թէ՝ ես նոթագրելու մոռցած եմ)։

889–173· Նամակ 23 Դեկտ·ի 1917 թուակիր, Պօղոս Նուպար Փաշայէն արտաքին գործոց նախարարին։ Շնորհակալութիւն կը յայտնէ նախարարին, 27 Դեկտ·ի 1917 թ·ին, Ֆրանսական խորհրդարանի մէջ, իր ըրած յայտարարութեան համար։ «Եթէ Հանրապետութեան կառավարութիւնը արդէն մեզի առաւ բազմաթիւ ապացոյցներ իր վեհանձն համակրանքին, եւ ապահովութիւնը՝ իր պաշտպանութեան, մեր ազգային բաղձանքներու իրականացման,

այսուհանդերձ առաջին անգամն է խորհրդարանին առջեւ, քաղաքական մեծ վիճաբանութեան մը ընթացքին, կառավարութեան ամենահեղինակաւոր անդամներէն մէկը պաշտօնական կերպով յիշեց Հայաստանը՝ կարգին այն ազգերուն, որոնց ազատագրումը մաս կը կազմէ Ֆրանսայի եւ իր Դաշնակիցներուն պատերազմի նպատակներուն:

«Այս յայտարարութիւնը, որ համաձայն է Լոյա Ժորժի եւ Պալֆուրի ըրածներուն բրիտանական կառավարութեան անունով, կ'ամրացնէ մեր վստահութիւնը թէ Դաշնակիցներու վերջնական յաղթանակին՝ հայերու համեստ եւ արդարացի բաղձանքները պիտի իրականանան, եւ Ֆրանսայի եւ իր Դաշնակիցներուն պաշտպանութեան տակ, անոնք, ազատուած թրքական լուծէն, պիտի կարենան վերահաստատել իրենց ազգային կեանքը»:

ՆՕԹԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ՄԱՍԻՆ ԿԱՂՈՒԱԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԷՆ

Ֆրանսական Բանակի Պատմական Սպասարկութեան արխիւները Արեւելեան կամ Հայկական Լեգէոնի մասին կը կրեն հետեւեալ վերնագիրը.

Levant – Légion d'Orient. L. O.

Վաւերաթուղթերը դետեղուած են հինգ թղթածրարներու մէջ, որոնց թիւերն են.

Levant – Carton 1. L. O.
Levant – Carton 2. L. O.
Levant – Carton 3. L. O.
Levant – Carton 4. L. O.
Levant – Carton 5. L. O.

Այս վաւերաթուղթերը լքուած երեւոյթ մը ունին: Անոնք չունին Արտաքին Գործոց Նախարարութեան վաւերաթուղթերուն, ինչպէս նաեւ Ֆրանսական Բանակի Պատմական Սպասարկութեան ուրիշ վաւերաթուղթերուն խնամուած, թուականի կարգով դրուած եւ թուագրուած էջերով դասաւորումը թղթածրարներու մէջ: Վաւերաթուղթերը բաժնուած ըլլալ կը թուին թղթածրարներու մէջ առանց նկատի առնելու անոնց մեթոտաւոր օգտագործումը: Այս բանը կրնայ արդիւնք եղած ըլլալ այն իրողութեան թէ երկրորդ հա-

մաշխարհային պատերազմի ընթացքին այդ արխիւները ենթարկուեցան բազմաթիւ տեղափոխութեանց, եւ թերեւս ալ այն բանին որ Լեգէոնի պատմութեամբ չատ հետաքրքրուողներ չեղան որպէսզի այդ վաւերաթուղթերուն արուէր պէտք եղած խնամքը։ Ուրեմն իմ տալիք նօթերը թղթածրարներու կարգով պիտի չըլլան, այլ վաւերաթուղթերուն թուականի կարգով։ Իւրաքանչիւր նօթին սկիզբը պիտի տամ թղթածրարին թիւը։

Ֆրանսական Բանակի Պատմական Սպասարկութեան արխիւներուն մեծ մասը օգտագործած եմ աշխատասիրութեանս Արեւելեան կամ Հայկական Լեգէոնի յատկացուած բաժնին մէջ։ Վերոյիշեալ վաւերաթուղթերը պիտի չկրկնեմ ատորեւ, սակայն հարկ եղած պարագային պիտի տամ անոնց լրացուցիչ կէտերը։

Levant, Carton 1· L· O· Ֆրանսայի պատերազմական նախարարին որոշումը, 15 Նոյեմբերի 1916 թուակիր, Արեւելեան Լեգէոնի ստեղծման վերաբերեալ։ (*Տես՝* Աստ, էջ 42)։

Levant, Carton 1· L· O· Պատերազմական նախարարին հրահանգը, թիւ 7966–9/11 եւ Նոյ· 1916 թուակիր, Արեւելեան Լեգէոնի կազմակերպութեան վերաբերեալ։ (*Տես՝* Աստ, էջ 47)։

Levant, Carton 1· L· O· Պատերազմական նախարարին հրահանգը, թիւ 4006–9/11 եւ 27 Մայիսի 1917 թուակիր։ Այն հայերը եւ սուրիացիները, որոնք Արեւելեան Լեգէոնի կազմութենէն առաջ պինուորագրուած էին Ֆրանսական Օտար Լեգէոնի մէջ, կրնան անցնիլ Արեւելեան Լեգէոն, եթէ կը փափաքին։

Levant, Carton 4· L· O· Պատերազմական նախարարին նօթը թիւ 5506–9/11 եւ 6 Օգոստոսի 1916 թուակիր։ Կը հրահանգէ որ հայ պատուիրակութեան մը արտօնութիւն տրուի որպէսզի ան այցելէ պուլկարական բանակէն առնուած ռազմագերիներուն, անոնց մէջէն արձանագրելու համար հայ կամաւորներ Արեւելեան Լեգէոնի համար։

Levant, Carton 4· L· O· Նամակ 10 Օգոստոսի 1918 թուակիր, Պօղոս Նուպար Փաշայէն արտաքին գործոց նախարարին։ Կը յայտնէ թէ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը թոյլ չի տար իր բանակին մէջ գտնուող հայերուն, ըլլան անոնք ամերիկեան քաղաքացի թէ ոչ, միանալու Արեւելեան Լեգէոնին։

Levant, Carton 2· L· O· Հեռագիր թիւ 8026–9/11 եւ 13 Նոյ·ի 1918 թուակիր, պատերազմական նախարարէն Պաղեստինի – Սուրիոյ Ֆրանսական Ուժերու հրամանատար զօրավարին։ Այս վերջինի առաջարկը ընդունելով նախարարը կը հրահանգէ որ Արեւելեան Լեգէոնի մէջ ծառայելու համար եղած յանձնառութիւնները

այլեւս մէկ կամ երկու տարուան համար ըլլան, փոխանակ պատերազմի տեւողութեան համար ըլլալու, նկատի առնելով որ պատերազմը վերջ գտած է։

Levant, Carton 2· L· O· *Սրբագրութիւն թիւ* 8029–9/11 *եւ* 13 *Նոյ·ի* 1918 *թուակիր, պատերազմական նախարարին Արեւելեան Լեհաստանի կազմակերպութեան վերաբերեալ թիւ* 7966–9/11 *եւ* 26 *Նոյ·ի* 1916 *թուակիր նախարարական հրահանգին։ Լեհաստանի մէջ գինուորագրուող նոր կամաւորներու յանձնառութիւնը մէկ կամ երկու տարուան համար պիտի ըլլայ (փոխանակ պատերազմի տեւողութեան համար ըլլալու) եւ ենթական պէտք է յանձն առնէ ծառայելու Արեւելքի մէջ (փոխանակ յանձն առնելու «կռուելու համար Թուրքիոյ դէմ», ինչպէս նախատեսուած էր առաջ)։*

Levant, Carton 2· L· O· *Նամակ թիւ* 8054–9/11 *եւ* 19 *Նոյ·ի* 1918 *թուակիր, պատերազմական նախարարէն Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահին։ Կը յայտնէ վերոյիշեալ փոփոխութիւնները, որոնք տեղի պիտի ունենան հայ կամաւորներու յանձնառութեան աքսին մէջ։*

Levant, Carton 2· L· O· *Հեռագիր թիւ* 780 *եւ* 30 *Դեկտ·ի* 1918 *թուակիր, Արեւելքի Ֆրանսական Բարձր Կոմիսար Ժորժ Փիքոյէն արտաքին գործոց նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ իր համաձայնութիւնը Հայ Ազգ· Պատուիրակութեան պահանջքին որ Արեւելեան Լեհաստանը բաժնուի հայկական եւ սուրբական մասերու եւ հայկական դումարտակները ստանան «Հայկական Լեհաստան» անունը։ Ան կ'աւելցնէ· «Իրականութեան մէջ այս բաժանումը արդէն կատարուած է։ Սուրբական միլուորը պահուած է Լիբրանան, մինչ հայկական միաւորները զրկուած են Կիլիկիա»։ (Տես՝ Աստ· էջ* 43–44)։ *(Յանօթ· Պրն· Վահան Փորթուգալեան, որ Հայկական Լեհաստանի մէջ ծառայեց տեղական առաքելութեամբ, իր ինձի ուղղած* 2 *Դեկտ·ի* 1970 *թուակիր նամակով կը յայտնէր թէ երբ Բարիզէն Բարձր Կոմիսար Ժորժ Փիքոյի կարծիքը հարցուցած են Արեւելեան Լեհաստանի բաժանման մասին, այս վերջինը ուզած է իմանալ որ այդ մասին նօթ մը ներկայացնէ իրեն։ Պրն· Փորթուգալեան իր անձնական արխիւներուն մէջ պահած ըլլալով այդ նօթին օրինակ մը, բարեհաճեցաւ անիկա ինձի զրկել։ Պրն· Փորթուգալեան նկատի առնելով օրուան կացութիւնը, Արեւելեան Լեհաստանի առեղծման քաղաքական նպատակները, հայ կամաւորներու մօտ տիրող հոգեվիճակը, կը յանձնարարէ, իր* 16*-ի Դեկտ·ի* 1918 *թուակիր նօթով, դրական արդիւնք տալ այդ դարձուածքին հայկական եւ սուրբական լեհաստաններու բաժանման պահանջքին, եւ կը ներկայացնէ օգտակար առաջարկներ հայկական միաւորներու դոյավիճակին բարելաւման համար)։*

Levant, Carton 2· L· O· *Նամակ թիւ 17 եւ 3 Յունուարի 1919 Թուակիր, արտաքին գործոց նախարարէն պատերազմական նախարարին: Կը յայտնէ Հայ Ազգ· Պատուիրակութեան պահանջը Արեւելեան Լեգէոնի բաժանման մասին, եւ ըսելէ ետք թէ Պրն· Ժորժ Փիքոն «մխիթարական առաւելութիւններ կը տեսնէ որ հետեւանք տրուի Հայ Ազգ· Պատուիրակութեան առաջարկին», կը հարցնէ պատերազմական նախարարին կարծիքը այդ մասին:*

Levant, Carton 5· L· O· *Հեռագիր թիւ 31/G եւ 5 Յունուարի 1919 Թուակիր, Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարէն պատերազմական նախարարին: Կը յայտնէ թէ զօրավար Ալենպի կը հրահանգէ իրեն Հայկական Լեգէոնը քաշել Կիլիկիայէն եւ զայն փոխարինել հնդկական պրիկատով մը: Ֆրանսացի զօրավարը կ'աւելցնէ· «Ես ամէն ինչ ըրի առաջինը ըլլալու Կիլիկիան գրաւելու Ֆրանսական գունդերով, եւ յաջողեցայ գրաւել զայն ամբողջութեամբ հակառակ բոլոր պէտք եղած միջոցներու պահասին, բայց հիմա ստիպուած եմ խոնարհիլ Գլխաւոր Զօրավարին հրամաններուն, (Ծանոթ· Կ'ակնարկէ զօրավար Ալենպիի, որ հրամանատարն էր Մերձաւոր Արեւելքի դաշնակից ուժերուն), հակառակ անոր որ այս պարպումը այնքան ծանր է մեր ազգային արժանապատուութեան համար»:*

Levant, Carton 2· L· O· *Նամակ թիւ 192–9/11 եւ 7 Յունուարի 1919 Թուակիր, պատերազմական նախարարէն արտաքին գործոց նախարարին: Իր հաւանութիւնը կու տայ Արեւելեան Լեգէոնի հայկական եւ սուրիական լեգէոններու բաժանման:*

Levant, Carton 2· L· O· *Հրահանգ թիւ 546–9/11 եւ 18 Յունուարի 1919 Թուակիր, պատերազմական նախարարի: Կը պաշտօնականացնէ Արեւելեան Լեգէոնի բաժանումը եւ «Հայկական Լեգէոն» անունը կու տայ հայերէ բաղկացեալ չորս գումարտակներուն:*

Levant, Carton 5· L· O· *Հեռագիր թիւ 277 եւ 20 Յունուարի 1919 Թուակիր, Բարձր Գոմիսէր Ժորժ Փիքոյէն արտաքին գործոց նախարարին: Կը յայտնէ թէ զօրավար Ալենպի հակառակ է որ Կ· Պոլիս դանուղ հայ կամաւորները վինուորագրուին Հայկական Լեգէոնի մէջ:*

Levant, Carton 5· L· O· *Հեռագիր թիւ 371 եւ 5 Մարտի 1919 Թուակիր, Բարձր Գոմիսէր Ժորժ Փիքոյէն արտաքին գործոց նախարարին: Կը յայտնէ թէ զօրավար Ալենպի հրահանգած է Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին որ Հայկական Լեգէոնը Կիլիկիայէն քաշէ եւ Մարոք ղրկէ:*

Levant, Carton 4· L· O· Նամակ 23 Ապրիլի 1919 թուակիր, պօղոս Նուպար փաշային պատերազմական նախարարին: Կը յայտնէ հետեւեալը·

– Պատերազմը վերջացած չըլլալուն, քանի որ դեռ խաղաղութիւն չէ եղած, պէտք է պահել կամաւորները իրենց նախկին յանձնառութեան աքսին տրամադրութեանց համաձայն: «Պէտք է յատակ կերպով պայմանագրուի թէ հայ կամաւորները պարտաւոր են ծառայելու մխիթարեան Հայաստանի մէջ, ըստ Ազեւելեան Լեգէոնի համար իրենց տարարգրած առաջին յանձնառութեան մէջ ընդունուած սկզբունքին, որ չվթարացաւ Պաղեստինի–Սուրիոյ կռիւներուն իրենց մասնակցութեամբ, քանզի այդ կռիւները ձեռք բերին իրենց հայրենիքի ազատագրումը, ինչ որ իրենց վինուորագրութեան նպատակն էր»:

– Պէտք է արտօնել Սուրիոյ, Կիլիկիոյ եւ այլուր գտնուող հայերու կամաւորագրութիւնը:

– Խաղաղութեան վեհաժողովէն վերջ հայ կամաւորներու զօրացրումը կարգադրել Հայ Ազգ· Պատուիրակութեան հետ համաձայնաբար:

Levant, Carton 3· L· O· Նօթ թիւ 4826–9/11 եւ 22 Մայիսի 1919 թուակիր, պատերազմական նախարարէն Պրն· Մարթինի: (Ծանօթ· Մորհրդարանի պիւտճէի յանձնախումբին տեղեկաբեր): Նօթը պատմականը ընելէ ետք Ազեւելեան Լեգէոնի կազմութեան, կ'աւելցնէ· «Հայկական Լեգէոնը, որ ներկայիս կը գտնուի Կիլիկիա, պիտի անցնի Միացեալ Նահանգներու հրամանին տակ, եւ անոր կողմանէ պիտի մատակարարուի, եթէ այս պետութիւնը ստանձնէ Հայաստանը պաշտպանելու մանտան»:

Levant, Carton 5· L· O· Նօթ թիւ 4100–9/11 եւ 29 Յուլիսի 1919 թուակիր, արտաքին գործոց նախարարէն պատերազմական նախարարին: Կը յղէ Պրն· Փորթուգալեանի 6 Յուլիսի 1919 թուակիր տեղեկագիրը: (Ծանօթ· Պրն· Վահան Փորթուգալեան Ազեւելեան Լեգէոնի մէջ ծառայեց 1917 թ· Մարտէն սկսեալ, իբր Ֆրանսացի սպայ, քանի որ Ֆրանսահպատակ էր: 1918 թ·ին, պինդազարէն եաք, զօրացրուեցաւ եւ վերազարձաւ Ֆրանսա, սակայն առեն մը վերջ վերստին պաշտօնի կոչուեցաւ Կիլիկիոյ մէջ: Ֆրանսա գտնուած միջոցին անձնական հանդամանքով (ինչպէս ինք կը չեշտէ իր դրութեան մէջ) տեղեկագիր մը ներկայացուցած է Հայկական Լեգէոնի մասին, ուղղուած արտաքին գործոց նախարարին):

Պրն· Փորթուգալեանի դրութիւնը կը բազկանայ հինգ մասերէ·

– Ազեւելեան Լեգէոնի կազմութիւնը;

– Արեւելեան Լեգէոնի գործունէութիւնը ռազմաճակատին վրայ:

– Թուրք բանակէն առնուած հայ ռազմագերիներէ կազմուած հայկական 4–րդ գումարտակը:

– Կիլիկիոյ դրաւումը Հայկական Լեգէոնի կողմանէ:

– Հայկական Լեգէոնի արդի վիճակը:

Պրն. Փորթուգալեան իր զրուցեան մէջ կօրովի պաշտպանողականը կ'ընէ Լեգէոնի կամաւորներուն եւ կը նշէ կարգ մը ֆրանսացի սպաներու հակահայ վարմունքը, բան մը, որ կը բացատրէ պատահած անկարգապահութիւնները:

Levant, Carton 3· L· O· Զեկուցագիր թիւ 2494/M եւ 25 Օգոստոսի 1919 թուակիր, ընդգծեալ Պրեմոնէն Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին: Աւարտելով մի քանի լեգէոնականներու անկարգ վարմունքին, կ'ըսէ· «Անկարգութեան ոգին որ յայտնուեցաւ Հայկական Լեգէոնի մէջ արդիւնքն է այն յուսախաբութեան զոր անոնք (լեգէոնականները) ունեցան այն բանով որ մենք զերեզ չառաջնորդեցինք Հայաստան, ինչպէս իրենք կը յուսային: Բնական պայմաններու մէջ, ֆրանսացի լաւ անձնակազմով մը – կամաւոր, ընտրուած եւ պարզեւներով քաջալերուած հայ լեզուին ծանօթանալու – ներկայ անպատեհութիւնները պիտի չնորոշուին»:

Levant, Carton 5· L· O· Պաշտօնագիր թիւ 10394–9/11 եւ 17 Դեկտ·ի 1919 թուակիր, պատերազմական նախարարէն Արեւելքի Ֆրանսական Զօրախումբերու հրամանատար զօրավարին: Հակառակ կ'արտայայտուի Հայկական Լեգէոնի մէջ երկու նոր միաւորներու կազմութեան համար խնդրուած արտօնութեան եւ կը յանձնարարէ Կիլիկիոյ մէջ կազմել Օտար Լեգէոնի գումարտակ մը, թուրքերէ եւ քիւրտերէ բաղկացեալ: Եւ կ'աւելցնէ·

«Չեմ կրնար ընդունիլ հայ կամաւորներու դինուորագրութեան վերսկսումը, զոր դուք հրահանգած էք, հետեւեալ պատճառներով·

«Մենք չահ չունինք մեծցնելու, ոչ իսկ պահելու թիւը այս լեգէոնին, որուն կարեւորութիւնը, արդարացուած պատերազմի ընթացքին, այլեւս չի համապատասխաներ խաղադեցման գործին, զոր պարտաւոր ենք չարունակելու Սուրիոյ եւ Կիլիկիոյ մէջ ամենայն անկողմնակալութեամբ: Հարկ է, այսօր, բնակչութեան բոլոր մասերուն տալ չատ յստակ տպաւորութիւնը թէ մենք կ'ուզենք աշխատակցիլ բոլորին հետ առանց ցեղի եւ կրօնքի խտրութեան»:

Նախարարը իր զրուցիւնը կը վերջացնէ հրահանգելով որ հայկական գումարտակներու թիւը նուազեցնեն երկուքի եւ բարձրացնեն թիւը Սուրիական Լեգէոնի գումարտակներուն:

Levant, Carton 4· L· O· Հեռագիր 15 Յունուարի 1920 Քուակիր, Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարէն պատերազմական նախարարին: Կը յայտնէ անհրաժեշտութիւնը հայ կամաւորներու դինուորագրութեան մինչեւ որ նոր ուժեր հասնին Ֆրանսայէն:

Levant, Carton 3· L· O· Հեռագիր Թիւ 272 եւ 5 Փետրուարի 1920 Թուակիր, Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարէն Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարին: Կը յայտնէ թէ դէպքերու ներկայ վիճակին պատճառով պինք կ'արտօնէ նոր կամաւորներ արձանագրել Հայկական Լեգէոնի համար:

Levant, Carton 3· L· O· Հեռագիր Թիւ 365 եւ 17 Փետրուարի 1920 Թուակիր, Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարէն Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարին: Կը պնդէ որ Հայկական Լեգէոնը զարձեալ երեք դումարտակներ ունենայ վերջնական երկուքի: «Իմ անձնական կարծիքով մեծապէս օգտակար է վերակազմել Հայկական Լեգէոնը հազար հոգիէ բաղկացեալ երեք դումարտակներով, խնայելու համար Ֆրանսական արիւնը խիստ կլիմայով այս երկրին մէջ»:

Levant, Carton 3· L· O· Հեռագիր Թիւ 394/1 եւ 28 Փետրուարի 1920 Թուակիր, Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարէն Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարին: Կը յայտնէ թէ անկարելի է հայեր դինուորագրել Օտար Լեգէոնի համար, քանի որ անոնք կ'ուզեն կռուիլ միմիայն Հայկական Լեգէոնի շարքերուն մէջ իրենց հայրենիքին համար: Եւ կ'աւելցնէ· «Պարտք կը զգամ յայտնելու թէ Հայկական Լեգէոնի հանդէպ մեր ունեցած ակներեւ անփութութիւնը ծանր հետեւանքներ պիտի ունենայ քաղաքական տեսակէտէն հայերու հոգեվիճակին վրայ, որոնք արդէն մեզ կը մեղադրեն որ դիրենք կը յանձնենք Թուրքերու մոլուցքին»:

Levant, Carton 5· L· O· Պաշտօնագիր Թիւ 177/2L եւ 2 Մարտի 1920 Թուակիր, Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարէն Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարին: Կը յիշեցնէ պատերազմական նախարարին Թիւ 10394–9/11 եւ 17 Դեկտ·ի 1919 Թուակիր պաշտօնագիրը եւ կը հրահանգէ որ Հայկական Լեգէոնը աստիճանաբար վերածուի երկու դումարտակներու, իւրաքանչիւրը միայն երկու դասակներէ բաղկացած:

Levant, Carton 2· L· O· Հեռագիր Թիւ 2492/1 եւ 29 Մարտի 1920 Թուակիր, Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարէն Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարին: Կը յայտնէ թէ Հայկական Լեգէոնը այլեւս ունի միայն երկու դումարտակներ, իւրաքանչիւրը երկու դասակներէ բաղկացած:

Levant, Carton 4· L· O· *Ջեկուցագիր թիւ 40/S եւ 14 Ապրիլի 1920 թուակիր, Հայկական Լեգէոնի հրամանատար հազարապետէն Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարին: Կը յայտնէ թէ տասնեակ մը հայ զինուորներ դասալիք եղած են հետերնին տանելով իրենց զէնքերը: Կ'առաջարկէ որ Հայկական Լեգէոնը չուտով լուծարքի ենթարկուի:*

Levant, Carton 4· L· O· *Նօթ թիւ 3149/1 եւ 20 Ապրիլի 1920 թուակիր, Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարին: Վերի զեկուցագիրը կը յղէ Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարին, յայտնելով իր հաւանութիւնը Հայկական Լեգէոնի լուծարքին:*

Levant, Carton 5· L· O· *Հեռագիր թիւ 373/2L եւ 22 Ապրիլի 1920 թուակիր, Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարէն Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարին: Կը հաստատէ իրեն եղած առաջարկը Հայկական Լեգէոնի մնացած երկու դումարտակները մէկի վերածելու մասին:*

Levant, Carton 4· L· O· *Հեռագիր թիւ 7531 եւ 1 Մայիսի 1920 թուակիր, Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարէն Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարին: Ակնարկելով Հայկական Լեգէոնի հրամանատարին եւ Կիլիկիոյ Շրջանի հրամանատարին զրուցածոյ Լեգէոնի կացութեան մասին, կը հրահանգէ· «Ձեզ կ'արտօնեմ սկսիլ հիմակուընէ այդ գունդին լուծարքին աստիճանական կարգով մը, զոր դուք պիտի որոշէք»:*

Levant, Carton 4· L· O· *Հեռագիր թիւ 2282/3 եւ 31 Մայիսի 1920 թուակիր, Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարէն Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարին: Կը յայտնէ թէ ներկայ պարագաներու բերումով անկարելի է Հայկական Լեգէոնը լուծարքի ենթարկել: Լեգէոնի կէսը կը գտնուի Մէյտան-էքսիզ, որ Առանձին կտրուած է:*

Levant, Carton 3· L· O· *Տեղեկագիր 14 Յուլիսի 1920 թուակիր, Հայկական Լեգէոնի հրամանատար հազարապետէն Արեւելքի Առաջին Պրիկատի հրամանատարին: Ի մէջ այլոց կը գրէ նաեւ հետեւեալը· «Պետութեան գրամը խնայելու համար, յաջողեցայ մինչեւ հիմա լեգէոնականներուն մաշեցնել տալ հին հագուստներ եւ կօշիկներ: Սակայն եթէ ներկայ կացութիւնը կը սպառնայ չարունակուիլ (Ծանօթ· այսինքն եթէ լեգէոնականները դրօշի տակ պահուին դեռ) պիտի պարտադրուիմ ուզել կտաւէ ամբողջ համազգեստ մը, եւ զոյգ մը կօշիկ՝ Հայկական Լեգէոնի մէջ գտնուող իւրաքանչիւր անհատի համար»:*

Levant, Carton 4· L· O· Հեռագիր թիւ 1474/2L եւ 22 Յուլիսի 1920 թուակիր, Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարէն պատերազմական նախարարին, Բարիզ։ Կը յայտնէ թէ Հայկական Լեգէոնի ամբողջական զօրացրումը տեղի չէ ունեցած քանի մը անոր զինուորներուն մէկ մասը կը դտնուի ձիհանի մէջ, որ Թուրքերու կողմանէ պաշարուած է· կարելի չէ զօրացրել նման կացութեան մէջ գտնուղ զինուորները։

Levant, Carton 4· L· O· Հեռագիր թիւ 13718 եւ 27 Յուլիսի 1920 թուակիր, Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարէն Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարին։ Կը կրկնէ իր հրահանգները Հայկական Լեգէոնի լուծարքին վերաբերեալ։ «Կը հասատատեմ կանխաւ տրուած հրամանները Հայկական Լեգէոնի լուծարքին համար որ պէտք է տեղի ունենայ անմիջապէս որ պարագաները ներեն»։

Levant, Carton 4· L· O· Հեռագիր թիւ 15154/1 եւ 16 Օգոստոս 1920 թուակիր, Կիլիկիոյ Շրջանի հրամանատար զօրավարէն Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարին։ «Կ'առաջարկեմ 1 Սեպտեմբերը որպէս թուական Հայկական Լեգէոնի լուծարքին»։

Levant, Carton 4· L· O· Այս թղթածրարին մէջ առանց թիւի, թուականի եւ ստորագրութեան յուշագիր մը կայ որ կը թուի պրուած ըլլալ սպայակոյտի սպայի մը կողմանէ Արեւելքի Բանակի ընդհանուր հրամանատար զօրավարին համար, անոր առնելիք որոշումը պատրաստելու նպատակով։ Կ'ենթադրեմ որ յուշագիրը գըրուած ըլլալու է Մարտ կամ Ապրիլ 1920 թ·ին։ Հոն կը կարդանք ի մէջ այլոց·

«Հոգեվիճակը որ ներկայիս կը տիրէ Հայկական Լեգէոնի մէջ եւ դասալքութիւնները որ տեղի կ'ունենան հոն, զէնք եւ հագուստեղէն տանելով, կը պարտադրեն այս գունդին զօրացրումը առանց սպասելու որ Թուրքիոյ հետ թշնամութիւնները վերջ գտնեն, ինչպէս կը նախատեսէ 24 Հոկտ·ի 1919 թուակիր հրամանագիրը։ (Ծանօթ· Այս հրամանագիրը կը տրամադրէր որ հայ եւ սուրիացի կամաւորներու պատերազմի տեւողութեան համար ստորագրած յանձնառութեան վաւերականութիւնը երկարաձգուած է մինչեւ Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշինքին կնքուիլը։ (Տես՝ Աստ, էջ 59–60))։

«Նախարարական հրահանգները կը տրամադրեն որ մենք չահ ունինք ձգելու որ Հայկական Լեգէոնը մարի եւ մտածենք կիլիկիոյ մէջ ստեղծել Օտար Լեգէոնի գումարտակ մը, Թուրքերէ եւ քիւրտերէ բաղկացեալ։

«Ասով մէկտեղ նախապարական հրահանգները կը պատուիրեն պղոյչ ըլլալ հայկական դումարտակներու ընդդիմին մէջ, այլուսա պինուորներու պակասը եւ կիլիկիոյ զօրախումբերու յոգնութիւնը մեզ կը պարտադրեն հայերու զօրացրումը աստիճանաբար կատարել»:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ(*)

Արեւելեան Լեգէոնը իր կազմութեան թուականէն (15 Նոյ.ի 1916 թ.) մինչեւ 1918 թ.ի Մարտ ամիսը ենթակայ էր Ֆրանսական ծովային ուժերու «Սուրիոյ Նաւատորմիղին» (Division Navale de Syrie): 1918 թ.ի Մարտէն սկսեալ ան մաս կազմեց «Պաղեստինի – Սուրիոյ Ֆրանսական Ուժեր»ուն (Détachement Français de Palestine–Syrie), որ իր կարգին մաս կը կազմէր «Արեւելքի Դաշնակից Ուժեր»ուն (Forces Alliées du Levant), զօրավար Ալենպիի հրամանատարութեան տակ:

Լիբանանի գրաւումէն ետք (1918 թ. Հոկտ.), Ֆրանսական ուժերը ստացան «Արեւելքի Ֆրանսական Զօրախումբեր» անունը (Troupes Françaises du Levant): Զօրախումբերու հրամանատարն էր Համբլէն: Արեւելեան Լեգէոնը մաս կը կազմէր այս զօրախումբերուն:

1919 թ.ի Դեկտ.ին, Զօրավար Կուրօ նշանակուեցաւ Ֆրանսական բարձր Յանձնակատար Սուրիոյ եւ Կիլիկիոյ, փոխարինելով Ժորժ Փիքոն, եւ միեւնոյն ատեն՝ ընդհանուր հրամանատար Արեւելքի Ֆրանսական Ուժերուն, որոնք ստացան «Արեւելքի Բանակ» (Armée du Levant) անունը: Հայկական Լեգէոնը այս բանակին միաւորներէն մէկն էր:

Կիլիկիոյ Շրջանին հրամանատարն էր զօրավար Տիւֆիէօ: Այս զօրավարը պետն էր Ֆրանսական Առաջին, կամ՝ Կիլիկիոյ Զօրաբաժինին: Հայկական Լեգէոնը իր հրամանատարութեան ենթակայ էր:

Արեւելեան Լեգէոնի հայկական դումարտակները «Հայկական Լեգէոն» անունը ստացան 18 Յունուարի 1919 թ.ին:

---

*) Աշխատասիրութեան մէջ փակագիծի մէջ դրուած «Յանձնագրութիւն»–ները տրուած են հեղինակին կողմէ. անոնք չկան վաւերաթուղթերու բնագրին մէջ:

THE ARMENIAN LEGION

GEN. A. KARAMANOUKIAN

(Summary)

After a heroic defence against the Turkish aggression, the Armenians of Moussa-Dagh were safely carried to Port Sa'id by the French navy. As a token of their gratitude, the Armenians of Moussa-Dagh volunteered to be enrolled in the French army to fight against the Turks and reoccupy their homeland. On November 15, 1916, by a ministerial decree, the French government permitted the formation of the volunteers' regiment, which later was named the Eastern Legion. A great number of Armenians, mainly from the USA, and also from France and Egypt, joined the Eastern Legion. After being trained in Cyprus, the Eastern Legion joined the offensive in Palestine, organised by Gen. Alenby in 1918. Later in the year the Eastern Legion brought her share to the occupatoin of Cilicia.

In the beginning of the year 1919, the Eastern Legion was devided into two units, namely, the Armenian Legion and the Syrian Legion.

From the day of her formation, the Eastern Legion gave way to legal problems, related to the legionaries' rankings, rights of order, payments and pensions. It also had her political problems. The triple agreement of London in the year 1916, had the intention of creating an autonomous Cilicia for the Armenians, and the Legion was to be the founding stone of the Armenian Army. But the Anglo-French conflict in the Middle East jeopardized the initial plan. At first, on legal bases, France was able to reject an English demand for dissolving the Legion. But later, because of her own political gains and lead by a turkophile policy, France, in Sept. 1920, ordered the dissolution of the Armenian Legion.

(In pages 60-89, the author gives the numbers and the contents of those documents concerning the Legion. These are found in the archives of Foreign Ministry of France, and the Historical Service of French Army).

Գանձասարի վանքը

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ
ՄՈՒՐԱՏ ՀԱՍՐԱԹԵԱՆ

Հայ ճարտարապետութեան բազմադարեան պատմութիւնը հարուստ է անկրկնելի յուշարձաններով։ Սակայն նրանցից քչերն են, որ իրենցով պայմանաւորում են մեր ճարտարապետական մշակոյթի զարգացման որոշակի պատմաշրջանները։ Այս բացառիկներից է Գանձասարի վանքը։

Մեծանուն Թորոս Թորամանեանը նշում է, որ Սորպոնի համալսարանի ճարտարապետութեան պատմութեան փրոֆեսոր՝ Շառլ Դիլը, բնութագրելով հայ ճարտարարուեստի գործերից համաչխարհային մշակոյթի գանձարանը մտած հինգ ամենաուշագրաւ երեւոյթները, նրանցից մէկն է համարել Գանձասարը(1)։

Գանձասարի վանքի մասին պահպանուած գրաւոր առաջին տեղեկութիւնը տասերորդ դարի առաջին կէսից է, եւ պատկանում է Անանիա Մոկացի կաթողիկոսի գրչին։ Ամենայն Հայոց հայրապետի այս վկայութեամբ՝ Գանձասարն արդէն հիւսիս-արեւելեան Հայաստանի կրօնական մեծ կեդրոններից մէկն էր, ուր կարեւոր ժողովների էին հաւաքւում երկրամասի հոգեւոր ու աշխարհիկ տէրերը(2)։ Երկու դար յետոյ Մխիթար Գոշն է վկայել Գանձասարի կա-

---

1. Թ. Թորամանեան, «Հայկական ճարտարապետութեան փոխազդեցութեան հարցերի շուրջը»։ *Նիւթեր Հայկական ճարտարապետութեան պատմութեան*, Բ. հատ., Երեւան, 1948, էջ 25։

2. *Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն*. «Արարատ», 1897, էջ 134։

բեւոր կեդրոնի գերը, աւելացնելով, որ այն վաղուց ի վեր հանդիսանում է նաեւ Այրենի իշխանութեան առհմական տապանատունը(3):

Գանձասարի վերակառուցման հանդամանալից նկարագրութիւնը մենք պարտական ենք Կիրակոս Գանձակեցուն: Ճիշդ է, Կիրակոս պատմիչը չի ասում, թէ նորը կառուցուել է այն հին եկեղեցու տեղում, որ դոյութիւն է ունեցել առաջներում իբրեւ գաւառի եպիսկոպոսարան, սակայն նա էլ իր հերթին է հաղորդում, որ Գանձասարը տապանատուն է եղել Ներքին Այրենի իշխանական տան համար: Իսկ իշխանական գերդաստանների տապանատներ, ինչպէս յայտնի է, լինում էին նրանց հովանաւորութեան տակ գտնուող տաճարներ աչքի ընկած վանքերի պարիսպները: Պատմիչն ասում է՝ երբ Ներքին Այրենի տիրակալ Հասան-Ջալալը նահատակուեց Ղազախստանում, որպէս Աթաբակ Իւանէն նրա նշխարները փոխադրեց հայրենիք եւ թաղեց «ի վանքն Գանձասար ի գերեզմանս հարց իւրոց»(4):

Գանձասարի վերակառուցման (աւելի ճիշդ՝ ի նորոյ կառուցման) նախաձեռնողը եւ իրականացնողը, ըստ աղբիւրների միահամուռ վկայութիւնների, Ներքին Այրենի տէր եւ ամբողջ Արցախ-Այրենի իշխանաց իշխան Հասան-Ջալալն է եղել, Հասան Մեծի որդի Վախտանգ-Տանգիկի ու Զաքարեան Սարգիս ամիրսպասալարի դուստր Խորիշահի ժառանգը: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ նա էր «հայ ազգաւ եւ Աստանչահիկ իշխանական տան ծնունդ»(5):

Հասան-Ջալալը ԺԳ. դարի առաջին կէսի Հայաստանի քաղաքական կեանքի խոշորագոյն գործիչներից էր, ճկուն դիւանագէտ, հայրենի մշակոյթի մեծ հովանաւոր: Նա էր, որ իր երկրամասը կարողացաւ փրկել թաթար-մոնկոլների կործանարար հարուածներից, դիւանագիտական սերտ կապերի մէջ մտաւ բռնակալների կեդրոնական իշխանութեան հետ, կասեցրեց նաեւ Կիլիկեան թագաւորութեան վերահաս կործանումը մոնկոլների կողմից, դառնալով Կիլիկիայի թագաւոր Հեթում ու մոնկոլների բարեկամական յարաբերութիւնների գործուն միջնորդը:

Հասան-Ջալալի մշակութանպաստ գործունէութիւնն ընթացել է ոչ միայնիծ: Նրա հովանաւորութեամբ ստեղծուել են բազմաթիւ ձեռագրեր, չէնացել ու բուռն գործունէութեան են լծուել Այրենի

---

3. Մխիթար Գոշ, կաթողիկոսք եւ դպք ի մէջ ԺԲ. դարու, տես՝ Ղ. Ա. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 387:

4. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 392:

5. Նոյնը, էջ 358:

վանքերը: Եւ այս բոլորի հետ միասին մեծ երախտաւորը կառուցել է նոր եկեղեցիներ, վերանորոգել ու վերակառուցել հներըը: Կառուցած եկեղեցիներից յայտնի են իր առհմական վաճառատեղի աւանում՝ Վաճառում, ԺԳ. դարի սկզբին կանգնած եկեղեցիները, վերակառուցածներից՝ Թաթար-մոնկոլների կողմից հիմնայատակ աւերուած Կեչառիսի վանքը: Սակայն Հասան-Ջալալի չինարարական գործունէութեան գարդն ու պսակը Գանձասարի վանքն է, ճարտարապետական-քանդակագործական մի հոյակերտ, որ երկրամասի մշակութային գարգացման նախընթացի համեմատութեամբ լինելով նոր ու բարձր աստիճանի արտայայտութիւն, դասական չգերազանցուած օրինակ մնաց նաեւ հետագայ գարերում:

Գանձասարի տաճարը կառուցուել է աւելի քան երկու տասնեակ տարի՝ 1216-1238 թուականներին: Ճարտարապետական մի այդպիսի կառոյց աւարտելու համար սա բոլորովին էլ մեծ ժամկէտ չէ, մանաւանդ, եթէ նկատի առնենք, որ չինարարութիւնը պարբերաբար կանգ պիտի առնէր այն պատերազմների պատճառով, որոնց մէջ էր քաշուած եւ Հայքը: Ջալալեդդինի հորդաների արշաւանքը, Թաթար-մոնկոլների աւերիչ առաջին ասպատակութիւնները գարի 20-ական թուականներին, մոնկոլների երկրորդ արշաւանքը, ապա և Արեւելեան Հայաստանի վերջնական նուաճումը նրանց կողմից 30-ական թուականներին: Այս պարբերական կռիւների ու աւերումների պայմաններում, այնուամենայնիւ, կառուցուեց Գանձասարը՝ «զեղկացարդ յօրինուածքով, զմրեթարդ երկնանման տաճար...»(6):

1233 թ. աւարտուած Գանձասարի վանքի օծումը տեղի է ունեցել 1248 թ. «յաւուր մեծի տօնի Վարդավառին» (Յուլիսի 22-ին, կիրակի)(7):

Համարեայ անեղծ պահպանուել է վանքի շինարարութեանը վերաբերող մեծ արձանագրութիւնը՝ քանդակուած տաճարի հեռուում, հիւսիսային պատի վրայ, բաղկացած 27 տողից, ամբողջ պատի լայնութեամբ, զմրեթատակի գօտու եզրից մինչեւ գոնազլուխը: Այնտեղ խօսում է ինքը՝ Հասան-Ջալալ-Դոլան (Դուլա)՝ «քնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի, թագաւոր Խաչանաբերդի յոքնաստհման նահանգաւք»: Նա շինարարութեան հանդամանքներն է պատմում, առհմանում պատարագներ իր հարազատներին՝ պապից մինչեւ «հասարակաց անչիւատակաց», թուարկում վանքին տուած ընծաները՝ սպասք, զրքեր ու աւերք մասունքներ, գիւղեր եւ չարժական ու անշարժ մեծաքանակ գոյք:

---

6. Նոյնը, էջ 269:

7. Նոյնը, էջ 270:

Գանձասարի վանքը հայ միջնադարեան ճարտարապետական մշակոյթի ակնառու դրսեւորումներից է եւ չէր կարող չունենալ այդ շրջանի հայ ճարտարապետութեան կարեւորագոյն բաղկացուցիչներից մէկը՝ գաւիթը: Տաճարը, ճիշդ է, սկզբում կառուցուել է միայնակ եւ, ըստ երեւոյթին, հենց այդպէս էլ նախագծուած է եղել առաջուց: Սակայն հետագայում նրան գաւիթ է աւելացուել, որ, ուշեղծով իր կիսառուբեան յատուկ նպատակն ու կիսաեկեղեցականկիսաշխարհիկ բնոյթը, միաժամանակ եւ իւրայատուկ ճարտարապետական նկարագիրը ունի: Այն էապէս լրացնում է ամբողջ վանական համակառոյցի պատկերը:

Հետազօտողների կողմից տարբեր պատասխաններ են տրուել այն հարցին, թէ ո՛վ եւ ե՛րբ է կառուցել գաւիթը: Նոյնիսկ կիրակոս Գանձակեցու մէ տեղեկութիւնն այս առթիւ՝ կարօտ է ճշդըրտման: Նա գրել է, թէ «Շինեաց եւ կին նորա (Հասան-Ջալալի) Մամքան զգաւիթն հրաշալի ի դուռն եկեղեցւոյն...»(8), սակայն գաւթի չինարարական արձանագրութիւնը քանդակուած է Հասան-Ջալալի կողմից՝ կնոջ ու տղայի անուննների յիշատակումով. «Թիւն ՉԺ. է: Կամաւն ամենակալին աստծոյ ես Ջալալ Դաւլայա՝ որդի Վախտանգա, կողմնակալ Արցախայ, եւ ամուսին իմ Մամքան՝ թոռն Բաղուց թագաւորին, եւ հարապատ որդին իմ Աթաբակ Իւանէ, յետ կատարման եկեղեցոյս հիմնարկեցաք զժամատունն եւ բակում աշխատութեամբ աւարտեցաւ...»:

Ուրեմն, գաւիթը հիմնադրուել է տաճարի կառուցումն աւարտելուց (1238 թ.) յետոյ եւ աւարտուել 1261 թ.: Կառուցման նախաձեռնողներն էլ եղել են Հասան-Ջալալ իշխանը, նրա կին Մամքանը եւ միակ արու զաւակ Աթաբակ-Իւանէն: Ճիշդ է, արձանագրութեան երկրորդ մասը զրուած է միայն Աթաբակ-Իւանէի անունից (այնտեղ թուարկւում են նրա ընծաները վանքին), որ կարող է նշանակել՝ Մամքանի ու Հասան-Ջալալի վախճանից (1261 թ.) յետոյ նրանց որդին միայնակ է աւարտել գաւթի կառուցումը եւ այդ ժամին էլ վանքին նուիրել «ոսկեհուսի աւետարան, եւ պատուական սուրբ նշան գՔրիստափորն եւ զմեր հայրենի Հարաւակօռն, զԲլրին իւր սահմանումն...»: Սակայն սա քիչ նշանակութիւն ունի, քանի որ արձանագրութեան՝ Հասան-Ջալալի անունից քանդակուած մասում նշուած է, որ ՉԺ. (1261) թ. գաւիթը «բազում աշխատութեամբ աւարտեցաւ»: Ակնհայտ է, թէ Հասան-Ջալալը նահատակուելուց առաջ հասցրել էր աւարտել նաեւ գաւթի կառուցումը:

---

8. Նոյնը:

Ինչպէս վերը տեսանք, Գանձասարը հոգեւոր խոշոր կեդրոն էր դեռեւս մինչեւ նոր տաճարի ու զանգի կառուցումը: ԺԹ. դարի երկրորդ կէսից նրա դերն աւելի բարձրացաւ, քանի որ այս ժամանակից Ներքին Աշէնի իշխանութեան պայազատները վանքի հովանաւորները լինելուց բացի, զարձան նաեւ նրա առաջնորդութեան անօրէնները եւ հասկանալի է, թէ ինչու Գանձասարի առաջնորդներ էին ձեռնադրւում բացառապէս իշխանական տոհմի, այսինքն՝ Հասան-Ջալալեան զերդաստանի ներկայացուցիչները: Այս հանգամանքը մեծապէս նպաստեց վանքի հոգեւոր-քաղաքական դերի բարձրացմանն ու տնտեսական հզօրութեան ապահովմանը: Աշխարհիկ իշխանութեան ներկայացուցիչներն ամէն կերպ օժանդակում էին վանքի կալուածքների ընդլայնումին, անշարժ ու շարժական գոյքի կուտակումներին, քանի որ վանքի բոլոր չհոգիները պատկանում էին նաեւ աշխարհիկ իշխանութեանը: Այս ամէնի չնորհիւ, անկասկած, բարձրանում էր նաեւ վանքի՝ որպէս երկրամասի հոգեւոր-լուսաւորական կեդրոնի դերը: Բաւական է ասել, որ ԺԹ-ԺԴ. դարերից յետոյ այն հիւսիս-արեւելեան Հայաստանի ամենաականաւոր կեդրոններից մէկն էր, ուր կար հարուստ ձեռագրատուն, եւ ստեղծւում էին բարձրարժէք նոր ձեռագրեր, որոնք աչքի էին ընկնում ձեռագրական ու մանրանկարչական բարձր արժանիքներով: Վանքն ունէր առաջնակարգ դպրատուն, որտեղ ուսում առած մարդիկ իրենց արժանի նպաստն էին բերում Աշէնի ու հարեւան նահանգների մշակութային կեանքի առաջընթացին:

Եւ բոլորովին էլ պատահական չէ, որ ԺԵ. դարից յետոյ Գանձասարը զարձաւ նաեւ Աղուանքի կաթողիկոսութեան մշտական անփոփոխ նստավայրը, եւ ամբողջ Արեւելեան Հայաստանի հոգեւոր ու քաղաքական կեանքին ընթացք տուող ամենահեղինակաւոր օճախներից մէկը: Ինչ խօսք, որ այստեղ մեծ դեր է ունեցել նաեւ կաթողիկոսութեան տնտեսական պատկանելութիւնը. ԺԼ. դարի սկզբից արդէն Աղուանքի կաթողիկոսութիւնը եւս զարձել էր Ներքին Աշէնի տէր Հասան-Ջալալեաններից տոհմական արտօնութիւնը: Գանձասարում նստող Հասան-Ջալալեան կաթողիկոսներն ըստ կարելւոյն բարւօք վիճակում էին պահում իրենց աթոռանիստը: Նրանց հոգածութեան չնորհիւ Գանձասարը զարձել էր հոգեւոր եւ նոյնիսկ վարչական խոշորագոյն կեդրոն: Մատենագրական ու վիմագրական բազմաթիւ տեղեկութիւններով հաստատւում է, որ ԺԵ-ԺԼ. դարերի՝ հայ ժողովրդի համար ծանրագոյն իրականութեան մէջ անգամ վանքում ոչ մի օր չի զադարել մշակութային եռուն կեանքը:

Հիւսիս-արեւելեան Հայաստանի մշակութային ու նոյնիսկ քաղաքական կեանքում Գանձասարի կշիռն անհամեմատ բարձրացաւ

հետագայ ժամանակաշրջանում: ԺԷ. դարի իրականությունը ցույց է տալիս, որ այնտեղ համատեղությամբ հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունները ամենաազդեցիկ դեր ունէին հարեւան պատառների կեանքում: Ներքին Աշէնի մելիքները, զորձակցած տեղի կաթողիկոսների հետ եւ համաբեայ բոլոր հարցերում առանալով նրանց ամենագործուն աջակցութիւնը, ուղղութիւն էին տալիս Ղարաբաղի մելիքութիւնների պատասպրական ձգտումներին:

Այդպէս էր դրութիւնը նաեւ ԺԸ. դարում: Դեռ աւելին. այս արդէն Գանձասարի դարն էր, մի ժամանակաշրջան, երբ Գանձասարն էր հայ պատասպրական ոգորումների կեդրոնն ու ոգեշնչողը: Այստեղ՝ այն հարկաւ իր նմանը չունի մեր հոգեւոր կեդրոնների շարքում եւ թերեւս դրա համար պարտական է դարասկզբի իր այն բազմերախտ աթոռակալին, որ հանդամանքների թելադրանքով, իրար էր մխացնում հոգեւոր վեհապետի բարձր պատեցութիւնն իր «հօտի» վրայ եւ միջնադարեան հայ իրականութեան առաջին դիւանագէտներից մէկի ճկուն խելքը, այս բոլորի հմքում ունենալով իր ժողովրդի փրկութեան ու պատասպրութեան համար տրտփող մի պատնիւ սիրտ: Դա Եսայի Հասան-Ջալալեան կաթողիկոսն էր՝ դահակալած 1702–1728 թթ.: Եսայի կաթողիկոսի չուրջն էին համախմբուած Ղարաբաղի եւ Սիւնիքի հոգեւոր ու աշխարհիկ տէրերը, որոնք պարասկզրին Իսրայէլ Օրիի, ապա եւ Մինաս Վարդապետի միջոցով քանիցս դիմեցին ռուսական ցարին՝ յուսալով առանալ նրա փրկարար օգնութիւնը:

Հայ մելիքներն ու միւս իշխանաւորները, ժողովրդի անունից «մշտապատա բանիւ եւ բազկատարած հայցմամբ» խնդրում էին Պետրոս Մեծին՝ պալ, փրկել իրենց՝ թուրք եւ պարսիկ բարբարոսների ահաւոր լծից, խոստանալով կռուել նրա դրօշի տակ(9):

Համանման դիմումներ ու խնդրագրեր Գանձասարից Ռուսաստան են յղուել սկսած 1703–1704 թթ., որոնք եւ հիմք են դրել հայ-ռուսական դիւանագիտական կանոնաւոր փոխյարաբերութիւններին՝ նշանաւորելով միաժամանակ հայ ժողովրդի բախտորոշ կողմնորոշումը դէպի Ռուսաստան: Բոլոր այս դիմումների ու երդմնագրերի տակ դրուած է՝ «ի դրան մեծի եւ սուրբ աթոռոյս Գանձասարայ»: Այնտեղ՝ Գանձասարում էր խմորւում, ձեւ ու կերպարանք առնում հայոց պատասպրութեան գաղափարը, այնտեղից էին ուղղութիւն առնում հայոց սղնախների քաջ պաշտպանները՝ օսմանեան թուրքերի եւ պարսից բռնակալների դէմ անդիջում կռուելիս:

---

9. Հայ-ռուսական յարաբերութիւնները ԺԸ. Դարի Առաջին երեսնամեակում, «Փաստաթղթերի ժողովածու», հատոր Ա., մասն Բ., երեւան, 1964, էջ 360:

Գանձասարի կաթողիկոսութիւնը գոյատեւեց մինչեւ ԺԹ. դարի սկիզբը, և վերացաւ 1815 թուականին, փոխարինուելով մեարս-պոլիտութեամբ:

Գանձասարի վանքն իր գոյութեան շուրջ եօթ ու կէս հարիւրամեակի ընթացքում նորոգուել է մի քանի անգամ: Առայժմ յայտնի առաջին նորոգման մասին տեղեկացնում է խուցերից մէկում գտնուած անթուական ու քչախօս մի արձանագրութիւն. «Նորոգեցաւ ձեռամբ Սարգիս կաթողիկոսին Աղուանից, որ է յազգէն Զալալ Դօլին»: Ո՞ր Սարգսին է վերաբերում խօսքը, երբ այդ անունով Հասան-Զալալեան կաթողիկոս է գահակալել եւ ԺԶ. դարում եւ ԺԹ.-ի սկզբին: Սարգիսի ինքնութիւնն ու նորոգման տարին պարզւում են հենց Գանձասարի վանքում ընդօրինակուած մի Աւետարանի գրիչ Հայրապետ աբեղայի յիշատակարանով: Հայրապետ գրիչը նախ արձանագրում է իր օրերին ակ-կոյնելու եւ կարա-կոյնելու թուրքերի բերած աղէտները («զառն եւ ի նեղ ժամանակիս վասն մահուն ուրացաւ մայրն զորդիս իւրեանց»), ապա երախտապիտութեամբ յիշում Սարգիս կաթողիկոսին, որն այդպիսի պայմաններում «ի թուականութեան հայ տումարիս ՌԹ.», (1551) «ետ նորոգել մեծաշխանդէս եկեղեցիս Գանձասար»(10):

Վանքի երկրորդ էական նորոգումը կապուած է Ղարաբաղի ԺԸ. դարի ազատագրական չարժումների կազմակերպիչներից մէկի՝ Գիւլիստանի Մելիք Աբովի անուան հետ: Մելիք Աբովի, կամ, ինչպէս ինքն էր իրեն կոչում, Աբով իւղրաչու նորոգչական գործին նուիրուած արձանագրութիւնը քանդակուած է դաւթի հիւսիսային դրան ձախ կողմին: «Ես Ապաւ իւղրաչի՝ որդի մելիք Յովսեփա Թալիշու եւ իմ կենակից Հերիքնազ եւ որդիք Մելիք Պէկլար եւ մելիք Ապաւ, մեր հալալ արդեանց չինեցաք սրբոյ աթոռոյս Աղուանից Գանձասարու երկուց եկեղեցեաց տանիսն եւ խախտեալ որմունս բազում աշխատութեամբ՝ յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց»:

ԺԹ. դարի առաջին կէսին էլ մի թարապոլիա Հասան-Զալալեանցն է նորոգել՝ ծախսելով «աւելի քան զհինդ հազար մանկթա արծաթոյ...ի սեպհականութեենէ իւրմէ»: Ապա դարի վերջին ականատեսները (յատկապէս Լէօն) սրտի ցաւով նկարագրում են վանքի տխուր վիճակը, «այն սարսափելի անհոգութիւնը, որին մատնուած է այդ հռչակաւոր, զեղեցիկ շինութիւնը»:

1907 թ. վերջապէս Գանձասարի վանքը նորոգուել է, սակայն, հաւանաբար, ճարտարապետութիւնն ու պատմութեան յիշատակները ըստ արժանւոյն գնահատելուց հեռու մարդկանց ձեռքով, որով-

10. Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռ. No. 6513, թ. 280բ-281ա:

հետեւ այդ նորոգմամբ ոչնչացուել կամ խաթարուել են բազմաթիւ յիշատակներ, արձանագրութիւններ, ինչպէս նաեւ քանդակագործեր: Իզուր չէ, որ երիտասարդ Յովսէփ Օրբելին, երկու տարի յետոյ այցելելով Գանձասար, գրել է թէ վանքը «ենթարկուել է բարբարոսական վերանորոգման»:

Գանձասարի վանքը հայ ճարտարապետութեան ու քանդակագործական արուեստի բացառիկ յուշարձան լինելուց բացի, ունի նաեւ ազգութագրական խոշոր նշանակութիւն: Երկու հարիւրի հասնող նրա վիմական արձանագրութիւններն անգնահատելի արժէք են ներկայացնում ինչպէս Աբցախ-Ռաչենի, այնպէս էլ առհասարակ Հայաստանի գաղթացած աւատատիրութեան շրջանի ու հետագայ դարերի սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ մշակութային պատմութեան համար: Բնական է յիշել, որ միջնադարեան Հայաստանի պետական ամենակենսունակ կազմաւորումներից մէկը (իսկ ուշ միջնադարեան իրականութեան մէջ համարեայ միակը)՝ Ռաչենի իշխանութիւնը, այս վանքի որմերին է արձանագրել իր անտեսական այլեւայլ բնոյթի գործարքներից շատերը, եւ, որ կարեւոր է, այդ արձանագրութիւնների մեծագոյն մասն էլ ցայսօր պահպանուում է անխաթար:

Գանձասարի վանքի ճարտարապետական համալիրը կառուցած է նոյնանուն լեռան գագաթին, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարտակերտի շրջանի Վանք գիւղից հարաւ-արեւմուտք: Յուշարձանախումբը բնական շահեկան դիրք ունի, այն գտնուում է Ռաչենի ձորի արեւմտեան կողմում, նրա հեռանկարի կիզակէտում եւ իր տեղադրութեամբ գերիշխում է դեղատեսիլ ձորի վրայ: Գանձասարի վանքը նկատելի է դեռ շատ հեռուից, որին նպաստում է ոչ միայն համալիրի բարձր դիրքը, այլեւ գոյնը: Եկեղեցին կառուցած է տեղական կարմրաւուն տուֆից, որ գարերի ընթացքում մգացել է եւ դարձել շագանակագոյն: Սակայն դիտուելով անտառապատ լեռան մուգ կանաչի վրայ, եկեղեցին իր գոյնով հակադրւում է վերջինիս եւ բնական ցայտուն առանձնանում Ռաչենի ձորի ողջ բնապատկերում:

Համալիրը բազկացած է եկեղեցուց, գաւթից, բնակելի խուցերից, անտեսական շինութիւններից, ինչպէս նաեւ ԺԹ. դարում կառուցուած գպրոցի երկյարկանի շէնքից: Մօտաւորապէս ուղղանկիւն յատակագծով պարիսպներով շրջափակուած տարածութեան մէջտեղում, ազատ կանգնած, բարձրանում է հիմնական յուշարձան-նախումբը (եկեղեցին եւ գաւիթը), իսկ միւս շինութիւնները կառուցուած են հիւսիսային եւ արեւելեան պարիսպներին կից: Տեղանքը համեմատաբար հարթ է եւ ունի թեթեւակի թեքութիւն հիւ-

սիս–արեւմուտքից դէպի հարաւ–արեւելք, որի հետեւանքով այս կողմում պարիսպները յենապատի դեր են խաղում:

Գանձասարի վանքի գլխաւոր կառուցուածքը՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին ունի ժ–ԺԴ. դդ. հայ ճարտարապետութեան մէջ տարածուած՝ ուղղանկիւն, ներքուստ խաչաձեւ, չորս անկիւններում երկյարկ աւանդատներով յօրինուածք (դրականութեան մէջ յուշարձանների այս տիպը յաճախ անուանում են նաեւ խաչաձեւ գմբէթաւոր եկեղեցի կամ գմբէթաւոր սրահ, սակայն այս բնորոշումները ճիշդ չեն):

Հայաստանի միջնադարեան վանքերի եկեղեցիների համար աւանդական այս յօրինուածքն առաջացել է ժ. դարում եւ լայն կիրառում գտել հետագայում, յատկապէս ԺԳ. դարում: Ուղղանկիւն, ներսից խաչաձեւ, չորս անկիւններում աւանդատներով յօրինուածք ունեն Գանձասարից բացի ԺԳ. դարում կառուցուած Գեղարդի, Ամաղու–Նորավանքի, Յովհաննավանքի, Սաղմոսավանքի, Հառիճավանքի, Խորակերտի եւ ուրիշ շատ վանքերի եկեղեցիները: Պէտք է նշել, որ նոյն յօրինուածքն ունի նաեւ Խաչենի իշխանութեան միւս խոշոր կրօնական եւ մշակութային կեդրոն Դադիվանքի գլխաւոր եկեղեցին (նոյնպէս ԺԳ. դ.): Նշուած բոլոր յուշարձանները իրենց յատակագծային–ծաւալային լուծումով, համաչափութիւններով աւելի մօտ են կեդրոնագմբէթ եկեղեցիներին ու արդէն դժուար է նկատել նրանց կապը գմբէթաւոր դահլիճների հետ, որոնցից եւ առաջացել է ճարտարապետական այս տիպը:

Գանձասարի եկեղեցին իր չափերով մեծ չէ (արտաքին չափերն են 11,8×17,4 մ.): Լայնութեան եւ երկարութեան յարաբերութեամբ (1:1,48) այն ԺԳ. դարի նոյնատիպ յուշարձանների համեմատ աւելի ձգուած է: Այսպիսի համաչափութիւնն արդիւնք է ներսում հիւսիսային եւ հարաւային թեւերի խորութեան կրճատման: Գմբէթը տեղադրուած է ողջ յօրինուածքի մէջտեղում, այս պատճառով արեւմտեան թեւը ձգուած է առացուել, իսկ աւանդատները՝ բաւական երկար ու նեղ: Արեւելեան աւանդատները լուսաւորւում են եկեղեցու արեւելեան ճակատում բացուած լուսամուտներով եւ մուտք ունեն աղօթասրահից (առաջին յարկիններ) եւ բեմից՝ պահունակային քարէ աստիճաններով (երկրորդ յարկիններ): Արեւմտեան աւանդատները լուսաւորւում են եկեղեցու հիւսիսային եւ հարաւային ճակատներում բացուած պատուհաններից: Արեւմտեան աւանդատները Գանձասարում մուտք ունեն արեւմտեան խաչթեւից. ընդ որում երկրորդ յարկ բարձրանում են շէնքի մշակում ունեցող քարէ պահունակային աստիճաններով:

Աղօթասրահը լուսաւորւում է երեք լայն եւ բարձր լուսա–

մուտներով՝ մէկական հիւսիսային եւ հարաւային պատերում, ու երբորդը՝ բեմի կիսաշրջանաձեւ խորանում (արեւմտեան ճակատի լուսամուտը փակուել է զաւթի կառուցումից յետոյ)։ Գմբէթի թմբուկի պատուհանների հետ միասին նրանք եկեղեցու ներսում բաւարար լուսաւորութիւն են ստեղծում։


Գանձասարի եկեղեցին ունի հարուստ դեղարուեստական յարդարանք թէ՛ ներսում եւ թէ՛ արտաքին ճակատներում։

Ցուշարձանի ներսակողմը կառուցուած է սրբատաշ քարերից եւ նախատեսուած չի եղել որմնանկարների համար։ Գմբէթատակ տարածութեան անկիւնները մշակուած են հայ ճարտարապետութեան համար աւանդական ուղղաձիգ կլաուդիաներով, որոնք աւարտւում են բազմասեղան արտաքս ունեցող քիւով (վերջինս պրտւում է բեմի արեւելեան որմի պարագծով եւս)։ Թեթեւակի սլաքաձեւ գմբէթակիր կամարները զարդարուած են աստղնաշարով (հիւսիսային եւ հարաւային կողմում) եւ կիսաշրջանաձեւ կամարաշարով (արեւելեան եւ արեւմտեան կողմում)։ Սռապատերի ներքեւի անկիւններում կան երկրաչափական զարդաքանդակներ (շրջանաձեւ, աստղաձեւ, քառակուսի)։ իսկ վերին մասում անմիջապէս թմբուկի տակ տեղադրուած են եզան, խոյի, մարդու և արծուի բարձրաքանդակները, որոնք նոյնպէս աւանդական են միջնադարեան հայ արուեստի համար, եւ չորս աւետարանիչների խորհրդանշանները են հանդիսանում։


Թմբուկը ներսից պլանաձեւ է ու կլաուդիա է ութ զոյգ կիսասիւնիկներով, որոնք պսակւում են մէկընդմիջմամբ կլոր եւ ձգուած լուսամուտների վրայ հանդչող կամարաշարով։

Նուրբ եւ ճոխ մշակում ունի յատկապէս բեմի աղօթատարահին ուղղուած երեսը, այն պարագծով եզերուած է հիւսածոյ քանդակներով, ապա զօտիով, որի միջի հարթութիւնը զարդարուած է չեզանկիւնիներով եւ նրանց միջեւ ընկած եռանկիւնիներով։ Բոլոր չեզանկիւնիները ունեն բաւական բարդ ու չկրկնուող, նոյնպէս հիւսածոյ զարդաքանդակներ։ Նոյնպիսի յարդարանք ունի նաեւ Հառիճաւանքի գլխաւոր եկեղեցու բեմը (ԺԳ. դ.)։

Գանձասարի եկեղեցու արտաքին կերպարը, նրա ծաւալատարածական ողջ լուծումը եւ, առաջին հերթին, յարդարանքը, ակընյայտ կերպով ցոյց են տալիս ճարտարապետի ձգտումը՝ չէնքին տալ առաւել կոթողային եւ վեհ տեսք, որ պէտք է մարմնաւորէր Աչէնի իշխանութեան հզօրութիւնը եւ նրա տէր Հասան-Ջալալի բարձր դիրքն ու հեղինակութիւնը ողջ Հայաստանում։ Եկեղեցին ունի վերասլաց տեսք եւ նրա կեդրոնում որպէս գերիշխող ու կարեւորագոյն տարր հանդէս է գալիս գմբէթը։



Գանձասարի վանքին գլխաւոր յատակագիծը




Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու եւ ժամատան յատակագիծը



Գանձասարի եկեղեցին եւ ժամատունը հիւսիս-արեւելքից



Գանձասարի եկեղեցին եւ ժամատունը հարաւից



Ս· Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին
հարաւ–արեւմուտքից




Ս· Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու
հարաւային ճակատը (մանրամաս)




Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու գմբէթը հիւսիս-արեւելքից




Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցու գմբէթը ժամատան գանգակատան միջից




Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու գմբէթի թմբուկը արեւելքից




Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու գմբէթի թմբուկը արեւմուտքից (մանրամաս)




Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ արեւմտեան ճակատի խաչելութեան բարձրաքանդակը



Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու գմբէթի տեսքը ներսից




Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու բեմը



Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցու բեմի առաջակողմը



Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու
ներսակողմի հիւսիսային անկիւնը



Գանձասարի վանքին ժամատան
ներսակողմը




Գանձասարի վանքին ժամատան
արեւելեան շքամուտքը



Գանձասարի վանքին ժամատան
հիւսիսային մուտքը



Գանձասարի վանքին ժամատան արեւմտեան մուտքի տիմպանը



Գանձասարի վանքին ժամատան արեւմտեան շքամուտքի մանրամաս

Եկեղեցու երեք ճակատները (արեւելեան, հիւսիսային եւ հարաւային) ունեն զոյգ, եռանկիւնաձեւ կտրուածքով խորշեր: Սրանք Հայաստանի նոյնատիպ յուշարձանների ճարտարապետութեան համար բաւական կարեւոր եւ նոյնիսկ պարտադիր տարրերից են: Խորշերն ունեն ինչպէս կառուցողական, այնպէս էլ զեղարուեստական նշանակութիւն: Նրանք հարստացնում են չէնքի կերպարը, ուժեղացնում ճակատների արտայայտչականութիւնը, միաժամանակ թեթեւացնում են պատերի այս մասերում ստացուող չարուածքի հոծ զանգուածը: Եկեղեցին բարձրանում է բազմաստիճան որմնախորհրդանշական վրայ: Ճակատները մշակուած են տեղորաթիֆ կամարաշարով, որոնք հանդչում են զոյգ կիսասիւնիկների վրայ: Միջին կամարները մօտ երկու անգամ լայն են կողիններից ու աւելի բարձր եւ ներառնում են եկեղեցու լուսամուտները:

Եկեղեցիների ճակատները կամարաշարով զարդարելը յատուկ է միջնադարեան հայ ճարտարապետութեանը եւ իր ակունքներն ունի է. դարի յուշարձաններում: Այս զեղարուեստական հնարանքն իր զարգացումն ունեցաւ Թ–ԺԱ. դդ. Բագրատունեաց Հայաստանի մայրաքաղաք Անիում եւ չարունակուեց կիրառուել նաեւ հետագայում՝ ԺԲ–ԺԴ. դդ.: Գանձասարի եկեղեցու ճարտարապետութեան ամենակարեւոր եւ աչքի ընկնող տարրը նրա գմբէթն է, որն իր զեղարուեստական յարդարանքով բացառիկ տեղ է գրաւում հայ արուեստի պատմութեան մէջ: Այն զերիչխում է եկեղեցու ողջ յօրինուածքում նաեւ իր համաչափութիւններով եւ ունի հովանոցաձեւ վերարով բազմանիստ թմբուկ: Վերջինս տասնըվեց նիստանի է, որոնցից իւրաքանչիւրն աւարտւում է փոքրիկ ճակատոնով: Իւրաքանչիւր նիստ կողերը չեչտուած են երեքական կիսասիւնների փնջերով, որոնք ունեն խոյակներ եւ խարիսխներ: Աչխարհի կողմերին նայող նիստերի վրայ բացւում են նեղ ու երկար լուսամուտներ, իսկ հիւսիս–արեւելեան, հարաւ–արեւելեան եւ հարաւ–արեւմտեան նիստերին՝ կլոր լուսամուտներ, ներգծուած նուրբ զարդաքանդակներով ծածկուած քառակուսի չրջանակների մէջ: Մնացած նիստերի վրայ քանդակուած են եռանկիւնի խորշեր, նրանց միջում՝ կիսասիւն, որի վրայ տեղադրուած են չկրկնուող պատկերաքանդակներ:

Գանձասարի գմբէթի քանդակները ոչ միայն ճարտարապետական յարդարանքի բացառիկ օրինակ են, այլեւ ունեն իմաստաւորուած բովանդակութիւն(11):

---

11. Ա. Լ. Եակոբսոն, *Միջնադարեան Հայ ճարտարապետութեան պատմութիւնից* (Գանձասարի վանքը), Ուսումնասիրութիւններ արեւելքի ժողովուրդների մշակոյթի պատմութեան (ռուսերէն), Մոսկուա–Լենինգրատ, 1960, էջ 151:

Արեւմտեան նիստերից երկուսի վրայ դանուում են երկու պատկերաքանդակ ծալապատիկ նստած մարդիկ, որոնք ղլխներից վերեւ պահում են երկու եկեղեցիների մանրակերտներ: Եկեղեցիներից մէկը հինց Գանձասարն է, միւսը՝ Վաճառի եկեղեցին: Հետաքրքրական է, որ վերջինիս բնօրինակը չի պահպանուել, եւ այս մանրակերտը թոյլ է տալիս պատկերացում կազմելու նրա յօրինուածքի մասին. այն ունի կլոր, կեդրոնագմբէթ ծաւալային լուծում, նման Անիի Փրկչի եկեղեցուն:

Եկեղեցիների քարէ մանրակերտները տարածուած են միջնադարեան հայ ճարտարապետութեան մէջ: Նրանք ըստ նշանակութեան լինում են չորս տեսակ՝ նուիրատուական, մատունքների պահպանման տուփ, ճակատնազարդ եւ տիպար(12): Գանձասարի թմբուկի մանրակերտները՝ կառուցողների պատկերաքանդակների հետ, պատկանում են նուիրատուական խմբին, որոնք հանդիպում են Հայաստանի բազմաթիւ վանքերում (Աղթամար, Հաղբատ, Սանահին, Հաղիճավանք, Հաղարծին, Դադիվանք): Սակայն Գանձասարի կոթողները եւ մանրակերտները իրենց ձեւով միանգամայն ինքնատիպ են եւ եզակի ու նմանը չունեն միջնադարեան հայ արուեստում:

Գանձասարի եկեղեցում հանդիպում է նաեւ մանրակերտների մի ուրիշ տեսակը, որը ծառայում է իբրեւ ճակատնազարդ: Շէնքի բոլոր չորս ճակատների գագաթին բարձրանում են միմեանցից տարբեր մանրակերտներ, որոնք, փաստօրէն, պատկերում են փոքրիկ գմբէթներ: Նման ճակատնազարդները նոյնպէս բաւական տարածուած են հայ ճարտարապետական համալիրներում (Թումանեանի Բարձրաքաշ Ս. Գրիգոր, Հաղիճավանք, Գեղարդ, Ամաղու–Նորավանք):

Բարձրաքանդակների այս երկու խմբերի միջեւ ընկած նիստի վրայ դանուում են Քրիստոսի եւ նրանից ներքեւ՝ Ադամի ու Եւայի հարթաքանդակները: Այս բոլորը միասին կազմում են մի ընդհանուր յօրինուածք, որը միաւորում է եւ որի առանցքն է հանդիսանում Քրիստոսի քանդակը: Նման խմբաւորում կայ նաեւ գմբէթի հարաւային կողմում: Այստեղ նոյնպէս սիմետրիկ տեղադրուած են ծնկաչոք, լուսապսակներով մարդկանց (հաւանաբար առաքեալների) քանդակներ, որոնք ղիմում են միջին նիստի ճակատնում պատկերուած Աստուածամօրը: Պատկերաքանդակների միասնական յօրինուածքների այսպիսի մասնատումը, երբ նրա բաղկացուցիչ մասերը բաժանուած են ճարտարապետական առանձին տարրերի միջեւ, նո-

12· Paolo Cuneo, **Les Modèles en Pierre de l'Architecture Arménienne**, ReARM, tome VI, Paris, 1969.

րութիւն էր ԺԲ–ԺԳ. դարերի հայ արուեստում(13)։ *Այսպիսի գեղարուեստական հնարանքի միջոցով պատկերաքանդակները դառնում են չէնքի ճարտարապետութեան բնայատուկ մասը, միաժամանակ չկորցնելով իրենց իմաստաւորուած միասնութիւնը։*

Եկեղեցու արեւմտեան ճակատին կայ մի այլ հետաքրքրական եւ բարձրարուեստ պատկերաքանդակ՝ խաչելութեան տեսարան, որը, սակայն, այդ կողմից զուրկը կառուցելուց յետոյ ամբողջութեամբ երեւում է միայն վերջինիս տանիքից։ Հիւսածոյ զարդաքանդակներով մշակուած լայն խաչի երկու կողմերում պատկերուած են դէպի Քրիստոսն ուղղուած զոյգ, ծնկաչոք մարդիկ, որոնք նման են թմբուկի վրայի մեկենաս–կառուցողներին։

Գանձասարի եկեղեցու վրայ կան բազմաթիւ այլ քանդակներ՝ թմբուկի վրայ եղան գլուխ եւ թեւատարած արծիւ, արեւմտեան պատին՝ թռչունի բաւական հնաոճ քանդակ, հարաւային ճակատում՝ կաքաւ եւ այլն։

Ինչպէս տեսանք, Գանձասարի եկեղեցին իր չափազանց հարուստ յարդարանքով, քանդակների առատութեամբ ու ինքնատիպութեամբ առանձնանում է ԺԲ–ԺԳ. դդ. հայ ճարտարապետութեան մէջ։ Սակայն այս երեւոյթը միջնադարեան հայ արուեստի համար օտարամուտ եւ խորթ երեւոյթ չէր, այլ նոր սոցիալ–տնտեսական պայմանների ու գեղարուեստական հայեացքների արդիւնքն էր, երբ ոչ միայն Հայաստանի, այլեւ հարեւան երկրների ճարտարապետութիւնը թեւակոխել էր իր զարգացման նոր փուլը՝ այսպէս կոչուած «գունադեղութեան» շրջանը։

ԺԲ–ԺԳ. դդ. կառուցողները հիմնական ուշադրութիւնը դարձընում են չէնքի արտաքին ճարտարապետութեան վրայ եւ տեղը թիթի յարդարանքի խնդիրը դարձնում են ամենակարեւորը։ Այս երեւոյթն առաջացել էր դեռ աւելի վաղ՝ Ժ–ԺԱ. դդ. (յատկապէս Անիում), բայց այն իր առաւել բուռն զարգացումը ստացաւ ԺԲ–ԺԳ. դդ., երբ երեւան եկաւ նաեւ գեղարուեստական նոր հնարանք՝ բազմագունութիւնը, որը եւ պայմանաւորեց ճարտարապետական նոր՝ «գունադեղ» ոճի առաջացումը։ Այս ոճը տարածուեց ոչ միայն Անդրկովկասում, այլեւ Պալքանեան երկրներում՝ Արեւելեան Եւրոպայում, Միջին Ասիայում(14)։ *Ինչպէս տեսնում ենք, այս երեւոյ-*

13· Ա· Լ· Եակոբսոն, *Գանձասարի վանքը*, էջ 152։

14· Ա· Լ· Եակոբսոն, *Պալքանների, Արեւելեան Եւրոպայի, Անդրկովկասի, եւ Միջին Ասիայի Միջնադարեան ճարտարապետութեան Որոշ Օրինաչափ Առանձնայատկութիւններ*, «Բիւզանդական տարեգիրք» (ռուսերէն), Մոսկուա, 1972, էջ 172։

թերն ընդհանուր էր տարբեր վարչակարգ, տարբեր տիրապետող կրօն ունեցող երկրների համար: Աւելի հատկանշական է այն կարծիքը, որ դա կապուած է նշուած երկրներում քաղաքների զարգացման հետ եւ ծագում է միջնադարեան քաղաքների աշխարհիկ մշակոյթից: Եւ թէպէտ եկեղեցական ճարտարապետութեան մէջ այս ոճն ածանցեալ էր, սակայն հենց այդ բնագաւառում ունեցաւ իր ծաղկումը(15):

Հայաստանի վանքային համալիրների ԺԹ. դ. ինչպէս եկեղեցիները, այնպէս էլ աշխարհիկ կառուցուածքները ունեն ճոխ արտաքին յարդարանք՝ կազմուած զարդաքանդակներից, պատկերաքանդակներից, բազմազոյն քարերի օգտագործումից:

Այս տեսակէտից աչքի են ընկնում, Գանձասարից բացի, Դադիվանքի, Գոշավանքի, Հառիճավանքի, Գեղարդի, Յովհաննավանքի, Մակարավանքի գլխաւոր յուշարձանախմբերը՝ եկեղեցիներն ու գաւիթները (բոլորը՝ ԺԹ. դ.):

Արտաքին յարդարանքով Գանձասարին յատկապէս մօտ է Հառիճավանքի գլխաւոր եկեղեցին: Գմբէթի թմբուկն այստեղ իր յարպարանքով եւ դեղարուեստական մշակման ձեւերով այնքան նման է Գանձասարի գմբէթին, որ կարելի է այս երկու կառուցուածքները համարել ճարտարապետական միեւնոյն դպրոցի ստեղծագործութիւններ: Հառիճավանքում եւս կան կառուցողների բարձրաքանդակներ, եկեղեցու մանրակերտ՝ ճակատի վրայ, թռչունի քանդակներ, իսկ ճակատներն ունեն ճոխ, հիւսածոյ զարդաքանդակներ:

Այսպիսի յարդարանքն, ինչպէս նշուեց, սերտ կապ ունի Անիի յուշարձանների հետ: Ինչ վերաբերում է Գանձասարի պատկերաքանդակների առատութեանը, ապա պէտք է նշել, որ այս նոյնպէս իր ակունքներն ունի աւելի վաղ շրջանի հայ արուեստում՝ Աղթամարում: Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին (ժ. դ.) պատկերաքանդակների բացառիկ մեծ քանակով եզակի է այդ ժամանակաշրջանի համաշխարհային արուեստում: Անկասկած, Աղթամարը չէր կարող իր ազդեցութիւնը չունենալ հայ արուեստի հետագայ զարգացման վրայ: Այդ ազդեցութիւնն, այս կամ այն չափով, արտայայտւում է ԺԲ–ԺԴ. դդ. Հայաստանի վանքային համալիրների հիմնական կառուցուածքների եւ, առաջին հերթին, Գանձասարի յարդարանքում: Պէտք է նշել, որ Արցախին հարեւան Սիւնիքում եւս կայ մի յուշարձան, մասնագիտական գրականութեան մէջ քիչ յայտնի, որ նոյնպէս աչքի է ընկնում բարձրարուեստ պատկերաքանդակների առատութեամբ: Դա Բղենոյ Նորավանքն է (ԺԱ. դ.)(16):

---

15. Նոյնը, էջ 189:

16. Ս. Մնացականեան, Հայկական ճարտարապետութեան Սիւնիքի Դպրո-

Բղենոյ Նորավանքի պատկերաքանդակները նոյնպէս «խոշոր նշանակութիւն ունեն հայ արուեստի պատմութեան ուսումնասիրութեան համար եւ Աղթամարից յետոյ այն միակ կառուցուածքն է, որ այդքան հարուստ է հայկական քանդակագործական արուեստի նմուշներով»(17):

Այսպիսով, Հայաստանի միջնադարեան ճարտարապետութեան այն նշանաւոր երեք յուշարձանները՝ Աղթամարը, Բղենոյ Նորավանքը, Գանձասարը, իրենց բացառիկութեամբ հանդերձ, հանդիսանում են հայ արուեստի զարգացման չղթայի կարեւորագոյն ու անքակտելի օղակները, մնալով նրան հարազատ եւ իրենց խոր արմատներն ունենալով այդ արուեստի բազմադարեան պատմութեան մէջ:

Գանձասարի վանքի գաւիթը նոյնպէս իր ճարտարապետութեամբ աչքի է ընկնում նոյնատիպ կառուցուածքների շարքում: Այն ուղղանկիւն, քառակուսուն մօտ յատակագծով (ներսի չափերն են 11,85×13,45) դահլիճ է, երկու զոյգ խաչուող կամարներ ունեցող ծածկով: Հայ միջնադարեան շինարուեստի բնորոշ եւ յատուկ այս յօրինուածքը իր լայն կիրառումը գտաւ յատկապէս ԺԲ–ԺԳ· դդ· գաւիթների ու ժամատուների ճարտարապետութեան մէջ:

Խաչուող կամարներով են կառուցուած Անիի Առաքելոց (ԺԲ· դ·), Հաղպատի, Խորակերտի, Դեղձնուտի, Իշխանի Առաքելոց, Ուշիի Ս· Սարգիս, Արատեսի, Նոր–Վարագավանքի գաւիթները, Հաղպատի եւ Հաղարծնի սեղանատները (բոլորը ԺԳ· դ·):

Այս յուշարձանները «···բաւական համարձակ իրենց կառուցուածքով եւ նոյնքան արհմարհանական իրենց յօրինուածքով, պատկանում են հայ դեղարուեստական հանճարի առաւել արտայայտիչ ստեղծագործութիւնների շարքին»(18):

Գանձասարի գաւիթը, սակայն, ունի իր յատակագծային–ծաւալային յօրինուածքում մի առանձնայատկութիւն՝ խաչուող կամարներով ծածկուած հիմնական մասին արեւմուտքից աւելացուած է լրացուցիչ մի տարածութիւն, որ բաժանւում է կեդրոնականից զոյգ, տասնըվեց նիստանի միակտոր քարէ սիւներով: Ահա, այսպիսի յօրինուածքով են կառուցուած Գանձասարից բացի, միայն Հաղպատի ժամատունը եւ Մշկավանքի գաւիթը(19): Հաղպատում,

---

ցը, Երեւան, 1960, էջ 142–159:

17· Նոյնը, էջ 154:

18· Ա· Լ· Եակոբսոն, Գանձասարի Վանքը, էջ 154:

19· Ս· Մնացականեան, Հայկական գաւիթների ճարտարապետութիւնը (ռուսերէն), Երեւան, 1952, էջ 76–93:

սակայն, յօրինուածքը մի փոքր տարբերութիւն ունի՝ հիւսիսից եւ հարաւից հիմնական ուղղանկեան ծաւալը լրացուած է խորշանման թաղակապ տարածութիւններով, իսկ խաչուող կամարներով երանգացուած ծածկի կեդրոնական հատուածը մշակուած է ոչ թէ չթաքարերով, այլ նորից զոյգ խաչուող կամարներով(20): Այս առումով Գանձասարի պաւիլիոնը չափազանց նման է Մշկաւանքի պաւիլիոնին, որ նոյնիսկ կարելի է ասել, նրա կրկնօրինակն է:

Հաղպատի ժամատան, Մշկաւանքի եւ Գանձասարի պաւիլիոնների այս նմանութիւնը հիմք է տուել ենթադրելու, որ նրանք կառուցել է միեւնոյն ճարտարապետը(21):

Գանձասարի պաւիլիոնի ներքին յարդարանքը համեստ է: Որմնամոյթերն ու սիւները ունեն պարզ խոյակներ եւ խարիսխներ, պաւիլիոնից դէպի եկեղեցին տանող դուռն ունի բաւական համեստ չքամուտք: Համեմատաբար հարուստ է ներսում ծածկի յարդարանքը: Կեդրոնական հատուածն, ինչպէս նշուեց, ունի չթաքարային լուծում եւ աւարտւում է երդիկով, ծածկի արեւմտեան հատուածները զարդարուած են քանդակներով, իսկ արեւելեան միջին հատուածը՝ նոյնպէս դուսպ է: Հարաւային ճակատը համարեայ զուրկ է յարդարանքից եւ աչխուժանում է միայն լուսամուտների բացուածքներով: Հիւսիսային ճակատի նոյնպէս խիստ հարթութիւնը զարդարում է միայն դրան համեստ չքամուտքով եւ վերջինիս վրայ բացուող լուսամուտի պարզ երեսակալով: Հետաքրքրականն այստեղ մուտքի երկու կողմերում գտնուող յովանների բաւական ոճաւորուած քանդակներն են: Պաւիլի առաւել հարուստ մշակուած եւ աչքի ընկնող ճակատն արեւմտեանն է, որտեղ գտնում է բաւական ճոխ զարդարուած չքամուտքը: Փաստօրէն ողջ արեւմտեան ճակատը հիմնապատուհան է ծառայում այս չքամուտքի համար: Դրան ուղղանկիւն բացուածքի երկու կողմերում կան կիսասիւների փնջեր, որոնք ունեն խարիսխ եւ խոյակ: Վերջինիս վրայ նստում է սլաքաձեւ կամարը: Մուտքի տիմպանի յարդարանքում օգտագործուած է այդ դարերի հայ արուեստին բնորոշ բազմագունութեան հնարանքը՝ այստեղ կարմիր քարի վրայ հագցուած են դեղնաւուն քարէ չրջանն ու կիսաչրջաններ: Այս բոլորը յաջորդաբար ներգծուած է աստիճանաձեւ եւ ապա ուղղանկիւն չրջանակների մէջ, որոնք զարդարուած են նուրբ, հիւսածոյ քանդակներով:

20· Նոյնը:

21· Ա· Լ· Եակոբսոն, Գանձասարի վանքը, էջ 154:

Եքամուտքի յօրինուածքի մէջ է ներառուած գրան վերեւի լուսամուտը, իսկ անկիւններում քանդակուած են վաղ միջնադարեան արուեստին բնորոշ թռչուններ:

Գաւիթն ունի քառալանջ, քարէ սալերով ծածկուած տանիք, որի կեդրոնում, երդիկի վրայ բարձրանում է վեց սիւնակի զանգակատունը: Այն նախնականը չէ, այլ 1907 թ. վերանորոգման արդիւնքը: Անկասկած, գաւթի սկզբնական զանգակատունը իր ձեւերով եւ դեղարուեստական հարուստ մշակմամբ համահնչուն է եղել եկեղեցու գմբէթին: Ահա, այսպիսին են Գանձասարի վանքի եկեղեցին եւ գաւիթը՝ երկու հիանալի կոթող, որոնք մարմնաւորել են ԺԳ. դ. հայ ճարտարապետութեան լաւագոյն նուաճումները:

Գանձասարի համալիրի բնակելի սենեակները կառուցուած են հիւսիսային պարսպին կից: Այսպիսի տեղադրութիւնը ստեղծում է լաւագոյն կոմպոզիցիոն՝ սենեակների լուսամուտներն ուղղուած են դէպի հարաւ, դէպի բակ: Մուտքերը թեւով ութն են, որոնցից եօթը միանման են, իսկ ութերորդը՝ արեւմտեան ծայրինը, մի փոքր տարբերւում է միւսներից: Տիպարային խուցը մեծ չէ (ներսի չափերն են 2,9×2,5) եւ նախատեսուած են եղել մէկ հոգու համար: Նրանք թաղակապ են, կառուցուած մաքուր տաշած եւ կիսամշակ բազալտ քարերի զուգորդումով: Դէպի բակ նայող ճակատներում բացւում են խուցի դուռը եւ երկու լուսամուտ, մէկը՝ մեծը, գրան կողքին, միւսը՝ աւելի փոքրը՝ վերեւում, անմիջապէս թաղի տակ (վերջինս միաժամանակ նաեւ օդանցք է ծառայել): Մուտքերն ունեն Հայաստանի վանքային համալիրների բնակելի չէնքերի համար տարածուած (բուխարի) եւ «պատրհաններ»՝ պատերում խոշոր տնտեսական նպատակների համար: Տիպարային խուցերով ստացուող միապաղաղ չարքն արեւմտեան կողմից տեսողականօրէն աւարտելու համար վերջին խուցը ոչ միայն չափերով մեծ են արել, այլեւ ճակատում տեղաշարժել են բացուածքները: Հայաստանի վանքերի բնակելի չինութիւնները ուշ միջնադարում ըստ ձեւի երկու տեսակ են: Ամենատարածուածը ընդհանուր թաղակապ միջանցքի շուրջը երկուական խմբաւորած սենեակներն են: Այս յօրինուածքն ունեն Տաթեւի, Գնդեվանքի, Գեղարդի, Հաւուց-Թառի, Աղջոց վանքի, Որ-Վէրապի, Արցախում՝ Ամարասի բնակելի սենեակները: Նրանք չափերով մեծ են եւ նախատեսուած են մէկից աւելի վանականների համար:

Գանձասարի խուցերը պատկանում են միւս տիպին: Նրանք փոքր են, մէկ մարդու համար նախատեսուած, ունեն առանձին մուտք դէպի դուրս: Մուտքերի այս տիպի լաւագոյն օրինակն ունենք

Սիւնիքի ուշ միջնադարի նշանաւոր ճարտարապետական համալիրում՝ Տաթեւի Մեծ անապատում(22)։

Գանձասարի խուցերին արեւելքից կից է վանքի սեղանատունը։ Այն ունի ԺԷ–ԺԹ. դդ. նոյնատիպ կառուցուածքներին բնորոշ յօրինուածք՝ օճախով, թաղածածկ ձգուած չինութիւն, որին կից է մթերանոցը։ Ահա այսպիսի յօրինուածք ունեն Տաթեւի վանքի, Տաթեւի Մեծ անապատի, Գնդեվանքի, Խոր–Վիրապի եւ ուրիշների սեղանատունները։ Այս ձեւն իր նախատիպն ունի ԺԲ–ԺԳ. դդ. հայ ճարտարապետութեան մէջ՝ թաղակապ, թաղակիր կամարներով երկար չէնքեր են Բորբերի, Կիրանց վանքի, Թեղենեաց վանքի սեղանատները(23)։ *Սակայն նրանք համալիրում ապատ են կանգնած, իսկ ԺԷ–ԺԹ. դդ. սեղանատուներն ընդհանուր կառուցապատման մէջ են տեղաշրջուած եւ համալիրներում չեն առանձնանում իրենց չափերով ու ձեւերով։*

Գանձասարի սեղանատան ներսակողմը չլաւում է զոյգ թաղակիր կամարներով երեք հատուածի։ Որմնասիւները մինչեւ յատակ չեն հասնում, այլ ընդհատում են ներքեւից կէս մեթր բարձր։ Դա պայմանաւորուած է եղել երկայնական պատերին պարապճով նստարանների տեղադրութեամբ։ Նրանք փայտեայ են եղել եւ այժմ չեն պահպանուել։ Գանձասարի սեղանատան դէպի բակ նայող ճակատը ձգտել են հնարաւորին չափ յարդարել՝ դրան չքամուտքն ունի զարդաձեւ կիսասիւներ, իսկ օժանդակ սեւեռակի լուսամուտի երկու կողմերում թռչուններ են քանդակուած։

Գանձասարի համալիրի հիւսիս–արեւելեան անկեան թաղակապ չինութիւնը հատուկ է եղել։ Այն կառուցուած է կիսամշակ բազալտէ քարերից եւ մուտք ունի ոչ միայն բակից, այլեւ դրսից։ Այսպիսի լուծում ունեն մի շարք վանքերի նոյնատիպ կառուցուածքները (օրինակ՝ Ամարաս, Հաւուց–Թառ)։

Արեւելեան կողմում կառուցուած զպրոցական երկյարկ չէնքը ունեցել է փայտէ ծածկ եւ տանիք (այժմ քանդուած) ու դէպի արեւմուտք, դէպի Խաչենի ձորը նայող փայտէ պատշգամբ։

Պարիսպները կառուցուած են որձաքարից եւ կիսամշակ բազալտից։ Պարսպապատերը, ի տարբերութիւն հայկական շատ վան-

---

22· Մ. Մ. Հասրաթեան, *Սիւնիքի 17–18–դարերի ճարտարապետական համալիրները*, Երեւան, 1973, էջ 102–105։

23· Լ. Խ. Խալփախչեան, *Հայաստանի քաղաքացիական ճարտարապետութիւնը* (ռուսերէն), Մոսկուա, 1971։

քերի, գուրկ են պաշտպանական կառուցուածքներից (աշտարակներից, բուրգերից)։ Համալիրը երեք մուտք ունի՝ արեւելքից, արեւմուտքից եւ հարաւից։ Վերջինս եղել է կեդրոնական, հանդիսաւոր մուտքը, եւ ունի մաքուր տաշած քարերից կառուցած մեծ պարպաս, թաղով ծածկուած։

Դարպասից հարաւ–արեւելք, մօտ տաս մեթր հեռու պահւում է քառակուսի յատակագծով, ձպարաձեւ փոխանցումով գնդաձեւ ծածկով չինք, որ եղել է վանքի ուխտաւորների կացարանը։

Համալիրից հարաւ ընկած է հին գերեզմանատունը, որտեղ թաղուած են Խաչենի հզօր եւ աչքառիկ նշանաւոր գործիչներ, ուշ միջնադարում՝ մելիքները։

Գանձասարի համալիրի աչքառիկ այս չինութիւնները իրենց պեղարուեստական որակով եւ արժէքով, ի հարկէ, չեն կարող համեմատուել հիմնական յուշարձանախմբի՝ եկեղեցու եւ գաւթի հետ։ Այս երկու յուշարձանը ստեղծելիս հայ ճարտարապետներն օգտագործել են դարերով կուտակուած հայկական արուեստի գեղարուեստական միջոցների վինանոցը, կատարելագոյն տիրապետելով դրանց։ Եւ իրաւամբ Գանձասարը համարւում է «ԺԳ. դարի հայ ճարտարապետութեան հանրագիտարանը»(24)։

THE MONASTERY OF KANDZASSAR

MOURAD M. HASRATIAN, PAKRAD OULOUPAPIAN

(Summary)

The architectural complex of Kandzassar has been constructed in the thirteenth century by the prince of Artzakh-Khatchen, namely Hassan Chalalian. The main building of the complex, the church of St. John the Saviour, has been built in the years 1216-1238, while the narthex has been completed in the year 1261.

In the 13th and 14th centuries, Kandzassar has been one of the most important cultural centres of Armenia. New manuscripts,

---

24. Ա. Լ. Եակոբսոն, Գանձասարի վանքը, էջ 158։

locally inscribed, were added to the rich library of the monastery. Here also, the fine arts of miniature flourished extensively. In 18th century, in the days of Catholicoss Yessayi Hassan Chalalian, Kandzassar turned out to be the religious and political centre of Gharabagh and Sunik.

The monastery of Kantzassar is one of the exceptional monuments of Armenian architecture and sculpture. The two hundred carved inscriptions on the walls of the complex have their special significance as a source material for the history of Artzakh-Khatchen in particular, and for Armenia in general.

The monastery of Kandzassar has justifiably been recognized as «the encyclopaedia of the 13th century Armenian architecture.»

Հայ եւ ռուս գիտնականների կարծիքները Հայաստանի եւ Սիրիայի վաղ քրիստոնէական (Դ-Է. դդ.) ճարտարապետութեան առնչութիւնների հարցի շուրջ

ՇԱՀԷ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆ

Հայաստանի եւ օտար երկրների պատմական յուշարձանների ճարտարապետութեան փոխազդեցութիւնների հարցը բոլորովին էլ նոր չէ: Այն ծագել է դեռեւս ԺԹ. դարի սկզբից, երբ Եւրոպայի ճարտարապետութեան պատմաբանները ու հնագէտները սկսեցին ի-րենց ուշադրութիւնը սեւեռել դէպի արեւելք ու հարաւ: Այդ ուշադ-րութիւնից զերծ չմնաց նաեւ Հայաստանը:

Գիտնականների առաջին իսկ ճանապարհորդութիւնները դէպի Հայաստան առաջ բերեցին մի քանի տեսութիւններ՝ հայկական պատ-մական ճարտարապետութեան ծագման (առաջացման), զարգացման եւ կրած ազդեցութիւնների վերաբերեալ:

Տեսութիւններից մէկն այն է, որ քրիստոնէական կրօնի մուտ-քը Հայաստան՝ Սիրիայի ճանապարհով, իր հետ բերել է նաեւ դեռ նոր կարգաւորուող պաշտամունքային ծիսակատարութիւնների օ-բէնքները՝ դրանով իսկ թելադրելով կառուցուելիք պաշտամունք-ային առաջին սրահների կամ եկեղեցիների յատակագծային ձեւերն ու մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ նրանց ճակատների, պա-տուհանների ու մուտքերի որոշ տեղորաթիֆ մանրամասներ:

Անչուշտ, Հայաստանի հարեւան երկրներից մէկում պատմական այսպիսի կարեւոր մի իրադարձութեան ծագումից եւ, հետեւաբար, նման զարգացումից յետոյ երբեք էլ անբնական չէ, որ շատ դիտնականներ, թէկուզ բոլորովին չնչին մի նմանութիւնից ելնելով, երկու երկրների վաղ քրիստոնէական ճարտարապետական կառոյցներում առնչութիւն նկատէին, ապա եւ առաջ քաշէին այն տեսութիւնը՝ որ այդ ժամանակաշրջանում, այսինքն՝ Դ–Ե. դարերի ընթացքում, Հայաստանի վաղ քրիստոնէական շրջանի ճարտարապետութիւնն առնչութիւն է ունեցել սիրիականի հետ, կամ աւելին՝ առաջինը ազդուել է երկրորդից:

Հայ եւ օտար դիտնականները վոխազդեցութիւնների հարցում ունեցել են տարբեր կարծիքներ: Դրանք երբեմն իրար հաստատում են եւ շատ դէպքերում էլ հակասում: Որոշ դիտնականներ իրենց դործունէութեան սկզբնական շրջանում փոխազդեցութիւնների մասին յայտնած իրենց իսկ կարծիքները հետագայում վերանայել են եւ վերափոխել: Եղել են այնպիսիք, որոնք իրենց տեսակէտներն ու եզրակացութիւնները ամրապնդել են մեծ հեղինակութիւն վայելող դիտնականների վերլուծական դատողութիւններով եւ չնչով: Կարելի է անդամ ասել, որ ազդուել են նրանց դաղափարներից:

Պարզ է, որ կարծիքների այդպիսի հակասութիւնները առաջ են դալիս այն իրողութիւնից, որ երկու երկրների տուեալ դարաշրջանի ճարտարապետութեան միջեւ համեմատութիւն կատարելիս հեղինակները աւելի քաջածանօթ են եղել երկրներից մէկի ճարտարապետութեանը, քան միւսի:

Հայ–սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետութեան առընչութիւնների տեսութեան հարցը առաջին անդամ հանդամանօրէն արծարծուել է Ց. Մարժիկովսկու եւ Ն. Մառի կողմից: Նրանց ժամանակակից Թ. Թորամանեանը նոյնպէս անդրադարձել է այդ հարցին: Հետագայում մի շարք օտար եւ հայ դիտնականներ իրենց հերթին խօսել են այդ մասին՝ կրկնելով, դժելով կամ որոշ փոփոխութիւնների ենթարկելով մինչ այդ դոյութիւն ունեցող կարծիքները: Նշուած դիտնականներից բացի, այս հարցին որոշ չափով անդրադարձել են նաեւ Ն. Տոկարսկին, Ա. Եակոբսոնը, Ա. Սահինեանը, Ստ. Մնացականեանը, Չ. Դրաբարը, Ռ. Քրաուտհայմերը, Ա. Խաչատրեանը եւ ուրիշներ:

Այս յօդուածում մենք, ըստ պատմական յաջորդականութեան, կը ծանօթանանք հայ եւ ռուս դիտնականների՝ Հայաստանի եւ Սիրիայի վաղ քրիստոնէական շրջանի ճարտարապետութեան առնչութիւնների հարցի շուրջ արտայայտուած կարծիքներին, համառօտա-

կի կը քննարկենք նրանց միջեւ գոյութիւն ունեցած ընդհանրութիւններն ու հակասութիւնները։

⁂

Ն. Մառը վաղ քրիստոնէական ճարտարապետութեան նմուշներից յատուկ ուշադրութիւն է դարձնում Երերուքի եւ Տեկորի բազիլիկներին։ Նա պեղում եւ հանդամանօրէն ուսումնասիրում է դրանք, համեմատում է հարեւան եկեղեցների նոյն ժամանակաշրջանում կառուցուած համապատասխան տաճարների հետ։ Իր կատարած պեղումների եւ ուսումնասիրութիւնների շնորհիւ լուսաբանում է մեր ճարտարապետութեան պատմութեան մի շարք մութ հարցեր, ժխտում է, կամ՝ հաստատում որոշ գիտնականների կարծիքները(1)։

Ն. Մառի վերջերս հրատարակուած «Երերուքի Բազիլիկան»(2) աշխատութիւնը հնարաւորութիւն տուեց աւելի խորը կերպով ծանօթանալու Դ–է. դդ. հայ–սիրիական ճարտարապետութեան առնչութիւններին վերաբերող նրա կարծիքներին։ Ի դէպ, այս աշխատութեան մէջ նա զուգահեռներ է անցկացնում նաեւ Երերուքի եւ Տեկորի միջեւ։ Մառը գտնում է, որ Տեկորի տաճարը հնագոյններից է Հայաստանում։ Չնայած հետագայում կրած մի շարք վոփոխութիւնների, նա պահպանել է Երերուքի բազիլիկի մի շարք յատկանիշները, իսկ հետագայ յաւելուածների բացառման եւ նախկին էլեմենտների վերականգնման դէպքում (յատկապէս կողքի սիւնասրահները եւ աբսիդը) Տեկորը կը կրկնի Երերուքի յատակագիծը(3)։

Հեղինակների կարծիքին, թէ Հայաստանը քիչ է օգտուել բազիլիկներից, այն էլ այն դէպքում, եթէ այդ ձեւը ընդհանրապէս գոյութիւն ունեցել է այնտեղ, Մառը պատասխանում է, որ բազիլիկը կար Հայաստանում, որտեղ նա մի չրջան անգամ իշխել է(4)։

Սրանով փորձում է ուղղել որոշ գիտնականների այն սխալ կարծիքները, ըստ որոնց, հայ ճարտարապետները ոչ մի ներդրում

1· Տես՝ Ստ. Մնացականեան, *Նիկոպսոյս Մառը եւ հայկական ճարտարապետութիւնը*, Երեւան, 1969, էջ 5։ Իր այս աշխատանքում Ստ. Մնացականեանը հանգամանօրէն անդրադարձել է նաեւ Մառի այն կարծիքներին, որ նա յայտնել է հայ–սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետութիւնների առնչութիւնների մասին։

2· Ն. Մառ, *Երերուքի Բազիլիկան*, Երեւան, 1968 (ռուսերէն)։

3· *Նոյնը*, էջ 26։

4· *Նոյնը*, էջ 29։

չեն ունեցել բազիլիկ տիպի կառուցուածքների մշակման ասպարէզ-դում, այլ պարզապէս ժառանգել են հելլենիստական աւանդոյթ-ները:

Երևրուքի բազիլիկը առանձնացնելով միւս բազիլիկ տիպերից, որոնք պոյութիւն են ունեցել Բիւզանդիայի սահմանակից շրջաննե-րում, որտեղ բնակչութիւնը հետեւում էր քաղկեդոնականութեա-նը(5) (հետագայում կոչուելին վրացական եկեղեցուն) Մառը նրա առաջացման ակունքները արդէն փնտռում է ոչ թէ արեւմուտքում (Բիւզանդիայում) այլ հարաւ-արեւմուտքում, մի խօս-քով՝ Սիրիայում: Երևրուքի (որը վերապրում է 6-7. դդ.) նախա-տիպերի որոնման այդ ուղին Մառը պատճառաբանում է նրանով, որ նոյն այդ վաղ ժամանակաշրջանում (6-7. դդ.) արեւելեան հայ-կական եկեղեցին սիրիականի հետ պահում էր բացառիկ սերտ յա-րաբերութեան մէջ եւ միայն 7. դարի երկրորդ կէսից է, որ Արե-ւելեան Հայաստան են սկսում թափանցել յունա-բիւզանդական ազ-դեցութեան ալիքները(6):

Իսկ ինչպէ՞ս է տեղի ունեցել հոգեւորական եւ պետարուեստա-ճարտարապետական մտքերի եւ սկզբունքների տեղափոխումը Սի-րիայից դէպի Արեւելեան Հայաստան, ինչպիսի՞ որամաբանութեամբ է մօտենում Մառը այդ հարցին:

Սկզբնական շրջանում, ասում է նա, Արեւելեան Հայաստանի քրիստոնէութիւնը օրգանապէս կապուած էր Սիրիայի հետ, որտե-ղից պէտք է ենթադրել, որ քրիստոնէական ճարտարապետութեան նորմաները գալիս էին եկեղեցական հոգեւոր բովանդակութեամբ: Մեզ համար աւելի հետաքրքիր կը լինէր անշուշտ, յարմնակում է նա, եթէ Հայաստանի մօտ գտնուած սիրիական շրջանների յուշար-ձանները (Նիզիբին, Եդեսիա, որտեղից քրիստոնէութիւնը մտել է Հայաստան) պահպանուած լինէին: Նա ասում է, եթէ երևրուքի բազիլիկը համարէինք ծագումնաբանական ծառի գագաթը, գնալով դէպի հարաւ՝ Նիզիբինն ու Եդեսիան իրենցից կը ներկայացնէին այդ ծառի բունը(7):

Եւ այսպէս, չկարողանալով որոշել բունը, նա խորանում է պարճեալ դէպի հարաւ, հարաւ-արեւմուտք՝ գտնելու Հայաստանի քրիստոնէական ճարտարապետութեան արմատները: Այդ շրջանը նա գտնում է կեդրոնական Սիրիայի հիւսիսային գօտում՝ Անտիո-

---

5. Նոյնը:

6. Նոյնը, էջ 29:

7. Նոյնը, էջ 29-30:

քի, Հալէպի եւ Ափամեայի միջակայքում: Այստեղ են կեդրոնացած, ասում է Մառը, մեզ հետաքրքրող յուշարձանների աւերակները, այդ թւում հոյակապ տաճարներ՝ սիւներով եւ ճակատները չրջափակող աշտարակաձեւ կառուցուածքներով(8): Սակայն չբունակութեան վրայ Մառը դիջում է իր դիրքերը: Նա ասում է. «Նոյնատիպ յատակագիծ չենք դտնում նաեւ նշուած չրջանի ճարտարապետական յուշարձաններում: Բայց սա չի էլ պահանջում՝ նկատի ունենալով ժամանակաչրջանների տարբերութիւնները եւ տարբեր նիւթական միջավայրը: Այս չրջանի յուշարձանները երեքուքի հետ կարող են համեմատուել սիւնասրահների հարցում: Օրինակ՝ Հասսի տաճարը: Ինչ վերաբերում է յատակագծերի նմանութեանը, երերուքին ամենամօտ կանգնած է Թուրմանինի բազիլիկը՝ ճակատում իր աշտարակաձեւ կառուցուածքներով: Բայց այստեղ էլ բացակայում են սիւնասրահները»(9):

Համամիտ լինելով Սարժիկովսկու կարծիքին՝ Մառը դտնում է, որ անկիւնային աշտարակաձեւ կառուցուածքները, որոնք չերքջափակում են ճակատը, արեւելեան ճարտարապետութեան բնորոշ գծերից են: Այստեղից էլ բխում է ե. դարի հայկական ճարտարապետութիւնը, որն առեղծել է երերուքի բազիլիկը: Նա ասում է, որ ըստ Սարժիկովսկու (որը հիմք է ընդունում Vogüeի Սիրիայում նկարած ճակատները) հատանական է համարւում անկիւնային աշտարակների նաեւ Սիրիայից դադած լինելը՝ նոյնպէս քրիստոնեայ արեւելքից (Փոքր Ասիա), եւ նոյնիսկ կարող են ունենալ տեղական՝ խեթական ակունքներ: Միեւնոյն ժամանակ Սարժիկովսկին նչել է, որ կողքի աշտարակաձեւ կցաչինուածքները քրիստոնէական ժամանակաչրջանում աւելի չուտ ունեն աւանդական, գեղագիտական, քան՝ գործնական արժէք(10):

Մառը մանրակրկիտ համեմատութիւն է անցկացնում Սիրիական Խաւրոսի (Ռոճա-Ջալեսի) տաճարի եւ երերուքի միջեւ: Նա մի չարք ճարտարապետական ձեւերի եւ մանրամասների միջեւ ընդհանուր գծեր է դտնում: Օրինակ՝ նման է դտնում նրանց աշտարակաձեւ կցաչինուածքները, կողքի սիւնասրահները եւ պատաձեւ կամարները: Նմանութիւններ է դտնում նաեւ ճակատների միջեւ, հիմնականում՝ արեւմտեան: Այստեղ տարբերութիւնն այն է, ասում է նա, որ Ռոճա-Ջալեսի արեւմտեան ճակատի մակերեսը բաժանուած է երկու մասի (հարուսի), իսկ երերուքինը՝ երեքի: Երերու-

---

8. Նոյնը, էջ 30:

9. Նոյնը:

10. Նոյնը, էջ 31:

քում մուտքի երկու կողմերում կան որմնամոյթեր՝ երկրորդ յարկը (բալկոնը) պահելու համար, իսկ Յոճա-Քալեսիում դրանք պոյու-թիւն չունեն: Ընդհանուր ճակատը Յոճա-Քալեսիում աւելի ցած-րագիր է, քան Երերուքում: Չնայած մի քանի տեղորաթիֆ մանրա-մասնութիւնների, չարունակում է Մառը, ճակատի մշակումը եր-կու տաճարներում էլ ունեն միեւնոյն տեսքը:

Յոճա-Քալեսիի ճակատում կան երեք մուտքեր, երկու կող-քի մուտքերը փոքր են: Մուտքերի միջեւ, պատի վրայ, կան կիսա-կլոր կեղծ որմնախորշեր: Սիրիական միջնադարեայ խորշերը սովորական են: Երերուքում կողքի մուտքերի վոխարէն դուրս ցցուած կամարների տակ խուլ պատեր են (որ հետագայ ե-րեւոյթ է): Կեղծ խորշեր էին պահուել նաեւ Երերուքի ճակատում, որոնք, ինչպէս նաեւ ճակատները, իրենց բարձրութեամբ տարբեր-ւում են Յոճա-Քալեսիի կեղծ խորշերից:

Ըստ Մառի, ճակատի մշակման հարցում չատ նման է եւ մի չարք մանրամասներում նոյն սխեման ունի սիրիական Զ. դարի Բա-քիրհայի եկեղեցին: Իսկ Ումմել Ձիմալի Հիւսիսային եկեղեցին (Սի-րիա) իր յատակագծով (որ ներկայացնում է բազիլիկ՝ ներսից վեց սիւներով) նա նմանեցնում է Երերուքի յատակագծին(11):

Տեղորաթիֆ մանրամասների միջեւ դուպահեռներ անցկացը-նելիս Մառը նշում է, որ Երերուքում նա չի տեսել խոյակների վրայ քանդակուած խաղողի որթեր՝ իրենց պտուղներով, ինչպէս Տեկորի տաճարում: Բայց նա գտնում է, որ նրանք պէտք է դոյու-թիւն ունենային Երերուքում, յատկապէս որ նրանից Հիւսիս-արե-ւելք գտնուող դամբարանի կոթողի մի կողմում տեսել է խաղողի որթերի չարան: Միաժամանակ նա նշում է, որ Երերուքում պահ-պանուած խոյակների քանակը չատ քիչ է:

Սիրիայում, չարունակում է նա, խաղողի որթեր հանդիպում են Ե. դարի նրբաճաշակ, զարդարուած դռների վրայ: Օրինակ՝ Բաբիզքայի Հիւսիսային եկեղեցում եւ սովորաբար Հիւսիսային Սի-րիայում, վաղ ժամանակաշրջանում այդ որթերից կարելի է տես-նել զարդ ձեւերով դռների չրջանակներում եւ եկեղեցիների կա-մարներում: Խօսում է նաեւ Սիրիայից դուրս, Աբեւելքում կիրառ-ւած խաղողի որթերի մասին, որոնք զարդարել են Քթեսիֆոնի մեծ սրահի՝ Թաղի արտաքին մասը(12):

Տեղորաթիֆ հիմնական մանրամասնը, որին ուչադրութիւն է դարձրել Մառը, պատուհանները չրջակալող պսակներ են: Տեկո-

11. Նոյնը, էջ 33:

12. Նոյնը, էջ 34:

րում եկեղեցու կողքերը զարդարուած են երեք-քառորդանի որմնամոյթերով, որոնք պահում են տեղորաթիֆ արխիտրաւը (քովթար), որ չրջանցում է պատուհանների վերեւի մասերը՝ մինչեւ նրանց բարձրութեան մէկ երրորդ մասը, մինչդեռ ժամանակ նրանք միայցընում իրար, ինչպէս սիրիական եկեղեցիներում, օրինակ՝ Քոքնայայում, Տեր-Սիթայի մկրտարանում, Քեֆեր Քիլէի եկեղեցիներում, Ս. Սիմէոնում, Կալբ-Լոզէում: Բայց Քեֆեր Քիլէում, Կալբ-Լոզէում եւ Տեր-Սիթայում չրջակալները ընդգրկում են պատուհանները ամբողջութեամբ՝ մինչեւ նրանց ներքեւի մասը, ինչպէս Երերուքում(13):

Աւարտելով իր ուսումնասիրութիւնը՝ Մաւը գտնում է, որ առնչութիւնների հարցում աւելի ճշգրիտ եզրակացութիւնների յանգելու համար պէտք է աւելի հանդամանօրէն ուսումնասիրել վաղ չրջանի հայկական յուշարձանները:

❁

Ականաւոր գիտնական Թորոս Թորամանեանը իր աշխատութիւններում յաճախ է անդրադարձել հայ եւ օտար երկրների ճարտարապետութիւնների փոխազդեցութեան հարցին: Այս հարցի չուրջ նրա կարծիքները բազմազան են: Հայկական ճարտարապետութեան՝ օտար երկրների արուեստներից ազդուած լինելու մասին խօսելիս, Թորամանեանը նշում է, որ նրա մէջ կարելի է տեսնել ասորա-բաղդէական արուեստների զօրեղ գծեր եւ ոչ նուազ զգալի են նաեւ սասանեան եւ սիրիական արուեստների հետքերը(14): Ինչ վերաբերում է յունա-հռոմէական ազդեցութեանը, ապա ըստ Թորամանեանի, այն կատարուել է հիմնական երկու ուղիներով՝ «Երբեմն ուղիղ ղծով, իսկ յաճախ Սիրիայի ճանապարհով... իր հետ բերելով նաեւ սիրիական ոճի բաւականին հետաքրքրական եւ ակնահաճոյ մոտիֆներ»(15): Նա բիւզանդական արուեստը համարելով Արեւելքի եւ Արեւմուտքի ճարտարապետական ոճերի խառնուրդ, ասում է. «Գալիս է մի դարաշրջան, որ հայ ճարտարապետութիւնն էլ ունենում է իր ազդեցութիւնը բիւզանդական արուեստի վրայ»(16):

---

13. Նոյնը:

14. Թ. Թորամանեան, Պատմական հայ ճարտարապետութիւն, Ա., Տեկոր Տաճարը, Թիֆլիս, 1911, էջ 53:

15. Թ. Թորամանեան, Նիւթեր հայկական ճարտարապետութեան պատմութեան, Ա. հտր., Երեւան, 1942, էջ 84: Բ. հտր., Երեւան, 1948, էջ 38-40:

16. Նոյնը, Ա. հտր., էջ 84:

Թորամանեանը, խօսելով հայկական ճարտարապետութեան՝ ասորա–քաղդէականից, պարսկականից, սիրիականից եւ յունա–հռոմէականից կրած ազդեցութեան մասին, միաժամանակ յիշեցնում է, որ այդ ներգործութիւնները երկարատեւ չեն եղել, այլ չուտով ձուլուել են հայ արուեստի ինքնուրոյն ոճի մէջ եւ լիովին կերպարանափոխուել(17):

Իր՝ «Տեկորի տաճարը» աշխատութեան մէջ, Թորամանեանը, Տեկորի սկզբնական ձեւի եւ ընդհանրապէս Հայաստանի վաղ քրիստոնէական շրջանի եկեղեցիների ակունքները որոնելիս, ելնում է երկու հանգամանքից. կրօնական տեսակէտից՝ նրանց ձեւը կապում է սիրիական ճարտարապետութեան նմանօրինակ յուշարձանների հետ. նկատի ունի այն, որ Սիրիան եւ Փոքր Ասիան, լինելով քրիստոնէութեան նախնական «վառարանը», միաժամանակ եղել են հայ քրիստոնէութեան ազբիւրը(18): Իսկ զեղարուեստական ոճի տեսակէտից այն կապում է Արեւմուտքի հետ: Նա ասում է. «Պէտք կարգ մը հարկեցուցիչ հանգամանքներ՝ վիս դարձեալ կ'առաջնորդեն դէպի Արեւմուտք՝ առջիս եղած առեղծուածներուն հաւանական լուծման համար»(19): Հեղինակը «առեղծուածներուն հաւանական լուծման համար» դիմում է Արեւմուտք, քանի որ իր առաջին տեսակէտը համարում է անհաւանական՝ նկատի ունենալով, որ Սիրիայում եւ Միջագետքում մինչեւ Դ. դարը կառուցուած մեծ եկեղեցիների օրինակներ, որոնք կարող էին համեմատուել հայկական հնագոյն եկեղեցիների հետ, չի գտել: Միւս կողմից նա գտնում է, որ Ասորիքում եւ Միջագետքում այդպիսի մեծ եկեղեցիներ չէին կարող լինել, քանի որ հռոմէական կայսրութեան հալածանքի պայմաններում այնտեղ մեծամեծ եկեղեցիների կառուցումը չէր թոյլատրուում(20):

Հայաստանում քրիստոնէութեան ընդունման առաջին օրերին հաւատացեալների պաշտամունքային կարիքների չուտափոյթ բաւարարման նպատակով մի շարք հեթանոսական մեհեաններ փոխարկուեցին քրիստոնէական տաճարների: Հիմք ընդունելով պատմական այս իրողութիւնը՝ Թորամանեանը հետեւցնում է, որ հայկա-

---

17. Թ. Թորամանեան, *Տեկորի Տաճարը*, էջ 54: *Նիւթեր Հայկական ճարտարապետութեան Պատմութեան*, Բ. հատ., էջ 47:

18. Թ. Թորամանեան, *Տեկորի Տաճարը*, էջ 54:

19. *Նոյնը*:

20. *Նոյնը*, էջ 73:

կան առաջին եկեղեցիների վրայ պէտք է փնտռել հայ-հեթանոսական մեհեանների դրոշմը(21):

Իսկ ինչ ձեւ ունէին հայոց մեհեանները: Հիմնուելով պատմական ազբիւրների վրայ (Ագաթանգեղոս), Թորամանեանը թէեւ հայերի հեթանոսական կրօնը ազդուած է համարում արեւելեան դիցապաշտութիւնից, սակայն միաժամանակ գտնում է, որ Արշակունի թագաւորների օրօք նրա վրայ մեծ ազդեցութիւն է ունեցել յունա-հռոմէական դիցապաշտութիւնը: Նա յատկապէս նշում է հայոց վերջին հեթանոս թագաւոր Տրդատի ծայրայեղ բծախնդրութիւնը յունական ձեւերի նկատմամբ(22): Դրանից իսկ ելնելով՝ նա գրում է. «Յունա-հռոմէական կրօնին այս ստուգման ենթարկուող մի ժողովրդի մեհեաններն ալ անկասկած պէտք էր, որ յունական մեհեաններու նմանութիւնը ունենային»(23):

Այսպիսով՝ Թորամանեանը անուղղակիօրէն թելադրում է այն միտքը, որ հայկական վաղ քրիստոնէական եկեղեցիների ձեւն էլ ազդուել է յունա-հռոմէական մեհեանների ձեւից: Որպէս օրինակ նա նշում է Տեկորի, Մրենի, Երերուքի, Թասպղի տաճարների կլոր կլորնական ձեւերը(24), առանց հետապայ յաւելուածքների (օժանդակ սենեակներ եւայլն): Նա գտնում է, որ տաճարների չորքը եզած սիւնազարդ ծածկոյթները «յունա-հռոմէական մեհենական ոճի սեփականութիւն են»(25), որոնք նախաքրիստոնէական մեհեաններ վրայ կամ Սիրիայի ճանապարհով եւ կամ ուղղակի ազդեցութիւն է համարում նաեւ պսակներում պատկերուած պճղակները(26), չէնքերի ճակատի «տիմպան»ներով ճակատները եւայլն(27): Այս միտքը հաստատում են հետեւեալ տողերը. «Ընդհակառակը, յունական մեհեանները ոչ միայն իրենց յատակագծային ձեւով, այլեւ ծիսական պաշտամունքի մը առանձնութիւններով ալ ուղղակի հայոց քրիստոնէական տաճարներու վրայ ազդած լինելը, ըստ ինքս, անվիճելի կը թուի, հետեւաբար, եթէ հայոց քրիստոնէական տաճարները յունա-հռոմէական մեհեաններու դրոշմը կը կրեն որոշ չա-

---

21. Նոյնը, էջ 74:

22. Նոյնը, էջ 75:

23. Նոյնը:

24. Նոյնը, էջ 76:

25. Նոյնը, էջ 56:

26. Թ. Թորամանեան, Նիւթեր Հայկական ճարտարապետութեան պատմութեան, Ա. հտր., էջ 85:

27. Նոյնը:

փով, անպայման անոնց հայ հեթանոսական տաճարներու վրայ ներգործած ուժեղ ազդեցութեան փոխանցումը պիտի լինի քրիստոնէութեան վրայ այդ համանմանութիւնը»(28):

⁂

Հայ–սիրիական կապերը հետաքրքրել են նաեւ սովետական գիտնականներին:

Թ. Թորամանեանից եւ Մառից յետոյ հայ–սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետական առնչութիւնների մասին սովետական շրջանում առաջին անգամ արտայայտուել է Ն. Տոկարսկին: Նա գտնում է, որ հայկական վաղ քրիստոնէական շրջանի ճարտարապետութիւնն իր սկզբնական կազմաւորման շրջանում ենթարկուել է սիրիական ճարտարապետութեան որոշ ազդեցութեանը:

Այդ ազդեցութիւնը նա համարում է շատ բնական՝ հիմք ընդունելով, որ քրիստոնէութիւնը Հայաստան է մուտք գործել Սիրիայից: Ն. Տոկարսկին ասում է, որ երբ քրիստոնէութիւնը Հայաստան մուտք գործեց հիմնականում հարաւից՝ Սիրիայից, Աստւածաշնչի առաջին թարգմանութիւնները կատարուեցին սիրիական եկզնաղբիւրից, որն իր անդրադարձումը գտաւ պաշտամունքային յուշարձաններում: Ինչպէս դա կարելի է տեսնել Անիի պատական եկեղեցու հարաւային պատի խորշում՝ քարէ հարթաքանդակի վրայ, որտեղ, սիրիական բիբլիական տեքստին լրիւ համապատասխան, նկարագրուած է Աբրահամի կատարած զոհաբերութեան տեսարանը(29): Ապա չարունակելով իր տեսութիւնը՝ նա գրում է «Քրիստոնէութեան սիրիական ազդիւրները Հայաստանում իրենց հետքը ղրեցին եկեղեցական կառուցուածքների վրայ: Ճարտարապետները սկզբում կառուցեցին բազիլիկներ, որոնք իրենց բոլոր առանձնայատկութիւններով իրարայատուկ են ոչ–միջագետքեան սիրիական եկեղեցիներին»(30): Տոկարսկին աւելի համարձակ ենթադրութիւն է անում, երբ գտնում է, որ սկզբում տեղացի ճարտարապետների հետ միասին աշխատել են նաեւ սիրիացի վարպետները, եւ որ մինչեւ օրերս պահպանուած Դ–ե. դարերի Աղցի պետնափոր դամբարանը մեծ նմանութիւն ունի համապատասխան սիրիական կառուցուածքների հետ:

---

28. Նոյնը, էջ 110:

29. Ն. Մ. Տոկարսկի, *Հին Հայաստանի ճարտարապետութիւնը*, Երեւան, 1946, էջ 48 (ռուսերէն):

30. Նոյնը, էջ 49:

Նա զեղարուեստական մեծ նշանակութիւն է տալիս Երերուքի բազիլիկին, ինչպէս նաեւ բարձր է գնահատում նրա դերը քրիստոնէական ճարտարապետութեան կազմաւորման սկզբնական շրջանում: Նա խօսում է արեւմտեան ճակատի երկյարկանի աշտարակների մասին, որոնք կարելի է նկատել սիրիական յուշարձաններում (Թուրմանին եւայլն), որոնց հետ Երերուքի բազիլիկը նմանութիւն ունի(31): Նա Երերուքի բազիլիկի ծածկի հարցը դեռեւս վերջնական լուծուած չի համարում: Այն վայտածածկ լինելու դէպքում աւելի է մօտենում սիրիական յուշարձաններին եւ տարբերւում հայկական միւս եռանաւ բազիլիկներից, որոնք թաղածածկ են, ինչպէս Քասաղի, Աշտարակի բազիլիկները:

Տոկարսկին անդրադառնում է Երերուքի կլոր վերջաւորութեամբ պատուհանների չուրջ ձգուող երեսակալներին, որոնք, ինչպէս սիրիական յուշարձաններում, բացուածքների երկու կողմերում, հիմքերի մօտ թեքւում են:

Խօսելով սիրիական հաւասարաթեւ խաչերի մասին՝ նա առում է, թէ Երերուքի բազիլիկում ամէն տեղ կարելի է տեսնել դրանք՝ դռների, արխիտրաւների, խոյակների, ինչպէս նաեւ արեւմտեան պատի եռակի պատուհանի կամարների միջեւ ընկած որմնասիւնի խարխափ վրայ(32): Հաւասարաթեւ խաչը մեծ մասամբ պատահում է ներզծուած չրջանակի մէջ եւ զուգակցուած կամ վեցթերթանի վարդանախչերով՝ կողքերում, կամ բուսական որթերով:

❀

Ա. Եակոբսոնը այն պիտնականներից է, որոնք մեծ նշանակութիւն են տալիս հայ-սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետական փոխյարաբերութիւնների ուսումնասիրմանը եւ պարզաբանմանը: Նա գտնում է, որ այս ուղղութեամբ դեռեւս խօսուել է միայն հարեւանցիօրէն: Ցենուելով Բաալբերի եւ Ջալենկոյի համեմատաբար նոր նիւթերի վրայ՝ նա փորձում է աւելի հիմնաւոր բացայայտել Ե–Զ· դարերի հայ-սիրիական ճարտարապետական կապերը եւ համադրելով դրանք՝ ցոյց տալ տարբերութիւնները:

Երերուքի եւ Տեկորի բազիլիկները սիրիական տաճարների հետ համեմատելով՝ նա գրում է. «Երկու բազիլիկները նոյն ժամանակաշրջանի սիրիական տաճարների հետ միաւորում է ոչ միայն եռանաւ քարէ բազիլիկի ընդհանուր տիպը փայտէ ծածկի տակ: Այդ

31· Նոյնը, էջ 51:

32· Նոյնը, էջ 53:

ընդհանուր Փոնի վրայ աչքի են զարկում բազիլիկների առանձին բազադրամասերը եւ ամենից առաջ՝ երերուքի բազիլիկի իւրայատուկ դիծը, արեւմտեան մուտքը հատող եւ դրանից պատերով անջատուած աշտարակները։ Այդպիսի աշտարակները բնորոշ են Ե–Զ. դարերի Սիրիայի՝ ղևաւորապէս Հայաստանին յարող նրա հիւսիսային շրջանների շատ բազիլիկների համար։ Այդպիսի կառուցուածք ունէին Ռուվեհայի, Տուրմանինի, կալը–լոզէի, էլբարայի եւ այլ մեծ բազիլիկները։ Դրանց են յարում աւելի վաղ շրջանի մի քանի բազիլիկներ՝ մուտքի կողքերի աշտարակներով՝ Բինբիր Քիլիսէում, Լիկաոնիայում (Փոքր Ասիայի հարաւային մասում), այսինքն՝ Սիրիային յարող շրջանում»(33)։ Նա գտնում է, որ Ե. դարի առաջին կէսերին կառուցուած թաղակապ ծածկով Բասապի, Եղուարդի, Աշտարակի բազիլիկները պեղարուեստականօրէն մեծ չափով պիջում էին երերուքի բազիլիկին։

Նշելով հայկական թաղակապ եւ սիրիական վայտածածկ եռանաւ բազիլիկների միջեւ եղած սկզբունքային տարբերութիւնը՝ նա շարունակում է. «Բայց, այնուամենայնիւ, հարկաւոր է խոստովանել, որ հայ ճարտարապետները՝ թաղակապ բազիլիկներ կառուցողները, ելնում էին Սիրիայի ճարտարապետութիւնից, այնտեղից վերցնելով բազիլիկ տաճարի բուն յատակագծումը»(34)։

Ա. Եակոբսոնը համեմատում է նաեւ ուղղանկիւն բեմ ունեցող բազիլիկները. Ե–Է. դարերի հայկական ճարտարապետութեան մէջ այդպիսի բազիլիկներ, ճիշդ է, յայտնի չեն կամ, գոնէ, չեն պահպանուել։ Մենք այդ ձեւը դիտենք միայն Բիւրականի Ժ. դարի շատ ինքնատիպ տաճարից, որն այն ժամանակի համար եզակի է։ Բայց այդպիսի ձեւի հանդէս գալը Բագրատունեաց Հայաստանում կարող է բացատրուել միայն որպէս նախորդ՝ մինչարաբական դարաշրջանի ժառանգութիւն, որ Հայաստանի հողի վրայ կապուած է դեռադանգատ Զ. դարի տաճարաշինութեան հետ, թէեւ այդ ձեւը ժողովրդականութիւն ձեռք էլ չբերեց Հայաստանում»(35)։

Շարունակելով թուարկել հայ–սիրիական առնչութիւնները, Ա. Եակոբսոնը գրում է. «Սիրիայի վաղ միջնադարի պաշտամունքային ճարտարապետութեան մէջ նկատւում են նաեւ վաղ հայկա-

---

33. Ա. Եակոբսոն, *Հայաստանը եւ Սիրիան*, (*Ճարտարապետական համադրումներ*), «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթ, Երեւան, 1971, թիւ 44 (398)։

34. *Նոյնը*։

35. *Նոյնը*։

կան բաղխիկների այլ տարբեր՝ T–աձեւ սիւներ, երերուքի նման չքամուռքեր՝ բարձր ճակատնապատի տակ կառուցուած կամարի ձեւով եւ կորնթականի նման խոյակներ ունեցող մեծ սիւներով։ Յաճախ սիրիական բաղխիկների մէջ նկատւում է նաեւ արեւմտեան ճակատի կոմպոզիցիան՝ աքանչելի չքամուռքով եւ մի խումբ լուսամուտներով, որոնք աւարտում են ճակատը։ Ինչպէս յայտնի է, սիրիական ճարտարապետութեան համար պակաս բնորոշ չէ նաեւ աբսիդի, յենահիմների կամարների եւ լուսամուտների պայտաձեւ կառուցուածքը։ Սիրիայում յայտնի են նաեւ դուրս ցցուած աբսիդով բաղխիկներ (ինչպէս Եղուարդում) եւ խոյակների փոխարէն՝ երկարաւուն ծանր սիւներ»(36)։

Առաջին անգամ լինելով՝ Եակոբսոնն է խօսում Դուինի եւ Արուճի պեղումների ժամանակ յայտնաբերուած հայկական պալատների յատակագծերում արտացոլում գտած սիրիական վազ միջնադարի ճարտարապետութեան մասին։

Եակոբսոնը կանգ է առնում նաեւ տեղորի հարցի վրայ։ Նըկարագրելով յատակագիծ Տեկորի եւ Երերուքի բաղխիկների տեղորները, նա գրում է. «Նման տիպի տեղորը չփման բազմաթիւ կէտեր ունի Ե–Զ. դարերի սիրիական ճարտարապետութեան հետ, որի համար առանձնապէս բնորոշ է չքամուռքերն ու լուսամուտները չըրջափակող գօտիների մոտիֆը»(37)։ Միւս կողմից՝ նշում է Տեկորի եւ Երերուքի բաղխիկների տեղորների ինքնատիպութիւնը, որ դրսեւորում է նրանց խոստութեան, զսպուածութեան եւ լակոնիկութեան մէջ։

Իր յօդուածի վերջում Եակոբսոնը կարեւոր ընդհանուր համեմատութիւն է անցկացնում Հայաստանում քրիստոնէութեան հաստատման դարաշրջանում Սիրիայի կրթօջախային ճարտարապետութեան ունեցած ազդեցութեան, երբեմն էլ՝ ուղղակի փոխառութեան եւ Հայաստանի նոյն շրջանի եկեղեցական ճարտարապետութեան ինքնատիպութեան միջեւ եւ գալիս է այն եզրակացութեան, որ «Հայ ճարտարապետներն ու քարտաշները Ե. դարում բաւականին ինքնատիպ էին մեկնաբանում սիրիական այն արուեստը, որ նրբանք լաւ գիտէին եւ յարգում էին, բայց ընկալում ոչ որպէս պարտադիր ու քարացած օրինակ, այլ մի որպէս մեկնակէտ իրենց ստեղծագործութեան համար, որ ցոյց էր տալիս, որ արդէն միջնադարի արշալոյսին Հայաստանում ձեւաւորուել էր սեփական ճար-

---

36. Նոյնը։

37. Նոյնը։

տարապետական մի դպրոց՝ իր ճարտարապետական–դեղարուեստական սկզբունքներով»:

Ինչպէս տեսնում ենք, Եակոբսոնը ընդունում է հայկական եւ սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետութիւնների միջեւ եղած առնչութիւնները, բայց նա բոլորովին այլ կարծիքի է տուեալ ժամանակաշրջանում հայկական ճարտարապետութեան՝ մի ուրիշ երկրի հետ ունեցած առնչութիւնների մասին(38):

Այդ երկիրը Բիւզանդիան է: Արեւմտաեւրոպական պիտոյականները դեռ մինչեւ վերջին ժամանակները սիրիական եւ հայկական վաղ քրիստոնէական ճարտարապետութիւնների մասին խօսելիս նչում էին նրանց ընդհանրութիւնները եւ առնչութիւնները բիւզանդական նոյն ժամանակաշրջանի ճարտարապետութեան հետ: Աւելին, հայկական վաղ միջնադարի ճարտարապետութիւնը նրանք մեկնաբանում էին միայն որպէս բիւզանդական ճարտարապետութեան մի ճիւղ: Այսպիսի մօտեցումը Եակոբսոնը համարում է միակողմանի եւ խորապէս ոչ ճիշդ նրա համար, որ վաղ միջնադարում քրիստոնէական պաշտամունքային կառոյցներում պերիշիտ էին անտիկ չրջանից ժառանգուած բազիլիկները, բայց նրանց մարմնաւորումը Բիւզանդիայում, արեւելքում՝ յատկապէս Հայաստանում եւ Վրաստանում, բոլորովին տարբեր են եղել(39):

Առաջինը ներքին ծաւալների միջեւ եղած տարբերութիւնն է:

Բիւզանդիայում կիրառուող հելլենիստական տիպի եռանաւ բազիլիկը նաւերի էր բաժանւում համեմատաբար բարակ եւ իրար մօտիկ տեղադրուած սիւներով, որոնք խիստ կերպով բաժանում էին կեդրոնական նաւը կողքիններից առաջացնելով ներքին տարածութեան բաժանուածութիւն:

Փոքր Ասիայի ճարտապետները ձգտում էին թուլացնել այս բաժանուածութիւնը, եւ արդէն արեւելեան չրջաններում Բիւրիա եւ Լիկաոնիայում, Ե. դարում երեւացին թաղաւոր բազիլիկներ, որտեղ սիւների փոխարէն օգտագործուեցին հաստահեղոյս մոյթեր՝ քիչ քանակով տեղադրուած: Այդ էլ հնարաւորութիւն տուեց ուժեղացնելու կեդրոնական եւ կողքի նաւերի միջեւ եղած կապը: Հեղինակը ցոյց է տալիս, որ նաւերի միջեւ եղած կապն ուժեղացնելու միտումները երեւացել են նաեւ Սիրիայի մի քանի յուչարձան–

---

38. Տես՝ Ա. Եակոբսոն, *Հայաստանի ու Բիւզանդիայի վաղ միջնադարեան ճարտարապետութեան առնչութիւնները* (ռուսերէն), «Պատմա–բանասիրական հանդես», 1973, թիւ 4, էջ 33:

39. Նոյնը, էջ 33–34:

ներում (օրինակ՝ Ռուվեյիա, Կալը-Լոզէ), չնայած այսօրեղ ամբողջ գաղ միջնադարում իշխել է հելլենիստական տիպի բազիլիկը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, Եակոբսոնը գրում է, որ արդէն 6-դարում Հայաստանի կոթողային բազիլիկները ծածկուում էին քարաչէն պլանաձեւ թաղերով: Մոյթերի միջեւ ընկած թռիչքները եկեղեցին դարձնում էին աւելի տարողունակ (Տեկոր, Երերուք, Աշտարակ, Միծեռնակավանք): Ընդունելով հայկական բազիլիկի ներքին ծաւալի վերաբերեալ հիմնական յատկութիւնը՝ Եակոբսոնն ասում է. «Ներքին տարածութեան միաւորում – դա այն հիմնական ճարտարապետա-գեղարուեստական միաւորն է, ձգտումը, որ կարմիր թելի նման անցնում է ամբողջ հայկական միջնադարեան ճարտարապետութեան միջով»(40):

Հեղինակի նկատած երկրորդ տարբերութիւնը կառուցուածքների արտաքին ձեւերի, նրանց ճարտարապետական ճակատների մեկնաբանումն է: Բիւզանդական ճարտարապետութիւնում նրանք խաղում են պասիւ դեր եւ հանդէս են գալիս միայն որպէս արտաքին թաղանթ (երեսպատում): Ներքին զարկացած դինամիկացուած ծաւալների ճակատները ներկայացնում են քարացած համամասրած հարթութիւններ, որոնք կենդանացուած են միայն քարի եւ ապիւսի յարդային չարքերով:

Այլ է պատկերը հայկականում. ըստ Եակոբսոնի հայ, ինչպէս նաեւ սիրիական եւ վրացական ճարտարապետութիւններում ճակատները եւ ընդհանրապէս ամբողջ արտաքինը, խաղում են բաւականին դործօն դեր: Նրանք ծառայում էին ոչ միայն որպէս ներքին ծաւալների երեսպատման միջոց, այլեւ ներկայացնում գեղարուեստական ինքնատիպ արժէք: Այսպիսի ուժականութիւն առացնում էր մի չարք մանրամասների (աչտարակաձեւ ելուստներ, չքամուտքեր, ճակատների երկայնքով սիւնասրահներ եւ այլն) դեղեցիկ, միաձոյլ եւ ամբողջական համադրումով: Այդպիսիներից են Երերուքի ու Տեկորի տաճարները, որոնք չնայած Սիրիայից կրած ազդեցութեանը, անկասկած գերազանցում են նրանց(41):

Մեկնաբանելով հայկական բազիլիկների եւս մի քանի յատկութիւններ՝ Եակոբսոնը գրում է. «Ինչպէս տեսնում ենք, բիւզանդական եւ հայկական որեւիցէ բազիլիկի հիմքում ընկած է ճարտարապետական տարրեր ըմբռնում»(42): Հեղինակը տարբերութիւններ

40· Նոյնը, էջ 35:

41· Նոյնը, էջ 36:

42· Նոյնը, էջ 37:

է պանում նաեւ երկու երկրների ճարտարապետական կառուցուածքների ընդհանուր յօրինուածքի եւ համապատասխան մանրամասների միջեւ։ Յատկանշական է համարում արսիդների ձեւերի միջեւ եղած տարբերութիւնը։ Նա գրում է. «Բիւզանդիայում արսիդները համարեա միշտ դուրս են ցցուած կիսաշրջան ձեւով, քիչ չեն նաեւ հոակոդմ եւ հինգ կողմանի դուրս ցցուած արսիդները։ Մինչդեռ հայկականում, ինչպէս նաեւ սիրիական բազիլիկներում ընդհանրապէս կիսաշրջան արսիդով են, արեւելեան կողմից ներգծուած ընդհանուր մի պատի միջ, որտեղ արեւելեան ճակատը առանում է մխաձոյլ տեսք եւ կապւում կողքի ճակատների հետ»(43)։

Եւ այսպէս՝ Եակոբոսը, ի մի բերելով իր կողմից առաջ քաշուած հայկական եւ բիւզանդական վաղ միջնադարի բազիլիկների միջեւ եղած հիմնական տարբերութիւնները, հաստատում է, որ նրանք արդէն պոյութիւն ունէին ե. դարում, որից յետոյ այդ տարբերութիւնները աւելի են խորացել եւ ընդգծուել։ Հայկական եւ բիւզանդական ճարտարապետութիւնների միջեւ միակ ընդհանրութիւնը համարում է այն, որ երկուսն էլ հետապնդում հրաժարուելին բազիլիկ ձեւից եւ սկսելին կիրառել կեդրոնագմբէթ եւ կեդրոնական յատակագծերի ճարտարապետական սիստեմը։ Նա գտնում է, որ այս ճարտարապետական հայեացքները առանձնապէս Բիւզանդիայում եւ Հայաստանում տարածուած յօրինուածքային բոլորովին տարբեր մարմնաւորում(44)։

Իսկ ինչպէս ընթացաւ Զ–Է. դարերի ճարտարապետութեան զարգացումը Բիւզանդիայում եւ Հայաստանում։ Հեղինակը հերթականօրէն մի քանի օրինակներով մեզ ներկայացնում է կեդրոնագմբէթ եւ կեդրոնական յատակագծով եկեղեցիների առաջացումը։ Սկսելով հայկական յուշարձանների թուարկումից նա ասում է. «Արդէն Զ. դարի վերջերին մշակւում են իւրատիպ, միայն Հայաստանում յատնի խորանարդաձեւ յօրինուածք ունեցող կողքերից դուրս ցցուած հքեղրաններով (արսիդ) մեծ կառուցուածքներ՝ ծածկուած լայն գմբէթով, որ նշանակալից չափով միացնում էր եկեղեցու ներքին տարածութիւնը»(45)։ Այսպիսին է Մաստարայի եկեղեցին։ Աւելի ուշ այս տիպը կրում է որոշ բարեփոխութիւններ, գմբէթը յենւում է չորս մոյթերի վրայ, ինչպէս Բագարանի եկեղեցում։

Դարձեալ Զ. դարի վերջում առաջանում է մի ուրիշ յատակագծային յօրինուածք՝ տետրակոնխ անկիւններում երեք քառորդա-

---

43. Նոյնը։

44. Նոյնը։

45. Նոյնը էջ 38։

նոց խորչերով։ Այսաեղ դմբէթը յենւում էր արմպնների վրայ (Ա–ւանի եկեղեցի 591–602 թթ.)։ Այս յօրինուածքի աւելի կատարելագործուած եւ ամբողջական դրսեւորումը Հռիփսիմէի եկեղեցին է (618 թ.)։

Շարունակելով թուարկել տարբեր յօրինուածք ունեցող դմբէթաւոր եկեղեցիները՝ Եակոբսոնը նշում է, որ քիչ նշանակալից չեն «դմբէթաւոր սրահ» յօրինուածքով եկեղեցիները, ինչպէս Պաղնին (Ե. դարի սկիզբը), Արուճի եկեղեցին (668 թ.) եւ այլն։ Գնահատանքի են արժանի Է. դարի սկզբին առաջացած եռախորան «դմբէթաւոր բազիլիկ» յօրինուածք ունեցող եկեղեցիները, որոնք կողքերից ունէին էքսեդրաններ (աբսիդ) եւ ծածկուած էին կլոր լայն դմբէթով (Դուին՝ 603–628 թթ., Թալին՝ Ե. դարի երկրորդ կէս)։

Ինչ վերաբերում է կեդրոնական յատակագծով եկեղեցիների ճարտարապետութեանը, ապա դրանք բազմատեսակ են, բայց միաժամանակ՝ ինքնատիպ։ Դրանց հիմքում ընկած է անսիկ շրջանի ճարտարապետութիւնը՝ էքսեդրաններով շրջապատուած դմբէթաւոր ռոտոնդանների սկզբունքի ծագումով։ Այսպիսիք են Եղուարդի (562–685) մօտ պահուող կլոր (բազմակողմանի) յատակագծով եւ ութ էքսեդրաններով, Իրինդի (Է. դարի երկրորդ կէս) եկեղեցիները։ Եւ, վերջապէս, շրջանագծային բացառիկ պայծառ յատակակագիծ ունեցող այս սկզբունքն է, որ տեսարակոնխ ներքին ծաւալի հետ միասին ընկած է հայկական վաղ միջնադարի հրաշալի կառուցուածք Զուարթնոցի հիմքում (641–661 թթ.)(46)։

Բիւզանդիայում նոյնպէս, պրում է եակոբսոնը, արդէն Զ. դարի հիմնական ճարտարապետական տիպերից մէկը դարձաւ դմբէթաւոր բազիլիկը, ինչպէս Իրինդի եկեղեցին (532 թ.)՝ Կ. Պոլսում, Զ. դարի Մարիի եկեղեցին՝ Եփեսոսում, եւ աւելի բարդ յօրինուածք ունեցող հինգ դմբէթանի Առաքելոց եկեղեցին՝ Կ. Պոլսում։ Այս տիպին զուգահեռ զարգացաւ նաեւ կեդրոնական յատակագծերով կոթողային ճարտարապետութիւնը, որի հիանալի դրսեւորումը հեղինակը տեսնում է Ս. Սոֆիայի տաճարի նախահայրը հանդիսացող մայրաքաղաքի թագաւորական (Սերգիի եւ Բաքուսի, 527 թ.) տաճարում եւ վերջապէս բիւզանդական վաղ միջնադարի ճարտարապետութեան գլուխգործոց՝ Ս. Սոֆիայի տաճարում(47)։

Ինչպէս Ե–Զ. դարի հայկական եւ բիւզանդական եռանիւ բազիլիկներն էին տարբերւում իրարից մի չարք կարեւոր կէտերում,

---

46. Նոյնը։

47. Նոյնը։

նոյնքան եւ տարբեր են բիւզանդական եւ հայկական դպրեվանք եկեղեցիներն իրենց համապատասխան տիպերում:

Տարբերութիւնների հիմքը ներքին տարածութեան անջատման, խզման մէջ է, որոնք իրարայաջորդ են բիւզանդական վաղ միջնադարեան ճարտարապետութեանը, եւ ներքին տարածութեան միասնութեան մէջ, որ իրարայաջորդ է նոյն շրջանի հայկական ճարտարապետութեանը: Տարբեր էին նաեւ ճակատների լուծումները եւ ճարտարապետական մօտեցումը, ինչպէս նշուել է Ե–Զ. դարերի բազիլիկների կապակցութեամբ(48):

Այնուհետեւ Եակոբսոնը նշում է, որ եւ Հայաստանում եւ Բիւզանդիայում կեդրոնական յատակագծով եկեղեցիների հիմքն են հանդիսանում հռոմէական դպրեվանքները (ուղիղ անկիւն կամ կիսաշրջան խորշ էքսեդրանները): Այսպիսին են Հռոմի Պանթէոնը, Հռոմի «Պորտա Մաջորէ» (Porta Majore) դարբասի մօտի ռոտոնդան, որը կոչւում է նաեւ «Minerva Medica» եւ այլն: Բայց այս աւանդոյթի ձեւաւորումն ու կատարելագործումը եւ Բիւզանդիայում եւ Հայաստանում եղել են բոլորովին տարբեր: Հայկականում այս տիպը կիրառելիս արդէն հասել են ներքին տարածութեան ամբողջական միասնութեան, իսկ Բիւզանդիայում՝ ներքին տարածութեան անջատուածութիւնն ու խզուածութիւնը դարձեալ մնում է չյաղթահարուած(49):

Եակոբսոնը բաւականին վստահօրէն մի ընդհանուր սկզբունքային ազբիւր է նշում՝ իր ժամանակի Բիւզանդիայի եւ Հայաստանի գլուխ գործոցներ համարուող Ս. Սոֆիայի եւ Զուարթնոցի համար: Նա պնդում է, որ հարաւային Սիրիայում գտնուող Բոսրայի (512 մ. թ.) տաճարից զարգացման ուղիղ գիծ է գնացել մինչեւ բիւզանդական Ս. Սերգիի եւ Բաքուսի տաճարը եւ աւարտուել Ս. Սոֆիա տաճարում: Նոյնպիսի զարգացման գիծ է գնացել նաեւ դէպի Զուարթնոց, որտեղ հայերը, օգտագործելով Բոսրայի տաճարում ներկայացուած ճարտարապետական սկզբունքն ու տեսակէտը, ստեղծեցին մի նոր յօրինուածք, որն առաւել առաջադէմ էր, քան իր սկզբնաղբիւրը: Նոյն սկզբնաղբիւրի վրայ ընթացող ճարտարապետական զարգացումը Բիւզանդիայում տուեց ոչ պակաս հիանալի արդիւնքներ (նկատի ունի իմա՝ Ս. Սոֆիան, Շ. Տ. Գ.)(50):

Այս բոլորից յետոյ հեղինակը չատ համարձակ համեմատութիւն է կատարում Ս. Սոֆիայի եւ Զուարթնոցի միջեւ, ապա չա-

---

48. Նոյնը, էջ 39:

49. Նոյնը, էջ 40:

50. Նոյնը, էջ 40:

բաղդում իր հիմնական եզրակացութիւնները: Սոսրեւ քաղուածաբար բերում են դրանք.

«Որքան տարբեր են Զուարթնոցն ու Սոֆիան...

«Կարելի է, ի հարկէ, առարկել թէ ճարտարապետական այս երկերը անհամեմատելի են, որ նրանք տարբերաչափ են, տարբերմասչատ: Բայց մեզ թւում է, որ այս համեմատութիւնը միանգամայն օրինական է: Քանի որ այն վուալը, որ մարմնաւորուած է Ս. Սոֆիայում՝ Բիւզանդիայում, ամբողջապէս համապատասխանում է այն պատմա-զեղարուեստական վուալին, որ մարմնաւորուած է Զուարթնոցում՝ Հայաստանում: Ճարտարապետօրէն այդ առեղծագործութիւնները իրօք տարբեր են, սակայն առաւել ակնհաւ է, որ հայկական վաղ միջնադարեան ճարտարապետութիւնը պէտք չի խրտկել բիւզանդական ճարտարաբերութեան չրջանակների մէջ... Անշուշտ, – չարունակում է Եակոբսոնը, – մէկի եւ միւսի միջեւ անդունդ չկար, նրանց մօտեցնում էր քրիստոնէութիւնը, որի պաշտամունքին էին նուիրուած եկեղեցիները: Բայց դա չափազանց ընդհանուր հիմք է լրիւ որոշելու համար ճարտարապետական պարագայը իր կոնկրետ դրսեւորումներում, մանաւանդ որ արդէն Զ. դարում եկեղեցական պատակատում առաջացաւ Հայաստանի եւ Բիւզանդիայի միջեւ: Եկեղեցական պատակատումով աւարտած հակաքաղկեդոնական հոսանքը Հայաստանում խորապէս, անկասկած, նոյնպէս անդրադարձաւ հայ ճարտարապետների ստեղծագործական ձգտումների վրայ»(51):

Աւարտելով իր յօդուածը հայ-բիւզանդական վաղ միջնադարեան ճարտարապետական առնչութիւնների մասին՝ Եակոբսոնը ընդհանուր համազումարի է բերում յօդուածում նշուած բոլոր հիմնական դրոյթները եւ եզրափակում այսպէս.

«Բոլոր տուուածները ցոյց են տալիս, թէ որքան անօրինաչափ է հայկական վաղ միջնադարեան ճարտարապետութիւնը (առաւել եւս յաջորդող աւելի ուշ ժամանակների ճարտարապետութիւնը) մտցնել բիւզանդական ճարտարապետութեան պատմութեան մէջ եւ Հայաստանը դիտել (ինչպէս մինչեւ հիմա արւում էր այդ) որպէս Բիւզանդիայի ճարտարապետական զեղարուեստական գաւառ»(52):

Ալ. Սահինեանը պատկանում է հայ ճարտարապետութեան պատմութեան այն մասնագէտների շարքին, որոնք պատկառելի նիւթ են հայթայթել մեզ՝ Հայաստանի անտիկ եւ վաղ քրիստոնէական

---

51. Նոյնը, էջ 41:

52. Նոյնը, էջ 42:

Դ–Զ. դարերի ճարտարապետության մասին: Նա դիտահետազոտական լուրջ աշխատանքներ է տարել այդ ժամանակաշրջաններին պատկանող մի քանի կարեւոր յուշարձանների վրայ, ինչպիսին Գառնիի հեթանոսական տաճարն է, Քասախի բազիլիկը, Էջմիածնի տաճարը եւ այլն:

Նա գտնում է, որ վաղ շրջանում կառուցուած բազիլիկ տաճարների սկզբնական յօրինուածքը թէ ներքին կառուցուածքով եւ թէ արտաքին տարածական–ծաւալային յօրինուածքով որոշակիօրէն տարբերւում է անտիկ (նախաքրիստոնէական) շրջանի ճարտարապետական արուեստի հետ, իսկ բազիլիկին հետապայում աւելացրած մասերը (բազմանիստ աբսիդ, արտաքին կամարակապ սրահներ, չքմուտքերի սիւնազարդ կառուցուածքներ, ճակատաքարերի զարդարանդակներ եւ այլն) քրիստոնէական վաղ շրջանի արուեստի հետ, որտեղ «ակնյայտ ընդհանրութիւն գոյութիւն ունի յատկուածքների ճարտարապետական մշակումների եւ քրիստոնէական վաղ շրջանի ինչպէս սիրիական, այնպէս էլ փոքր–ասիական համանման կառուցուածքների մանրամասների մշակումների միջեւ»(53):

Ա. Սահինեանը հետաքրքիր բաժանում է կատարում բազիլիկների տիպերի միջեւ: Նկարագրելով Քասաղի եռանաւ բազիլիկը նա ասում է. «Նաւերն ունեցել են թաղակապ ծածկ եւ երէքն էլ առնուել են մէկ ընդհանուր երկայնք կտուրի տակ: Նման յօրինուածքը համարւում է «բազիլիկալ կառուցուածքների արեւելեան տիպ» կամ ուղղակի՝ «սրահաձեւ եկեղեցի»»(54): Տաճարի սկզբնական կառուցուածքը ըստ երեւոյթին, ունեցել է ուղղանկիւն ձեւի սեղան (խորան), ինչպէս՝ Արցախ, Տեկոր, Փարբի, Բիւրական, Եղուարդ, եւ այլն: Իսկ այլ երկրներից՝ Հիւսիսային Միջագետքը, Սիրիան, Ականպինաւիան եւ այլն: Փոխազդեցութիւնների հարցում նշանակալից դեր է կատարում երեքուքի եռանաւ բազիլիկը: Ա. Սահինեանն այսպէս է ներկայացնում մեզ նրա դերը. երեքուքը «մի կողմից որոշակի լոյս է սփռում հայ ազգային ճարտարապետութեան ծագման ու նրա հետագայ կազմաւորման արմատական մի շարք հարցերի վրայ, միւս կողմից նպաստում հարեւան ժողովուրդների հետ ժա-

---

53. Ա. Սահինեան, Հայկական ճարտարապետութիւնը վաղ ֆէոդալիզմի Դարաշրջանում (Դ–Զ. դարեր) (Տես՝ Ակնարկ Հայ ճարտարապետութեան Պատմութեան, Երեւան, 1964), էջ 105:

54. Նոյնը, էջ 103:

55. Ա. Սահինեան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետութիւնը, Երեւան, 1955, էջ 69–71:

մանակին պոյութիւն ունեցած մշակութային կապերի, ազդեցութիւն-ների եւ փոխազդեցութիւնների ճշմարտացի մեկնաբանմանը»(56):

Ըստ Սահինեանի չինարարական վերլուծութիւնների, բազիլի-կի յատակագծային եւ ծաւալա-տարածական ընդհանուր յօրինուած-քի ու օրկանական միասնութիւնը ստեղծուել են աստիճանաբար. տարբեր ժամանակների յաւելուածքներով, առանց որի բուն չէնքը ստանում է չատ պարզ տեսք եւ հեռանում է սիրիական համանման յուշարձաններից(57) *(Թուրմանին, Կալը-Լոզէ), որոնց ճարտարա-պետութեան հետ նա ուղղակի ընդհանրութիւն ունի: Երերութի մա-սին խօսելիս վերջում նա ասում է, որ այդ բազիլիկի «ճարտարա-պետութիւնը նկատելիօրէն սերուել է նախորդ՝ նախաքրիստոնէա-կան շրջանի արուեստից, որոշակի չափան մէջ է պահուել քրիստո-նէական կրօնը ընդունած հարեւան ժողովուրդների (Սիրիա) ճար-տարապետութեան հետ եւ ինքն իր հերթին առատ նիւթ մատակա-րարել յաջորդ ժամանակաշրջանի Հայաստանի ճարտարապետական-կառուցողական արուեստին»*(58):

*Ամփոփելով փոխազդեցութիւնների վերաբերեալ իր կարծիքը՝ Սահինեանը գրում է. «Սիրիական ու փոքր-ասիական ժողովուրդ-ների արուեստների համար յատկանշական ճանաչուած ճարտարա-պետական առանձին ձեւերն ու մանրամասները (արտաքին սիւնա-սրահներ, աշակերտների սենեակները, լուսամուտների որոշ պատկ-ներ եւ այլն) հայկական կառուցուածքներում հանդէս են գալիս որ-պէս հետագայ յաւելուածքներ:

«Սիրիական, փոքր-ասիական, հայկական եւ կովկասեան ժո-ղովուրդների քրիստոնէական վաղ շրջանի ճարտարապետական ար-ուեստների մէջ պոյութիւն ունեցող ընդհանրութիւնը հիմնականում վերաբերում է Դ-Ե. դարերում կատարուած այդ յաւելուածնե-րին»*(59):


---

56. *Ակնարկ Հայ ճարտարապետութեան պատմութեան*, էջ 105-106:


57. Տես՝ *Ակնարկ Հայ ճարտարապետութեան պատմութեան*, էջ 109: *Ռա-սոպի Բազիլիկայի ճարտարապետութիւնը*, էջ 238:

58. Տես՝ *Ակնարկ Հայ ճարտարապետութեան պատմութեան*, էջ 110:

59. *Նոյնը*, էջ 124: Յաւելումների մասին հեղինակը հանգամանօրէն անդ-րադարձել է իր *Ռասոպի Բազիլիկայի ճարտարապետութիւնը* աշխատանքում: Այն-տեղ նշուած է Ռասոպի, Տեկորի, Երերութի, Դուինի, Աշտարակի, Եղուարդի, Ծի-ծեռնակավանքի եւ այլ եռանիւ բազիլիկների սկզբնական կառուցուածքների նկատ-մամբ կատարուած հետագայ յաւելումների մասին (տես՝ էջ 82-116):



Երերուֆի բազիլիկայի յատակագիծը



Տեկորի բազիլիկայի յատակագիծը




Երերուքի բազիլիկայի արեւմտեան ճակատը



Երեքուքի բազիլիկայի հարաւ արեւմտեան տեսքը



Տեկորի տաճարի ընդհանուր տեսքը



Տեկորի տաճարի սիւնաշարից մանրամաս

⁂

*Ստ. Մնացականեանի դիտողութիւնները հայ-սլաւական քրիստոնէական ճարտարապետութեան առնչութիւնների շուրջ մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում, առանձնապէս ուշադրութեան են արժանի նրա հետեւութիւնները՝ տետրակոնխ կեդրոնագմբէթ եկեղեցիների յատակագծերի վերաբերեալ: Նա փորձել է պահել նրանց ծագման սկզբնաղբիւրը եւ բացատրել զարգացման ընթացքը՝ արդարացնելով Զուարթնոցի եզակի ծաւալատարածական լուծման առաջարանական դոյութիւնը: Միեւնոյն ժամանակ նա համեմատութիւններ է կատարում հարեւան երկիրներում նոյն ժամանակաշրջանում կառուցուող նոյնատիպ եկեղեցիների եւ ընդհանրապէս յատակագծերի մէջեւ. փորձում է պարզաբանել Սլաւիայում եւ Հայաստանում նոյնատիպ յատակագծերի առաջացման եւ նրանց ունեցած փոխադարձեցութեան հարցը: Ի մի բերելով իր ուսումնասիրութիւնները հայ-սլաւական վաղքրիստոնէական ճարտարապետութիւնների առնչութիւնների մասին՝ Ա. Մնացականեանը գանում է, որ տետրակոնխ կեդրոնագմբէթ (քառակուսի յատակագծի վրայ) եկեղեցիների առկայութիւնը պէտք է փնտռել Հայաստանում եւ ոչ թէ Սլաւիայում եւ կամ, հռոմէական գամբարաններում(60): Ընդգծելով այն տեսակէտին, որտեղ ասւում է թէ Զուարթնոցի նախատիպերը գտնում են Սլաւիայում, Մնացականեանը ցոյց է տալիս Զուարթնոցի եւ սլաւական նոյնատիպ յուշարձանների հիմնական տարբերութիւնը: Նա նշում է, որ սլաւական եւ բիւզանդական յուշարձանները կազմուած են երկու հիմնական բաղադրամասերից՝ ներքին տետրակոնխը եւ նրա ձեւերը կրկնող արտաքին պատը, իսկ Զուարթնոցը կազմուած է երեք բաղադրամասից՝ ներքին տետրակոնխից, վերջինս պատկող շրջանաձեւ յենարանից եւ արտաքին նոյնպէս շրջանաձեւ պատից(61), նրանց միջեւ եղած տարբերութիւնը նա համարում է սկզբունքային նորութիւն: «Զնայած յատակագծային ձեւերի ընդհանրութեանը, – ասում է նա, – որ կայ սլաւական եւ բիւզանդական յուշարձանների եւ Զուարթնոցի միջեւ, վերջինս հայկական ճարտարապետութեան զարգացման օրգանական արդասիքն է եւ իր բոլոր ձեւերով հարազատ է նրան»(62): Ելնելով տաճարի կեդրոնում տեղադրուած Գրիգոր Լուսաւորչի յիշատակը յաւերժացնող յուշարձանի (որի մէջ տարիներ շարունակ տեղի են ունեցել նրա մասունքները) մասին՝ նա ասում է. «Նման

60. Ստ. Մնացականեան, Զուարթնոցը եւ նոյնատիպ Ճուշարձանները, Երեւան, 1971, էջ 150:

61. Նոյնը, էջ 108:

62. Նոյնը, էջ 109:

դամբողիկա յայտնի չէր ոչ Սիրիայում ոչ էլ Բիւզանդիայում: Այն մշակուեց յատկապէս Հայաստանում, եւ այստեղ ստեղծուած կոնկրետ պայմաններն էին, որ ելակէտ դարձան համանման յօրինուածքի ի յայտ գալու համար»(63):

Նա անդրադառնում է Զուարթնոցի սիւնային կառուցումներին, նշում, որ սիւների վրայ յենուող կամարաշարերը աւելի քիչ բեռնաւորուածութեամբ յայտնի են եղել Սիրիայում եւ Բիւզանդիայում: Ինչ վերաբերում է Զուարթնոցի մոնոգրամաններին, ինչպէս նաեւ նոյն չրջանում գործածուող հաւասարաթեւ խաչերին, ապա նրանք որոշակի նմանութիւն ունեն բիւզանդական եւ սիրիական մոնոգրամաների եւ խաչերի հետ: Իսկ արծիւների քանդակման տեխնիկան եւ յատկապէս նրանց լայնատարած թեւերի պատկերումը, փետուրների մշակուածութիւնը, պարզորոշ առնչւում են հին արեւելեան ճարտարապետութեան եւ քանդակագործութեան յայտնի ձեւերին: Համանման լուծում տեսնում ենք ասորական, պարսկական հարթաքանդակներում(64), Թալինի կոթողի վրայ, Օձունի ու Մրենի բարձրաքանդակներում, առանց անմիջական կրկնողութեան: Տ. Մնացականեանը գտնում է, որ տաճարի արտաքինի արտակարգ հարուստ մշակումը այդ տարիներին եզակի երեւոյթ էր ոչ միայն հայկական, այլեւ առհասարակ, ամբողջ վաղ-միջնադարեան քրիստոնէական ճարտարապետութեան մէջ: Նա գտնում է, որ արտաքինում, հարեւան կամարաշղեղների համման կէտերում, ուղիղ որմնասիւների վրայ դրուած պատկերաքանդակների համանման դասաւորութիւնը պատահական չէր կարող լինել եւ, ինչպէս մի շարք բազդրամասեր, որոշակի աղերս ունեն պաղեստինեան եւ սիրիական հնագոյն յուշարձանների ձեւերի հետ(65): Նոյն կարծիքին չէ արտաքին պատի վրայ տեղ գրաւած զարդագօտու ձեւերի մասին: Նա գտնում է, որ այդ ձեւերը այնքան իւրայատուկ են, այնքան եզակի, որ հնարաւոր չէ դրանք ամբողջական համեմատութեան մէջ դնել ո՛չ Կովկասի, ո՛չ Սիրիայի եւ ո՛չ էլ Բիւզանդիայի նոյն դարաշրջանի քրիստոնէական պաշտամունքի որեւէ կառուցուածքի ձեւերի հետ, իսկ յուշարձանում գործածուած լինելը, որի դպալաձեւ պարզամոտիֆներով ձեւաւորուած կամարաղեղը յայտնի է եղել արդէն Ե. դարում (Տեկոր)(66), յաճախ կարելի է տեսնել նաեւ Սիրիայում, Փոքր Ասիայում, Վրաստանում:

---

63. Նոյնը, էջ 110:
64. Նոյնը, էջ 112–116:
65. Նոյնը, էջ 129:
66. Նոյնը, էջ 141:

Մնացականեանը գտնում է, որ Կոլկասում եւ, յատկապէս, Հայաստանում քարային կառուցումների մշակումը հասել էր արտակարգ բարձր աստիճանի եւ այստեղ էր, որ տեսրակոնխային կոմպոզիցիան զարձել էր համարեայ թէ բոլոր կեդրոնագմբէթ յօրինուածքների առաջգը, այստեղ է, որ կարելի էր հետեւել այն յատակագծերի զարգացման տրամաբանական ընթացքին, որտեղ զմբէթը դրուած է քառակուսի հիմքի վրայ եւ միաժամանակ ամրացուած կենսաորչերով: Նա նշում է, որ յիշուած սխեմի օգտագործումը Սելեւկիայի Բոսրայի վայրածածկ մեծածաւալ կառուցուածքներում ոչ թէ հետեւանք էր տուեալ ճարտարապետական ձեւի բնական, աստիճանական զարգացման, այլ արդիւնք պատահաւոր ձեւերի ուղղակի ընդօրինակման: Այստեղից նա եզրակացնում է, որ չի բացառուած սիրիական քառակուսի գմբէթաւոր կառուցուածքների ճարտարապետական յօրինուածքներում արեւելքի եւ յատկապէս հայկական ճարտարապետութեան մէջ մշակուած կառուցողական ձեւերի դրսեւորման հնարաւորութիւնը: Այս հարցադրումը Մնացականեանը փորձում է հիմնաւորել վաղ քրիստոնէական շրջանում Սիրիայում եւ Հայաստանում գոյութիւն ունեցած նոյնատիպ եկեղեցիների զարգացման ընթացքի բացայայտումով եւ որոշ պատմական տուեալներով: Նա նշում է, թէ ըստ Մովսէս Խորենացու, հայ վարպետները էին, որ մարմարէ սալերով ծածկում էին Անտիոքի փողոցները(67): Հայ քարագործների մեծ վարպետութիւնը յայտնի էր մինչ նաղարում: Հայ վարպետները տաճարներ էին կառուցում թէ՛ Երուսաղէմում՝ Դ–Զ. դարերում, թէ՛ Վրաստանում՝ Ե. դարում, վերականգնում են աշխարհահռչակ Այա Սոֆիան (Ժ. դ.): Մի ուրիշ տեղ նա գրում է. «Պատմական փաստերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Պաղեստինի եւ Սիրիայի սրբավայրերում, յատկապէս Երուսաղէմում եւ նրա շրջակայքում ծաւալուած շինարարական գործունէութեան մէջ անմասն չեն եղել հայերը, որոնք Երուսաղէմում ունեցել են մի քանի տասնեակի հասնող եկեղեցիներ:

«Ըստ աւանդութեան, դեռեւս Տրդատ Թագաւորը, հետեւելով Հեղինէ Կայսրուհու օրինակին, Պաղեստինում ձեռնարկել է բազմաթիւ եկեղեցիների կառուցմանը: Արդէն Զ. դարից Երուսաղէմում յայտնի է եղել հայկական բազմամարդ դաղութը»: Ապա՝ յիշատակում է նաեւ բազմաթիւ հայերի ուխտագնացութիւնը Երուսաղէմ, ինչպէս նաեւ Բիւզանդիա – Պարսկական պատերազմից յետոյ Երուսաղէմի պատրիարք Մոդեստի յատուկ նամակի մասին՝ ուղղուած Կոմիտաս կաթողիկոսին, որտեղ նա խնդրում է օժանդակել երկրը-

67. Նոյնը, էջ 147–158:

պաղտիեան համար վերաշինուած Երուսաղէմ դնացող հայերին(68)։

Հեղինակը դիմում է նաեւ Բ. Առաքելեանի մի հետաքրքիր վկայութեան, որտեղ նա ասում է. «Ե. դարից սկսած Ասորիքի ազդեցութիւնը Հայաստանի վրայ խիստ թուլանում է եւ ընդհակառակը, ուժեղանում է Հայաստանի քաղաքական, զաւանաբանական եւ կուլտուրական ազդեցութիւնը Ասորիքի վրայ»(69)։

Այս եւ նման տուեալների հիման վրայ հեղինակը չատ հաւանական է գտնում ճարտարապետների համատեղ աշխատանքը գլխաւոր քաղաքներում, ինչպիսին էր Երուսաղէմը։ Գտնում է նաեւ, որ նրանց միջեւ որեւէ տեսակի փոխառութիւն բնական էր, ուստի եզրակացնում է. «Յիշեալ շէնքերով ուժեղացուած քառակոնքի կամպոզիցիան, որն այդ ժամանակ լաւ յայտնի էր Հայաստանում, երեւան է տալիս հատկապէս հայ վարպետները, եւ սիրիական քառակոնքի կամպոզիցիաների ակունքները պէտք է որոնել ոչ թէ Հռոմի դամբարանական կառուցուածքների ձեւերում, այլ հենց այն շէնքերում, որոնք բարձրացրել են հայ վարպետները Պաղեստինի եւ Սիրիայի յայտնի սրբավայրերում, յատկապէս Երուսաղէմում»(70)։

Հայաստանի եւ Սիրիայի վաղ քրիստոնէական ճարտարապետութեան առնչութիւնների հարցի շուրջ աւելի համառօտակի ձեւով կարծիքներ են յայտնել նաեւ այլ պիտականներ։ Այսպէս՝ Յ. Օրբելին գտնում է, որ արեւելեան քրիստոնէական ասորապէտ դպրիչների(71) կողմից Հայաստան են բերուել առաջին պրակտ աւեղծապրծութիւնները ու ճարտարապետական յուշարձանները։ Որպէս սիրիական արուեստի հետ առաւել ցայտուն կերպով համեմատուող յուշարձան, նա նշում է Երեբունի բազիլիկը՝ բնորոշելով այն որպէս սիրիական ընտրի մի յուշարձան, որի մէջ կարելի է տեսնել նաեւ տեղական եւ իրանա-սասանեան գծեր։

Ն. Բրունովը նոյնպէս Երեբունի բազիլիկն է հիմք ընդունում՝ փաստելու համար հայկական եւ սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետութեան ընդհանրութիւնները։ Ըստ նրա՝ հայկական եւ սիրիական կառուցուածքները պատկանում են բիւզանդական ճարտարապետութեան արեւելեան դպրոցին, միաժամանակ նշում, որ պարսկական ճարտարապետութեան որոշ մանրամասներից ազդուած լինե-

---

68. Նոյնը, էջ 151։

69. Նոյնը։

70. Նոյնը, էջ 151–152։

71. Յ. Օրբելի. *Հայկական Արուեստ*, «Նոր Հանրագիտարանային Բառարան», Գ. հատ., 1911, էջ 665 (ռուսերէն)։

յով հանդերձ երբեմն ճարտարապետութեան հիմքում ընկած է սիբիականը: Դրա համար նա վկայում է քարի տաշման տեխնիկան, չէնքի ընդհանուր սխեման եւ առաջ անցնելով՝ ընդհանրացնում, որ կովկասեան վաղ չրջանի կոթողային կառուցուածքների ձեւերի սկզբնաղբիւրը եղել է Սիբիան(72):

Բերուած կարծիքները ցոյց են տալիս, որ քրիստոնէութեան մուտքը Հայաստան՝ Սիբիայի ճանապարհով, եղել է այն հիմնաքարը, որի վրայ պիտնականների մեծ մասը կառուցել են իրենց տեսութիւնը Հայաստանի եւ Սիբիայի վաղ քրիստոնէական (Դ–է. դդ.) չրջանի ճարտարապետութեան առնչութիւնների վերաբերեալ: Սա միակ ընդհանրութիւնն է, որ գոյութիւն ունի նրանց միջեւ:

Տեսութեան առաջացմանը առիթ տուող միւս դրդապատճառներն ու նրանց մեկնաբանման ուղիները որոշ պիտնականների մօտ համարեայ համընկնում են, իսկ մի մասի մօտ՝ բոլորովին տարբերւում: Այժմ տեսնենք, թէ ինչպիսի ընդհանրութիւններ եւ հակասութիւններ գոյութիւն ունեն մեր թուարկած պիտնականների կարծիքներում:

Համաձայն լինելով Ն. Մառի դրոյթին՝ եակոբսոնը գրում է. «Սիբիայից Հայաստան քրիստոնէութեան տարածումը չէր կարող չուղեկցուել Դ–Ե. դարերում Հայաստանում ձեւաւորուող քրիստոնէական ճարտարապետութեան վրայ սիբիական պաշտամունքային ճարտարապետութեան իւրայատուկ ձեւերի որոշակի ազդեցութեամբ»(73): Նա իր միտքը հաստատում է նաեւ յիշեցնելով Սիբիայի եւ Հայաստանի բնական պայմանների ընդհանրութեան մասին, որոնք, ըստ նրա կարող էին կանխորոշել չինարարական նիւթերն ու չինարարական տեխնիկայի ընդհանուր սկզբունքները(74): Միւս կողմից՝ նոյն գարաչրջանում բիւզանդական ճարտարապետութեան հայկականի վրայ ունեցած ազդեցութիւնը մերժելիս՝ նա բուսականին հետաքրքիր ճարտարապետա–պեղարուեստական մեկնաբանումներ է տալիս իր գրոյթը հիմնաւորելու համար եւ առաջարկում է հայկական վաղ միջնադարեան ճարտարապետութիւնը չիջեկել բիւզանդական ճարտարապետութեան չրջանակների մէջ:

---

72. Ն. Բրունով, *Ակնարկներ Հայ ճարտարապետութեան պատմութեան*, Մոսկուա–Լենինգրատ, 1935, Բ. հատ., էջ 470 (ռուսերէն):

73. Ա. եակոբսոն, *Հայաստանը եւ Սիբիան* (ճարտարապետական համադրումներ), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, թիւ 44 (328):

74. Նոյնը:

Եակոբսոնը, սակայն, երկու եկեղեցիների միջև ընդհանրութիւն եղող քրիստոնէութեան դերը ճարտարապետական փոխադրեցութիւններուն հարցում ներկայացնում է այսպէս. «Անշուշտ, մէկը եւ միւսը միջեւ անդունդ չկար, նրանց մօտեցնում էր քրիստոնէութիւնը, որի պաշտամունքին էին նուիրուած եկեղեցիները: Բայց դա չափանիշ չէր ընդհանուր հիմք է լրիւ որոշելու համար ճարտարապետական պարագաները իր ճշգրիտ դրսեւորումներով»(75):

Ինչպէս տեսնում ենք, պատմական նոյն իրողութիւնը, այսինքն՝ նոյն կրօնի՝ քրիստոնէութեան ընդհանուր լինելը մի դէպքում դիտւում է որպէս հիմնական ելակէտ սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետութեան Հայաստանի նոյն ժամանակաշրջանի ճարտարապետութեան վրայ ունեցած ազդեցութիւնը հիմնաւորելու, մյուս դէպքում՝ այդ նոյն իրողութիւնը դիտւում է որպէս չափանիշ ընդհանուր հիմք ճարտարապետական պարագաները իր ճշգրիտ դրսեւորումներով լրիւ որոշելու համար: Եակոբսոնը այստեղ ակնարկում է այն մասին, թէ Բիւզանդիայում եւ Հայաստանում իշխող նոյն կրօնը՝ քրիստոնէութիւնը, բնաւորոշ հիմք չէր կարող հանդիսանալ այն տեսութեանը, որ բիւզանդական վաղ միջնադարեան ճարտարապետութիւնը ազդել է Հայաստանի նոյն ժամանակաշրջանի ճարտարապետութեան վրայ, հետեւաբար ճիշդ չէ այն համարել «Բիւզանդիայի ճարտարապետա-կեզարուեստական դասական»(76), (ինչպէս դա արուում էր մինչեւ վերջին ժամանակները): Եթէ նոյնիսկ ընդունենք քրիստոնէութեան մուտքը Հայաստան՝ Սիրիայի ճանապարհով եւ դրանով փորձենք հիմնաւորել որոշ պիտանիների այն դրոյթը, թէ Սիրիայի եկեղեցական ճարտարապետութեան ազդեցութեան տակ են կազմաւորուել հայկական հնագոյն եկեղեցիները՝ իրենց յօրինուածքով եւ մանրամասներով, նորից հիմնաւորուած հարց կը ծագի:

Չէ՞ որ Հայաստանում 301 թուականին քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուեց ժամանակի բոլոր միւս մեծ ու փոքր պետութիւններից առաջ եւ այն աւելի չատ հնարաւորութիւն ստացաւ նոր կրօնի պահանջների ձեռնարկել պաշտամունքային շէնքերի կառուցումը: Պատմական տուեալների համաձայն մինչեւ Կոստանդին կայսեր՝ քրիստոնէութիւնը հեթանոսութեան հաւասար կրօն հռչակելը՝ 312 թ., հռոմէական կայսրութեան ամբողջ տարածքին քրիստոնեաները ենթարկուում էին խիստ հալածանքների: Այդպիսի

---

75. Ա. Եակոբսոն, Հայաստանի եւ Բիւզանդիայի վաղ միջնադարեան ճարտարապետութեան Առանձնայատկութիւնները, էջ 41:

76. Նոյնը, էջ 42:

խիստ հալածանքների մթնոլորտում արդեօ՞ք կարող էր Սիրիայում կազմաւորուած լինել այնպիսի եկեղեցական ճարտարապետութիւն, որ պրակտիկայի եւ կրօնական նոր, տատանուող դաւանքի հետ միասին կարողանար թափանցել Հայաստան: Ինչպէս Թորամանեանն է նշում, դժուար թէ Սիրիայում նախքան Դ. դարը կազմուած լինէին այնպիսի մեծ եկեղեցիներ, որոնք իրենց յատակագծերով եւ մանրամասներով այն աստիճանի կատարելագործուած լինէին, որ կարողանային ազդել դեռ նոր կազմաւորուող հայկական եկեղեցիների յօրինուածքի վրայ(77): Դեռ աւելին՝ պիտականներից կազմից արդէն հայկական եկեղեցիների ակզբնապրիւր պիտուած սիրիական ամենավաղ շրջանի յուշարձանները պատկանում են հիմնականում 6–Զ. դարերին:

Գիտնականների՝ մէջբերուած կարծիքները ցոյց են տալիս որ Հայաստանի եւ Սիրիայի վաղ միջնադարեան ճարտարապետութեան առնչութիւնները բոլորի կողմից ընդունուած մի իրողութիւն է: Բայց այդ առնչութիւնները, աւելի ճիշդ, սիրիականի ազդեցութիւնը հայկականի վրայ ամէն մի պիտականի մօտ հանդէս է գալիս տարբեր չափանիշներով եւ խորութեամբ: Ն. Մառի, Յ. Օրբելու, Ն. Բրունովի, Ն. Տոկարսկու եւ Ա. Եակոբսոնի կարծիքները համարեայ թելադրում են այն միտքը, որ հայկական վաղ քրիստոնէական չէնքերը կարելի է ծագումով սիրիական համարել:

Ճիշդ է, վերեւում նշուած բոլոր պիտականներն մօտ էլ արտայայտուած է այն միտքը, որ հայկական վաղ քրիստոնէական ճարտարապետութեան վրայ երեւում են տեղի ժողովրդի սովորոյթներից, աւանդոյթներից ժառանգած ճարտարապետա-պեղարուեստական գծեր, բայց դա նրանց մօտ երկրորդական տեղ է գրաւում եւ տատում է միայն հարեւանցիօրէն: Օրինակ՝ Ն. Մառը ընդունում է, որ բազիլիկը ծանօթ է եղել Հայաստանում նախքան քրիստոնէութիւնը, բայց մեւնոյն ժամանակ երեսուբի բազիլիկը տեղաւորելով Դաւիթ պապաթին՝ նրա արմատները փնտռում է միայն ու միայն հեւսիսային Սիրիայում(78): Ժամանակակից պիտական Ա. Սահինեանը այսպէս է բնորոշում Մառի տեսակէտը հայկական եւ սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետական առնչութիւնների վերաբերեալ. «Գրեթէ կէս դար, իրրեւ անհերքելի ճշմարտութիւն, իշխում է Ն. Մառի՝ այդ կառուցուածքները սիրիական համարելու սխալ տեսակէտը»(79):

---

77. Թ. Թորամանեան, *Տեկորի Տաճարը*, էջ 73:

78. Ն. Մառ, *Երեսուբի Բազիլիկան*, էջ 29:

79. Ա. Սահինեան, *Քասաղի Բազիլիկայի Ճարտարապետութիւնը*, էջ 13:

Թ. Թորամանեանի եւ Ա. Սահինեանի այս հարցի շուրջ կարծիքները ունեն որոշ ընդհանրութիւններ: Երանք հայկական հնագոյն բազիլիկ եկեղեցիների սկզբնաղբիւրը տեսնում են նախաքրիստոնէական (հեթանոսական) մեհեանների ձեւերի մէջ, առանց ժխտելու սիրիական ճարտարապետութեան ազդեցութիւնը Ե–Զ. դարերում՝ հայկական բազիլիկների պարզ ձեւերից աւելի բարդի անցման շրջանում, այդ շրջանի ազդեցութիւնները պահում են հետագայ յաւելուածքներում (աւանդատներ, ծածկուած սիւնասրահներ, շքամուտքեր եւ պատուհանների շուրջկալներ, հատատաբաթեայ խաչեր եւ այլն):

Երանց կարծիքների մէջեւ եղած տարբերութիւնն այն է, որ Թորամանեանը, ընդունելով հանդերձ հայկական հեթանոսական մեհեանների ազդեցութիւնը ամենավաղ եկեղեցիների վրայ, միեւնոյն ժամանակ խօսում է նրանց վրայ յունա–հռոմէական մեհեանների խոշոր մեծ ազդեցութեան մասին:

Մինչդեռ Սահինեանը, խորանալով ժողովրդի ճարտարապետա–կեղարուեստական եւ պատմական սեփական աւանդոյթների ուսումնասիրութեան մէջ, հայկական հեթանոսական մեհեանների սկզբնաղբիւրները գտնում է հայկական հողի վրայ զարգացած բնիկ ուրարտական արուեստի մէջ(80):

Իր կարծիքներով առանձնանում է Ստ. Մնացականեանը՝ հիմնաւորելով Զուարթնոցի տաճարի տեղական, հայկական արուեստի օրինաչափ զարգացման արդիւնք լինելը: Երկնելով պատմական արուեստներից՝ միեւնոյն ժամանակ նա նշում է, որ բացառուած չէ նոյնիսկ, որ հայերը Ե–Զ. դարերում որոշ չափով իրենց ներդրումն են ունեցել սիրիական ճարտարապետութեան մէջ:

Հայաստանի վաղ քրիստոնէական եկեղեցիների սկզբնական ձեւերում հանդէս եկող հետագայ յաւելուածքները (սիւնասրահներ, աւանդատներ, աշտարակներ եւ այլն) սիրիական ազդեցութիւն համարելու տեսակէտից նոյնպէս ընդհանրութիւն է կազմում մեր նշած փոքր չեզուելով ընդհանուրից՝ ծածկուած սիւնասրահները համարում է յունա–հռոմէական ոճի սեփականութիւն, բացարձակապէս մերժելով նրանց հայկական ստեղծագործութիւն լինելը(81): Գիտնականների մեծ մասը յաւելուածքները համարում են Ե–Զ. դարերի գործ:

---

80. Նոյնը, էջ 239:

81. Թ. Թորամանեան, *Տեկորի Տաճարը*, էջ 56:

Թորամանեանը աւանդատների(82) եւ սխինասրահների(83) հետապատ աւելացումը հայկական եկեղեցիների սկզբնական ձեւերի վրայ վերագրում է նորաստեղծ քրիստոնէական կրօնի ծխական ուրոյն պահանջներին: Թէ երբ է սկսուել առաջին անգամ նրանց կիրառումը, նա չի խօսում, բայց նշում է, որ «325–ի Նիկոսիոյ ժողովին կանոններուն մէջ արդէն յղուածներ կան այդ մասին»(84):

Թորամանեանը պնդում է, որ երրայական տաճարի հեթանոսական պաշտամունքի մնացքն է արտայայտուել հայկական սխինասրահներում, որոնք նրանք եղել են հեթանոսների կամ ապաշխարհողների պաշտօն(85): Եթէ ընդունենք, որ նրանք ծառայել են հեթանոսներին եւ ապաշխարհողներին, պարզ է, որ արդէն Զ. դարից սկսած նրանք պէտք է սկսէին վերանալ՝ նկատի ունենալով, որ քրիստոնէութիւնը իշխում էր այդ երկրներում ու հեթանոսներ համարեայ չկային:

Հայաստանի վաղ քրիստոնէական ճարտարապետութեան՝ Սիրիայից ազդուած լինելու իրենց տեսակէտը ամրապնդելու համար որոշ պրոֆեսորներ ենթադրում են, որ վաղ միջնադարում Սիրիայից Հայաստան են եկել շինարար վարպետներից կազմուած խմբակներ, որոնք տեղի վարպետների հետ միասին աշխատել են տեղական կառոյցների վրայ: Այնպէս են ենթադրում Տեկորակին եւ Եակոբսոնը: Իսկ, ընդհակառակն, Ստ. Մնացականեանի կողմից մէջբերուած յիշատակութիւններն ասում են այն, որ հայ շինարար վարպետները նախաքրիստոնէական ժամանակաշրջանից մինչեւ Զ. դարերը եղել են Սիրիայում եւ իրենց ներդրումն են ունեցել սիրիական ճարտարապետութեան մէջ: Տեկորակու եւ Եակոբսոնի մօտ իրենց տեսակէտը հիմնաւորող յիշատակութիւններ մենք չենք նկատել: Նման ենթադրութիւններ անելիս վաստակները դառնում են անհրաժեշտ:

Երկու երկրներում էլ շինարարութեան մէջ օգտագործուող հիմնական շինանիւթը եղել է քարը: Բայց նա տարբեր դերեր է կատարել Սիրիայի եւ Հայաստանի կառոյցներում:

Վերոյիշեալ պրոֆեսորների կարծիքների մէջ կարելի է նշմարել մի ընդհանրութիւն եւս: Սիրիական վաղ քրիստոնէական ճարտարապետութեան ազդեցութիւնը հայկականի վրայ ցոյց տալու համար հայկական յուշարձաններից առաջին հերթին եւ մշտա-

---

82. Նոյնը, էջ 52:
83. Նոյնը, էջ 73:
84. Նոյնը, էջ 84:
85. Նոյնը:

պէս յիշուում է երերուքի տաճարը, որը համեմատուում է Թուվեյ-հայի, Թուրմանինի, կալը-Լոզէի, էլ Բարայի եւ եռանաւ այլ բազիլիկների, ինչպէս նաեւ հիւսիսային Սիրիայի մօտ, Փոքր Ասիայի հարաւային մասում պահուող Բինբիր Քիլիսէում եւ Լիկաոնիայում պահուող եկեղեցիների հետ: Այդ համեմատութիւններում ղեկաւոր արեւմտեան ճակատի անկիւններում բարձրացող աշտարակները կատարում են առաջին ջուխակի դերը: Երերուքում հանդէս եկող աշտարակները նոյնպէս հայկական վաղ քրիստոնէական եկեղեցիների վրայ կառուցած հետագայ (մինչեւ Զ. դ.) յաւելուածքների մասն են կազմում: Սիւնասրահների եւ աւանդատների առաջացման մասին ենթադրութիւններ արուեցին: Երերուքի աշտարակների՝ սիրիականից ազդուած լինել կամ չլինելու մասին առայժմ կարծիք յայտնել դժուար է, նկատի ունենալով, որ հայկական վաղ քրիստոնէական ճարտարապետութեան մէջ դեռեւս դրանք մնում են որպէս եզակի դէպք: Այդ իսկ պատճառով կարելի է ընդունել, որ դրանք սիրիական կամ փոքր-ասիական ազդեցութիւններից են առաջացել: Այդ դէպքում հարց է ծագում, ղեկաւոր ճակատում հանդէս եկող այդքան մեծ եւ հնչեղ աշտարակները եթէ անհրաժեշտութիւն էին այդ ժամանակի պաշտամունքային կամ ճարտարապետա-պեղարուեստական պահանջները բաւարարելու համար, ապա ինչո՞ւ չեն արտայայտուել կամ իրագործուել երերուքին ժամանակակից միւս յուշարձաններում:

Ի մի բերելով յիշեալ պիտնականների կարծիքներն ու դրանց քննարկումները՝ տեսնում ենք, որ Հայաստանի եւ Սիրիայի Դ–Ե. դարերի վաղ քրիստոնէական ճարտարապետութեան առնչութիւնների հարցում ճշգրիտ եզրակացութիւնների յանգելու համար բաւական չեն պրականութիւնից քաղուած տեղեկութիւններն ու յուշարձանների մասին արուած նկարագրութիւնները: Բաւարար չեն նոյնպէս առանձին վերցրած երկրներից միայն մէկի ճարտարապետական յուշարձաններին ծանօթանալը:

Անհրաժեշտ է տեղում ուսումնասիրել եւ Սիրիայի, եւ Հայաստանի բոլոր այն յուշարձանները, որոնք համեմատուում են իրար հետ, ճշդել դրանց առաջացման աղբիւրները եւ զարգացման ընթացքը, բաղդատել միմեանց հետ հետազօտութիւնների արդիւնքների օժանդակութեամբ, որից յետոյ յանգել հնարաւոր ճիշդ եզրակացութիւնների:

ARMENIAN AND RUSSIAN AUTHORITIES ON THE QUESTION OF THE CORRELATION OF ARMENIAN AND SYRIAN ARCHITECTURE OF 4-7TH CENTURIES

SHAHE DER-KEVORKIAN

(Summary)

Starting from the early 19th century European historians of architecture and archeologists turned their attention to the question of mutual influence of Armenian architecture. A good number of theories were put forward concerning the origin, development and the problem of influence of Armenian architecture. One of those theories was that while christianity penetrated into Armenia through Syria, it brought with it architectural laws and forms, which influenced the construction of the early Armenian churches

J. Strzygowski, N. Mar, T. Toramanian, N. Togarsky, A. Yacopson, A. Sahinian, S. Menatzaguanian, H. Krapar, A. Khatchaterian and others have spoken fully about the correlation of Armenian and Syrian architecture. However, the opinions of the above mentioned authorities on the subject do not always reconcile, and sometimes they even contradict each other.

Taking into consideration all the presented hypotheses on the subject, it becomes necessary to say that only after an on the spot study of all those Syrian and Armenian christian architectural monuments of the 4-7th centuries (compared only in litterature), it will be possible to reach a definite conclusion on the matter.

Հայ-արաբական դրամագիտութեան մէկ հանի հարցերու շուրջ

ՊԵՐՃ ՍԱՊՊԱՂԵԱՆ

Առանց վարանումի կարելի է արձանագրել որ հայկական դրամագիտութիւնը վերջին քսան տարիներու ընթացքին բոլորեց զարթօնքի նոր շրջան մը, ե՛ւ հայրենիքին մէջ, ե՛ւ արտասահմանի։ Այդ մարզին մէջ անտես չմնաց նաեւ արաբական տիրապետութեան շրջանին Հայաստանի մէջ հատանուած կամ շրջառնութեան դրուած արաբական դրամներու հարցը։ Այս գծով ուշագրաւ են Յ. Մուշեղեանի ստորագրութեամբ լոյս տեսած հետեւեալ երկու յօդուածները՝ Հայաստանում Տարածուած վաղ Արաբական Դրամներ («Լրաբեր», 1973, թիւ 12, էջ 32–47), եւ Աբբասեան Դրամների Թողարկումը Խալիֆաթի «Արմենիա» Նահանգում Ը–Ժ. Դարերում, («Պատմա-բանասիրական Հանդէս», 1973, թիւ 4, էջ 143–156)։

Երկրորդ յօդուածին կցուած է «Ցաւելուած Ցանկ» մը 215 դրամներու, ուր մանրամասնօրէն յիշուած են հատանման հիճրի եւ փրկչական թուականները, փողերանոցները, գահակալող խալիֆէին, պահժառանգին եւ այլ պետական անձնաւորութիւններուն անունները։

Բնականդիր պրպտումով, ցանկին վերջին սիւնակին մէջ տրուած են մատենագիտական այն աղբիւրները, ուր խնդրոյ առարկայ դրամները յիշատակուած եւ ուսումնասիրուած են արաբական դրամագիտութեան մէջ հեղինակութիւն նկատուող մասնագէտներու կողմէ։

Առաջին յօդուածին մէջ, ուր արաբական վաղ շրջանի, կամ Օմայեան իշխանատոհմի դրամները կ'ուսումնասիրուին, Մուշեղեան

անդրադարձած է 41 այլ դրամներու, ինչ որ ցանկին ընդհանուր թիւը կը բարձրացնէ 256 հայ–արաբական դրամներու:

Ենթադրաբար հեղինակը իր արամադրութեան տակ ունեցած չէ արաբական դրամագիտութեան նուիրուած յարաբերաբար նոր հրատարակութիւնները: Այսպէս, օրինակ, ձորճ Մայլզ, բացարձակ հեղինակութիւն մըն է արաբական դրամագիտութեան, իր բազմահատոր հրատարակութիւններով եւ յօդուածներով: Արաբական երկիրներէն հեղինակութիւններ են Դահիրէի Իսլամական Թանգարանի տնօրէն՝ Ապտիւլ Ռահման Ֆըհմի, Պաղտատի Թանգարանի տնօրէն՝ Մուհամմէտ Պաքէր Էլ Հուսէյնի, Դամասկոսի Թանգարանի նախկին տնօրէններէն՝ Ապուլ–Ֆարաճ Էլ Ըչ եւ ուրիշներ:

Թէեւ անվիճելի արժէք կը ներկայացնեն 19–րդ դարու վերջերը հրատարակուած Լավուայլ, Թիզընհաուզընի, Մարքովի, Նիւթցըլի, Լէյն Փուլի եւ ուրիշներու ճոխ հատաքածոները, որոնք անպայմանօրէն կը պահեն իրենց մատենագիտական արդիւնքներ ըլլալու հանգամանքը, ասով հանդերձ կը կարօտին ժամանակի ընթացքին յայտնաբերուած նորութիւններով ամբողջացումի:

Օգտագործելով պատեհութիւնը, Մուշեղեանի ուշադրութեան կը յանձնենք, կարգ մը աղբիւրներէ քաղուած դրամներու ցանկ մը, մատենագիտական եւ պատմական ծանօթութիւններով(*):

Մուշեղեան կուռ ու ամփոփ դիծերով կ'անդրադառնայ նորատեղծ արաբական կայսրութեան կողմէ դրամահատանման մարզին մէջ ձեռք առնուած միջոցառումներուն: Սկզբնական շրջանին արաբները կը հետեւին ճկուն եւ հանդուրժող քաղաքականութեան, խուսափելով կտրուկ եւ արմատական փոփոխութիւններէ: Զանազան մշակոյթներով անցած շրջաններու մէջ անոնք հետեւեցան տեղական աւանդութիւններուն: Սակայն, մօտաւորապէս 50 տարիներու փոխանցման հանգրուանէ մը ետք, հիճրայի 77–ին (695/6) Ապտըլ Մալէք պըն Մրուան հատանեց առաջին ոսկեդրամ ՏԻՆԱՐը, զուտ արաբական դրոշմով, որուն պիտի հետեւէին, մի քանի տարիներ յետոյ, արծաթ ՏԻՐՀԷՄՆ ու պղինձ ՖԻԼՍը:

Օմայեան շրջանին, ոսկի տինարները կը կրեն հատանման տարեթիւը, առանց փողերանոցի յիշատակութեան: Ընդունուած կարծիքը այն է որ անոնք հատանուած են կայսրութեան մայրաքաղաք՝ Դամասկոսի փողերանոցին մէջ: Հետեւաբար անհրաժեշտ չէ նկատուած յիշել հատանման վայրը:

---

*) Դրամներու յիշատակուած ցանկին համար տես՝ Աա, էջ 177–180:

Տարբեր պիտի ըլլար պարագան արծաթ–տիրհէմին եւ պղինձ–ֆիլսին համար: Կայսրութեան ընդարձակումով, երկրորդական համաման վայրեր հաստատուեցան կեդրոնական փողերանոցներու հսկողութեան տակ, դիւրացնելու համար ելեւմտական վարչամեքենային մեծածաւալ գործունէութիւնը, եւ մանաւանդ հակակշռելու համար տուրքերու եւ հարկերու դանձումը:

Արծաթներու վրայ, հատանման վայրէն զատ յիշուած են թուականը, խալիֆէին անունը, երբեմն գահաժառանգին, պատասխանատու վերակացուներու եւ մանաւանդ նահանգներուն մէջ տեղական հանգամանքով տիրող ոստիկաններուն (էմիրներու) անունները:

Այս կարգի դրամներն են մասնաւորապէս որ նոր լոյս կը սփռեն 7–10–րդ դարերու հայ ժողովուրդի արաբական շրջանին պատմութեան վրայ, որովհետեւ վերջնական կերպով լուսաբանուած չէ տակաւին Հայաստանի մէջ պաշտօնավարող յարափոփոխ ոստիկաններու ցանկը:

Նոյն կարեւորութիւնը ունին Հայաստանի զանազան շրջաններու մէջ հատանուած պղինձ ֆիլսերը, որոնք թէեւ որպէս օդնական «մանրուք» հատանուած են, տեղական շրջանառութեան համար, ասով հանդերձ, կրնան երբեմն օգտակար տեղեկութիւններ հայթայթել պատմութեան:

Մուշեղեան իր երկու յօդուածներուն մէջ կը յիշէ Արմինիա նահանգին մէջ տեղադրուած 11 փողերանոցներ.

1. Արմինիա	ارمينية	7. Հարուսիէ	هرونية
2. Առան	اران	8. Մա'տան Պաճուսայս	معدن باجنيس
3. Գանձակ	جنزة	9. Պարտաւ	بردعة
4. Դուին	دبيل	10. Մատինէդ Պալխ էլ–Պայտա'	مدينة بلخ البيضاء
5. Թիֆլիս	تفليس	11. Տերպենտ	باب الابواب
6. Հարուսապատ	هرون اباد		

Ըստ Ապուլ Ռահման Ֆըհմիի, արաբական կայսրութեան մէջ 82 փողերանոցներ դրամ հատանած են(1): Ձոն Ուոքըր կը յիշէ մօտ 115 փողերանոցներ(2): Հետագային, այս թիւը պիտի բարձրանար

---

1. الدكتور عبد الرحمن فهمي محمد ، موسوعة النقود العربية وعلم النميات ، القاهرة ، ١٩٦٥ ، ص. ٢٥٠/٢٨٥ . Տեսայուս՝ միայն Ֆըհմի:

2. John Walker, **A Catalogue of the Arab Byzantine and Post Reform Umaiyad Coins**, London, 1956, p. lxx–xcii. Տեսայուս՝ Walker.

150 տեղանուններու։ Ընդհանրապէս յիշուած վայրերը քաղաքներու անուններ են, որոնց մեծամասնութեան աշխարհագրական դիրքը ծանօթ է։ Կայ սակայն կարեւոր թիւ մը փողերանոցներու, որոնց տեղագրութիւնը տակաւին կը մնայ անորոշ եւ վիճելի։

Ասոնց կից կան կարգ մը փողերանոցներ, որոնք յիշատակուած են նահանգներու անուններով, փոխանակ քաղաքներու։ Կու տանք քանի մը օրինակներ.

ԱՐՄԻՆԻԱ.– Հայաստանը իր վարչական սահմաններով, որոնց մէջ կ'իյնան Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանները, Վրաստանն ու Աղուանքը։

ԱՌԱՆ.– Աղուանքը։

ԱՂ–ՈՒՐՏՈՆ.– Զինուորական կարեւոր կայք մը, որ կը պարփակէր Յորդանանի նահանգը։

ԱՂ–ԱՆՏԱԼՈՍ.– Սպանիան՝ ընդհանրապէս։

ԱՂ–ԱՖՐԻՔԻԱ.– Հիւսիսային Ափրիկէն՝ բացի Եգիպտոսէն, որ ծանօթ էր «Միսր» անուան տակ։

ԱՂ–ՄԱՂԲՈՊ.– Արեւմուտք։ Ընդարձակ իմաստով հիւսիսային Ափրիկէի բոլոր երկիրները, ներառեալ Եգիպտոսը(3)։

ԱՂ–ԻՐԱՔ.– Մա'մունի չրջանին հատանուեցաւ առաջին տիւնարը (ոսկի) 199 Թ.ին (814–5) Իրաք հատանման վայրանունով(4), որ տակաւին կնճիռ մը կը մնայ դրամագէտներուն համար, քանի որ կայսրութեան գլխաւոր փողերանոցը, Մաահինդ–էլ–Սալամ՝ մայրաքաղաքն էր կայսրութեան, և կ'իյնար Իրաքի մէջ։

Արմինիա.– Մեզ հետաքրքրող այս յորջորջումը արաբական դրամներու վրայ, որպէս փողերանոց կամ հատանման վայր, մեզ կ'առաջնորդէ կարգ մը բարդութիւններու։ Ի՞նչ հասկնալու է ԱՐՄԻՆԻԱ մակագրութեամբ։ Արմինիայի ո՞ր քաղաքը, Դուի՞ն, Առա՞ն, Թիֆլի՞ս, Պարտա՞ւ թէ այլուր։

Անշուշտ այս քաղաքները ունեցած են իրենց սեփական փողերանոցները, ուր պարբերաբար հատանուեցան արծաթ (տիրհէմ) եւ

---

3. Ֆըհմի, էջ 95։

4. Ֆըհմի, էջ 99։

պղինձ (ֆիլս) դրամներ, փողերանոցներու առանձին յիշատակութեամբ, ինչպէս մանրամասնօրէն յիշատակուած են Մուչեղեանի քորփիւսին մէջ: Հետաքրքրական է սակայն նշել որ «Արմինիա» մակդրութեամբ արծաթները հատանուած են աւելի յաճախադէպ քան քաղաքային փողերանոցներու թողարկումները, մասնաւորաբար ՕՄԱՅԵԱՆ իշխանատոհմին յիսնամեայ դրամահատանման տեւողութեան ,77–132 ԹԹ. (696–750) ընթացքին:

Մուչեղեանի յանկին մէջ («Լրաբեր», 1973, թիւ 12, էջ 37–38), կը նշմարենք ԱՐՄԻՆԻԱ անուամբ 19 թողարկումները արծաթ տիրհէմներու, որոնք կ'երկարին հիճրէի 81 թուականէն մինչեւ 123 (700–740), մինչդեռ քաղաքային փողերանոցներէն յիշուած են միայն

	Տարիներ՝	
– Դուին (Տեպիլ)	84, 85, 86, 87 (703–705)	4 թողարկում
– Առաք	89, 90 (707–709)	2 »
– Թիֆլիս	86 (705)	1 »
– Գանձակ (կասկածելի ընթերցումով)	94 (712/3)	1 »

Հետեւաբար, քաղաքային փողերանոցներու սահմանափակ թողարկումները բաղդատմամբ Արմինիա նահանգին կանոնաւոր եւ երկարատեւ թողարկումներուն, մեզ կը մղեն նկատի առնելու դրամագիտութեան կողմէ արձանագրուած կարգ մը մասնանշումներ:

Ա.– Ըստ հին մատենագիր Ալ–Մաքրիզիի, Խալիֆէ Հիշամ պէն Ապտուլ Մալիքի օրով (105–125/724–743) մասնաւոր հրովարտակով վերատեսութեան ենթարկուած է տիրհէմին կշիռը եւ դրամա–հատանման գործողութիւնը կեդրոնացած կայսրութեան գլխաւոր փողերանոց՝ Ուասէդի մէջ, որ հիմնուած էր 84 (703) թուականին(5): Տոքթ. Ֆըհմի կը խորհի որ Ուասէդի կից յարատեւած ըլլալու է նաեւ Դամասկոսի աւազ փողերանոցը(6):

Բ.– Ըստ Եունկֆլայչի, ժապ տը Մորկան Ուասէդի մէջ կատարած պեղումներու ընթացքին գտած է մեծ քանակութեամբ արծաթ–տիրհէմներ՝ չդործածուած վիճակի մէջ, որոնք կը կրեն Ալ–Աֆրիքիա փողերանոցներուն անունները, հատանաբար յիշեալ վայրերը ղրկուելու համար(7):

---

5. Walker, p. lxiii.

6. Ֆըհմի, էջ 67:

7. Walker, p. lxiii, եւ Ֆըհմի, էջ 67:

փողերանոցային վիճակի մէջ (mint condition) *դանուած այդ դրամները կը հասատաեն մատենագիր Ալ–Մաքրիզիի հաղորդածը։ Դժուար չէ եզրակացնել որ այդ դրամները, հակառակ հեռաւոր նահանգներու անուններուն յիշատակութեան, դործնականօրէն համաեսուած էին Ուասէղի կեդրոնական փողերանոցին մէջ, հետագային ղրկուելու համար յիշուած դաղութները՝ չրջանառութեան համար։ Շատ հաւանաբար, այս ձեւով, պետութիւնը կը ձդտէր հակակչռի տակ առնել տուրքերու եւ այլ եկամուտներու դանձումը։*

Գ.– Պէտք չէ նաեւ անտեսել որ Արմինիա իր վարչական ընդարձակ սահմաններով կը նկատուէր կայսրութեան համար անհրաժարա եւ վճանդաւոր ծայրաչրջան մը (սուդուր), եւ պաչտպանութեան գօրի մը բիւզանդական ռանձգուիչներու դէմ։ Նահանգը ենթակայ էր տեւական փոթորիկներու։ Անկախաբար բնիկ նախարարներու կազմակերպած ապստամբութիւններէն, թօթափելու համար օտար լուծը, կանոնաւոր կերպով կ'ըմբոստանային նաեւ կեդրոնախոյս ձգտումներով համակուած էմիրներ, գինուորականներ եւ արաբական ցեղախումբեր, որոնք տեղաւորուած էին Հայաստանի մէջ, իրենց հետ բերելով իրենց տոհմային պայքարները ու փոխվրէժի աւանդական վէճերը։

Ըստ արաբ մատենագիր Ալ–եաղուպիի, Հարուն էլ Ռաչիտ Ալիֆէն (170–193/786–809) իր դահակալութեան 23 տարիներու ընթացքին, յաջորդաբար 22 ոստիկաններ ղրկած է Արմինիա, վերահաստատելու համար անդորրութիւնը(8)։ Նման անհրաժեշտ պայմաններու տակ կայսրութիւնը կրնար խոհեմ չնկատել Արմինիա նահանգին քաղաքներուն մէջ կանոնաւոր կերպով դրամ հատանելու քաղաքականութիւնը։

Դ.– Դժբախտաբար աղբիւրներ չունինք Արմինիա նահանգին տարածքին վրայ յայտնաբերուած դրամագանձերու մանրամասնութեանց չուրջ, Մուչեղեանի կողմէ հրատարակուած գիրք մը, ուսերէն լեզուով եւ հայերէն ամփոփումով(9) կ'ընդգծէր որ «արաբական տիրապետութեան սկիզբէն մինչեւ Ը. դարի կէսը, այսինքն Ալիֆաթի Օմայեան հարստութեան ժամանակ, դանձերը ընդհանրապէս հազուադիպ են»(10)։

---

8. تاريخ اليعقوبي — دار بيروت للطباعة والنشر ، ١٩٧٠ ، ص. ٤٢٦ — ٤٢٨ ։ յետայսու՝ եագուպի։

9. Խ. Մուչեղեան, *Դուինի Դրամագիտական Շրջանառութիւնը Դրամագիտական Տուեալներով*, Երեւան, 1962։

10. *Նոյնը*, էջ 172։

Հայ–արաբական դրամագիտութեան բնագաւառը պեղուած չէ տակաւին: Կը կարօտի մատենագրական պրպտումի: Յարդ հանդիպած չենք հայ հին մատենագրութեան մէջ ամենադոյզն ակնարկութեան մ'իսկ: Սակայն մինչեւ նորայայտ աղբիւրներու յայտնութիւնը կը խորհինք թէ.

1.– Արմինիա նահանգի քաղաքային վոզերանոցներու մէջ հատանուած են անտարակոյս բոլոր պղինձ–ֆիլսերը, որոնք որպէս օգնական դրամ, մանր առեւտուրի դիւրացման համար, կրնային հատանուիլ ուեէ ոստիկանի կամ տեղակալի կողմէ, իր անձնական հսկողութեան տակ, առանց դրամական լուրջ եւ հակակշռուած դրութեան մը կիրարկման:

2.– Օմայեան շրջանին, հակառակ «Արմինիա» մակագրութեան, արծաթ–սիրհմները հատանուած ըլլալու են կայսրութեան դլխաւոր վոզերանոցներէն՝ Դամասկոսի եւ Ուասէդի մէջ: (77–132/696–750):

3.– Սովորութիւնը կրնայ չարունակուած ըլլալ նաեւ Ապպասեան դերդաստանի գահակալութեան սկզբնական շրջանէն, մինչեւ Հարուն էլ Ռաշիտի օրերը, երբ խալիֆը (170–193/786–809) ապակեդրոնացման քաղաքականութեամբ, ազատութիւն ընծայեց մեծ թիւով նահանգային եւ քաղաքային վոզերանոցներու սեփական տիրհմներ հատանելու, միանգամայն յիշելով ելեւմտական պատասխանատուներու, վոզերանոցներու վարիչներու, ոստիկաններու եւ այլ տեղակալներու անունները:

Հետաքրքրական է յիշել, որ ոստիկաններէն ոմանք, որոնց պաշտօն արուած էր Հայաստանի մէջ անդորրութիւնը վերահաստատելու կամ ըմբոստութիւնները պսպելու, բաւականացած են իրենց տեղ պինուորական կամ ելեւմտական տեղակալներ ղրկելով դլխահարկը կամ այլ տուրքեր հաւաքելու, կամ՝ պատժական արշաւանքներ կատարելու, առանց անձնապէս Հայաստան ոտք դնելու:

Ալ–Եագուպի, թուելու առեն Հարուն էլ Ռաշիտի կողմէ նշանակուած ոստիկաններու անունները, մասնաւոր յիշատակութեամբ կ'ընդգծէ անունները անոնց, որոնք անձնապէս մեկնած են իրենց պաշտօնավայրը. օրինակ՝ Ալ–Ֆատլ–պըն Եահեա պըն Խալէտ Ալ–Պարմաքին(11):

Թէեւ մատենագրական եւ այլ հիմնական փաստեր չունինք տակաւին, սակայն ամենահնարաւոր սահմաններուն մէջ կ'իյնայ են–

---

11. Եագուպի, էջ 426:

թագրել որ Հարուն էլ Ռաշիտէն ետք, «Արմինիա» մակագրութեամբ արծաթները հատանուած ըլլան Դուինի մէջ, նկատի ունենալով անոր քաղաքական, ռազմական եւ մանաւանդ առեւտրական կարեւորութիւնը։

ԱՌԱՆ.– *Արաբական մատենագրութեան մէջ Առանը (Աղուանք) կ'ընդգրկէր Արմինիա նահանգին վարչական սահմաններուն մէջ։ Ան երբեմն յիշուած է քաղաքի իմաստով, և յաճախ՝ վարչական–զինուորական շրջանի առումով։ Արաբներուն մօտ ընդհանրացած էր այս չափը։ Մինչեւ այսօր եղիպտացիի մը համար, սուրիացին կը կոչուի ՇԱՄՑԻ, մայրաքաղաք՝ Շամ–Դամասկոս ձեւով։*

Առանի վերաբերեալ արծաթներուն շարքին կը հանդիպինք երբեմն պարզ ձեւով ضرب باران *(Տուրիպա պի Առան) եւ կամ* ضرب بمدينة اران *(Տուրիպա պի Մատինէդ Առան) այսինքն հատանուած Առան քաղաքին մէջ։ Այս երկրորդ ձեւին կը հանդիպինք Հարուն էլ Ռաշիտի յաջորդ՝ էլ–Մամունի օրով հատանուած արծաթ սիրհէմներէն ոմանց վրայ, որպէս հետեւանք քաղաքային փողերանոցներուն տրուած հատանման իրաւունքներուն։*

Առան իր կարգին կը բաժնէ Արմինիա նահանգին քաղաքական խռովայոյզ վիճակը։ Հետեւաբար, ճիշդ պիտի ըլլար ենթադրել որ արծաթ–սիրհէմները հատանուած ըլլալու են, Արմինիայի նման, կայսրութեան դիմաւոր փողերանոցներուն մէջ, ինչպէս Դամասկոս, Ուասէդ, եւ հետագային Մատինէդ էլ Սալամ, մինչեւ Ռաշիտի շրջանը։ Տեղական փողերանոցը կրնար առաւելաբար պղինձ–ֆիլսեր հատանել մանր առեւտուրի համար։

ԴՈՒԻՆ.– *Արաբական մատենագրութեան մէջ յիշուած ՏԱՊԻԼ (Դուին) քաղաքը, Արմինիա ընդարձակ նահանգին դիմաւոր կեդրոնն էր, եւ յաճախ նստավայրը տեղակալ ոստիկաններու։ Դուինի հակառակ կայսրութեան կեդրոնէն ունեցած իր հեռաւորութեան, եղաւ մէկը այն սակաւաթիւ փողերանոցներէն, որոնք վաղահասօրէն արծաթ հատանեցին։ Արաբական արծաթներուն համար որպէս սկզբնական տարեթիւ ընդունուած է հիճրի 80 տարին։ Դուինի մէջ առաջին արծաթը հատանուած է յաջորդ տարին, հիճրի 81 թ.ին։ Սակայն 4 յաջորդական թողարկումներէ յետոյ, շարքը կը դադրի, ենթարկուելով Հիշամ պէն Ապտուլ Մալէքի կեդրոնացման միջոցառումներուն։ Ռաշիտէն ետք պիտի վերագտնէր իր աշխուժութիւնը, հատանելով «Արմինիա» մակագրութեամբ արծաթներու շարքը։ Անժխտելի է անշուշտ Դուինի առեւտրական կարեւորութիւնը տարածքի վաճառականութեան որպէս կեդրոն։*

ՀԱՐՈՒՆԱՊԱՏ.– *Այս փողերանոցին անուամբ հետաքրքրական արձաթներ հասած են մեզի, վէճ ստեղծելով դրամագիտական շրջանակներու մէջ: Մուշեղեան թիւ 32 եւ 33 դրամներով («Պատմա-բանասիրական Հանդէս», 1973, թիւ 4, յաւելուած) կը նկարագրէ 168/169 (784/5) թուականներուն թողարկուած արձաթներ, որոնք կը կրեն ՀԱՐՈՒՆԱՊԱՏ–ԱՐՄԻՆԻԱ անուանները: Այլ անձնանուններու սիւնակին տակ կը յիշուի ՀԱՄԱՆ անունը:*

Զանց ընելով կրօնական սովորական բանաձեւերը կու տանք մեղ հետաքրքրող մակագրութիւնները,

– Ցառաջակողմ: ضرب هذا الدرهم بهرون اباد سنة تسعة وستين وماية

(այս տիրհէմը հատանուած է Հարունապատի մէջ՝ 169 տարեթիւին)

– Ցետսակողմ:

ارمينية

حسن

Արաբական դրամագիտութեան համար հետաքրքրական երեւոյթ է որ հատանման վայրէն զատ յիշուի այլ երկրի մը կամ նահանգի մը անունը: Անկասկած որոշ առիթով մը հատանուած է այս դրամը, եւ առնչութիւն ունի հայ ժողովուրդի պատմութեան հետ:

Ցետսակողմի դաշտի վարի մասին մէջ, քուֆի տառերով դրոշմըւած բառը, առանց կէտադրութեան, կրնայ ՀԱՄԱՆ կարդացուիլ, ինչպէս նշանակած է Մուշեղեան, հետեւելով կարգ մը դրամագէտներու ընթերցումին: Սակայն, կրնայ նաեւ կարդացուիլ ՃԵՅՇ – բանակ – իմաստով: Դժբախտաբար, ընթերցման նման չփոթութիւններ եւ բարդութիւններ սովորական են կէտադրութենէ զուրկ քուֆի դրեւագեւով բառերուն համար, մանաւանդ երբ փորագրիչը մանր գիրերով պատրաստած է կնիքը, առանց մասնաւոր բծախնդրութեան:

Բառը ՃԵՅՇ կարդալու համար, անհրաժեշտ է որ ակռանեբէն առաջինը ըլլար համեմատաբար աւելի բարձր, փաստելու համար «եա» տառին առկայութիւնը: Ուրիշներ կ'առարկեն թէ վերջին գիրը «Շին» որոշ կորութիւն պէտք է ունենայ: Անձնապէս, քննելով զանազան նմոյշներ, կը հանդիպինք գրեթէ տարբերակներու եւ կ'ենթադրենք որ կարծրքներու տարբերութիւնը արդիւնք է իւրաքանչիւր հեղինակի ձեռքին տակ դտնուող նմոյշի զանազանութեան:

Կը ներկայացնենք նմոյշ մը (տես՝ էջ 170):

Տօքթ. Ապուլ Ռահման Ֆըհմի, իր մեծածաւալ հատորին մէջ(12), այս դրամին կ'անդրադառնայ 1708 համարին տակ, չեշ-

12. Տես՝ ծանօթագրութիւն թիւ 1:



տելով որ Հարունապատ անուամբ քաղաք մը չիշատակուած չէ ա-
րար մատենագրութեան մէջ, մանաւանդ Եագուբի էլ-Համուվի «Բա-
զաքներու Համայնապիտարանին» կողմէ(13)։ Տոքթ. Ֆըհմի կ'են-
թադրէ որ այս փողերանոցը կրնար դտնուիլ հայ-արաբական սահ-
մաններուն վրայ տեղ մը(14)։

Ցեասակողմի բառը կը կարդայ ձեցճ – բանակ, եւ կը խորհի
որ դրամը հատանուած է պատմական դէպքի մը առիթով։

Պաղտատի թանգարանի դրամագիտական բաժնի անօրէն՝
Մուհամմէտ Պաքըր էլ-Հուսէյնի իր «Իսլամական Դրամներ» գրքին
մէջ(15) էջ 41, ծանօթ. 55, կը հետեւի Տոքթ. Ֆըհմիին։

Դամասկոսի պետական թանգարանի նախկին անօրէն՝ Ապուլ-
Ֆարաճ էլ-Ըշ, 1972 թ.ին հրատարակած «Ում Համարայ»ի դան-

---

13. ياقوت الحموي ، معجم البلدان .

14. Ֆըհմի, էջեր 283 եւ 506։

15. محمد باقر الحسيني ، **العملة الاسلامية** ، مطبعة دار الجاحظ ، ١٩٦٦ .

ձին(16) ուսումնասիրութեան ընթացքին, կը նկարագրէ 364 համարով եւ 169 (785/6) տարեթիւով նմոյշի մը ուսումնասիրութիւնը:

Ապուլ-Ֆարաճ համաձայն չէ Լը Սթրանժի տեղագրութեան, որ Հաուքալի վրայ հիմնուելով, Հարունապատը կը նոյնացնէ Ալ-Զուպայտիյէի հետ(17):

Գոտրինկթըն(18) Հարունապատը կը տեղադրէ Ֆիւրտիստանի մէջ, ձիպալի՝ Քըրմընշահ եւ Համատան քաղաքներու միջեւ:

Ապուլ-Ֆարաճ կ'եզրակացնէ որ հաւանաբար, Հարունապատ անունը տրուեցաւ նորաչէն կամ արդէն գոյութիւն ունեցող վայրի մը, որ երկար կեանք չունեցաւ եւ կամ անունն էր ոստիկանական ապարանքի մը, որ տեղակալներու նստավայր դառնալով, կ'ակընկալուէր ժամանակի ընթացքին կարեւոր կեդրոնի կամ քաղաքի վերածել. սակայն քաղաքական եւ վարչական աննպաստ պայմաններու բերումով կրնար չքացած եւ մոռցուած ըլլալ, տեղագրումն ալ անյայտ:

Ապուլ-Ֆարաճ անդրադառնալով յետսակոզմի բառին, կը մերժէ ձեցճ ընթերցումը, եւ կ'առաջարկէ ՀԱՄԱՆ ձեւը, ու կը խորհի որ անձնանունն է տեղական փողերանոցի մը պլխաւոր վերակացուին:

Ցարդ մեզի ծանօթ տիրհէմները կը կրեն 168–169 (784/5–785/6) թուականները միայն: ՀԱՄԱՆ–ձեցճ կնճռին առնչութեամբ դրամագէտներու կարծիքները կը տարբերին:

Լավուա(19), Սթիքըլ(20), Թիզընհաուզըն(21) և մասամբ Լէյն Փուլ կը նախընտրեն ՀԱՄԱՆ ընթերցումը: Այս պարագային, դրամագէտներէն ոմանք, այս տիրհէմները կը վերագրեն Հասան պըն Ֆահթապային, որ Արմինիայի ոստիկան եղած է առաջին անգամ 136-ին (756) եւ երկրորդ անգամ 154–158-ին (770–774/5), ըստ Ֆասմէրի(22) եւ Զամպորի(23) ցուցակներուն: Փաստեր չունինք որ ան

---

16. محمد ابو الفرج العش ، **كنزام حجرة المقضي** ، ١٩٧٢ ، ص. ٧٩ — ٨١ .

17. Le Strange, **The Lands of Eastern Califate**, Cambridge, 1905, p. 192.

18. Codrington, **A Manual of Muslim Numismatics**, London, 1904.

19. H. Lavoix, **op. cit.**, vol. I, No. 735.

20. J. G. Stickel, **Handbuch Zur Morgenlandischen**, Munzkunde, 1870.

21. W. Tiesenhausen, **Monnaies des Khalifes.**

23. Ռ. ՖԱՄՄԷՐ – Վիեննա, Մխիթարեան տպարան, 1933:

23. Zambaur , **معجم الانساب والاسرات الحاكمة في التاريخ الاسلامي** ، مطبعة جامعة فؤاد الاول ، ١٩٥١ .

ոսոլկան եղած է երրորդ չրջանի մը համար՝ 168/169 (784–786) տարիներուն։

Լէյն Փուլ նկատի ունենալով այս պարագան, երկընտրանքի մէջ է ՀԱՄԱՆ ձեւը իւրացնելու, մանաւանդ որ կը պակսի բառին Ա.Լ. որոշիչ յօդը – Ա.Լ–ՀԱՄԱՆ –, եւ կը ցուցակագրէ առանց այլ մեկնութեան։

Պոլսոյ պետական թանգարանի դրամագիտական բաժնի անօրէնները՝ Իպրահիմ եւ Ճեվրիյէ Արթուք, 1971 թ.ին իրենց կողմէ հրատարակուած ցուցակագրքին մէջ (Corpus) կ'անդրադառնան նոյն դրամին(24)։

Ցետոսկողմի բառը ՀԱՄԱՆ կարդալէ ետք, Հարունապատի տեղապրութեան համար կը մատնանչեն թէ այս քաղաքը կը գտնուի Վանի նահանգին մաս կազմող՝ Պաչքալէի չրջանին (Նահիյէ) մէջ։

Աւելի մանրամասնութեան համար, մեր կողմէ եղած դիմումի մը ընդառաջելով, Իպրահիմ Արթուք 1973 թ.ի Ցուլիսին գրուած նամակով մը կ'իմացնէր թէ վերատեսութեան ենթարկելով նախկին դիրքը, այժմ Հարունապատը կը տեղագրէր «Հայաստանի մէջ, Զապ գետին արեւելքը՝ իրանեան սահմանին մօտ դիւղ մը։ Իսկ գետին արեւմուտքը կը գտնուի Պաչքալէն»։ Իպրահիմ Արթուք կ'աւելցնէ թէ քախտաւոր եղած էր հանդիպելու Հարունապատ անուան, հրատարակութեան մը մէջ, որ կը կոչուի «Թուրքիոյ Բնակուած Վայրերու Ուղեցոյց»(25)։ Ապա՝ թէ 1936 թ.ին հրատարակուած քարտէզի մը վրայ Հարունապատը չիշատակուած է Զապ գետին արեւելեան կողմը, իրանի սահմաններուն մօտ(26)։

Իպրահիմ Արթուքի տեղագրութիւնը մեղի կը թուի ամենէն համոզիչը եւ մենք ալ ունինք այն համոզումը որ այս փողերանոցը կը գտնուէր պատմական Հայաստանի Վասպուրականի սահմաններուն մօտ։

ՀԱՐՈՒՆԻԷ.– Ըստ Եազուքի, Հարունիէ փոքր քաղաք մըն էր Մարաշի մօտ, զոր Հարուն էլ-Ռաշիտ վերաչինեց եւ ամրացուց 183 թ.ին (799–800)(27)։ Եազուք կ'աւելցնէ թէ իր «Քաղաքներու Հա-

---

24· Ibrahim Artuk, Cevriye Artuk, **Istanbul Arkeoloji Muzeleri Teshirdeki Islamie Sikkeler Katalogu**, Istanbul, 1971, p. 55, No. 203.

25· **Turkiyede Meskun Yerler Kilavuzu**, vol. I, Ankara, p. 483.

26· Meridional between 43–44 degree, Altitude between J–K.

27· Եագուբ, հատոր Ե., էջ 388։

մայնագիտարանը» գրած միջոցին, Հարունիէն կը պատկանէր Կիլիկիոյ Լեւոն Ա. թագաւորին(28)։

Հարունիէն ծանօթ է հայ պատմագրութեան։ Ըստ Տոքթ. Ց. Տ. Ղազարեանի Հարունիէ կը գտնուէր Ջահան գետին ձախ ափին վրայ եւ ամրացեալ քաղաք մըն էր։ Քաղաքը կը հսկէր Ամանոսի արեւելեան անցքերուն վրայ եւ կը պաշտպանէր Թիլ Համտունի եւ Մնարզաբայի թիկունքը(29)։

Կիլիկեցիներուն, եւ մանաւանդ մարաշցիներուն Հարունիէն ծանօթ էր Քառնայ անուան տակ, որ աղաւաղուած ձեւն է Հառնայ = Հարունիէ անուան։

Ըստ Ալիշանի, Կիլիկիոյ հեթում Ա. թագաւորը (1226–1270 թթ.) 1236 թ.ի Ցունուարին, մանաւոր հրովարտակով մը Հարունիէն ժամանակաւոր կերպով գիջած էր Տեւտոնեան ասպետներուն(30)։

Եագուբ էլ–Համուի կ'աւելցնէ թէ կար երկրորդ Հարունիէ մըն ալ, որ կը գտնուէր ՃԱԼՈՒԼԱ–ի մօտ։ Ճալուլան կը գտնուէր Պաղտատի հիւսիս արեւելքը, 70 մղոն հեռաւորութեամբ, Իրաք–Իրան ճամբուն վրայ(31)։

Մուշեղեանի ցանկին մէջ, 169 տարեթիւով յիշուած են երկու արծաթ տիրհէմներ՝ 34 եւ 35 համարներուն տակ։ Երկու դրամներն ալ կը կրեն Մուզէմմա պըն Մազէմի անունը, որ ըստ Ֆասմէրի եւ Ջամպորի ժամանակագրութիւններուն, ոստիկան էր Արմինիա նահանգին։ Այդ տիրհէմներէն մին հատանուած է Հարունապատի մէջ, իսկ միւսը՝ Հարունիէի։

Այս պարագան կը տեղծէ տեղագրական կնճիռ մը։ Ո՞ւր կը գտնուէր խնդրոյ առարկայ Հարունիէն։ Կիլիկիո՞յ թէ Իրաքի մէջ։ Կարգ մը նկատումներ մեզ կը մղեն երկու տեղագրումներն ալ մերժելու։

Ա. Եթէ Կիլիկիոյ Հարունիէն հիճրի 183 թ.ին վերաշինուելով ստացաւ ռազմական եւ տնտեսական կարեւորութիւն, ապա ուրեմն 169 թ.ին, կամ՝ 14 տարիներ առաջ, որպէս աննշան աւան չէր կրնար փողերանոց ունենալ։

---

28. Եագուբ մեռած է 1228 թ.ին։ Իր համայնագիտարանը գրած է Լեւոն Ա. թագաւորի գահակալութեան շրջանին։

29. Տոքթ. Ց. Տ. Ղազարեան, *Հայկական Կիլիկիոյ Տեղագրութիւն*, Ափրիլիաս, 1966, էջ 43։

30. Հայր Ղ. Ալիշան, *Սիսուան*, էջ 207։

31. Arnold Toynbee & Edward D. Myers, **A Study of History**, vol. XI, p. 36, Historical Atlas.

Բ. Դժուար է ենթադրել որ ոսմկան Խուզէյմա պըն Խազիմի իրաւասութիւնները կ'երկարէին Կիլիկիայէն մինչեւ Կովկաս ընդգրկող ընդարձակ աշխարհամաս մը, մանաւանդ որ Խուզէյմայի պլխաւոր առաքելութիւնն էր զպզողական արշաւանքներ կատարել Արմինիա նահանգին մէջ:

Գ. Երբ պոյութիւն ունէր կայսերական կեդրոնական փոխանոցը Մաթինէդ էլ-Սալամի (Պաղատատ) մէջ, անտրամաբանական պիտի ըլլար ակնկալել որ անոր մօտ գտնուող, Հարունիէ անուամբ փոքր եւ աննշան ատան մը, դրամ հատանէր բացառիկ յիշատակութիւններով:

Դ. Ըստ Մանանդեանի (Քննկն. Տեսութիւն Հայ ժողովրդ.ի Պատմութեան, Բ. հար. Բ. մաս, Երեւան, 1960, էջ 219–223) Արաւատդ եւ Մուչեղ Մամիկոնեանները 774–775 թ.ին յաջողած էին ոտքի հանել «ռամիկ ժողովուրդի բազմութիւնը» եւ հրահրել Արծրունեաց եւ Ամատունեաց նախարարները: Հայ ազատագրական բանակը կը տարածուէր Արճէշ, Բերկրի եւ Խլաթ քաղաքներուն: Հետեւաբար բռնկած էր ամբողջ Վասպուրականը:

Հակառակ ապստամբութեան դադրումին, կրնայ ըլլալ որ որոշ շրջաններ բոլորովին չենթարկուեցան եւ չարունակեցին պայքարը, ամբանալով Վասպուրականի կամ անոր կից Տարօնի դժուարամատչելի վայրերուն մէջ, 775–787 տարիներու ընթացքին, տեսնելով կայսրութիւնը որ ապստամբ շրջաններուն մօտ կեդրոնացնէր իր ռազմավարչական կեդրոնը, ու մասնաւոր դրամ հատանէր ԱՐՄԻՆԻԱ–ձեՅՇ (բանակ) մակագրութիւններով:

Ե. Եթէ յանդուգն չնկատուի մեր եզրակացութիւնը, մենք համոզուած ենք որ ՀԱՐՈՒՆԻԻ եւ ՀԱՐՈՒՆԱՊԱՏ անուններով կը ժամանակին միեւնոյն քաղաքին, որ Խալրահիմ Արթուքի տեղագրութեան համաձայն, կրնար գտնուիլ ռազմավարական նկատումներով, Զապ գետին եւ Պաչքալէի միջեւ:

Բացառուած չէ որ միեւնոյն քաղաքը ունենար երկու անուանաձեւեր, մին իրանական տարազով, իսկ միւսը՝ արաբական: Ապագային չրջանին դերակշիռ դեր ունէր հին իրանեան ազնուականութիւնը եւ մանաւանդ մշակոյթի բազմապիսի ազդեցութիւններով կը տիրէր պալատական կեանքին, ինչպէս նաեւ բարքերու, արուեստի եւ լեզուի բնագաւառներուն վրայ:

Արաբական դրամագիտութեան համար մեր առաջադրած եզրակացութիւնը բացառութիւն չէ ինքնին: Նոյն ձեւով ունինք նաեւ այլ փողերանոց մը՝ էլ Մուպարաքիյէ եւ Մուպարաք–Ապատ(32):

---

32. Ֆքհմի, էջ 277:

ՄԱ'ՏԱՆ ՊԱՃՈՒՆԱՅՍ (معدن باجنيس) ։– Եագուբ ճշդելէ ետք բառին ուղիղ ընթերցումը կ'ուսկցնէ թէ կը յիշուի Արճէլի հետ միասին, Ալաթի շրջանին մէջ եւ մաս կը կազմէ Զորբորդ Հայքին, հարուստ՝ աղի, պղինձի եւ մակնեզիայի հանքերով(33)։ Ամմինիա հատուածին տակ(34) կը թուէ Զորբորդ Հայքի քաղաքները, Շմշատ (Արշամաշատ), Կալիկուլա (Կարին), Արճէշ եւ Պաճունայս։

Աբրամ Տ· Ղեւոնդեան Պաճունայսը կը տեղադրէ Ապահունեաց գաւառին մէջ եւ կամ՝ «ծայրայեղ դէպքում մի քիչ հեռու՝ Հարք գաւառում կամ Ալաթում»(35)։

Արեւուք՝ հիճրի 195 տարեթիւով տիրհէմի մը անդրադառնալով, Պաճունայսը կը տեղադրէ Ամիդի եւ Մալաթիոյ միջեւ անորոշ վայր մը, ուր երկաթի եւ պղինձի հանքեր կը գտնուին։

Քաղաքին կցուած Մա'տան բառը թէեւ արաբերէն կը նշանակէ մետաղ եւ հանք, սակայն պայման չէ անպայմանօրէն զայն տեղադրել հանքերով հարուստ շրջանի մը մէջ։ Մա'տան կը նշանակէ նաեւ փողերանոց(36), ինչպէս օրինակ չափազանց հազուագիւտ եւ նշանաւոր Օմայեան հիճրի 105 տարեթիւով ոսկի տինարը, որ կը կրէ հետեւեալ մակագրութիւնը معدن امير المؤمنين , այսինքն՝ հաւատացեալներու իշխանին փողերանոցը։

Պաճունայս անունը կրնայ նաեւ ըլլալ աղաւաղուած ձեւը ԲԶՆՈՒՆԵԱՅՔ գաւառին։

ՄԱՏԻՆԷԴ ՊԱՀԱ ԷԼ–ՊԱՅՏԱՆ՝ (مدينة بلخ البيضاء) ։– Մինչեւ այսօր ծանօթ միակ տարեթիւն է հիճրի 111 (729–730) թուականով տիրհէմ մը։ Թէ որքան համոզիչ են վիճաբանները, այս փողերանոցը զանազանելու սովորական ՊԱՀԱ (Խորասան) քաղաքէն, կը մնան վիճելի։ Արաբական բազմաթիւ քաղաքներ ունին դերազիր ածականներ։ Այսինքն՝ Հալէպ քաղաքը ծանօթ է նաեւ Հալապ էլ–Շահպա՝ կամ միայն էլ–Շահպա՝ անուններով։ էլ–Շահպա՝ կը նշանակէ դարչապոյն, ինչպէս Պալմիրն կցուած «Պայտա»ն կը նշանակէ սպիտակագոյն։ Հին մատենագրութեան մէջ Հալէպը ծանօթ է նաեւ Հալապ էլ–Մահրուսա, կամ՝ էլ–Մահրուսա անուններով, այսինքն՝ Ատուածապահպան Հալէպ։

Մուշեղեանի ցանկին թիւ 42 եւ 44 տիրհէմները, հատանուած հիճրի 170 եւ 171 տարիներուն (786–787/8) Հարունիէի փողերանո-

---

33· Եագուբ, հատոր Ա·, էջ 314։

34· Եագուբ, հատոր Ա·, էջ 160։

35· Աբրամ Տ· Ղեւոնդեան, *Արաբական Ամիրայութիւնները Բագրատունեաց Հայաստանում*, Երեւան, 1965, էջ 222։

36· **Catalogue du Musée National de Damas**, Damas 1969, p. 183·

ցին մէջ, անձնանուններու եւ յիշատակութիւններու սիւնակին մէջ յիշուած է بو رجاح անորոշ մակագրութիւնը, զոր հեղինակը թարգմանած է «փառքդ չատ» ձեւով: Կ'ենթադրենք որ վերծանումը արդիւնք է թիւրիմացութեան: Ապուլ–Ֆարաճ էլ–Լչ, «Ում Հաճարա» գանձին մէջ (էջ 102, թիւ 407), կ'անդրադառնայ նմանօրինակ տիրհէմի մը, ուր մակագրութիւնը նկարագրուած է այլապէս, օրինակ

رجا
بو ح

ենթադրութիւններու գծով Ապուլ–Ֆարաճ կ'առաջարկէ յաջողացնել فسوى ձեւով եւ դրամը վերագրել Եուսէֆ պըն Ռաչէտ էլ–Սուլամիին, որ հիճրի 170/171 տարիներուն Հայաստանի ոստիկան եղած է: Ամէն պարագայի տակ հարցը կը մնայ անորոշ եւ կը կարօտի աւելի համոզիչ բացատրութեան:



Արաբական կայսրութիւնը որ կ'երկարէր Հնդկաստանէն մինչեւ Ատլանտեան ովկիանոս, երկար դարերու ընթացքին չարունակեց հատանել զրեթէ միօրինակ դրամներ, կրօնական բանաձեւերով եւ սակայն հարուստ պատմական յիշատակութիւններով: Բացառութիւն կը կազմեն թուրքմէն, սելճուկ եւ օրդուկեան պատկերազարդ դրամները:

Արաբական դրամագիտութեան գլխաւոր կնճիռներն ու դժուարութիւնները արդիւնքն են կէտադրութենէ զուրկ՝ քուֆի գրելակերպին եւ անոր ստեղծած չփոթութիւններուն: Կնիքներու անթծախնդիր պատրաստութիւնը կրնայ չփոթ ստեղծել եօթը եւ եօթանասուն, կամ՝ ինը եւ իննսուն թուանշաններուն ճշգրիտ ընթերցման չուրջ, ինչպէս փողերանոցներու եւ յիշատակուած անձերու անուններուն անսխալ վերծանման առնչութեամբ:

Բազմաթիւ ճորտ, կիսանկախ կամ կեդրոնախոյս իշխանները (էմիր) դրամ հատանած են, որոնց անուններուն չուրջ լուռ կը մնան մատենագրական աղբիւրները: Կարեւոր թիւ մը փողերանոցներու կը մնայ տակաւին անորոշ տեղագրութեամբ եւ վիճելի:

Հայ–արաբական դրամագիտութեան ճիւղը փոքր մարզ մըն է անշուշտ բազդատմամբ կայսրութեան հատանած դրամներուն, բայց խիստ կարեւոր հայոց պատմութեան հետ առնչութիւն ունեցող իր կապերով: Անպայմանօրէն մարզը պիտի ըլլար աւելի ընդարձակ եւ չահեկան, եթէ բագրատուններու չրջանին, հայ բագրատունի իշխաններն ու թագաւորները, հետեւելով այլ կիսանկախ էմիրներու օրինակին, դէթ պղինձ դրամներ հատանէին զուտ հայատառ կամ հայ–արաբ երկլեզուեան տառերով:

ՅԱԽԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՅԱՆԿ
ՀԱՏԱՆՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ԱՐՄԻՆԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՋ

Ոս· = Ոսկի Տիճար Ար· = Արծաթ Տիրհէմ Պղ· = Պղինձ Ֆիլս

Թիւ	Մետաղ	Տարեթիւ Հ/Ք	Տարեթիւ Փ/Ք·	Ձիչատակուած վողերանոցներ	Գահակալող Խալիֆաներ	Ցատկանշական յիշատակութիւններ եւ անճնանուններ	Մատենագրական աղբիւրներ
1	Պղ·	86	705	دبيل Դուին	الوليد بن عبد الملك Ալուալիտ Պըն Ապտըլ Մալէք		Սարրաֆ, 24 (Ա)
2	Ոս·	93	711/2	دبيل Դուին	»		Սարրաֆ, 25
3	Ար·	143	760/1	ارمينية Արմինիա	المنصور ابو جعفر عبدالله Ալ Մանսուր		Սարրաֆ, 26 Ֆըհմի, 1562
4	Ար·	144	761/2	ارمينية Արմինիա	»		Ֆըհմի, 1563
5	Ար·	145	762/3	اران Առան	»		BMC, 25 էջ, 39 (Բ)
6	Ար·	145	762/3	ارمينية Արմինիա	»		Ֆըհմի, 1564
7	Ար·	146	763/4	ارمينية Արմինիա	»		Ֆըհմի, 1565 Սարրաֆ, 100
8	Ար·	146	763/4	اران Առան	»		RIC, 223 (Գ)

9	Ար·	147	764/5	اران Առան	»		BMC, 26, էջ 40
10	Ար·	149	766/7	اران Առան	»		RIC, 224
11	Ար·	149	766/7	ارمينية Արմինիա	»		Սեփական
12	Ար·	150	767/8	ارمينية Արմինիա	»		BMC, 29, էջ 40 Ֆըհմի, 1566
13	Պղ·	163	779	بردعة Պարտաւ	المهدي ابو عبدالله محمد Ալ Մըհտի	مما امر به الامير زيد بن أسيد عز الله نصره Հրամանով էմիր եազիտ Պըն Ուսայ-տի, Աստուած յաղ-թութեամբ զօրացնէ	RIC, 367
14	Ար·	176	792/3	ارمينية Արմինիա	الرشيد ابو جعفر هروت Ալ-Ռաշիտ	بخ	Սեփական (դ)
15	Ար·	183	799	اران Առան	»	اسد بن يزيد	Arpuf, 183 (բ)
16	Պղ·	184	800	اران Առան	»	احمد بن محمد	RIC, 364 (զ)
17	Ար·	191	806/7	معدن باجنيس Մա'տան Պաճուճայս	»	ام جعفر/محمد رسول الله/مما امر به الامين احمد بن امير المؤمنين/داود	Arpuf, 256 (է)

18	Պղ·	193	808/9	اران Առան	»	العباس بن زفر عدل	RIC, 365 (Ը)
19	Ար·	194	809/10	معدن باجنيس Մա'տան Պաճուճայս	الامين ابو موسى محمد Ալ-Ամին	عبيد	RIC, 245
20	Ար·	195	810/11	معدن باجنيس Մա'տան Պաճուճայս	»	عبيد	Արքուf, 279
21	Ար·	195	810/11	معدن باجنيس Մա'տան Պաճուճայս	»	داود صرد	RIC, 247
22	Ար·	211	826/7	مدينة اران Մատինէդ Առան	المأمون ابو جعفر عبدالله Ալ-Մա'մուն	عبد الاعلى بن احمد عبيد الله بن يحيى Ապտ Ալ-Ա'լա Պըն Ահմատ Ուպէյտ Ալլահ Պըն Եահեա	RIC, 263
23	Ոս·	241	855/6	دبيل Դուին	المتوكل ابو الفضل جعفر Ալ-Մութաուաffէլ		ANS, (Թ)
24	Ոս·	243	857/8	ارمينية Արմինիա	»		Ֆրեմի, 2119
25	Ար·	244	858/9	ارمينية Արմինիա	»		Արքուf, 339
26	Ոս·	246	860/1	ارمينية Ռուինիա	»		Սարրաֆ, 214

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՑԱՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՑԱՆԿԻՆ

Ա.– Հաւաքածոյ Ապտուլլահ Շուքր Ալ–Սարրաֆի, ուսիքուած Պաղտատի պետական թանգարանին – Տես պարբերագիրք المسكوكات ، عدد خاص — بغداد ١٩٦٩ Յետայսու՝ ՍԱՐՐԱՖ:

Բ.– Stanley Lane Poole, **The Coins of the Eastern Khaleefehs, in the British Museum**, London, 1875· Յետայսու՝ BMC.

Գ.– George C. Miles, **Rare Islamic Coins**, «The American Numismatic Society», New York, 1950· Յետայսու՝ RIC.

Դ.– Պըխ բառը ներկայիս ո՛չ գործածական, արաբ ցեղախումբերու բարբառին մէջ կը համապատասխանէր «կենաց» մաղթանքին, Ապրի՛–կեցցէ՛ իմաստով: Յաճախ կը հանդիպինք արաբական դրամներու վրայ, առանձին կամ կըրկնուած՝ Պըխ Պըխ ձեւերով:

Ե.– Ibrahim and Cevriye Artuk, **Istanbul Arkeoloji Muzeleri Teshirdeki Islami Sikkeler Katalogu**, Istanbul, 1971· Յետայսու՝ ԱՐԹՈՒՔ:

Զ.– Մայլզ որոշ վերապահութեամբ կը յիշէ այս դրամը, փողերանոցին անուան ընթերցումը կասկածի տակ դնելով:

Է.– Մուշեղեանի ցանկին մէջ, թիւ 98, այս դրամը նկարագրուած է այլ ձեւով, الامين محمد بن امير المؤمنين ام

(Ալ–Ամին Մուհամմէտ՝ որդին ուղղահաւատների տիրոջ, մայր·) դժբախտաբար ձեռքի տակ չունինք հեղինակին աղբիւրը: Սակայն «մայր» բառը առանձին իմաստ չունի մակագրութեան մէջ: Դրամը կը պատկանի Հարուն Ալ Ռաշիտի կնոջ եւ Ալ–Ամինի մօր՝ Զուպայտայինն, որ իր զաւկին՝ ձա'ֆարի անուամբ կը կոչուէր Ում ձա'ֆար (մայր ձա'ֆարի) ըստ արաբական ընկալեալ սովորութեան: Ան ուխտագնացութեան ձեռնարկեց Մեֆէէ 190–ին (805/6) եւ հաւանաբար իր վերադարձին, գահաժառանգ որդին՝ Ալ–Ամին, յուշադրական այս տիրհէմը հատանեց մօրը անուամբ: Տես՝ Եագուպի, էջեր 428, 433, 434:

Մեզի ծանօթ նմուշներուն թարգմանութիւնը պիտի ըլլար – (Մայր ձա'ֆարի··· հատանուած հրամանով հաւատացեալներու իշխան՝ Ալ–Ամին Մուհամմէտի):

Ը.– Հաւանաբար ամբողջական անունն էր Ալ–Ապպաս Պըն Զուֆար Ալ–Հիլալի العباس بن زفر الهلالي .

Թ.– **Annual Report of the American Numismatic Society**, 1968, p. 10·

SOME QUESTIONS REGARDING ARMENO-ARAB NUMISMATICS

BERJ SABBAGHIAN

(Summary)

In the last decades the Armenian numismatics is passing through a new period of revival, both in Armenia and abroad. In this field the question of the Arab coins, struck in «Armenia» district of the Arab Empire, or put into circulation there during the Ommayad and Abbàssid rule, has not been overlooked. With this respect the studies of Kh. Mousheghian, printed lately in «Lraber» (Yerevan, 1973, No. 12), and «Patma-Banassirakan Handess» (Yerevan, 1973, No. 4), may be regarded as a considerable contribution.

(In his article B. Sabbaghian, after appreciating Mousheghian's above mentioned studies, tries, in his turn, to tackle some problems of Armeno-Arab numismatics. The two main problem are:

1. The question of the mints of Arab coins in Armenia,
2. The reading of inscriptions of some Arab coins.

At the end of the article the author presents an additional list of Arab coins struck in the «Armenia» district of the Arab Empire).

Համառօտ ակնարկ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի շրջափակում գտնուող տապանաքարերի վրայ

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր Ջուղայի ազգային գերեզմանատունը, չուրջ չորս հարիւր տարուայ իր անցեալով, եւ աւելի քան 50 հազար տապանաքարերով ու 288,175 քառակ. մեթր տարածութեամբ, ներկայացնում է մի բացօթեայ թանգարան:

Այնտեղ թաղուած են հայ խոջաներ ու յայտնի վաճառականներ, հայ աչուղներ ու մատուռպահներ, հայ արհեստաւորներ ու արուեստաւորներ, առաջնորդներ ու հոգեւորականներ. կոյսեր ու մայրապետներ, նահատակներ, ինչպէս եւ հարիւրաւոր եւրոպացիներ, դեսպաններ ու քաղաքական գործիչներ:

Նոր Ջուղայի նոր ու վաւերական պատմութիւնը գրելու համար, անհրաժեշտ է ուսումնասիրել այս տապանաքարերի արձանագրութիւնները, որոնք իրենց մէջ պահում են գաղտնի անցեալը. իսկ նրանց տակ ննջում են Նոր Ջուղայի փառաւոր անցեալի պատմութիւնը կերտող յաւէտ անմոռաց անձնաւորութիւնները:

Ահա այս գաղտնի անցեալը երեւան բերելու համար, հայերից բացի, բազմաթիւ եւրոպացիներ իրենց հեռաւոր ազգակիցներին գտնելու յոյսով, փնտռտուքի են ելնում այս լուռ ու անխօս տապանաքարերի մէջ:

Անհրաժեշտ է աւելի երկար կանգ առնել Նոր Ջուղայի գերեզմանատան, կամ՝ ըստ տեղական արտայայտութեան, հանգստարանի վրայ, որ յոյս ունենք այլ անգամ առիթ կ՚ունենանք: Ներկայիս մեր խօսքը վերաբերում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի շրջափակում գտնուող տապանաքարերին:

Բացի ազգային եւ ընդհանրական այս գերեզմանատանից, որի մասին նշեցինք վերեւում, Նոր Ջուղայում գտնուող մէկ տասնըեակից աւելի եկեղեցիների շրջափակերում եւս կան հարիւրաւոր չիրխաններ, որոնք պատկանում են եկեղեցու հիմնադիրներին, նրանց ազգակիցներին, կամ՝ այդ թաղում յայտնի դէմքերին, նահատակներին եւ անգամ վրացի երեւելիներին(1):

Ինչպէս գերեզմանատան, այնպէս էլ եկեղեցիների ու Ամենափրկիչ Վանքի շրջափակերում գտնուող տապանաքարերից, մասամբ օգտուել են մեր պատմաբանները: Մովսէս Նազարի եւ այլ վաճառականների տապանաքարերի տուեալներից օգտուել են Նոր Ջուղայի պատմագիր Յարութիւն Տէր Յովհաննեանցը ու բանասէր Յարութիւն Քիւրտեանը: Աշուղների, երգահանների, հոգեւորականների ու այլ տապանաքարերի տուեալներից օգտուել են Արամ Երեմեանը, տողերիս հեղինակը, ու այլ բանասէրներ:

Արհեստի ու արուեստի, եւ այլ նման կարգի տապանաքարերից չուրջ 140-ը վերարտանկարելով մանրանկարների է վերածել Աբրահամ Գուրգէնեանը, որոնք այսօր մաս են կազմում Նոր Ջուղայի Թանգարանի նկարներին:

Եկեղեցիների շրջափակում գտնուող տապանաքարերի մէջ, առանձնապէս իր կարեւոր տեղն ունի Ս. Ամենափրկիչ վանքը, որոնց մասին, ինչքան ծանօթ է մեզ, ցարդ ընդհանուր մի ուսումնասիրութիւն կատարուած չէ:

Յոյս ունեմ որ այլ առիթով հնարաւոր կը լինի անդրադառնալ նաեւ Նոր Ջուղայի միւս եկեղեցիների մէջ գտնուող տապանաքարերին, որոնք եւս իրենց հերթին ունեն պատմական եւ ազգագրական արժէք:

Ամենափրկիչ Վանքի շրջափակում ներկայիս կան 62 տապանաքարեր, որոնց մէջ առանձին կարեւորութիւն են ներկայացնում Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդների չիրխանների արձանագրութիւնները:

---

1. Անցեալում, այս տապանաքարերից՝ որոնք կրում են հայերէն ու վրացերէն արձանագրութիւններ, օգտուել է վրացի գիտնական Դոկտ. Մագալի Թուդուխի:

Առաջնորդների տապանաքարերի, ինչպէս եւ միւսներից ո-մանց արձանագրութիւնները բերուած են Նոր Ջուղայի պատմութեան, ինչպէս եւ այլ մի քանի գրքերում, ու մամուլում տեղ գտած յօդուածներում: Միւսները մնում են գրեթէ անծանօթ:

Տապանաքարերը, ըստ իրենց արձանագրութեանց, կարելի է բաժանել երեք մասի.

1.— Հոգեւորականների,
2.— Աշխարհականների,
3.— Եւրոպացիների:

Այս երեք բաժիններն էլ ըստ էութեան բաժանւում են. հոգեւորականները՝ առաջնորդների եւ միաբանների, աշխարհականներն ու եւրոպացիները (դարձեալ աշխարհականները)՝ կիների եւ այրերի, ինչպէս նաեւ՝ նահատակուածների ու սովորական մահացուների:

Տապանաքարերը գտնւում են հետեւեալ մասերում.

1.— Եկեղեցու բեմի ներքնայարկում,
2.— Եկեղեցու գաւթում՝ հիւսիսային մուտքի մօտ,
3.— Զանգակատան չրջափակում, կամ՝ եկեղեցու արեւմտեան կողմում:

1.— Եկեղեցու բեմի ներքնայարկում գտնւում են երկու տապանաքարեր, որոնք պատկանում են երկու առաջնորդների: Ջուղայի առաջին տպարանի հիմնադիր Աստուածատուր կեսարացուն, եւ Վանքի տաճարը վերակառուցող Գաւիթ Եպիսկոպոսին:

2.— Եկեղեցու գաւթում կան տասը տապանաքարեր, որոնցից ութը պատկանում են հոգեւորականների (վեց առաջնորդ եւ երկու միաբան), իսկ երկուսը՝ ռուս հիւպատոսների:

3.— Զանգակատան չրջափակում գտնւում են 50 տապանաքարեր, որոնցից 14-ը՝ հոգեւորականների, 34-ը՝ աշխարհականների, եւ 2-ը առանց արձանագրութեան:

Բոլորի ընդհանուր պատկերն է՝ 24 հոգեւորական (11 առաջնորդ, 10 միաբան, 3 քահանայ), 36 աշխարհական (13 եւրոպացի, 5 կին), 2 անյայտ, գումար՝ 62:

Ստորեւ բերում ենք ամբողջական ցանկը, սկսելով եկեղեցու ներսից, տապանաքարերի հերթականութեամբ, ինչպէս որ նշանակուած են յատակագծում.

1· ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ՏԱՊԱՆԱԿԱՐԵՐ

	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Ծն. եւ մահուան թուական	Տապանաքարի չափ սմ.	Պաշտօն
1	Խաչատուր Վրդ· Կեսարացի	1590–1646	168×36	Առաջնորդ
2	Դաւիթ Եպիսկոպոս	–1683	192×54	»

2· ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՒԹՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ՏԱՊԱՆԱԿԱՐԵՐ

1	Եզնիկ Ծ· Վրդ· Երկարակեցեան	–1922		Հոգեւ· սպաննուած
2	Յովհաննէս Արբեպ· Սուրէնեան	1787–1848	158×46	Առաջնորդ
3	Յարութիւն Արբեպիսկոպոս	1751–1810	175×54	»
4	Աստուածատուր Եպիսկ· Ֆարհաբադցի	–1745	173×49	»
5	Թադէոս Արբեպս· Բէգնազարեան	1795–1863	186×65	»
6	Միխայէլ Ծ· Վրդ· Սկկերտցի	–1805	119×50	Միաբան
7	Մովսէս Եպիսկոպոս	–1725	275×92	Առաջնորդ
8	Դաւիթ (Բ·) Եպիսկոպոս	–1728	275×92	»
9	BORIS PREDBRAGENSKY (Բորիս Ալէքսանդովիչ Պրեօբրաժենսկի)	1870–1914	152×47	Ռուս փոխ հիւպատոս
10	ALEXANDRE DEKAVER	–1815	136×46	» » »

3· ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՇՐՋԱՓԱԿԻ ՏԱՊԱՆԱԿԱՐԵՐ

1	Վարդան Ա· Քհնյ· Վարդանեան	1870–1956	158×60	Քահանայ
2	Գարեգին Ա· Քհնյ· Կիրակոսեան	1881–1946	159×70	»

3	Կարապետ Ա. Քհնյ. Թումիկեան	1868–1957	157×60	»
4	Ղուկաս Քալանքար որդի Սուքիասի *	–1835	116×55	Աշխարհական
5	Գալուց Տէր Յովհաննիսեան *	–1825	122×41	Աշխարհական Ջուղայեցի
6	Սարալու դուստր Ամի Սարգսի *	–1712	182×52	» »
7	Աբրահամ Վարդապետ	–1837	146×57	Միաբան
8	Նազար Աղա Խալդարեից, որդի Խոջայ Սարհատի *	–1737	163×52	Վաճառական
9	Գրիգոր Աղա որդի Խոջայ Միհասեից Սէք Աղի *	1699–1746	190×46	
10	Սէք Աղա, որդի Խոջայ Միհասի *	–1712	204×46	
11	Ղազար (?) Վարդապետ	–1791	150×44	Միաբան
12	Կարապետ Արքեպիսկոպոս	–1853	156×41	Առաջնորդ
13	Անդրէաս Վրդ. Սարգսեան	–1855	125×42	Միաբան
14	Մկրտիչ Եպսկ. Թաւրիզեցի (Ն. Ջ. Թաղ)	–1787	160(?)×62	Առաջնորդ
15	Գէորգ Վարդապետ (գրութիւնը ջնջուած է)	1693–1768	185×62	»
16	(Արձանագրութիւն չունի)		160×45	
17	Ուռկէեց (?) Գրիգին դուստր եւ Տիկին Ջախաքունէից Սափար Աղի	–1677	190×56	Ժրաջան տիկին
18	Գէորգ (?) (Լեզուաբան եւ յայտնի վաճառական)			Վաճառական
19	Մարիամ Գէորգեան (թերեւս վերիվի կինը)	–1710	176×41	
20	Գոլչինէ (?) Աղին (?)	–1727	100×49	

(*) Աստղանիշ կրողները մարմար տապանաքարեր ունեն:

21	Վարդան	–1793	104×49	Վանքի մատանապետ
22	JOHN TAYLOR ESQ. M.D.	–1822	147×45	Բժիշկ, մեռած Շիրազ
23	JOHN A. DRFORD *	1850–1869	66×38	
24	GEO(RGE) MALCOLM ESQ.	1805–1826	114×36	Մեռած եազդ-խաստում
25	CHARLES DARNLEY STUART	1805–1826	134×37	» »
26	ANDREW JUKES ESQ. *	1778–1821	169×43	Պարսից Ծոցի բաղաքական գործակալ
27	STUART CUMMINC Mc DONALD	1867–1868	88×47	
28	FRED(RIC)K W(ILLIA)M WADDELL *	1871–1871	80×46	(Միամեայ)
29	Գորգին (?) սպասաւոր Թիֆլիզեցի խոսրով խանի	–1823	157×56	Սպասաւոր
30	CLAUDIUS JAMES	–1821	136×44	Մեռած Շիրազ
31	MAJOR ARTHER (ST)OCK	1776–1831	102×40	
32	JOHSTANLE YHUGHES (TELEGR.)	1843–1871	91×41	Հեռագրիչ
33	Շահնազար Յովհաննէս Թահմազեան Սւարանցի	1842–1861	122×40	Նահատակուած
34	EVELINE GORDON BRUC(E) *	1872–1873	100×46	
35	Աւետիք Կ. Զօրաքեանց	1842–1925	154×53	Հայկաբան վարժապետ եւ վանքի ատենադպիր
36	Յաւրէ (?) Բագեբ-ցի Ոհանի որդի	–1747	58×38	Նահատակ
37	Կատան դուստր Տէր Մարգարի	–1771	83×38	


38	Ղազար Վարդապետ	–1814	116×32	Միաբան
39	Ստեփանոս Վարդապետ Համադանեցի	–1790(?)	130×40	»
40	Ստեփանոս Վարդապետ	–1759	92×44	»
41	Վաւվաւէ Գ. Քահանեան	1845–1935	192×70	Հիմնադիր եւ բարեբարուհի Գէորգ Քահանեան դպրոցի, Ն. Ջ.
42	FREDRICK KNOX HARRIS H.B.M'S*	1889–1917	116×80	Փոխ հիւպատոս
43	CATHERINE MARY IRONSID M.D.	1872–1921	190×86	
44	Գէորգ Եպիսկոպոս		180×48	Միաբան
45	Յովհաննէս Եպիսկ. Էջմիածնեցի	–1817	200×54	Առաջնորդ
46	Խոջայ Յովհաննէս Մարգար Ծաւէլեցի(2)	1610–1650	200×61	Բարերար
47	Մարիանէ Ջամալեանց	–1710(?)	194×42	Զանգակատան կառուցողի մայրը
48	(Անընթեռնելի)		203×50	
49	Ռոստոմխան Էնակոլոփեանց	1822–1843	197×79	Նահատակուած
50	Մարգարէ որդի Դիլաբէնց Ստեփանոսի	1675–1700	188×50	

2. Այս տապանաքարը 1968 թուին բերուել է Ս. Յովհաննէս Ծաւէլեցց աւերուած եկեղեցուց:




Նկարի վերեւում մի խաչքար, որ գտնւում է Խաչատուր Կեսարացու եւ Դաւիթ Եպիսկոպոսի շիրիմների մօտ: Ներքեւում՝ զոյգ առաջնորդների տապանաքարերը:

Մանրանկար՝ ՈՒԲԱՀԱՄ ԳՈՒՐԳԷՆԵԱՆԻ



վաճիի գանգակատունը՝ շրջափակի տապանաքարերով

(Մայր տաճարը)



Վաճքի եկեղեցու գավիթը

Անցեալում՝ վանքի գլխաւոր մուտքի դիմացի բակում կային մի վրացու եւ մի քանի այլ տապանաքարեր, որոնք թերեւս բերուել էին աւերուած եկեղեցիներից եւ օգտագործուել գետինը սալայատակելու համար, որոնք վերջին տարիների նորոգութիւնների ժամանակ, մնացին խճաղիւսների տակ(3)։

Տապանաքարերի մի մասի արձանագրութիւնները նեն բանաստեղծական ձեւ եւ հետաքրքիր բովանդակութիւն, որոնց բոլորի արձանագրութիւնները լաւ կը լինէր եթէ կարողանայինք բերել այստեղ, բայց հանդէսի սուղ էջերը զրանցով զբաղեցնելը տեղին չգտնելով, այստեղ զրի ենք առնում մի քանի նմուշներ միայն, առաջնորդներին, աշխարհականներին եւ եւրոպացիներին վերաբերող տապանաքարերի արձանագրութիւններից։

1. *ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՍԱՐԱՑԻ*

«Ի հանգստի աստ ամփոփի,
Մաճուր մարմին վարդապետի,
Խաչատրոյ Սրբազանի,
Հետեւողի Տեառն Յիսուսի,
Որ էր տեղաւ Կեսարացի.
Գործով սուրբ հեզ եւ արի,
Բարձեալ յուս զլուծ Քրիստոսի
Առաջնորդէ նորին հօտի,
Երեսնամեայ այս գործ յանձնի,
Սմա նստիլ յայսմ աթոռի,
Կրէ յանձին զվարս անմարմնի,
Մնա մինչեւ յիսուն վեցի,
Յաղցաւորացս նա զատի,
Հազար Ղ (90) եւ ե (5) թուի»։

2. *ԴԱԻԻԹ ԱՌԱՋՆՈՐԴ*

«Աստ կայ եղեալ գանձ ըղձալի,
Զնշխար ումեմն սրբազանի,

---

3. Սրանցից վրացերէնն ունէր հետեւեալ արձանագրութիւնը՝

«Տապան Թլփիզցի
Գ(ԱՍ(?))պարի որդի
Գօրգից Մուրատին
Թվ. ՌՃԿԵ (1716)»։

Քաջ բաբունոյ Տեառն Դաւթի,
Շօշ քաղաքի գլուխ արհի,
Որ էր սնեալ ի սոյն գեղջի,
Բնիկ ազգաւ Ջուղայիցի,
Առաջնորդեաց յայսմ նահանգի,
Լ (30) ամօք Ը (8) աւելի,
Ռճ (1100) հայոց թվի,
ԼԲ (32) եւս աւելի (1683),
Յորում ամս առ Տէր փոխի,
Նոյեմբերի Դ (4)»(4):

3. *ՎԱՌՎԱՌԷ Գ. ՔԱՆԱՆԵԱՆ*

«ՇԻՐԻՄ
ԱԶՆՈՒԱՓԱՑԼ
Տ. ՎԱՌՎԱՌԷ
Գ. ՔԱՆԱՆԵԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐԻ
ԳԷՈՐԳ
ՔԱՆԱՆԵԱՆ
ԴՊՐՈՑԻ
ՆՈՐ ՋՈՒՂԱՑՈՒ
ՀԱՆԳ Ի 23 ԴԵԿՏ.
1935 ԱՄԻ
Ի ՀԱՍԱԿԻ
90 ԱՄԱՑ»:

4. *ՌՈՍՏՈՄԽԱՆ ԷՆԱԿՕԼՕՓԵԱՆՑ*

«ՀԱՆԳԻՍՏ
Պայազատ Ռոստոմխանի
Սամը Դօվլէ Սողոմոնխանեան
Էնակօլօփեանց
Ի 17 Հոկտ. 1843
Ի հասակի 21 ամաց,

---

4. Նոր Ջուղայի պատմագիրը, տողերի սխալ ընթերցման հետեւանքով տեղի է տուել սխալութիւններին, որը սրբագրում ենք այստեղ: (Տես՝ Յարութիւն Թ. Տէր Յովհաննեանց, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, Բ. հատ., Նոր Ջուղա, 1881, էջ 29):

Ջերմ ի հաւատ Քրիստոսի,
Ատեաց զշուք աշխարհի,
Արք զմահ լեալ նահատակ,
Թողլով զօրհնեալ յիշատակ»(5):

5. **JOHN TAYLOR**

SACRED TO THE MEMORY OF
JOHN TAYLOR ESQ. M.D.
OF THE BOMBAY MEDICAL
ESTABLISHMENT
WHO DEPARTED THIS LIFE
AT SHIRAZ THE 5 DEC. 1822
AND LIES HERE IN TERRED

6. **FREDRICK KNOX HARRIS**

SACRED
TO THE MEMORY OF
FREDRICK KNOX HARRIS
H.B.M.'S VICE CONSUL
AT ISFAHAN
BORN DECEMBER 21, 1889
DIED APRIL 20, 1917
. . . . . .
R. I. P.

7. *ԱՒԵՏԻՔ Կ. ՋՕՐԱՔԵԱՆՑ*

«Մահարձան
Յիշատակի
Պարոն
Աւետիքի Կ. Զօրաքեանց
Հայկաբան վարժապետին
Եւ բազմաշխատ

---

5. Ունի կապտագոյն մեծ տապանաքար, որի վրայ ազուցուած է փոքր մարմար եւ վրան գրուած արձանագրութիւնը: Քարի կողքերին ունի բարձրաքանդակ գինուորական շարքեր եւ դէմքը նուրբ շղարշով ծածկուած կնոջ եւ ձիաւոր իշխանի ու հետեւորդների գեղեցիկ քանդակներ:

Ատենադպրի վաճուցս
Որ ի հասակի 82 ամաց
Հանգեաւ 7 Յունվարի
1925



Հաւատարիմ պաշտօնեայդ,
Մայրավանիս փրկչական,
Զամս յիսուն ճգնեցար,
Յերկս Տոյին պաշտամանն,
Ի ծոց վանուցս ամփոփեալ,
Մարմնոյդ աճիւն երկրաւոր,
Արժանապէս յարգեցաւ,
Անխոնջ վաստակդ բեղմնաւոր,
Գործովասիրտ ծնողիդ,
Տրտմեալ դստերդ եւ որդիդ,
Ողբան զմահդ վշտալի,
Յոյժ սիրեցեալ հայրիկիդ»։

———o———

8· *ԿԱՏԱՆ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԻ*

«Այս է տապանս
Տէր Մարգարի դուստր
Կատանիկ
Թվն· ՌՆՋ (1771) Ադար Ը (8)»։

Տապանաքարերից ոմանց գրութիւնը ոտքի տակ մաշուել կամ անձրեւի ու ձիւնի հետեւանքով կոտրտուել եւ դարձել են անընթեռնելի, նրանց արձանագրութեանց պահպանումով դէթ աշխատենք փրկել յաւիտենական կորուստից։

THE TOMBSTONES IN THE COURTYARD OF NEW JULFA'S ALL-SAVIOUR MONASTERY

L.K. MINASSIAN

(Summary)

To this day, there exist in the courtyard of New Julfa's All-Saviour monastery 62 tombstones. Of these, 24 belong to clergymen (11 prelates, 10 friars, and 3 priests), 36 belong to laymen (of which 13 are Europeans: Russian and English proconsules, politicians, doctors, etc.), and two are unknown. The inscriptions on these tombstones are interesting and helpful for the study of the history of New Julfa between the 17th and 19th centuries. Of special significance are the inscriptions on the gravestones of the prelates of the Irano-Indian diocese.

(At the end of this article, the author presents eight of those inscriptions, including the one which belongs to Khachatour Kessaratsi (1590-1646), the founder of New Julfa's first printing press).

Միջնադարեան երեք անտիպ տաղեր

ԱԻԵՏԻՍ Գ. ՍԱՆՃԵԱՆ

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պաշտօնաթերթ «Սիոն»ի 1969 *թուականի Յուլիս–Օգոստոսի համարին մէջ* (էջ 341–347) *մանրամասնօրէն նկարագրած էի ձեռագիր Տաղարան մը, որ ներկայիս մաս կը կազմէ Լոս Անճելոսի Կալիֆորնիոյ Համալսարանի* (University of California, Los Angeles) *հայագիտական նիւթերու հարուստ ղրադարանին։*

Ձեռագրիս նկարագրութեան առնչութեամբ ըրած էի հետեւեալ հաւաստումը. «Տաղարանին գլխաւոր արժէքը կը կազմէ անոր բովանդակութիւնը։ Այստեղ ներկայացուած են ո՛չ միայն միջնադարեան տաղասացներու ծանօթ երկեր, այլ նաեւ այնպիսիներ, որոնք, ըստ երեւոյթի, ցարդ անծանօթ մնացած են։ Այս յօդուածով՝ մեր նպատակը չէ Տաղարանիս մէջ գտնուող տաղերը առարկայ դարձնել քննական ուսումնասիրութեան՝ զանոնք բաղդատելով տպագիր եւ ձեռագրային աղբիւրներու հետ։ Առ այժմ՝ ստորեւ կու տանք Տաղարանիս բովանդակութիւնը, այն համոզումով որ ան չահեկան պիտի ըլլայ բոլոր անոնց, որոնք կը չահագրգռուին միջնադարեան հայ բանահիւսութիւնով...»։

Մանրազնին քննութենէ ետք, կարելի եղած է ստուգել, թէ Տաղարանիս մէջ կը գտնուին միջնադարեան երեք տաղեր, որոնք ցարդ անյայտ մնացած են հայ բանասիրութեան. առաջինը յօրինուած է Ֆրիկի, երկրորդը՝ Ստեփաննէ Բաղիշեցիի, եւ երրորդը՝ Յովհաննէս Թլկուրանցիի կողմէ։ Նախքան յիշեալ տաղերու բնագիրներու հրատարակութիւնը, անհրաժեշտ կը նկատենք այստեղ ամփոփ տեղեկութիւններ տալ Տաղարանիս մասին։

Ձեռագիրը կը բաղկանայ երկու մասերէ, երկուքն ալ գրուած թուղթի վրայ, որոնք նախապէս երկու անջատ տաղարաններ եղած

են եւ հետագային իրարու միացուած եւ միասնաբար կազմուած։ Այս պարագան կը հաստատուի անով, որ սկիզբի 93 թուղթերը կը ներկայացնեն ամբողջական ձեռագիր մը։ Վերջին էջին վրայ կայ պլխաւոր յիշատակարանին սկիզբը, որուն չարունակութիւնը դըժբախտաբար կը պակսի՝ թուղթ ինկած ըլլալուն պատճառով։ Ահա սակի յիշատակարանին փրկուած մասը. «Փառք ամենասուրբ երրորդութեանն, հօր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ. Ամէն։ Որ եւս կարդուիցն տակաւ անձին իմոյ, Մարտարէ սուտանուն կրօնաւորի, որ պրեցի զսա ի վայելումն անձին իմոյ, եւ յիշատակ հոգւոյ իմոյ, եւ ծնօղաց իմոց՝ Նուրադնին եւ Շահսօլթանին, եւ եղբարց իմոց՝ Շահսուարին, Գալուստին եւ Մուղարաչխին, եւ եղբօր որդոցն՝ Լ-նիա / / / ...» (թղ. 93բ)։

Ձեռագրին երկրորդ մասը (թղ. 94ա–114բ) գրուած է տարբեր գրիչի մը ձեռքով, տարբեր օրակի թուղթի վրայ։ Անոր առաջին տաղին սկզբնաւորութիւնը կը պակսի, եւ յաջորդ տաղերէն եւս պանագան թուղթեր ինկած են։ Վերջին թերթին (թղ. 114ա) վրայ գրուած յիշատակարանին համաձայն, Հայոց Ռ (= ՌՌ. Ե. 1551) թուականին այս ձեռագիրը կը պատկանէր Դաւիթ անունով վարդապետի մը, որ նոյն տարուան ընթացքին զայն նուիրած է «սիրասնունդ եւ հոգեւոր որդոյն իմոյ՝ Լսանդօյ անուն պատանեկին, որ է որդի Ամրամ Վօյթին...» Այս յիշատակարանէն կարելի է հետեւցնել, թէ ձեռագրին այս մասը ընդօրինակուած է ՌՌ. Ե. 1551 թուականէն առաջ։

Տաղարանը ամբողջութեամբ կը բաղկանայ 114 թուղթէ. մեծութիւնն է 18×13 սմ., գրչութիւնը՝ բոլորգիր, գրուած միասիւն, իւրաքանչիւր էջի վրայ 23 տողով։ Մանրանկարչական արուեստի տեսակէտէն դիտելով, ձեռագիրը զուրկ է դեղարուեստական արժէքէ։ Փոքրաքանակ նկարապարզումը կը բաղկանայ չորս փոքրիկ խորաններէ, որոնք զետեղուած են առանձին հատուածներու սկզբնաւորութեան (թղ. 1ա, 28ա, 68բ եւ 108ա), ինչպէս նաեւ միջեայ մանրանկարէ մը (թղ. 27բ), որ կը ներկայացնէ Յովասափ թագաւորը՝ նկարուած մի ոմն Սարգիս սարկաւագի կողմէ։

Վերեւ արուած տեղեկութիւններէն կը հետեւցուի, թէ ատոյգ տուեալներ կը պակսին ձեռագրին առաջին մասին գրչութեան վայրին եւ թուականին վերաբերեալ։ Ձեռագրին երկրորդ մասին կապակցութեամբ, անյայտ կը մնան ո՛չ միայն միեւնոյն տուեալները, այլ նաեւ գրիչին եւ պատուիրատուին անունները։

«Սիոն»ի մէջ մեր հրատարակած յօդուածին մէջ յայտնած էինք այն կարծիքը, թէ ձեռագրին առաջին եւ գլխաւոր մասը «ըն-

դօրինակուած է հաւանաբար ԺԵ. դարու երկրորդ կէսին. իսկ երկրորդ մասը Ռ. Ե. 1551 թուականէն առաջ»: Ներկայիս, սակայն, մեր հետազօտութիւնները կ'առաջնորդեն տարբեր եզրակացութիւններու:

Երուսաղէմի թիւ 473 ձեռագիրը (տես՝ Նորայր Եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. հատոր, Երուսաղէմ, 1967, էջ 460–466), որ «Պատմութիւն Աղեքսանդրի» ձեռագիր մըն է, գրուած է Վարագայ վանքին մէջ Հայոց ՋՁԵ (= Ռ. Ե. 1536) թուականին, Մարգարէ Աբեղայ Արճիշեցիի ձեռքով: Այս մատեանին մանրանկարները գործն են Աղթամարցի Գրիգորիս Ա. կաթողիկոսի (1512–1544): Ըստ Նորայր Եպս.ի նկարագրութեան, ձեռագրիս բազմաթիւ յիշատակարաններէն մէկուն մէջ կը կարդանք. «Զմարգարէ անյիշելի գրիչս յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ Աստուած. ողորմի ասացէ՛ք նաեւ ծնօղաց իմոց, Նուրադնին եւ Շահսաւրթանին, եւ եղբարց իմոց, Շահսուարին, Գուլաղին, եւ Խուդաբաղչին» (թղ. 60ա): Նոյն ձեռագրին ուրիշ մէկ յիշատակագրութեան մէջ, Մարգարէն կը գրէ. «Հազար բերան փառք Աստուծոյ, որ այս ԺԴ տարի է որ գրիս կու գրեմ...» (թղ. 55բ–56ա): Նկատելով որ «Պատմութիւն Աղեքսանդրի» այս ձեռագիրը գրուած է 1536 թուականին, ուրեմն պէտք է հետեւցնել, որ Մարգարէն գրչութեան ասպարէզին ձեռնարկած է 1522 թուականին:

Հ. Ներսէս Վ. Ակինեանի Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի. կեանքն եւ գործունէութիւնը (Վիեննա, Մխիթ. տպարան, 1958) մէնագրութեան մէջ յաճախակի ակնարկութիւններ կան մխեւնոյն Մարգարէ Արճիշեցի գրիչին ձեռքով ընդօրինակուած զանազան ձեռագիրներու: 1526 թ.ին Մարգարէն կը գտնենք Խառաբաստայ եւ Վարագայ վանքերուն մէջ, ուր կ'ընդօրինակէ «Աղեքսանդրի Վարք»ին ձեռագիր մը (տես՝ Անդ, էջ լգ եւ կը). 1534 թ.ին Սուխարայ (որ մէկ տարբեր անունն է Խառաբաստայի) վանքին մէջ Գրիգոր Աղթամարցի կաթողիկոսին համար կը գրէ «Մաշտոցարան» մը (տես՝ Անդ, էջ լթ–լե եւ դէ). իսկ 1536 թ.ին գայն դարձեալ կը գտնենք Վարագայ վանքը, ուր կը ձեռնարկէ երկրորդ անգամ օրինակել «Աղեքսանդրի Վարք»ը (տես՝ Անդ, էջ խգ եւ խզ):

Տարակոյս չկայ, ուրեմն, թէ յիշեալ Մարգարէ Արճիշեցի գրիչը նոյնինքն մեր Տաղարանի գրիչ Մարգարէն է: Դարձեալ ստոյգ է, որ Մարգարէն այս Տաղարանը գրած է ոչ կանուխ քան 1522 թուականը, երբ՝ ըստ իր հաւաստիացումին՝ ան սկսած է ձեռագիրներ արտագրել: Եւ վերջապէս, կարելի է եզրակացնել, թէ մեր Տաղարանի առաջին մասը գրուած է Վասպուրականի նահանգին մէջ

պանուղ Խառաբաստայ (= Սուխարայ) կամ Վարագայ վանքը, ո-րոնք եղած են Մարգարէին գրչագրական գործունէութեան վայրերը։

Տաղարանիս երկրորդ մասի գրչութեան ժամանակի եւ վայ-րի, ինչպէս նաեւ գրիչի եւ պատուիրատուի վերաբերմամբ, ներկա-յիս հնարաւոր չէ որեւէ ենթադրութիւններ ընել՝ ձեռագրին մէջ տուեալներու չգոյութեան պատճառով։ Սոյպէ է միայն, որ 1551 թուականին ան պատկանած է Դաւիթ վարդապետի մը, որ մեծ-նայն տարուան ընթացքին զայն նուիրած է Էսանդօյ պատանեկին։ Ուրեմն, ձեռագիրը պէտք է գրուած ըլլայ 1551 թուականէն առաջ։

Համալսարանիս պատկանող Տաղարանին մէջ կը գտնուին քսանեւինը տաղեր։ Առնցմէ քսանեւվեցը յօրինուած են միջնադար-եան տասը ծանօթ բանաստեղծներու կողմէ, իսկ երեքին հեղինակ-ները անյայտ են։ Ստորեւ կու տանք տաղերուն սկզբնատողերը՝ հե-ղինակներու համաձայն։

Ֆրիկէն (*վեց տաղ*)։

1. *Թղ։ 59բ–61ա։ «Ա՛ չարխ, երբ ծռիս մարդոյն...»* (*Հմմտ։ Տիրայր Արքեպս։, Ֆրիկ Դիւան, Նիւ Եորք, 1952, էջ 371–378։ Մ։ Մկրեան եւ Ե։ Թորոսեան, Ֆրիկ–Բանաստեղծութիւններ, Երեւան 1941, էջ 216–224*)։
2. *Թղ։ 61ա–62բ։ «Մարդուն որ տալեղն ու բուրճն ի ֆալաքըն չէ ըղորդած...»* (*Հմմտ։ Տիրայր Արքեպս։, Անդ, էջ 383–390։ Մկրեան եւ Թորոսեան, Անդ, էջ 225–229*)։
3. *Թղ։ 62բ–63ա։ «Պատգամն որ երեւ Աստուած Մովսիսի...* (*Հմմտ։ Տիրայր Արքեպս։, Անդ, էջ 452–458։ Մկրեան եւ Թո-րոսեան, Անդ, էջ 192–198*)։
4. *Թղ։ 63ա–63բ։ «Ի սուրբ սեղանուդն վերայ քան զաղուորն այլ իրք չըպէնեն...»* (*Հմմտ։ Տիրայր Արքեպս։, Անդ, էջ 354*)։
5. *Թղ։ 87բ–88բ։ «Տէրըն գիս պատուեաց դիմօք, պատուական պայծառ պատկերաւք...»* (*Անտիպ*)։
6. *Թղ։ 88բ–89ա։ «Բանն որ յառաջ քան զյաւիտեանս...* (*Հմմտ։ Տիրայր Արքեպս։, Անդ, էջ 332–333։ Մկրեան եւ Թորոսեան, Անդ, էջ 118–119*)։

Առաքել Բաղիշեացիէն (*չորս տաղ*)։

7. *Թղ։ 28ա–57ա։* Տաղ Յովասափու։ *«Ցորժամ հայրն երկնա-ւոր յերկիր հաճեցաւ...»* (*Հմմտ։ Արշալոյս Ղազինեան, Առա-քել Բաղիշեցի, Երեւան, 1971, էջ 238–327*)։
8. *Թղ։ 58բ–59բ։ «Խանդակաթ սիրով, խանդակաթ սիրով...»* (*Անտիպ*)։

9. Թղ. 70ա–72բ. «Ականջ դըրէ՛ք բանիս՝ որ պատուական է...» (Հմմտ. Ղազինեան, Անդ, էջ 212–221):
10. Թղ. 94ա–107բ. Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. (*Այս չափածոյ պատմական երկը տակաւին չէ հրատարակուած. բնագիրին ծանօթ ձեռագիրներուն մասին տես՝ Յ. Ս. Անասեան, Հայկական Մատենագիտութիւն, Հատոր Ա., Երեւան, 1959, սիւնակ 1108–1109: Մեր Տաղարանի բնագիրին սկիզբը եւ վերջը, ինչպէս նաեւ մի քանի հատուածներու մէջէն թուղթեր լինկած են*):

Յովհաննէս Թլկուրանցիէն (*երեք տաղ*).

11. Թղ. 1ա–27ա. Արարածոց Մեկնութիւն. «*Սկըսաւղն է ըսկիզբն սկըզբան...*» (Հմմտ. *Նորայր Եպս. Ծովական* (Պողարեան), (Տես) Յովհաննէս Թլկուրանցի – Տաղագիրք, *Երուսաղէմ*, 1958, էջ 75–110):
12. Թղ. 57բ–58բ. «*Աստուած քարոզեաց եւ խրատ եառւր...*» (*Անտիպ*):
13. Թղ. 65բ–66բ. «*Ո՛վ մահ, քանի զքեզ յիշեմ...*» (Հմմտ. *Ծովական*, Անդ, էջ 38–39. Էմմանուէլ Պիլոզեան, Յովհաննէս Թլկուրանցի – Տաղեր, *Երեւան*, 1960, էջ 173–177):

Մկրտիչ Նաղաշէն (*երեք տաղ*).

14. Թղ. 66բ–67բ. «*Անձն իմ, քեզ վա՛յ հազար բերան, թէ խոով կենաս կամ ոխ պահես...*» (Հմմտ. *Էդուարդ Մոնզկարեան*, Մկրտիչ Նաղաշ, *Երեւան*, 1965, էջ 120–122):
15. Թղ. 67բ–68բ. «*Ի՞նչ չահ է քո զուր դատիլդ, երբ յօտար յերկիր տի տանին...*» (Հմմտ. *Մոնզկարեան*, Անդ, էջ 127–128):
16. Թղ. 68բ–70ա. «*Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեան...*» (Հմմտ. *Մոնզկարեան*, Անդ, էջ 168–176):

Խաչատուր Կեչառեցիէն (*երկու տաղ*).

17. Թղ. 74բ–75բ. «*Այս կեանքս է յերազ նըման, եւ խաբող անզերծ յանդիման...*» (Հմմտ. *Մ. Թ. Ամդալբեգեան*, Խաչատուր Կեչառեցի, *Երեւան*, 1958, էջ 147–149):
18. Թղ. 75բ–78բ. «*Թէ մարդ ես եւ մխոս ունիս...*» (Հմմտ. *Ամդալբեգեան*, Անդ, էջ 150–151):

Յովհաննէս Երզնկացիէն (*մէկ տաղ*).

19. Թղ. 113ա–114ա. Տաղ Ադամայ. («*Մեր Տէրն է դրախտն ե-*

բեկ...») (Հմմտ. Արմենուհի Սրապեան, Հովհաննէս Երզնկացի, Երեւան, 1958, էջ 224–227):

Ներսէս Շնորհալիէն (մէկ տաղ).

20. Թղ. 108ա–112ա. «Աւրհնեալ անուն անճառ Աստուծոյ...»:

Թորոս (Մշեցիէն ?) (չորս տաղ).

21. Թղ. 78բ–83ա. «Ցորժամ տարերքըն դըղըրդին, երկինք ւ երկիր խոնարհանան...»:

22. Թղ. 83ա–84բ. «Զեզ ծանուցեմ, եղբայր, լաւ որ լինելոց է յետ նեռանն...»:

23. Թղ. 84բ–86ա. «Ազատեղացայ խաւար մեղօք քան զկին պոռնիկն Ագխոս...»:

24. Թղ. 86ա–87բ. «Ի յետ ստեղծմանն արարածոց, որ պոյացոյց զայս ամենայն...»:

Զաքարիայ երէցէն (մէկ տաղ).

25. Թղ. 89բ–91բ. «Ի քէն Տէր հայցեմ հայր զբժական...»:

Արտամետացիէն (մէկ տաղ).

26. Թղ. 57ա–57բ. «Վայրի հաւիկ մ'էր բռնած քերած...»:

Բացի վերոյիշեալներէն, Տաղարանիս մէջ կան նաեւ անծանօթ հեղինակներու կողմէ յօրինուած հետեւեալ երեք տաղերը.

27. Թղ. 72բ–74բ. «Վա՛յ էն աւուրն որ ես եղայ...»:

28. Թղ. 91բ–92բ. «Ցորժամ Ադամ ստեղծեցաւ զերդ զառեգակն էր...»:

29. Թղ. 93ա–93բ. «Աւրհնութիւն անճառ չնորհաց Տէր...»:



Ցրիկի բանաստեղծութիւններուն առաջին ժողովածուն հրատարակուած է Երեւան, 1941 թ.ին, աշխատակցութեամբ Մ. Մկըրեանի եւ Ե. Թորոսեանի: Այս ժողովածուն, որ կը կրէ Ցրիկ–Բանաստեղծութիւններ վերնագիրը, կը բովանդակէ տաղաոստին կողմէ յօրինուած քառասունեւմէկ քերթուածներ: Հատորը հրատարակող պիտանակաները կը հաւաստեն, թէ «Ցրիկի ստեղծագործութիւնները այս ժողովածուն կազմել ենք նրա տպագրուած եւ զանազան ձեռագրերից հանուած՝ մինչ այժմ անտիպ բանաստեղծութիւններից: Անտիպ բանաստեղծութիւնները մեծ մասամբ արտասահմանեան թանգարաններու ձեռագրերից հաւաքել եւ գրի է առել իրենց

տարբերակների հետ եւ տարբերութիւնների համեմատութեամբ՝ բանասէր Տիրայրը, իսկ մի քանիսի տարբերակները Հայկ. ՍՍՌ Մատենադարանի ձեռագրերից յայտարերել է Ե. Թորոսեանը: Այս հրատարակութեան մէջ մտած քառասուներկու (պէտք է ըլլայ քառասունմէկ, Ա. Գ. Ս.) բանաստեղծութիւններից երեսունհինգի տեքստը վերցուած է Օքսֆորդի համալսարանի գրադարանի Mus. Arm. (հայկական բաժնի) No. 16 ձեռագրից, իսկ մնացածները՝ այլ ձեռագրերից, պարբերականներից եւ ժողովածուներից...»: (Տես՝ Մկրեան եւ Թորոսեան, Ա.նդ., էջ 23):

Ֆրիկի երկերուն աւելի ընդարձակ եւ վերակազմեալ աւելի արժէքաւոր ժողովածուն, Ֆրիկ Դիւանի վերնագրով, հրատարակած է վերոյիշեալ Տիրայր Ազբեպս.ը 1952 թ.ին, ի Նիւ Եորք: Այս ժողովածուին մէջ արուած են Ֆրիկի վաթսուն տաղերը:

Ինչպէս վերեւ տեսանք, Ֆրիկի ստեղծագործութեանց յիշեալ երկու ժողովածուներուն մէջ հրատարակուած են մեր Տաղարանին մէջ պահուող Ֆրիկի վից տաղերէն հինգը: Վեցերորդ տաղը, որ մեր ձեռագրին մէջ (թղ. 87բ–88բ) արուած է որպէս «Ողբ ասացեալ ի Ֆրկայ», անյայտ քերթուած մըն է: Հետեւաբար, առաջին անգամ ըլլալով գայն ստորեւ կը հրատարակենք՝ առանց որեւէ փոփոխութեան:

ՈՂԲ ԱՍԱՑԵԱԼ Ի ՖՐԿԱՑ

Տէրըն դիս պատուեաց դիմօք,
Պատուական պայծառ պատկերաւք.
Ես զայն աղտեղի տըղմաւք,
Թաւալեալ արեամբ չաղախաւք:

Ի չարն եմ արձակ մըտօք,
Զեմ զըղջալ ւ ոչ լալ արտասւօք.
Զինչ նաւ ծըփեցայ ալեաւք,
Փոթորկեալ բըքաբեր հողմաւք:

Ի ծով աչխարհիս կոծովք,
Տարբերիմ անդերձ մըրըրկօք.
Ի խորս անդընդոց մեղօք,
Ընկըղմայ նաւօք բեկելաւք:

Մարմինս խոցոտեալ վիրօք,
Զարաչար մեղաց խաբանօք.

Հոգիս սեւացեալ մեղօք,
Թչնամոյն խաբեալ պատրանօք։

Զլապտերն որ առի իւղով,
Շիջուցի չարեացըս գործօք։
Զպայծառ պատմուճանն լուսով,
Մերկացայ զպիր խորհըրդովք։

Ըզլոյսըն կենաց յուսով,
Փոխեցի մութըն խաւարօք։
Բժիշկըն կենաց դեղօք,
Զիս կոչէ ւ ես մեռնիմ խոցօք։

Զինչ քարբի օձըն թունօք,
Սրցեցի զականջըս տըտնօք։
Թչնամին հազար չարեաւք,
Զիս դերի վարեաց տանջանաւք։

Լացէ՛ք զիս ամէնքդ ողբօք,
Որ չկացի աւրիկ մ՚աւրինօք։
Ոչ մեղայ ասի կամօք,
Ոչ լացի կաթիկ մ՚արտասուաւք։

Առաքել Բաղիշեցին ծանօթ է միջնադարեան հայ մատենագրութեան մէջ որպէս քանաստեղծ եւ մատենագիր, երաժիշտ եւ մանկավարժ, վարդապետ և եկեղեցական գործիչ։ Անոր չափածոյ և արձակ ստեղծագործութիւնները ձեռագիր մատեաններուն մէջ կը պահուին բազմաթիւ ընդօրինակութիւններով։ Երեւանի Մատենադարանի դիտաշխատողներէն բանասէր Ց. Ս. Ախտահանը Առաքել Բաղիշեցիի գործերուն վրայէ լրիւ ցանկը տուած է իր բարձրարժէք Հայկական Մատենագիտութիւն (Հատոր Ա., Երեւան, 1959, սիւնակ 1106–1143) աշխատասիրութեան մէջ։ Եւ վերջապէս, 1971 թ.ին Երեւանի մէջ հրատարակուած է Արշալոյս Ղազինեանի Առաքել Բաղիշեցի վերնագրով մենագրութիւնը, որ նուիրուած է Բաղիշեցիի կեանքին եւ ստեղծագործութեան։ Գիրքին մէջ տրուած են Բաղիշեցիի չափածոյ գործերէն միայն մի քանիին քննական բնագիրները։ (Ի դէպ՝ պէտք է յիշել, որ Առաքել Բաղիշեցիի երկերէն ոմանք, յատկապէս Կոստանդնուպոլսոյ անկման նուիրուած Ողբը, թարգմանուած են ֆրանսերէն, ռուսերէն եւ անգլերէն լեզուներով։)

Անասեանի վերոյիշեալ աշխատութիւնը կը ներկայացնէ Առաքել Բաղիշեցիի երկերուն դրեթէ լրիւ ցանկը՝ հիմնուած մատենադրական եւ ձեռագրական աղբիւրներուն վրայ։ Ինչպէս Աբշալոյս Ղազինեանի հրատարակած բնագիրներուն, նոյնպէս Անասեանի ցանկին մէջ ո՛չ մէկ ակնարկութիւն կայ մեր Տաղարանին մէջ Առաքել Բաղիշեցիի տաղին (թղ. 58բ–59բ), որ կը կրէ «Ի յԱռաքել վարդապետէ» խորագիրը։ Այս անտիպ տաղն ալ ստորեւ կը հրատարակենք առաջին անգամ՝ առանց որեւէ փոփոխութեան։

Ի ՅԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Խանդակաթ սիրով, խանդակաթ սիրով.
Սիրտըս ծարաւեալ պասքի, այն դիս կու մաչէ։

Ծրար ես դու խնդոց, ծրար ես դու խնդոց.
Բուրմունք անուշիդ ի քէն զհոգիս նըւաղէ։

Հաց ես դու սիրոյ, հաց ես դու սիրոյ.
Ո՛վ որ ճաշակէ ի քէն, այլ քաղցելու չէ։

Կարօտեալ սիրով, կարօտեալ սիրով.
Որ խիստ փափագել եմ քեզ, այն դիս կու տանջէ։

Հարան ես լուսածին, հարան ես լուսածին.
Մո՛յծ դիս յառապաստըղ քո, սիրտըս կու զոչէ։

Զայնիւք քաղցրաբար, ձայնիւք քաղցրաբար.
Կոչեա՛ դիս ի յարկըս քո, հոգիս կու կանչէ։

Ղամբար լուսոյ քո, ղամբար լուսոյ քո.
Վառեց ըզհոգիս բոցով, այլ անցնելու չէ։

Ճառագայթ ես դու, ճառագայթ ես դու.
Ինձքս իմ ապչեցաւ ի քեզ, այլ յուշ գալու չէ։

Մեծ ես ւ անհուն, մեծ ես ւ անհուն.
Սիրտս իմ գլորեցաւ ի քեզ, այլ կանգնելու չէ։

Ցարփմանէդ սիրոյ, յարփմանէդ սիրոյ·
Բնութեամբ թըմբրեցաւ մարմինս, այլ պարթևելու չէ։

Նոր ես ւ աննըմանն, նոր ես ւ աննըմանն·
Բննելով ըզքեզ մըտօք, քունըս հատեալ է։

Շատ քեզ ցանկացայ, չատ քեզ ցանկացայ·
Ո՛չ յապիմ ի քո սիրոյդ, սիրտըս կու նեղէ։

Որպէս լոյս պայծառ, որպէս լոյս պայծառ·
Գունովդ վառեցիր զհոգիս, բոցըս կու մաչէ։

Ձկայ քիզ նըմանի, չկայ քեզ նըմանի·
Լոյս ես ւ այլոց լոյս բաշխօղ, ո՛վ քեզ դաւ անէ։

Պայծառ քան զարեւ, պայծառ քան զարեւ·
Լուսով քո լըցաւ աշխարհս, այլ մըթնելու չէ։

Ջահ ես դու անչէջ, ջահ ես դու անչէջ·
կանթեղ վառեցեր յերկինս, այլ անցնելու չէ։

Ուահ երկնագնաց, ուահ երկնագնաց·
Ջով ընդ քեզ յերկինս հանես, այլ վայր գալու չէ։

Սէր քո աննըմանն, սէր քո աննըմանն·
Ո՛վ սիրով ի քեզ հայի, այլ կորչելու չէ։

Վարդ ես դու անփուչ, վարդ ես դու անփուչ·
Ո՛վ որ հոտոտի ի քէն՝ նա ծաղկելոց է։

Տունկ անմահութեան, տունկ անմահութեան·
Ո՛վ ուտէ ի քո պըտղոյդ, այլ մեռնելու չէ։

Բամբ ծաղկանց ի քէն, բամբ ծաղկանց ի քէն,
Ո՛վ որ քո դունդյդ ցանկայ, նա ծաղկելոց է։

Ցաւդ ես քաղցրածին, ցաւդ ես քաղցրածին·
Ո՛վ ի քո սիրոյդ պասքի, նա ծարւելու չէ։

Ի լեթ մարմնոյ քո խունկ, ւ լեթ մարմնոյ քո խունկ.
Ո՛վ առնու ի քո հոտոյդ, նա հրճւելոց է։

Փառք ես կուսանաց, փառք ես կուսանաց.
Ո՛վ քո սրբութեանդ ցանկայ, նա պըճնելոց է։

Ֆո աստուածորդին, քո աստուածորդին.
Ո՛վ զքեզ լուսոյ մայր մայր ասէ, ընդ քեզ կու դասէ։

Ի ձեր սուրբ յաղօթս, ի ձեր սուրբ յաղօթս.
Ըզտէր Աստքելս յիչէ՛ք, ըզձեզ կաղաչէ։

Յովհաննէս Թլկուրանցիի սիրային տաղերէն չարք մը լոյս տեսած է հայ տպագրութեան երախայրիքներէն մին կազմող «Տաղարան»ին մէջ (Վենետիկ, 1513), «Բանք Սիրոյ» ընդհանուր խորագրին տակ։ Կարապետ Կոստանեանց 1892 թ.ին Թիֆլիսի մէջ հրատարակած է փոքրիկ հատոր մը, «Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը» խորագրով։ Իրմէ յետոյ Թլկուրանցիով զբաղած են Հ. Մկրտիչ Պատուրեան, Հ. Ներսէս Ակինեան, Արշակ Զօպանեան, Յարութիւն Քիւրտեան, եւ ուրիշներ։ 1958 թ.ին Երուսաղէմի Ս. Յակոբեանց տպարանէն լոյս տեսաւ Նորայր Եպս. Ծովականի (Պողարեան)՝ (Հեւ) Յովհաննէս Թլկուրանցիի «Տաղագիրք»ը, որ կը պարունակէ անոր թէ՛ սիրային, թէ՛ խրատական, եւ թէ՛ կրօնական քերթուածները։ Եւ վերջապէս, 1960 թ.ին Երեւանի մէջ լոյս տեսան Յովհաննէս Թլկուրանցիի «Տաղեր»ը, խմբագրութեամբ Պիվազեանի աշխատասիրութեամբ։

Ցիչեալ մենագրութիւններու հեղինակներուն անծանօթ մնացած է մեր Տաղարանին «Ի Յովանէս Թլգուրանցոյ ասացեալ» քերթուածը (թղ. 57բ–58բ), զոր դարձեալ առաջին անգամ կը հրատարակենք ստորեւ՝ առանց որեւէ փոփոխութեան։

Ի ՅՈՎԱՆԷՍ ԹԼԳՈՒՐԱՆՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ

Աստուած քարոզեաց եւ խրատ ետուր,
Երբ որ չլսեցինք՝ նա ապտակ ետուր.
Ապտակ զայն ետուր զիմանալի սուր,
Սուր, երկսայրի սուր։

Ցիմ մեղացն է զարձել հոգով աչըս կուր,
Հէնց բան չարարի զայր Աստուծոյ դիւր,
Ախնու բարկացաւ ւ ինձ առաքեաց սուր,
Սուր, երկսայրի սուր։

Ծառայս անհնազանդ, որդիս անմաքուր,
Ի մեղացն անզարճ եւ մեղայ չեռուր։
Զաղեղն լարեաց մէջ սրտիս եռուր,
Հայրն բարկացաւ եւ կակիծ եռուր։
Սուրն որ չի զայր դուր զիմանալի սուր՛ր,
Սուր, երկսայրի սուր։

Հոգիս խոցած է եւ արարեր ղուռ,
Զոր եթէ քամեն՝ բերէ հազար դուռ։
Զոր պատառեցին քո հըրեղէն սուր,
Սուր, երկսայրի սուր։

Տղայն թաւալէր եւ տայր չուռ ու մուռ։
Հեծէ ցաւագին եւ իւր լեզուն լուռ։
Հօր ու մօր աղիքըն զալար առնոյր,
Զկարէր խափանել զաներեւոյթ սուր։
Սուր, երկսայրի սուր։

Ո՞վ կարէ պատմել զկակիծն որ եռուր։
Զհայրն թաղեցին զորդին վերայ իւր,
Զենք իշխեր ասել թէ մեր տղայքն ու՞ր յու՞ր։

Գառներդ են եղեր զայլերուն զէրուր։
Բարձաւ շաղաւաթն եւ դուխըն մաքուր,
Բարձան զատաստանքն, այլ իրաւունքն ո՞ր։

Հաւսար մեռանին, տներն առնուն չուռ։
Մէկիկ մի մնա եղբայր ու կամ քուր,
Ըզնա չարչարեն թէ ձեր պահուստն ու՞ր յու՞ր։

Ամէ մէկ զիւր են, ճանապարհն արար ծուռ։
Ծուռ որմն չարեց, չուտով առեց չուռ։
Ուղորդին ուղորդ Տէրըն ծռին ծուռ։
Զայս ծուռն է բերել զիմանալի սուր։

Մէկ մի անիրաւ ասէ սուտ ու զուր.
Գիտէ որ աւազացըն կուզայ դիւր,
Ամնու իշխանին չէ հոգս ու զբոսր,
Թէ դատաստանըն թիւր բերէ կ'երեզէն սուր:

Մաքին Յովանէս, երբեք մինչեւ յո՞ր.
Քանի ընթանաս դու ի ճանապարհ ծուռ,
Մի՞թէ ժամանակ ունիս հազար բի՛ւր.
Բի՛ւր ժամանակ բիւր:

THREE UNPUBLISHED MEDIEVAL ARMENIAN POEMS

AVEDIS K. SANJIAN

(Summary)

The rich collection of Armenian manuscripts in the Research Library at the University of California, Los Angeles, includes a «Tagharan» (Collection of Poems). This manuscript consists of two parts, both written on paper, which later were bound together. The first ninety-three folios constitute a complete manuscript ; the last of these folios has the opening lines only of the principal colophon, the rest having fallen off. The second part of the codex (fols. 94-114) was written by a different hand on a different kind of paper. The author of this study has established that the first and major part of the manuscript was copied by the scribe Margare Ardjishetsi at the monastery of Kharabasta (=Sukhara) or Varag in the province of Vaspurakan. It was written in the first half of the sixteenth century, but not earlier than the year 1522 when Margare began his scribal career. The second part of the codex which is incomplete at the beginning and the end, was written prior to the year 1551.

The collection contains a total of twenty-nine poems. Twenty-six of these are the works of ten known medieval Armenian poets: six by Frik; four by Arakel Baghishetsi; three by Hovhannes Tlkourantsi; three by Mkrtich Naghash; two by Khachatur Kecharetsi; four by Toros (Mshetsi?); and one each by Hovhan-

nes Erznkatsi, Nerses Shnorhali, Zakaria Erets, and Artametatsi. The authors of the remaining three poems are unknown.

After a thorough examination of the published poems and the catalogues of Armenian manuscripts, this author has established that three of the works in our «Tagharan» have been unknown to scholars engaged in medieval Armenian poetry; hence they are published here for the first time. In the manuscript, the first poem is entitled a «Lament by Frik»; the second and third are without title, but the names of the authors, that is, Arakel Baghishetsi and Hovhannes Tlkourantsi, are distinctly recorded at the head of each work. It is hoped that the publication of these hitherto unknown poems will make a significant contribution to the study of medieval Armenian poetic literature.

Յովհան Մայրագոմեցի՝ միջնադարու մեծ ճառագիրը

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՑԵԱՆ

Ա.– ՀԱՄԱՌՕՏ ՈՒՐՈՒԱԳԻԾ ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵԱՆՔԻՆ, ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՇՈՒՐՋ ԳՈՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Հայ բանասիրութեան մէջ գոյութիւն ունեցող վէճերէն մէկն ալ Յովհան Մանդակունիի եւ Յովհան Մայրագոմեցիի հարցն է եղած։ Ըսենք որ մենք չենք նպատակադրուած մխրճուելու այդ վէճի մէջ։ Մեր նպատակն է վեր առնել հեղինակ մը, որ արժանի է կոչուելու միջնադարու լաւագոյն ճառագիրներէն մէկը, որուն գործերը ոչ միայն գրական–գեղարուեստական արժէք ունին, այլեւ՝ պատմա–հասարակական։

Յովհան Մայրագոմեցին Զ. դարու վերջին եւ է. դարու սկզբին ապրած յայտնի եկեղեցական եւ հասարակական գործիչ մը եղած է։ Ծնած է շուրջ 570–575 թթ.։ Աբրահամ Կաթողիկոսի (607–615 թթ.) օրով պաշտօնավարած է կաթողիկոսարանին մէջ։ Եղած է ժամանակի ամենազարգացած եկեղեցական գործիչներէն մէկը, եւ կաթողիկոսներու վստահելին։ Իրեն վստահուած էր հայոց եկեղեցիի դաւանանքին պաշտպանութիւնը եւ հիմնաւորումը։ Մայրագոմեցիին կը պատկանի նաեւ «Կնիք Հաւատոյ» ժողովածուն կազմողի պատիւը։

Մայրագոմեցիի մասին եղած տեղեկութիւնները վեր ի վար բոյ են։ Անոր մասին կցկտուր հաղորդումներ կան է՛ւ հայ է՛ւ օտար աղբիւրներու մէջ, ըստ որոնց, Մայրագոմեցին լուրջ ընդհարումներ

ունեցած է Եղր Կաթողիկոսի (630–641 թթ.) հետ, որովհետեւ չէ ընդունած հայ–բիւզանդական եկեղեցական համաձայնութիւնը Հերակլ կայսրի ժամանակ, որմէ յետոյ հեռացած է Գարդման գաւառը:

Ըստ Ասողիկի վկայութեան, որմէ չի տարբերիր նաեւ Վարդան Արեւելցիի վկայութիւնը, Մայրագոմեցի գրած է երեք դիրքեր· «անուն միոյն՝ Մրատ Վարուց, եւ անուն միւսոյն՝ Հաւատարմատ եւ անուն միւսոյն՝ Նոյեմակ»(1): Մայրագոմեցիի անունով մեզի հասած են եօթ հատուածներ «Գնիք Հաւատոյ»ին մէջ, եւ գրուածք մը՝ «Վերլուծութիւն Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ որ ի նմա յօրինեալ կարգաց» վերնագրով:

Բազմաթիւ վէճեր ու տարակարծութիւններ գոյութիւն ունին հեղինակի կենսագրութեան որոշ մանրամասնութիւններու եւ աշխատութիւններու չուրջ, որոնք եթէ ամբողջովին դեռ չեն հարթուած, այնուամենայնիւ յայտնուած են բաւական լուրջ եւ համոզիչ կարծիքներ՝ յօգուտ Մայրագոմեցիին:

Գլխաւորաբար վէճի պատճառ հանդիսացած է այն իրողութիւնը, որ խումբ մը ձեռագրական հատուածներու մէջ ճառերը վերնագրուած են Ցովհան Մանդակունիի, Ոսկեբերանի, Եփրեմի եւ Ցովհան Մայրագոմեցիի անուններով: Բանասէրներէն մանաւանդ Հ. Բ. Սարգիսեան կը պնդէ որ այդ ճառերը կը պատկանին ոչ թէ օտար հեղինակներու, այլ՝ Մանդակունիին: Բարսեղ Սարգիսեան մասամբ ճիշդ է· այդ ճառերը օտար հայրերու գործերը չեն, բայց կը սխալի, երբ Մանդակունիին կը վերագրէ: Դժբախտաբար Սարգիսեանի տրամադրութեան տակ դրեթէ չեն եղած հատուածներ, որոնց մէջ նշուած ըլլար Մայրագոմեցիին անունը(2):

Էջմիածնի հմուտ բանասէրներէն՝ կարապետ Եպս. Տէր Մկրտչեան, ձեռագրական նոր հատուածներ ունենալով իր տրամադրութեան տակ, եկած է այն եզրակացութեան որ Մայրագոմեցին է հեղինակը այն խումբ մը ճառերուն, որոնք վերագրուած են Մանդակունիին(3): Կարապետ Եպիսկոպոսի ուսումնասիրութիւնը եւ եզրակացութիւնը լուրջ խօսք էր հայագիտութեան մէջ, որմէ յետոյ չատ մը հայ բանասէրներ այլեւս հարկ չհամարեցին հակաճառել:

1· Ստեփաննոս Տարօնեցոյ Ասողկան *Պատմութիւն Տիեզերական*, Սուրբ Պետերբուրգ, 1885, էջ 87:

2· Հ. Բ. Սարգիսեան, *Քննագատութիւն Ցովհան Մանդակունւոյ եւ իւր երկասիրութեանց Վրայ*, Վենետիկ, 1895:

3· Կարապետ Եպս., *Ցովհան Մանդակունի եւ Ցովհան Մայրագոմեցի*, «Շողակաթ», Էջմիածին, 1915, էջ 84–136:

Յովհան Մայրագոմեցիի մասին վերջերս լոյս տեսաւ փոքրիկ, արժէքաւոր մենագրութիւն մը, հեղինակութեամբ Հ. Մ. Քենդերեանի(4): Հեղինակը փաստական նոր նիւթերու հիման վրայ ցոյց կու տայ որ խնդրոյ առարկայ 26 ճառերը, վենետիկեան երկու հրատարակութեանց(5) վերջը զետեղուած «Ողբը» եւ «Աղօթքը» կը պատկանին Մայրագոմեցիին եւ նոյնի «Մրատ Վարուց» ժողովածուն է: Հեղինակը իր մենագրութեան մէջ առաջին անգամ ըլլալով մէկ ընդհանրութեան մէջ կը քննէ եւ կը ներկայացնէ Մայրագոմեցիի ճառերուն կառուցուածքային խնդիրները, աշխարհայեացքի արտացոլումները եւ գեղարուեստական առանձնայատկութիւնները:

Բ.— ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻԻ ՃԱՌԵՐՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Մենք զոր ունինք այնպիսի ստեղծագործութեան հետ, որ ճառն է, եւ որ գրական վերջնական ձեւաւորում ստացաւ եկեղեցական գրականութեան մէջ: Եկեղեցիի հոգեւոր առաջնորդները ճառերու միջոցով ժողովուրդին կը մեկնաբանէին Աւետարանի այս կամ այն զաղափարը, եւ կը պարզէին բարոյախօսական մխիթարները: Ճառերը ունէին չատ կարեւոր յատկանիշ մը, որմով անոնք կը տարբերին գրական այլ սեռերէ եւ կը առանձնացնէին պատմութեան համար կարեւոր աղբիւրագիտական նշանակութիւն: Ճառերը օրը օրին գրուած ըլլալով կ'արտացոլան ժամանակի կարեւոր հարցերը եւ խնդիրները: Այս իմաստով անոնք գեղարուեստական լեզուով գրուած տեսակ մը ժամանակագրութեան դեր կը կատարեն: Այսպիսի պատմական սկզբնաղբիւրի նշանակութիւն ունին, օրինակ, Ոսկեբերանի «Աղբիւրանք» կոչուած ճառերը, ուր Ոսկեբերան կը նկարագրէ Դ. դարուն Անտիոքի մէջ կատարուած ժողովրդական խռովութիւնները: Ճառերը կ'արտացոլան նաեւ ժամանակաշրջանի փիլիսոփայական հայեացքները: Հոգեւոր ճառերը կրնան կարեւոր նիւթ հայթայթել նաեւ հայոց լեզուի պատմութեամբ զբաղուողներուն, որովհետեւ այնտեղ պահպանուած են լեզուի մէջ տեղի ունեցող չատ մը լեզուական փոփոխութիւններ:

Մայրագոմեցիին ճառերը կրնան բաւական մեծ քանակութեամբ տեղեկութիւններ տալ Է. դարու հայ մարզպանական շրջա-

---

4. Հ. Մ. Քենդերեան, Յովհան Մայրագոմեցի, երեւան, 1973:

5. Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք, Վենետիկ, 1836 եւ 1860:

նի ընկերային կեանքի մասին: Հեղինակը չատ յաճախ կ'անդրադառնայ ժողովուրդի զանազան խաւերու ընկերային վիճակին, կը դրէ հասարակ ժողովուրդի կրած զառն տառապանքներու եւ զրկանքներու մասին, իշխաններու եւ անդուլ վաշխառուներու գործած անտանելի չանցագործութիւններու մասին: Ճառերու բովանդակութենէն յստակ կերպով կ'երեւայ որ Մայրագոմեցին ժողովուրդին մօտիկ կանգնած հոգեւորական առաջնորդ մը եղած է, որուն մեծապէս մտահոգած է քաղաքական անյուսալի կացութեան մէջ ապրող հայ ժողովուրդի ընկերային զառն վիճակը, որուն պատճառը ոչ միայն օտարն է, այլ նաեւ՝ հայ ազնուականութիւնն ու վաշխառուական խաւը: Մայրագոմեցին, իբրեւ հոգեւորական, մտահոգւած է նաեւ անոր համար որ հասարակ ժողովուրդը սկսած է արդէն բողոքել Աստուծոյ հասցէին:

Մայրագոմեցին յստակ կերպով կը խօսի վաշխառուներու անօրէնութեանց մասին. «ուստեն զմարմինս անանկաց, եւ ըմբեն զարիւն նոցա անողորմ»(6), կը դրէ ան: Ճառագիրը առանց քօղարկելու կու տայ ժամանակաշրջանի անողոք վիճակը, իր բերած անօրինութեանց օրինակները դաժան ըլլալէ դեռ աւելի են: «Ինչպիսի անօրէնութիւն է, – կը բացականչէ ան –, երբ վաշխառուն ամուլ արդանդէն բնութեամբ որդի կը պահանջէ»: Արդէ՛ն աշխատաւորը բազմից կողոպտուած է օտարէն, բայց ահաւասիկ կու գայ հայ վաշխառուն եւ ապառաժներէն պտուղ կ'որոնէ, քարէն կաթ կ'ուզէ կթել եւ «առանց սերման ժաի արդիւնս ժողովել, եւ ընուլ գառն իւր անօրէն ստացուածովք»(7):

Այս կապակցութեամբ չատ ուշագրաւ են Մայրագոմեցիի «Վասն Փոխոց եւ Վաշխից» եւ «Ճաղատս Մխիթարութեան Աղքատաց»(8) ճառերը: Այս վերջին ճառէն է որ կ'իմանանք թէ ժողովուրդը սկսած է խիստ կերպով դժգոհիլ ու բողոքել անարդարութեան դէմ: Այս հանդամանքը սկսած է մտահոգել Մայրագոմեցին եւ ան խիստ անհրաժեշտ կը համարէ ժողովուրդին բացատրել հրաստութեան ոչ աստուածային ծագում ունենալը, եւ, ապա, կը սկսի մխիթարել ըսելով որ ընչազուրկ ըլլալը բնաւ ալ այնքան ողբերգական չէ, որքան ժողովուրդը կը պատկերացնէ:

Հասարակ ժողովուրդին վիճակը անմխիթարական էր ե՛ւ քաղաքական ե՛ւ տնտեսական դեռնի վրայ: Յակոբ Մանանդեան մանրամասն կերպով կը ներկայացնէ տարբեր տեսակի հարկերը, որ ժո-

---

6. «Վասն Փոխոց եւ Վաշխից», տես՝ Տեառն Յովհաննու... ճառք, էջ 52:
7. Նոյնը:
8. Տես՝ Տեառն Յովհաննու... ճառք:

դովուրդը ստիպուած էր վճարելու թէ՛ ճորտատէրին եւ թէ՛ եկեղեցիին: Կային տասէն աւելի հարկեր՝ «հաս», «բաժ», «գլխահարկ», «բեկար», «կոռ», «պահակութիւն» եւ այլն(9): Այս պարագաներու մէջ եկեղեցին չի կրնար պատասխան տալ այսքան դժուար պայմաններու մէջ ապրող եւ բողոքող հայ ժողովուրդին, որ սկսած է պահպանել եկեղեցիին քարոզած արդար Աստուծոյ դէմ: Ըստ Մայրագոմեցիին, մարդիկ սկսած են ընդվզիլ եւ վատաօրէն կասկածի տակ դնել Աստուծոյ արդարասիրութիւնը. «Աւեն, Աստուած զմեծատունս սիրէ, եւ նոցուն աչառէ, եւ զվատակս նոցա յայդոէ, եւ ոչ հայի զրկանս տառապելոցն, այլ արհամարհեալ անտես առնէ»(10): Այս ճառին մէջ նկարագրելով հանդերձ անողոք պայմաններու մէջ ապրող հաւատացեալներու վիճակը, Մայրագոմեցին՝ իբրեւ հայ եկեղեցիի առաջնորդ մը, չ'ընդունիր ամենակարող Աստուծոյ դէմ եղած այս «զրպարտանքները». ուստի՝ կը սկսի բացատրել հարստութեան՝ իբրեւ մեծագոյն չարիքի ծագումը: Մայրագոմեցին իր մեկնաբանութեանց մէջ կը մեկնի քրիստոնէական կրօնքի զաղափարախօսութեան դրոյթներէն. ամէն կերպ կ'աշխատի ցոյց տալ որ հարստութիւնը՝ չարեաց ազբիւրը, աստուածային չէ, այլ մարդ արարածն է որ չարին գիտակ ըլլալով հեռեւած է անոր, եւ գահավիժած է տեսակ-տեսակ մեղքերու մէջ: Մարդը, ըստ Մայրագոմեցիի, լաւ չանօրինեց, այլ զրկեց աղքատները, յափշտակեց անանկները, որոնք իր հովանաւորութեան տակ կը գտնուէին: Կարեւոր է այն հանգամանքը, որ ճառագիրը հարստութեան աղբիւր կը նկատէ յափշտակութիւնն ու կողոպուտը, «...ի յափշտակութենէ եւ ի զրկանաց ժողովեալ անօրէնութեամբ եւ ագահութեամբ»(11): Ուրեմն, ըստ Մայրագոմեցիին, չարիքը պէտք է փնտռել մարդու չար բնոյթին մէջ, որ կը վերնայ, եթէ ան հաւատայ քրիստոնէութեան եւ կատարէ եկեղեցիին պահանջքները:

Գ.— ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻՆ ԲԱՐՈՑԱԽՕՍ

Մայրագոմեցին ունի ճառերու չարք մը, որ կը չօշափէ բարոյախօսական խնդիրներ: Այդ ճառերը չուրջ տասը հատ են, պա-

---

9· Տես՝ Ցակոբ Մանանդեան, *Դիտողութիւններ Հին Հայաստանի Շինականների Դրութեան Մասին Մարզպանութեան Շրջանում*, Երեւան, 1925, եւ *Հայաստանի Արքունի Հարկերը Մարզպանութեան Շրջանում*, Երեւան, 1926:

10· «Ցաղագս Մխիթարութեան Աղքատաց», Տես՝ Տեառն Ցովհաննու... ճառք, էջ 60:

11· Նոյնը, էջ 63:

բազայ մը, որ կը վկայէ թէ ան բաւական մօտ գտնուած է ժողովուրդին եւ մտահոգուած անոր բարոյականին անաղարտ պահպանման հարցով: Մայրագոմեցիի չօշափած նիւթերը վերացական-իմաստասիրական հարցեր չեն, այլ՝ որոշակի հարցեր, առօրեայ կեանքի եւ կենցաղի մէջ բոյն դրած ախտեր, ինչպէս՝ որկրամոլութիւնը, հարբեցողութիւնը, սեռային սանձարձակութիւնները, կնաթողութիւնը, միասեռականութիւնը, անասնամոլութիւնը եւ այլն: Այս ճառերէն առաւել արժէք կը ներկայացնեն անոնք, որոնց մէջ կը խօսուի աշխահիկ կեանքի հետ կապուած ախտերու մասին, որոնք միշտ ալ մարդկութեան ներկայով ու ապագայով մտահոգուած առաջնորդներու ուշադրութեան կեդրոնը հանդիսացած են:

Այս ճառերը ուշագրաւ են նաեւ ճանաչողական իմաստով, որովհետեւ այնտեղ խօսք կ'ըլլայ այնպիսի երեւոյթներու մասին, որոնք կը վկայեն թէ քրիստոնէութեան մուտքէն երեք-չորս դար ետք տակաւին անոնք ժողովուրդին մէջ մնացեր են կամ իբրեւ հեթանոսական վերապրուկ, եւ կամ՝ սոսկ մարդկային չար քնազդ: Այս առումով յատկանշական են «Թուղթ Վասն Կնաթողաց», «Վասն Անասնամոլաց եւ Իպացելոց եւ Արուապիտաց», «Վասն Բարկացողաց Բարուց» ճառերը: Մարդկային արատները քննադատելու եւ պախարակելու ժամանակ, Մայրագոմեցին կ'աշխատի հաշտեցնել քրիստոնէական վարդապետութեան բարոյական չափանիշները ժողովուրդի կողմէ սրբագործուած բազմադարեայ չափանիշներուն: Հոս նախ պէտք է նշել որ քրիստոնէութիւնը եւ եկեղեցին իրենց վրայ էին վերցուցած մարդկութեան բարոյականութեան պատասխանատուութիւնն ու դաստիարակութիւնը, եւ առաջ քաշած էին «կրօնական բարոյականութիւն» կոչուած համակարգը: Հոգեւորականութեան կարծիքով բարոյական չափանիշները կրօնական ոգիի եւ զգացման ծնունդ են, եւ կրօնքի նուաճում:

Այս ճառերուն մէջ Մայրագոմեցին առանց քօղարկման կը թուարկէ մարդկութեան խորթ այնպիսի անբարոյական արատներ, որոնց վերացումն ու ոչնչացումը նախապայման է ազգի հետագայ գոյատեւման համար: Ճառագիրը շատ անմիջական է, զրոյցի ձեւով առաջ կը տանի իր միտքը, բացատրելով թէ որքան վնասաբեր է այս կամ այն արարքը մարդկութեան համար. ասկէ զատ՝ ան չի մոռնար յիշեցնելու վերջին դատաստանի օրը, եւ կը սպառնայ գեհենի ամենասարսափելի պատիժներով: Մայրագոմեցին իր միտքերը կ'արտայայտէ պատկերներով ու համեմատութիւններով: Խօսելով անասնամոլութեան մասին, առանց սքօղելու եւ չղարչելու իր միտքը, կ'ըսէ. «զի մարդ չէ, եւ չէ իսկ. իսկ անասո՞ւն կոչեացուք, այլ

եւ նա քան զանաստուն առաւել եւս անմտագոյն գտանի. քանզի ոչ երբէք տեսանեմք զանաստուն ի մարդոյ բնութիւն ախորժեալ»(12):

Մանանայատուկ նշանակութիւն ունի «Վասն Աշօրէն Թատերաց Դիւականաց» ճառը թէ՛ աշխարհայեացքային եւ թէ՛ ճանաչողական առումներով:

Հայ քննադատական մտքի պատմութեան մէջ այս ճառը իր բնոյթով նկատուած է պահպանողական եւ յետադիմական, որովհետեւ հոն նկատած են հեղինակի անհանդուրժողականութիւնը «թատերական ներկայացումներու» նկատմամբ: Մեր կարծիքով այս միտքը չափազանց խիստ գնահատական մըն է, որ կը տրուի Մայրագոմեցիի անձին եւ հեղինակութեան: Վերոյիշեալ ճառի մէջ նաեւ պէտք է ճշդել «թատերք սատանայականք» արտայայտութիւնը, որովհետեւ, ոմանք այդ հասկացութեան տակ կ'ուզեն անպայման տեսնել դասական՝ յունական տիպի թատրոն, որ գոյութիւն ունէր Արտաշատի եւ Տիգրանակերտի մէջ: Ճառի մէջ խօսքը շատ յստակ է՝ Մայրագոմեցին չի հանդուրժեր «թատերք սատանայականքը», որոնց ժամանակ կ'երգէին, կը պարէին, մէկ խօսքով՝ կ'արտասանուէին զուսանական երգեր սիրոյ եւ հերոսութեան մասին: Տարբեր բաներ են զուսանական ներկայացումներն ու թատերական ներկայացումները:

Վերոյիշեալ ճառը կարեւոր է հայ ժողովուրդի մշակոյթի պատմութեան համար որովհետեւ հոն կը նկարագրուին զուսանական ներկայացումներու հետ կապուած մանրամասնութիւններ եւ անոնց դրծած ազդեցութիւնը դիտող հասարակութեան վրայ, որ կը հաւաքուէր քաղաքի (այս պարագային՝ Դուինի) հրապարակները, հաղորդ դառնալու համար այդ երգերու ոգիին եւ էութեան, որ մօտիկ էր ժողովուրդի սրտին, որովհետեւ զուտ աշխարհիկ բովանդակութիւն էր: Դժբախտաբար մանրամասնութիւններ չկան երգերու թեմաներուն չուրջ, բայց կարելի է ենթադրել որ զուսանական-թատերական խաղերու ժամանակ ծաղրուած են մարդիկ եւ երեւոյթներ, ինչ որ նեղ կացութեան մատնած է եկեղեցին:

Զուսաններըը, ըստ երեւոյթին, շատ սուր են եղած իրենց քննադատութեանց մէջ, դիպուկ ու սպաննիչ է եղած անոնց ծաղրը, բան մը, որ Մայրագոմեցիի կողմէ նկատուած է չափազանցութիւն եւ հայհոյութիւն. «Արհամարհութիւն, ձաղուիթիւն եւ հայհոյութիւն հոսեն ի նոցանէն հանապազ... զոմանս հայհոյէ, զոմանս բամբասէ, զոմանս թշնամանէ եւ զոմանս ձաղէ, խեղութեամբ ամօթով

12· Նոյնը, էջ 138:

կուրացուցանէ. ամանց սուէ եւ յարդանօք անապատեցուցանէ, իբրեւ պչուն կատաղեալ զամենեսեան առ հասարակ խածանէ»(13):

Ինչպէս կը նկատենք, Մայրագոմեցիին եւ Խորենացիին վերաբերմունքները տարբեր են դուսանական-թատերական ներկայացումներու նկատմամբ, ընդ որում, Մայրագոմեցին պահպանողական է պատմահօր նկատմամբ: Ան սաստիկ վշտացած է այն պատճառով որ մարդիկ եկեղեցի չեն յաճախեր, այլ՝ ներկայացումներու, ուստի պէտք է արգիլել այդ դուսանական ներկայացումները, որոնք մարդիկը կը չեզոն ճշմարտութենէն, մանաւանդ «կանանց անհամեմատից դասը», որ յոռի հորդորներ կը առանայ, «կոյսերը՝ պոռնկութեան, ամուսնացածները՝ չնութեան, կանայք կը դառնան առելի իրենց ամուսիններուն եւ ամուսինները՝ իրենց կանանց, որդիները հայրերու դէմ կ'ելլեն, ծառաները՝ իրենց տէրերու դէմ»(14):

Մայրագոմեցիի այս վերաբերմունքը նչելով հանդերձ, կը խուսափինք Մայրագոմեցին ընդհանրապէս որակել յետադիմական պաշտպաններու տէր մարդ, ինչպէս կատարած են շատեր՝ մեկնելով ոչ գիտական ենթահողէ:

Մայրագոմեցիի ճառերուն մէջ որոշակի կարի որութիւն ունին քանի մը ճառեր, որոնց մէջ քննութեան կ'առնի կին ժողովուրդի հովիւներուն՝ քահանաներու պարտականութիւններէ յարաբերութիւնը ժողովուրդի հետ: Այս կապակցութեամբ ուշադրաւ են «Վասն Քահանայից Տեսչութեան ի վերայ ժողովրդեանն դնելոյ եւ «Յաղագս Եպատրաստոց եւ Զգաստելոյ զվարդապետսն»(15) »(Ղևերը:

Այժմ տեսնենք թէ ինչ պատճառով Մայրագոմեցի ստիպուած կ'ըլլայ քանի մը ճառ գրել եւ բացատրել թէ' ժողովուրդին եւ թէ' հոգեւորականներուն իրենց պարտականութիւնները: Նարցն այն էր, որ հերձուածողներն ու եկեղեցիի պաշտօնական պաշտպանութենէն անկախ մտածողներ հնանալի կերպով կ'օգտագործէին կղերականութեան թուլութիւնները, ու այդպիսով լուրջ վնասներ կը հասցնէին եկեղեցիի հեղինակութեան: Ինչպէս արդէն ապացուցուած է պատմական նորագոյն ուսումնասիրութիւններու լոյսին տակ, հերձուածողներն ու աղանդաւորական շարժումները նախ եւ առաջ ունէին ընկերային բնոյթ: Անոնք ընկերային անարդարութիւններու դէմ բողոքելու ժամանակ կասկածի տակ

---

13. «Վասն Աւուրէն Թատերաց Դիւականաց» ճառը, Տես՝ Տեառն Յովհաննու... ճառք, էջ 127–128:

14. Նոյնը, էջ 125:

15. Տես՝ Տեառն Յովհաննու... ճառք, էջ 68, 79:

կ'առնչէին Աստուծոյ անաչառութիւնը եւ կը յայտարարէին թէ ա-նոր ստեղծած աշխարհը թերի է, ուրեմն, փաստօրէն կասկածի տակ կ'առնուէր Աստուծոյ կատարելութեան գաղափարը: Մայրագոմե-ցին, իբրեւ հոգեւորական եւ կաթողիկոսարանի վեհակալ ու տե-ղապահ, պէտք է պաշտպաններ եկեղեցին: Ան խիստ անհանդուրժող է մանաւանդ երբ աշխարհականներ կը քննադատեն: Ըստ իրեն, ե-կեղեցականներու հասցէին ուղղուած քննադատութիւնները կրնան վերածիլ հաւատքի քննադատութեան. ահա՛ Մայրագոմեցիին աւելի շատ յուզող եւ մտահոգող մասը այդ քննադատութիւններուն: Վե-րոյիշեալ երկու ճառերուն մէջ ան կը բացատրէ ժողովուրդին եւ քահանաներուն փոխյարաբերութեանց էութիւնը և ուղղակի կ'ըսէ որ աշխարհականը պէտք չէ անպատուէ քահանան, որովհետեւ ան իր կարգը ստացած է Աստուծմէ, ուստի եւ անոր ներկայացուցիչն է այս երկրի վրայ, «...մի՛ քններ, – կ'ըսէ ան, – զվարս առաջնոր-դին, եւ մի՛ զքահանայս եւ զվարդապետս քո բամբասեր: Ջառեր հրամայն քննել զմեղս ուրուք, թող թէ զքահանային. Աստուծոյ է քննել եւ դատել, դու զի՞ քննես եւ դատես եւ հայհոյես: Ջքո վարսդ քննեա եւ դատեա եւ մի՛ զառաջնորդաց. բայց եթէ ի հաւատս ինչ անպիտան իցէ, եւ թիւրս ինչ ուսուցանիցէ...»(16): Այսուհանդերձ, սակայն, Մայրագոմեցին կոյր հնազանդութեան ալ կոչ չ'ընէր ժողո-վուրդին, եւ կ'ըսէ որ եթէ դժգոհ է ան, պարզապէս կարելի է հե-ռու մնալ: Ասկէ զատ ան չի խուսափիր անիծելէ ոգէտ ու կաշա-ռակեր կղերականները:

Դ.– ՃԱՌԵՐՈՒ ԳՐԱԿԱՆ–ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Ճառի նպատակն է համոզել այս կամ այն միտքը, բացատրել բարոյական չափանիշները, իսկ քննադատել՝ հակա–բարոյական ա-րարքներն ու խորթ երեւոյթները: Համոզելու համար՝ ճարտասանը կ'օգտագործէ դեղարուեստական գրականութեան ընձեռած բազմա-թիւ հնարանքներ՝ դեղարուեստական պատկեր, փոխաբերութիւն, այլաբանութիւն եւ այլն: Ճարտասանը իր խօսքը աւելի տպաւորիչ դարձնելու համար կը դիմէ նաեւ քերթուածեան արուեստին: Այս ի-մաստով, Մայրագոմեցիի ճառերը գերազանց նմուշներ են մեր մա-տենագրութեան պատմութեան մէջ:

Առհասարակ, իբրեւ կարեւոր առանձնայատկութիւն, կը նկա-տենք որ Մայրագոմեցին որոշակի է իր հարցադրումներուն մէջ.

16· Տեառն Յովհաննու... ճառք, էջ 89:

անտեղի կերպով չի ծաւալիր, իսկ երբ կը խօսի որեւէ լմաստասիրական հարցի մը մասին, չի մնար վերացականութեան ամպերու մէջ, այլ՝ կ'աշխատի բացատրել հարցը համեմատելով զայն հասարակ մարդուն կողմէ հասկնալի ու ըմբռնելի որեւէ երեւոյթի մը կամ առարկայի մը հետ: Ան կ'ըսէ որ երջորդութիւնը մէկ է՝ անձերն ու անուանումները տարբեր: Այս միտքը հասկցնելու համար կը բացատրէ այսպէս՝ ինչպէս որ մարդը բոլոր տարիքի արտայայտութիւններու մէջ կը մնայ մարդ, այսինքն՝ մարդը մարդ է թէ՛ պատանեկութեան, թէ՛ երիտասարդութեան եւ թէ՛ ծերութեան հասակի մէջ, այնպէս ալ երջորդութիւնը մէկ է իր տարբեր արտայայտութիւններուն մէջ:

Մայրագոմեցիի ոճը պարզ ու անպաճոյճ է. չկան կեղծ ու արհեստական ձեւեր, բնաւզբօսիկ ճիգ, բառախաղեր, որոնց չափազանց շատ անդամներ կը հանդիպինք նոյն չրջանի հայ եւ օտար եկեղեցական այլ գործիչներու գործերուն մէջ: Մայրագոմեցին անմիջական է ընթերցողի հետ, քնաւ չի թաքցներ իր զգացմունքներն ու ապրումները երբ խօսք կ'ըլլայ որեւէ անբարոյական արարքի մասին: Առհասարակ անոր ստեղծագործութեան մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւէ ինքնաբացայայտումը. ան ինքզինք կը դնէ լսողներուն կամ ընթերցողին տեղ, միջոցառում մը, որ տաղանդաւոր ճարտասանին հնարաւորութիւն կու տայ անկաշկանդօրէն արտայայտելու իր յոյզերն ու ապրումները: Վերոյիշեալ յատկանիշով ալ պայմանաւորուած է Մայրագոմեցիի ճառերու այլ յատկանիշ մը՝ քնարերգականութիւնը:

«Ողբալով չիս հոգի իմ հիացեալ զարմանամ, եւ սոսկալի հիացմամբ զոզութեամբ անձն իմ հեծէ անդադար, առ միշտ հանապազ զմտաւ ածելով, թէ յորպիսի խաւարայինս ախտից սողի լինանէ ժպրհութիւնս մեր, ընդ որոյ ախտիւ տարակուսեալ լեզու իմ տկարանայ առ ոչ բաւել ցուցանել զահեղ պղծութիւնս...»(17):

Մէջբերուած հատուածէն մեզի կը յիշեցնէ «Մատեան Ողբերգութեան»էն հատուածներ, ուր Նարեկացին նոյնպէս կը գիմէ ինքնաբացայայտման:

Մայրագոմեցիի ճառերը սրտաբուխ են, անկեղծ, իսկական ապրումով ու այրումով գրուած, ունին ողբասացութեան որոշ տարրեր, որոնք կ'արագացնեն ճառի մտքին անմիջական ազդեցութիւնը ընթերցողին վրայ: Մայրագոմեցին չկարենալով տանիլ մարդոց անօրէնութիւններն ու չարութիւնները, իբրեւ մարդկութեան համար

17. Տեառն Յովհաննու... ճառք, էջ 134:

տառապող հոգի մը, կ'ողբայ մարդկութեան մէջ գոյութիւն ունեցող անիրաւութիւններն ու անարդարութիւնները. «Ո՞ւր երթեալ զաղարեցից եւ լացից զահեղ անօրէնութիւնս, որ զիս ճմլեցուցանէ, եւ կամ ո՞ւր լռեալ զօղեցից թախծեալ մեղօքս, եւ մաչեալ յամենայն զաղրալի եւ չարալուր համբաւոյս՝ որ միշտ զսիրտ իմ պեղու, եւ զալարեցուցանէ զաղիս իմ ողբալով»(18):

Կան բազմաթիւ հատուածներ, ուր ի յայտ կու գան Մայրապոմեցի ճարտասանի եւ ողբասացի յատկութիւնները, որոնք ճառերէն ոմանք կը բարձրացնեն գրական–վեպարուեստական երկի աստիճանին: Այս հատուածները կրնան դասուիլ մեր հին գրականութեան մէջ ուրոյն տեղ մը գրաւող գրական սեռի մը՝ ողբասացութեան լաւագոյն նմոյշներու շարքին:

Ողբը «որպէս գրաւոր խօսքին նախորդող եւ նրան զուգահեռ եւս ապրող անկիր ստեղծագործութիւն՝ անմիջականօրէն կապուած է մարդկային կենցաղի եւ առօրեայի հետ»(19): Այս առումով յատուկ ուշադրութեան արժանի են «Ճաղատս Սիրոյ եւ Սրբութեան Որով Պաղաբերին Աբարածք»(20) ճառի վերջին չիսուն տողերը, որոնք սրտառուչ ողբասացութիւն են, չզիջելով Խորենացիի եւ Լաստիվերացիի ողբերուն:

Մայրապոմեցիի լեզուա–ոճական այլ առանձնայատկութիւնները ի յայտ կու գան ե՛ւ վերոյիշեալ հատուածի ե՛ւ այլ ճառերու մէջ, ինչպէս՝ խմաստի սաստկացում, աստիճանաւորում, բառային կրկնութիւն. «Անցին աւուրք խաղաղութեան, հեռացան ժամանակք արդարութեան, բարձան ստուգութիւնք յաչխարհէ, մեկնեցան իրաւունք ի մարդկանէ»(21):

«Զի վաչխ չար օձին է վարդապետութեան, վաչխ դիւտք են դիւական, վաչխ թշնամոյն են սերմանք, վաչխ առհաւատչեայ է տանջանաց, վաչխ խափանիչ է բարեպաշտութեան, վաչխ ճանապարհ է գեհենին»(22):

Հարուստ է նաեւ Մայրապոմեցիի պատկերաւոր մտածողութիւնը, զրեթէ ամէն էջի վրայ կարելի է հանդիպիլ նուազագոյն

18· Նոյնը, էջ 123:

19· Պ. Մ. Խաչատրեան, *Հայ Միջնադարեան Պատմական Ողբեր*, Երեւան, 1969, էջ 8:

20· «Արարատ» (Վաղարշապատ), 1903, Յունիս, էջ 564–575, Յուլիս, էջ 662–672:

21· Նոյնը, էջ 670:

22· *Տեառն Յովհաննու... ճառք*, էջ 56:

հինգ–վեց պատկերներու՝ մէկը միւսէն աւելի ինքնատիպ. «Ցարատասուց արծաթ ժողովէ»... «Այլ ի բազմաց քրտանց յօրինեն սեղանք նոցա»... «Իբրեւ հողմ ի հուր մտեալ վառէ ի ցասումն բարկութեան անօրէնութիւն ի զրկելիս իւր»... «Ձմիտան գազանեցուցանէ ի ցասումն»...:

Մայրագոմեցիի ոճին առանձնայատկութիւններէն մէկն ալ զարձուածքներն են, որոնց մեծ մասը կու գայ ժողովրդական լեզուամտածողութենէն:

Զարձուածքներով գրելը միջնադարուն կը համարուէր մեծ փարպետութիւն, սակայն յաճախ այդպէս գրելը չարաշահուած է՝ պատճառ դառնալով նիւթի անմատչելիութեան: Սակայն Մայրագոմեցիի ճառերը զերծ են նման խրթնաբանութիւններէ ու ոլոր–մոլոր զարձուածքներէ: Ընդհակառակը, անոնք աչքի կ'իյնան իրենց պարզութեամբ.

«Հրամայեաց քարամբ տալ զբերան նորա»	= քարով ծեծէն
«Հնազանդեցուցանէն զպատերազմ»	= յաղթէն
«Հարստահարել զիւր կամն»	= յամառիլ
«Եթուր յաւազանն»	= ուրացաւ մկրտութիւն
«Ծարաւահատ լինել»	= ծարաւէն մեռնիլ
«Զումար հասեալ կայ ի վերայ»	= խմբովին
«Քնոյ տալ զանձն»	= ննջել
«Լուծանել զչիղս սատանայի»	= յաղթահարել
«Տալ զունկն բանի»	= լսել
«Կապել զանձն ի սէր»	= սիրել

HOVHAN MAIRAGOMETSI: A GREAT MEDIEVAL HOMILIST

MINAS KOJAYIAN

(Summary)

Hovhan Mairagometsi, the well known ecclesiastical figure and firm defender of the Armenian church, who lived in the end of 6th and early 7th centuries, was a prominent homilist, whose works have historical and social value. As a moral philosopher, Mairagometsi fights the materialistic tendencies of the people, pointing out the evils of materialism. His works have also literal and esthetic value.

Արփիար Արփիարեանի լեզուական հայեացքներն ու բառապաշարը

ՊԱՐՈՑՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Արեւմտահայ դրականութեան ու հրապարակագրութեան ամենաչքառու դէմքերէն մին կը հանդիսանայ Արփիար Արփիարեան որ դրական ասպարէզ իջաւ ԺԹ. դարու ութսունական թուականներուն կէսերուն եւ իր գլխաւորած պարբերականներով՝ «Արեւելք» «Մասիս», «Հայրենիք», ու գրողներու խաղանդով՝ Զօհրապ, Կամսարական, Բաշալեան, Օտեան, եւ ուրիշներ, դարձաւ իրապաշ դրականութեան ու քննադատութեան մեծագոյն եւ ամենակրթո դրօշակակիրը, Սվաճեանով ու Պարոնեանով սկսուած մտածողութեան հետեւողական չարունակողն ու զարգացնողը՝ իր ժամանակը իրագրութեան պայմաններուն մէջ։

Արփիարեան՝ դրական, ազգային ու հասարակական գործունէութեան լծուելուս այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ հայ կեանքի մէջ ամիրաներու եւ պատրիարքարանի միահեծան իշխանութիւնը, լայն առումով իր դիրքերը զիջած էր դրամի անզուսպ պաշտամունքով, կենցաղային նոր ախտերով եւ եսակեդրոն բարոյախօսութեամբ տոգորուած քաղքենի դասակարգին, որուն դէմ ծառացաւ ընդիսասդ հրապարակագիրը իր գրչին ամբողջ ուժովը։ Այս առումով, դիպուկ է Գրիգոր Զօհրապի մէկ բնորոշումը. «Գրականութիւնը, իր տարփանքը, դինքը հրապուրող սիրուհին ըլլալ կը թուի(1)։

---

1. Գրիգոր Զօհրապ, *Երկերու ժողովածու*, Ա. հատ., Երեւան, 1962, էջ 419։

Գրական ճակատի վրայ, Արփիարեան դրոհի անցաւ «յետադէմ» վիպապաշտութեան, քարացած դասականութեան եւ անպտուղ սենթիմանթալիզմի դէմ եւ, իր «Կեանքի Պատկերներ»ու շարքով, այդ հոսանքներուն հակադրեց կեանքի իրապաշտ ընկալումը, դրականութեան ժողովրդայնութեան ու նպատակայնութեան սկզբունքը: Անոր կարծիքով, դրողը պէտք էր խորապէս ճանչնար կեանքը եւ ձգտէր անոր վերափոխութեան: Գրողները, կ'ըսէր ան, պէտք է «հորիզոնէն անդին նային»(2), դառնան «ապագայի դուչակողները»(3): Ինչ կը վերաբերի պատմական անցեալի պատկերացման, այդ ալ պէտք է ծառայեցնել ապագային: «Գաղափարական գրականութիւնը անցեալը կը ցոլացնէ ու հեռաւոր ապագան պատրաստելու կը նկրտի»(4): Իր հրապարակագրական ու գեղարուեստական ամբողջ գործունէութեան ընթացքին, Արփիարեան մնաց կըքոտ պաշտպանը դաղափարական դրականութեան, զայն ժողովուրդին ծառայեցնելու սկզբունքին:

Այս հիման վրայ կարելի է բացատրել Արփիարեանի ժխտական վերաբերմունքը հայ թէ օտարազգի յետադէմ դրականութեան հանդէպ, եւ դրական որոշակի դնահատանքը՝ արեւմտաեւրոպական եւ ռուսական առաջաւոր դրականութեան:

Քննադատական իրապաշտութեան իր տեսական բանաձեւումները Արփիարեան չարունակած է շարք մը դրական ուսումնասիրութիւններու մէջ՝ «Պատմուքիւն ժԹ· Դարու Թուրքիոյ Հայոց Գրականութեան» եւ «Արեւմտեան Հայոց Արդի Գրականութիւնը», որոնք առանձին հատորներով լոյս տեսան Գահիրէ՝ 1945 Թ·ին:

Արփիարեանի հրապարակագրական գործունէութիւնը չէ սահմանափակուած միայն Պոլսոյ մէջ իր խմբագրած պարբերաթերթերով, այլ ընդգրկած է նաեւ արեւելահայ մամուլը: Մօտ երեսուն տարիներ ան աշխատակցած է «Մշակ» թերթին՝ հարիւրէ աւելի յօդուածներով, որոնց մէջ արծարծուած են հայ ժողովուրդի երկու հատուածները շահագրգռող ազգային, հասարակական ու գրական հարցեր: Այս իմաստով, Արփիարեան իր գրական–հրապարակագրական գործունէութեամբ, արեւմտահայ գրողներուն մէջ եղած է այն եզակի դէմքը, որ տարիներ չարունակ, հեռուղականօրէն սատարած է հայ ժողովուրդի արեւմտահայ եւ արեւելահայ հատուածներուն գրական–մշակութային կապերուն մերձեցումին ու զօրացման:

2· «Նոր Կեանք», 1900, թիւ 4:

3· Նոյնը:

4· Նոյնը:

♣

Արփիարեան իր իրապաշտ մտածողութեան եւ ըմբռնումնեբուն բերումով, գիտական մօտեցում ցուցաբերած է նաեւ լեզուական հարցերուն նկատմամբ: «Լեզուն, կ'ըսէ ան, նպատակ մը չէ, այլ միջոց մը՝ նպատակի մը հասնելու համար»(5): Լեզուի չինաբարը ժողովուրդն է, ժողովուրդի բերանը... «Այդ բերանը կը պահէ լեզուին հիմերը, որոնք բառերն են, բայց միշտ կը փոխէ ու կը բարեփոխէ... միշտ կը չրջէ, կ'արդիւնաւորէ, բան մը կը պահէ, կ'աւելցնէ, միշտ նոյն խմորը, որ մշտական գոյափոխութեան մը ենթակայ է»(6):

Հակադրուելով դրաբարամոլներուն, որոնք կը պահանջէին տիրական պահել դրաբարը դեղարուեստական գրականութեան մէջ, յատկապէս չափածոյի համար, Արփիարեան կը պաշտպանէր այն միտքը, թէ դրաբարը աւարտած է իր պատմական դերը եւ պէտք է որդեգրել ժամանակի պահանջներուն համապատասխան արտայայտչական նոր միջոց· «Մեզ պէտք է ոչ թէ հնացած, անհասկնալի, մեզ համար առեղծուած եղող լեզուն, այլ մեր ժամանակակից կեանքի ժողովրդային լեզուն»(7):

Իսկ «ժողովրդային լեզու» ըսելով՝ Արփիարեան կը հասկնար ժողովուրդի առօրեայ խօսակցական լեզուն, զոր կը նկատէր գրական լեզուի հարստացման հիմքը: Ան կը թելադրէր գրական լեզուի զարգացման ու ճոխացման համար օգտագործել իրենց կենսունակութիւնը պահած գաւառաբարբառներուն հարուստ պաշարը եւ, վերամշակման գծով առիկա բարձրացնել գրական լեզուի մակարդակին: Ահկ՝ իր հոգածու վերաբերմունքը ժամանակի գաւառացի գրողներուն, որոնց թղթակցութիւններուն լայն տեղ կու տար իր թերթերուն մէջ:

Ըստ Արփիարեանի, գրողը որքան մօտենայ բնական, ժողովրդական լեզուին, այնքան աւելի դիւրութեամբ կրնայ թափանցել անոր խորքը եւ ազդել անոր վրայ, որովհետեւ՝ «ժողովուրդին բերանը մտազաթէն աւելի հարուստ է ու աւելի տեւական իր կեանքին պէս: Երբ օր մը դիմում կ'ընենք այդ բերնին, կը գտնենք բացատրութիւններու, բառերու ահագին մթերանոց մը, որ ինքնին կը հարկադրէ աշխատողը նոր գրականութիւն մը հիմնելու»(8):

5· Գ· Ստեփանեան, *Արփիար Արփիարեան*, Երեւան, 1955, էջ 137:

6· «Հայրենիք», 1894, թիւ 938:

7· «Մասիս», 1890, թիւ 3943:

8· «Հայրենիք», 1894, թիւ 772:

Պատահական չէ, որ Գր. Զօհրապ Արփիարեանի մասին ըսած է. «Իր մշտնջենական պատիւը պիտի ըլլայ մեր մէջ, իր «Օրուան կեանքեր»ովը, առաջին ինքը տանիլը, մօտեցնելը գրականութիւնը ժողովուրդին՝ փոխանակ ժողովուրդը բերելու անխախտ գրականութեան մը անմատչելի բարձունքին»(9):

Արփիարեան իրապաշտական գրականութեան նուաճման հզօր բազոյն ազդակներէն մին կը նկատէր լեզուական տեղաշարժը՝ զարգացումը: Ցատկանշական է ընդգծել, որ ան իր լեզուահայեցողութեան մէջ լեզուի զարգացումն ու անոր կատարած դերը կը դիտէր գիտականօրէն, մեկնելով լեզուի պատմականութեան սկզբունքէն: Լեզուն կը նկատէր պատմականօրէն առաջացած գործօն մը, որուն նպատակն է ծառայել հասարակութեան, որպէս հաղորդակցութեան ու մարդոց միջեւ միտքերու փոխանակութեան միջոց:

Լեզուի դերին մասին նման իրողութիւններ ելակէտ ունենալով, Արփիարեան կը հետեւցնէ թէ այն գրականութիւնը, որ ժողովուրդին կը մատուցանուի անհասկնալի ու թիւր լեզուով, իմա՝ գրաբարով, չի կրնար կատարել իր «առաքելութիւնը» ժողովուրդը լուսաւորելու կամ դաստիարակելու տեսակէտով:

Այդուհանդերձ, Արփիարեան բոլորովին չի ժխտեր գրաբարին կատարած դերը: Անցեալին, մինչեւ որոշ շրջան մը, ան օժանդակած է հայութեան ազգային գոյութեան եւ անոր մշակոյթի վերելքին՝ մնալով անսասան եւ անխախտ: Իսկ այժմ, երբ ժամանակի կարիքները բաւարարելու անատակ է ան, պէտք է հրաժարիլ անկէ, կամ վերափոխել զայն(10):

Աւելին. ան համամիտ չէ գրաբարը որպէս «անպէտք» լեզու արհամարհելու, ընդհակառակը՝ այն ինչ պիտանի է, ընդունելի եւ անհրաժեշտ, պէ՛տք է պահել եւ օգտագործել:

Աշխարհաբարի յաղթանակը համարեայ ապահովուած էր թէ՛ արեւմտահայ եւ թէ՛ արեւելահայ գրական լեզուներուն համար: Վերջինի պարագային, ահա՛ թէ ինչպէս կ'արտայայտուի արեւելահայ անուանի քննադատ Միքայէլ Նալպանտեան.

«Ապրող ծառի ճիւղը, կարելի է միայն ապրող ծառի վրայ պատուաստել. չորացած ծառի ճիւղը, որ կտրես եւ բերես, ապրող ծառն էլ կտրելով նորա տեղը պատուաստես, կամ ապրող ծառը կտրես ու տանես չորացած ծառի արմատի վրայ պատուաստես, եր-

---

9. Գրիգոր Զօհրապ, «*Երկերու ժողովածու*», Ա. հտր., էջ 420:

10. «Ով որ չբարեփոխուիր, կը կորսուի, այսպէս վճռած է գիտութիւնը»: Ա. Արփիարեան, «*Մասիս*», 1890, թիւ 3943:

կու դիպուածումն էլ զուր տեղը կտրեցիր քո ապրող ծառը, որովհետեւ ոչ չոր ծառի ճիւղը պիտի կենդանանայ եւ զարթնի ապրող ծառի վրայ պատուաստուելով եւ ոչ թարմ ու զարթուն ծառը պիտի աճի մեքենայաբար դրուելով չորացած եւ անհիւթ արմատի վրայ»(11):

Արփիարեան՝ նոյն ոգիով ու ակղբունքով, դրաբարը կ'որակէ անչունչ դիակ մը, որ որեւէ ներարկումով չի կրնար վերակենդանանալ:

Անդրադառնալով լեզուակերտումին, Արփիարեան անոր հիմնական մղիչ ուժը, ենթահողը կը համարէ ժողովուրդի խօսակցական լեզուն: Հայ ժողովուրդը հնագոյն շրջաններէն սկսեալ, կերտած է հազարաւոր բառեր, որոնց մէկ մասը սակայն դարձած են անդործածելի. իսկ ժողովուրդին կողմէ սահեցուած բազմազան բառեր ստացած են քաղաքացիութիւն՝ խմաստաւորուելով իրենց նիւթական բովանդակութեամբ:

Արփիարեան զարգացնելով իր միտքը, կը յայտարարէ թէ միայն բառապաշարի հարստացման պարագային չէ որ լեզուն կը դիմէ ժողովուրդին, այլ նոյնիսկ՝ քերականութեան:

Արփիարեանի ակնարկութիւնը տեղին է եւ ճիշդ: Լեզուն կուռ ու միասնական համակարգ մըն է, որուն հիմքը կը կազմեն բառապաշարի հիմնական մասը եւ քերականական կառուցուածքը՝ փոխադարձաբար զիրար ամբողջացնելով: Բառապաշարի տեղաշարժը սերտօրէն կապուած է տուեալ լեզուով խօսող հասարակութեան պատմութեան հետ, որ մեծապէս կ'ազդէ անոր վրայ: Իսկ քերականութիւնը, որ թէեւ անմիջականօրէն կապուած չէ հասարակութեան փոփոխութիւններու ու զարգացման աստիճանին հետ, այդուհանդերձ, այդ երեւոյթը տեղի կ'ունենայ շատ դանդաղօրէն, իւրայատուկ օրինաչափութիւններով ու կանոններով: Քերականական փոփոխութեան ժամանակ, հին լեզուական, քերականական տարրերը կ'ենթարկուին մասնակի փոփոխութիւններու՝ դէպի կատարելագործում ու ճշդրտութիւն:

Քերականական կառուցուածքը ենթակայ է որոշ ազդեցութիւններու.

ա. Երբեմն, լեզուներու խիստ մերձեցման, չիման հետեւանքով, լեզուէ լեզու կրնան անցնիլ ձեւոյթներ, ածանցներ: Այդ

---

11. Միհայէլ Նալպանտեան, *Երկերի լիակատար ժողովածու*, Գ. հատոր, էջ 323:

երեւոյթը տեղի կ'ունենայ միմիայն այն ժամանակ, երբ մերձեցեալ այդ լեզուները ցեղակից են:

բ· Բառափոխութեան միջոցով, լեզուէ լեզու կրնան անցնիլ բառակազմական ձեւոյթներ կամ ածանցներ:

⁂

Նախքան Արփիարեանի լեզուի բառապաշարին քննարկումը, հոս կ'արժէ հպանցիկ կերպով անդրադառնալ կարգ մը հարցերու, որոնք անմիջական կապ ունին անոր լեզուին հետ:

Մամուլին մէջ սփռուած Արփիարեանի քրոնիկային ակնարկներու լեզուն աչքի ինկած է ինքնատպութեամբ եւ իւրայատկութեամբ: Հոչակաւոր հրապարակագիրը, պոլսոյ ժամանակակից կեանքը ներկայացնելու համար ընտրած է ուրոյն ոճ: Այլ խօսքով, ան գործածած է մատչելի ու դիւրահաղորդ ոճ, որ դիպուկ է ու կարուկ, զերծ՝ չաղակրատութենէ եւ աւելորդաբանութենէ:

Ի տարբերութիւն իր քրոնիկներուն սակայն, Արփիարեան իր հետազբօսական, այլ երկարատեւ ճանապարհորդութեան յուշերը գրած է ճապաղ ու չոր ոճով մը: Անշուշտ, այս միջոցին դիմած է դիտումնաւոր, պարզապէս ձերբազատուելու համար ժամանակի խիստ պրաքննութիւնէն ու հալածանքներէն: Իր ճամբորդութիւնը (Կովկաս, Տրապիզոն–Պաթում–Թիֆլիս) նկարագրուած է «Արեւելք»ի զանազան թիւերուն մէջ(12)՝ «Ուղեւորութիւն յԱրեւելս», «Ուղեւորութիւն ի Կովկասիա» եւ «Կովկասեան ճանապարհորդութիւն» վերնագիրներուն տակ:

Բաց աստի, Արփիարեան ընտանեկան դաստիարակութեան առընթեր, արծարծած է նաեւ դպրոցական կրթութեան հրատապ հարցը, ըստ որուն, երեխային մէջ պէտք է զարգացնել ինքնուրոյն աշխատանք կատարելու հնորհքն ու սէրը, դատողութիւնը, ինչպէս նաեւ հասարակութեան օգտակար ըլլալու անհրաժեշտութիւնը:

Ակէ կը բխի իր առաջարկը՝ հիմնական փոփոխութեան ենթարկելու ուսումնական ծրագիրը: Ան կը պահանջէր որ օտար լեզուներուն զուգահեռ կարեւոր տեղ տրուի նաեւ մայրենի լեզուին, որուն թերի ուսուցման գլխաւոր պատճառն է դրաբարը: Նախակրթարաններու մէջ, երեխաներուն խոսքն ուղեղները կը ծանրաբեռնէին դրաբարեան բարդ կանոններով եւ օրէնքներով, «այնպիսի բացատրութիւններով, որոնք իրենց ականջներուն բոլորովին խորթ

12· Տես՝ «Արեւելք», 1894, թիւ 102, 126–127, 128, 136–137, 139–140, 142–143, 147, 157–159, 161–162:

կը հնչէին, զորս սորվելը եւրոպական լեզու սորվելէն չատ աւելի դժուարին է, որուն երբեք պէտք չունի, որմէ եւթ օգուտ մը պէտք չէ տեսնէն»(13):



Ա. Արփիարեան հայ գրականութեան պատմութեան մէջ մուտք գործած է ո՛չ միայն որպէս հրապարակագիր, իրապաշտական գրականութեան հիմնադիրը, այլեւ արեւմտահայ գրական լեզուի ազնուացման ու ծաղկումին ջահակիրը:

Արեւմտահայ գրական լեզուի կանոնաւորման ու ճեւաւորման մէջ, Արփիարեանի վաստակն ու նպաստը զգալի դեր խաղացած են: Հակառակ այս իրողութեան, անոր հեղինակային, եւ մանաւանդ հերոսներու լեզուին մէջ նշմարելի են լեզուական սայթաքումներ եւ անկանոնութիւններ, որոնք խորթ են հայերէնի զարգացման օրինաչափութիւններուն եւ ներհակ նոյնինքն իր պաշտպանած դրոյթներուն, այսինքն՝ այն իրողութեան, որ լեզուն կը բարեփոխուի ու կը նորոգուի աստիճանաբար, երկար ժամանակամիջոցի մը ընթացքին, եւ ո՛չ թէ յանկարծական «պայթիւններու» միջոցով: Արփիարեանի ակամայ մեղանչումը այս ճշմարտութեան դէմ, հասկնալի է երբ նկատի ունենանք անոր լեզուաչինական մտահոգութիւնները:

Արփիարեան բուռն կերպով պայքարեցաւ յանուն իրապաշտական լեզուի յաղթանակին, ծառացաւ անտեղի կերպով օտարամուտ, գրաբարախառն, անգործածական բառերու օգտագործումին դէմ, զարկ տուաւ նորակերտ ու դիւրահասկնալի բառերու օգտագործման: Ի հեճուկս այս նախանձախնդրութեան, իր ստեղծագործութեան տեղական հարազատ երանգ տալու համար, Արփիարեան երբեմն հասաւ անհարկի ծայրայեղութիւններու, որոնք մասամբ մթագնեցին իր լեզուն: Բայց վերոյիշեալ «սայթաքում»ները ոչինչով կրնան նսեմացնել անոր վիթխարի նպաստը լեզուական մարզին մէջ, եւ անոր ազնիւ ձգտումը՝ կեանքը ներկայացնելու իր առօրեայով՝ «ինչպէս որ է»,

Ճաշորդող էջերուն մէջ ներկայացուած ուսումնասիրութիւնը, որ նուիրուած է Արփիարեանի լեզուի բառաչերտաւորումներուն, կատարուած է հեղինակին «Հատընտիր» հատորին հիման վրայ(14):

---

13. «Մասիս», 1889, թիւ 3944:

14. Արփիար Արփիարեան, Հատընտիր, Պէյրութ, 1950: Բոլոր մէջբերուած բառերն ու օրինակները վերցուած են վերոյիշեալ գիրքէն:

♣

Ա.– ԴՐԱԲԱՐԵԱՆ ՏԱՐՐԵՐ

Այս չերտին մէջ ընդգրկուած են լեզուական այն միաւորները, որոնք զուտ դրաբարեան են – հոլովաձեւեր, բառեր, ոճեր ու դարձուածքներ: Այս ուղղութեամբ, նկատելի է որ Աբփիարեան առաւելագոյն չափով խուսափած է գործածելէ դրաբարեան տարրեր, բայց երբեմն անուղղակիօրէն, երբեմն ալ դիտումնաւոր՝ օգտագործած է զանոնք:

Հոլովաձեւերը, որոնք առաւելաբար դերանունի զանազան կիրարկումներն են, աւելի յաճախակի են: Ի դէպ, նման տարրերու գործածութիւնը դերակշռող բնոյթ ունի նոյնինքն հեղինակի լեզուին մէջ, եւ ո՛չ թէ հերոսներու, ինչ որ կ'ապացուցանէ Աբփիարեանի ենթարկուածութիւնը դրաբարի անմիջական ազդեցութեան, որմէ «ձերբազատուիլը» այնքան ալ հեշտ չէր: Ահաւասիկ օրինակները.

Որք (էջ 194, Ա.)(15) – *Ցարաբերական դերանուն, ուղղական հոլով, յոգնակի:*

Զայնս(16) (204, Ա.) – *Ցուցական դերանուն, հայցական հոլով, յոգնակի:*

Զնա (211, Ա.) – *Ցուցական դերանուն, հայցական հոլով, եզակի:*

Աշակերտաց (211, Ա.) – *Իւա արտաքին թեքման խառն հոլովում (վերջադրական բնոյթի), սեռական–տրական հոլովաձեւ, յոգնակի:*

Լինի(17) (218, Ա.) – *Անկանոն բայ, սահմանական եղանակ, ներկայ ժամանակ, գ· դէմք, եզակի:*

Նոքա (218, Ա.) – *Ցուցական դերանուն, ուղղական հոլով, յոգնակի:*

15· Փակագիծերու մէջ նշուած են էջերը, ինչպէս նաեւ հեղինակի լեզուին մէջ գործածուած ըլլալու հանգամանքը՝ Ա = Արփիարեան:

16· Գրաբարի մէջ կը գործածուի նաեւ *զայնոսիկ* ձեւը:

17· Ըստ ուսումնասիրութիւններու, Անկանոն խոնարհում ունեցող բայերու անցեալ հիմքերէն կազմուած ձեւերը, գրաբարի մէջ, կարելի է բաժնել երկու խումբի· Ա) բայեր, որոնց անցեալ կատարեալի հիմքը կը կազմուի նոյն բայէն, որոշ շեղումներով· Բ) բայեր, որոնց անցեալ կատարեալի հիմքէն կազմուող ձեւերը ամբողջովին կամ մասամբ կը ստանան այլ արմատ: Այս երկրորդ խումբին կը պատկանի *լինել* բայը:

Խնդրոց (219, Ա.) – Ո պարզ հոլովում, արտաքին թեքման, սեռական–տրական հոլովաձեւ, յոգնակի:

Որոյ (220, Ա.) – Ցարաբերական դերանուն, սեռական հոլով, եզակի:

Գինւոյ (222, Ա.) – Ուա խառն հոլովում, արտաքին թեքման, սեռական–տրական հոլովաձեւ, եզակի:

Գորովաւոք (224, Ա.) – Իւա խառն հոլովում, արտաքին թեքման, գործիական հոլովաձեւ, յոգնակի:

Անտի (230, Ա.) – Ցուցական յօդ՝ այն դերանուան իմաստով:

Աշխուժիւ (238, Ա.) – Ի պարզ հոլովում, արտաքին թեքման, գործիական հոլով, եզակի:

Օդոյ (242, Ա.) – Ո պարզ հոլովում, արտաքին թեքման, սեռական–տրական հոլովաձեւ, եզակի:

Բարուց(18) (268, Ա.) – Ու պարզ հոլովում, սեռական հոլով, յոգնակի:

Կռմանէ(19) (277, Ա.) – Ա. ներքին թեքման պարզ հոլովում (ներգրական բնոյթի), բացառական հոլովաձեւ, եզակի:

Նմա (292, Ա.) – Ցուցական դերանուն, արական հոլով, եզակի:

Ոյր (351, Ա.) – Հայցական դերանուն, սեռական հոլով, եզակի:

Ժամանակակից հայերէնի բառապաշարի հարստութեան կարեւոր մէկ մասը կը կազմեն նաեւ գործուածքային բառոյթները, իբրեւ բառային մէկ միաւորութիւն հանդէս եկող միաւորներ: Գրաբարեան ոճերն ու գործուածքները, որոնք այս կամ այն չափով մաս կը կազմեն այս շերտին, Արփիարեան մասամբ օգտագործած է, անոնց ընդմէջէն ձեւով մը արտայայտելով լեզուամտածողական իր ինքնատպութիւնը, ստեղծելով նաեւ ազգային լեզուի սեփական բնորոշ գոյներ:

Այս տարրերը, որոնք նոյնպէս զուտ հեղինակային են առաւելարար, Արփիարեան օգտագործած է զանոնք, պարզապէս անհրաժեշտութիւն նկատելով: Անոնց գոյութիւնը՝ ի պահանջել հարկին եւ տեղին, բնական է որոշ քաղցրութիւն, ներքութիւն ու դիւթեղութիւն կը ներշնչէ ընթերցողին: Անչուշտ, այս տարրերուն գոյութիւնը, Արփիարեանի լեզուին մէջ սահմանափակ բնոյթ ունի եւ

18· Ուղիղ ձեւն է *բարք*: Անեզական բառ է:

19· Թէեւ Արփիարեան կ'ըսէ· «*Ժողովուրդը չ'ըսեր կռմանէ, այլ կ'ըսէ կռմէն*» («*Հայրենիք*», 1892, թիւ 282), այնուամենայնիւ իր մօտ կը գտնենք *կռմանէ* գրաբարեան հոլովաձեւը:

ոչ սիրական։ Այս կապակցութեամբ ան բարենիշ մը կ'արձանագրէ իր օգտին, մանաւանդ երբ նկատի առնենք ժամանակաշրջանի «դրաբարախառն մթնոլորտը»։ Օրինակներ.

Ա՛յլ դարբ, ա՛յլ բարբ, ձայնեց անդիէն... պաշտօնական ներկայացուցիչը (56, հերոս)(20)։

Ոչ ուրեք(21) *գթութեան հանդիպեցար* (290, Ա.)։

Ի վաղուց աւետ, Հայրապետ Էֆենտի... Հուրջը կը համախմբէր պատարագուոր սրբազանը, քահանայից դասը, խորհուրդը եւ երեւելիները (22, Ա.)։

Ի լուր այդ ձայներուն, անկոչ այդ հիւրերը լեզապատառ փախան (24, Ա.)։

Հոն ուր մենք կը մնանք գրեթէ անտարբեր, կային կիներ ու աղջիկներ որ ի ցոյց կը դնէին իրենց հետաքրքրութիւնը (203, Ա.)։

Մեծարանաց խօսքեր առ մի անփորձ աղջիկ՝ յաղթանակի գրաւական կրնան համարուիլ (221, Ա.)։

Մերթ ընդ մերթ ալիքները կու գան ընդհատել ազօթից մըրմունջներն եւ ի յուշ ածել տառապեալ հոգւոյն՝ կեանքի տխուր իրականութիւններն (232, Ա.)։

Բայց եւ այնպէս անախորժ միջադէպ մը համարեցին նոքա զայն, քանզի ու աւիւն կորած (237, Ա.)։

Մեզ անկ չէ զատուոր կանգնիլ (248, Ա.)։

Ուրեմն իրենք ամէնքը ծռախօ՞ս էին, ընդ որս եւ մեր երանաշնորհ նախահարքն (238, Ա.)։

Հոգվրաիքն ի ճեմ կ'ելլեճիք (348, Ա.)։

Եւ իցէ թէ, այդ հին նորութիւնը ներչնչէ երկրին մէջ ամէն բնակողները (349, Ա.)։

Առ ձեռն խոչորկեկ մը մեռցնելու էին... ինչպէս գրաբարի վէճերուն առեն Գուրգէն Էֆէնտինիս մեզի կը պատգամէր (367, Ա.)։

Դրական հարցումներուս ի պատասխանի... գոչեց Պատրիկօֆ (413, Ա.)։

Բ.— ՀԻՆՑԱԾ ԲԱՌԵՐ

Արփիարեանի լեզուին յատուկ է գործածութիւնը այնպիսի տարրերու, որոնք առայժմ դասուած են հինցած (archaic) *բառերու շարքին։*

---

20. Ցետայսու՝ հ = հերոս։

21. *Ուր-եք* բաղադրութեամբ կազմուած, որ կը նշանակէ ոչ մէկ տեղ. այժմ հնացած։

Նման բառեր ազերս չունին մշակութային, տնտեսական եւ այլ տեղաշարժերու հետ, այլ ստեղծուելով որոշ ժամանակաշրջանի մը, զանազան հեղինակներու կողմէ, իրենց անզօրծածուքեան, կամ անընդունելութեան պատճառով դուրս հանուած են չրջանառութենէ:

Բառերը իրենց բառակազմական երեւոյթով խորթ չեն, այլ հարապատ՝ հայերէնի բառապաշարին. սակայն իրենց անզօրծածականուքեան պատճառով, մնացած են լոկ բառարանի սահմաններուն մէջ: Թէեւ կան կարգ մը բառեր, որոնց «վերակենդանացումը» կըբնայ որոշ կենսունակութիւն տալ բառապաշարին:

Իրրեւ բառական ձեւեր, «հինցած բառեր»ը կորանցուցած են իրենց ժողովրդական եւ օրինական հրապոյրը, եւ վերածուած բառարանային անբոյր եւ անհասկնալի մխուրներու: Այսուհանդերձ, անոնք կը ներկայացնեն մեր բառապաշարի պահեստային մասը, եւ բնականաբար, այս կամ այն չափով կ'ազդեն լեզուի զարգացման ընթացքին վրայ: Այժմ, բերենք օրինակներ (տալով նաեւ անոնց իմաստները), որոնք տեղ գտած են Արփիարեանի լեզուին մէջ.

Քաջավարժ նչանառու (26, Ա.) – *Լա՛ւ վարժուած, հմուտ:*

Ակնակառոյց կը մնար փաչայութեան (66, Ա.) – *Աչքը յառել, սեւեռել բանի մը:*

Վաղնջուց *բարեկամ* (66, Ա.) – *Վաղեմի, հին:*

Պարագրուած *թուղթեր* (124, Ա.) – *Շրջափակուած:*

Պուխարայի անդէորդներ (148, Ա.) – *Նախարապաններ:*

Գերախանչ *արարած* (247, Ա.) – *Ինքնահաւան, ամբարտաւան:*

Ռազմամուտ *սերունդ* (315, Ա.) – *Պայքարի մէջ մտնող:*

Հանգուցատիպ *պաղպաղարներ* (319, Ա.) – *Ցար եւ նման:*

Պատկանդարան (320, Ա.) – *Նեղի ման, կապարճ:*

Օտարախորք *դաւակներ* (327, Ա.) – *Անհարազատ:*

Թեւազգեաց *հրեշտակապետ* (346, Ա.) – *Թեւեր հագած:*

Սպառսպուռ *ջնջում* (349, Ա.) – *Ի սպառ, հիմնայատակ:*

Սեւաթորմի *զրպարտանք* (380, Ա.) – *Մթագոյն:*

Մահացաւ *հով* (385, Ա.) – *Մահ սփռող:*

Ջէֆուչէֆ *ընել* (385, Ա.) – *Ապօրինի հարկ պահանջել:*

Ջովացիր *կաղնիներ* (385, Ա.) – *Ծիլեր արձակող:*

Հրապարակալուր *դատավարութիւն* (418, Ա.) – *Բոլորին յայտնի:*

Երկիւղալից ականոդիճ (437, Ա.) – *Աչքեր:*

Բաղադրութեան օրէնքները բայակազմութեան մէջ եւս կիրարկելի են: Նման եղանակով բառոյթներ կազմուած են մեր լեզուի զարդացման բոլոր շրջաններուն, մասնաւորաբար աշխարհաբարի մէջ: Այս երեւոյթը Աբփիարեանի լեզուին համար, փոքր համեմատութեամբ, օրինաչափ է: Այսպէս.

Նոյնհետայն իր արաբը երթալով, կրակ վառեց եւ Ատուածաչունչը խարուկեց (31, *Ա.*):

Մեծարանքի խօսքեր... յաղթանակի գրաւական կրնան համբաւել (222, *Ա.*):

Գերեզմանատուները ժողովուրդներու կեանքը կը կենդանագրեն (311, *Ա.*):

Մեր գալուկը խառնամառնելով նորածիլներուն անոյշ-կանանչին... անոնց էսթետիք ներգաչնակութիւնը չե՞նք խաթարեր (310, *Ա.*):

Գրաչարը չատ անգամ մոայլ մտածողութիւններով կը սեւամաղձոտէր (147, *Ա.*):

Գ.— ՀԱՅՕՒԱԴԻՊ ԳՈՐԾԱԾՈՒՈՂ ԲԱՌԵՐ

Այսօրինակ բառերու գոյութիւնը եւս տեղ կը գրաւէ Աբփիարեանի լեզուին մէջ: Բառապաշարի այս չերտը պայմանական բնոյթ ունի: Որոշ հեղինակներ իրենց ստեղծագործութեանց մէջ, երբեմն կը գործածեն ներքոգրեալ բառերը՝ արտայայտելու համար իրենց մտքերը, յոյզերն ու տեսակէտները: Այնուամենայնիւ, մէկ բան պարզ է, այն, որ այս կարգի բառերը իրենց հազուագէպ գործածութեամբ, կրնան անհասկնալի ու նոյնիսկ անհարազատ ըլլալ, մանաւանդ մեծին ընթերցողին, որ ակամայ կը դիմէ բառարանի մը գործածութեան, թէեւ ոչ բոլոր բառարաններու մէջ կարելի է գտնել այս բառերը:

Սակայն, յաճախակի գործածութեամբ, հնարաւոր է որ անոնք դառնան կենսունակ ու գործօն բառեր, ի մասնաւորի կարգ մը բառեր, որոնք կրնան հարստացնել բառապաշարը:

Այս տիպի բառերը, անգործածութեան պատճառով դատապարտուած են անցնելու հինցած բառերու շարքին:

Ժամասացութիւնը թաչել (15, *Ա.*) – *Արագ-արագ խօսելով վանկերը կուլ տալ:*

Խռովախուժ *բազմամբոխ* (52, *Ա.*) – *Խռովայոյզ:*

Փառատեսիլ *զգացումներ* (73, *Ա.*) – *Շատ փառասէր:*

Մտքի ստորմիք (117, *Ա.*) – *Խոր ու ծածուկ տեղ:*

Մեռելաստան *աչխարհ* (176, *Ա.*) – *Գերեզմանատուն:*

Ամօթազեղ *դեղեցկութիւն* (211, Ա.) – *Ամօթխածութենէ պեղեցկացած*:

Ցանկարծաթափ (246, Ա.) – *Ցանկարծակի յարձակումով*:

Մբիչաղը երգունել (311, Ա.) – *Երգով զարդարել*:

Մարմնաոիկ (316, Ա.) – *Թիկնեղ*:

Դժոխաբարկ (319, Ա.) – *Մաստիկ բարկացած*:

Արփաթեւել (334, Ա.) – *Լուսաթեւել*:

Շիրմաստան (348, Ա.) – *Գերեզմանատուն*:

Զգայնիկ *յանդաբերութիւն* (348, Ա.) – *Դիւրազգաց*:

Յոխորտապանծ (358, Ա.) – *Պարծենկոտ, հպարտ*:

Արծուեռուզ *մարդ* (370, Ա.) – *Կոր քիթ ունեցող*:

Արիւնամոլ ճահուկ (378, Ա.) – *Կենդանիներու խումբ*:

Տախտապար *հնութիւններ* (388, Ա.) – *Տարածուն*:

Խժաբարբառ (402, Ա.) – *Կոշտ ու կոպիտ լեզու*:

Գայռազեղ (413, Ա.) – *Վանդակ*:

Կարծրակուռ *միտքեր* (414, Ա.) – *Քարացած, պինդ*:

Հերապանծ *երիտասարդ* (434, Ա.) – *Վարսագեղ*:

Կոշկոճիչ *թակ* (441, Ա.) – *Տանջող, ծեծող թակ (բուրդ ու միս ծեծելու մասնաւոր փայտ)*:

Խորայոյզ *հոգի* (442, Ա.) – *Խորքերը հետազօտող*:

Դ.– ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌԱՑԻՆ ԲԱՌԵՐ

Այս բաժնին մէջ կը մտնեն գաւառաբարբառներուն մէջ գործածուող, բայց գրաբարին, մինչեւ հայերէնին եւ արդի գրական լեզուներուն մէջ, նոյնիսկ նուազագոյն տարբեր հնչիւնական ձեւով հանդէս եկող բառեր:

Գրական երկերու մէջ բարբառային բառերը կ'օգտագործուին հերոսներու խօսքը դիպուկ գարձնելու, երանգաւորելու համար: Սակայն, ատոնց անտեղի օգտագործումը կ'աղճատէ, կը կոպտացնէ լեզուն: Գեղագիտական ճաշակի տէր գրողները, այս տարրը կ'օգտագործեն չատ զգուշութեամբ:

Արփիարեան մեծ կարեւորութիւն տուած է գաւառաբարբառներուն, զանոնք համարելով աշխարհաբարի կազմաւորման ու ճեւաւորման, ինչպէս նաեւ գարգացման կարեւորագոյն ազդակներէն մին, որ «յանցաւոր կերպով չօգտագործուած վիթխարի հարստութիւն է»(22):

22· «Սովետական գրականութիւն», 1951, թիւ 9, էջ 125:

Օգտագործել այսօրինակ բառեր, կը նշանակէ ըլլալ զուսպ, չափաւոր ու զգոյշ։

Այս ուղղութեամբ, հաւատարիմ իր լեզուական ըմբռնումին, Արփիարեան մնացած է օրինական սահմաններու մէջ, համեմատաբար փոքր տեղ տալով այս խմբաւորումին պատկանող բառերուն։ Այսպէս.

– Ըրաւ չըրաւ, մինչեւ էրզրումէն խոզ ճարեց ու ղեղը բերել տուաւ եւ արտերը սայպեց (արձակեց) (28, Ա.)։

– Խեղճ տղուն ուղեղը խժլտուքով (աղմուկ) լեցուած էր, պիտի ճայթէր (35, Ա.)։

– Ֆրխտաս երկինքը ցաքած (ծագած) տրամանոյշ լուսնկային պէս կը խանդաղատէր իր սիրտը (37, Ա.)։

– Մեծ աղան շլմորթեցաւ (չփոթեցաւ), գաւթին դուռնէն արագաքայլ դուրս ելաւ խռովեալ (55, Ա.)։

– Վեց տարի էր, որ Օրթագեղի ժամը կը լփտտուէր (խըլտար), հայ ժողովուրդը կազդուրող հաւատարձարձ «Ազատութիւն»ը (88, Ա.)։

– Աղա ամուճա, պատասխանեց աղջիկը խեղըպնալով (ամըչնալով), ծոմ պիտի բռնեմ (119, Ա.)։

– Երկնուցը մեներ (ածուխի մնացորդ) ու մոխիր կ'անձրեւէ (319, Ա.)։

– Սուրբ Աթոռոյն կրօնաւորներէն կը տեսնուին... վաֆդէշը (հովասուն տեղ՝ ջաղացքին մօտ), բուրաստանին մէջը (386, Ա.)։

ե.– ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Լեզուի ժողովրդայնութիւնը բանաստեղծի նախապայման է։ Այնուհետ, այս իրողութիւնը պայմանաւորուած է ժողովրդական-խօսակցական տարրերու ու ձեւերու հմուտ օգտագործումով։

Ժողովուրդի կենցաղն ու սովորոյթները ներկայացնելու համար, Արփիարեան կ'ընտրէ նկարագրութեան ընդհանուր հենքին համապատասխան հնչիւններ՝ ժողովուրդի բերնին մէջ ամենուրեք եւ ամէն օր հնչող բառեր, բառակապակցութիւններ, արտայայտութիւններ, եւայլն։ Ահաւասիկ կարգ մը նմոյշներ.

Ու՛ր հիմակ իր սովորութիւնները բնազդի մը ճնշումով կը վարէին Տէրունական օրերուն իր կենցաղը (11, Ա.)։

Ագնուաչուքներուն մէջ տարիքովն ու դիրքովը էն հեղինակաւորը մեղմաձայն հարցուց... (14, Ա.)։

Ինքն իր վրայ ջանք ըրած էր... որպէսզի հանդիսաւոր ուրախութիւնը չհարամնայ (22, Ա.)։

Սրիկ փշիկ պզտիկուց յայտնի է (30, Հ)։

Դեղացիները պատուելին վրայ թափեցան եւ սկսան տփել (32, Ա)։

Անիկա արմուկովը Գաբրիէլը մշտեց՝ քովերնուն ճիւպպէլի մարդ մը անցած տեսեր (33, Ա)։

Պահք ու ծոմ չբռնողը ինտո՞ր քրիստոնեայ կ'ըլլայ (34, Հ)։

Աղէկ եղանակին, թէ՛ մօտիկ գեղերէն թէ քաղաքէն ժողովուրդը Տէր Յուսիկը լսելու կու գար (40, Ա)։

Մեզի կեանք տուող ցորենին ան պտտիկ հատիկները ունենալու համար, ուժով եղներ պէտք են (40, Հ)։

Ուժովը մէկալն է (41, Հ)։

Քաղէէն եկան ու հոգիներուն համար գործին գլուխը անցան (46, Ա)։

Իշտէ հոռոմները ասանկ խաչ կը հանեն, կ'ըսէր (58, Հ)։

Հրահանգը սրբագանէն գալու է եւ ոչ թէ ֆեմէ, հասկցա՞ր (58, Հ)։

Սիրտը պաղշտկեցաւ, ու «օ՛խ» մը քաշեց (67, Ա)։

Կօշիկները հանելով ֆանափէյի մը վրայ երկնցաւ (80, Ա)։

Շաբխան, սեաբքինը եաքի օրերն ալ կրնային գնել (102, Ա)։

Երկու ոսկիէն էլել պէտք էր (117, Ա)։

Արմիկին աչքը մինչեւ իրիկուն դուռը մնաց։ Նշանածը չէր ի գար (133, Ա)։

Վարդենի տուտուն բաւական առեն սպասելէ յետոյ ֆէսֆէսէ ընելով վեր ելաւ (156, Ա)։

Ամիրաները պատրիարքարանը սէտիրներու վրայ համաբոլոր ակումբ կազմած, չպուխնին կը քաշեն (317, Ա)։

Շամտանճեան շիֆ երիտասարդ մը, մեզի ամենուս տարեկից, պատուական ընկեր մը կ'ըլլար (401, Ա)։

Նմանօրինակ այլ բառեր են նաեւ հետեւեալները՝ փինճան (15), իրեֆ (102), խալսած (104), սարաֆ (117), մենճ (122), տէրտ (123), հերսոտիլ (143), թօփուզ (158), եասախճի (316), պէլա (326), մեճէ (338)։

Ինչպէս երեւան կու գայ, վերոյիշեալ բառերը գուտ ժողովրդական խօսքի եւ ասքի գրականացած լեզուի քնյոթ չունին, այլ բխած են տեղւոյն առօրեայ խօսակցութենէն. մաս մը առնուած՝ գաւառաբարբառներէն՝ յատկապէս Պոլսոյ, ուրիշ մաս մըն ալ՝ թրքերէնէն, որոնք(23) *ի բացառեալ կարգ մը բառերու, երբեմն*

23· Օգտագործած է նաեւ լատինական *մխտիկ* (337) բառը։

հասած են անհարկի չափազանցութիւններու, նոյնիսկ հեղինակի լեզուին մէջ։

Զ.– ՆՈՐԱԿԵՐՏ ԲԱՌԵՐ

Արփիարեանի լեզուին բառային կազմին մէջ, ուշագրաւ են բառական այնպիսի միաւորներ, որոնք երբեմն ձեւի կամ իմաստի, երբեմն ալ երկուքին պարագային, որոշ փոփոխութիւններու կամ կազմութեանց ենթարկուելով՝ երեւան կը բերեն բառական նոր արժէքներ (բառաձեւեր), հարստացնելով հայոց լեզուին բառագանձը։

Այս չերտը կը հանդիսանայ Արփիարեանի լեզուին նորարար հիմնական մասը, որ նոր լիցք ու որակ կու տայ ընդհանրապէս իր ժամանակաշրջանի ու մասնաւորապէս հետագայ արեւմտահայ գրական լեզուի զարգացման։

Արփիարեան իր գեղարուեստական արձակին ու նոյնիսկ հրապարակագրութեան մէջ, զանազան երեւոյթներ նկարագրելու ու հարցեր արծարծելու ժամանակ, անհրաժեշտութիւն զգացած է մեր բառապաշարը իր բոլոր չերտերով՝ միաւորներու հին ու նոր առումներով, հարստացնել նորակերտ բառերով, որոնց մեծ մասը այսօր կարելի է մտցնել գործառութեան մէջ։

Այս առնչութեամբ, Արփիարեան դիմած է մեր լեզուին զարգացման ամենակենսատու, յարահոս աղբիւրին՝ հայերէնի ներքին հարստութիւնը պայմանաւորող, ճկուն եւ անսահման բաղադրութիւններու օրէնքին։

Իրօք, հայերէնը այս տեսակէտէն կրնայ մրցիլ զարգացած որեւէ օտար լեզուի հետ։ Հասկացութիւնն ու մտածողութիւնը իր ուզած ձեւով արտայայտելու համար, Արփիարեան կը կազմէ նոր բառեր ու բառազուգորդութիւններ՝ կեանքի ուղեկիր տալով անոնց եւ նպաստելով բառապաշարի հարստացմանը։ Ահաւասիկ օրինակներ(24)·

Ամրարձիկ հոգիներ (13, Ա) = *ամուր–արձ–իկ*։ Գործածելի բառ մը։

Պերճաբարբառ արտայայտութիւն (15, Ա) = *պերճ–ա–բարբառ*։ Գործածելի, բայց անկենսունակ բառ։

Արբայապիղծ չնազանդութիւն (17, Ա) = *արքայ–ա–պիղծ*։ Տեղին կազմուած բառազուգորդում՝ սրբապիղծ բառի առնմանութեամբ։

24· Իւրաքանչիւր ընդգծուած մէջբերումին դիմաց տրուած են տուեալ բառին կազմութեան բաղկացուցիչ իմաստակիր մասերը, ինչպէս նաեւ որոշ բացատրութիւններ եւ ակնարկութիւններ։

Սպառնացայտ չէչա (17, Ա.) = սպառ(ն)–ա–ցայտ։ Արտայայտիչ բառազուգորդութիւն։

Դեզացինները երկաթխրութեան մէջ օրէ օր կը յառաջդիմէին (25, Ա.) = երկաթ–սէր–ութիւն։ Ըստ պահանջի կազմուած բառ։

Հեգնաժպիտ ըսել (62, Ա.) = հեգ(ն)–ա–ժպիտ։ Իմաստալից բառակազմութիւն։

Հրաւիրակ(25) (78, Ա.) = հրաւէր–ակ (հրաւիրող, կանչող իմաստով)։ Անհրաժեշտութիւն ներկայացնող բառ։

Պարեճգին (121, Ա.) = պարեն–գին։ Ձիշդ բառակապակցութիւն։

Շուկայախօս սրամտութիւն (122, Ա.) = շուկայ–ա–խօս։ Դիպուկ ու խօսուն բառակերտում։

Թուաբանուհի (123, Ա.) = թիւ–ա–բան–ուհի։ Ըստ անհրաժեշտութեան ստեղծուած բառ՝ չէչտելու համար իգական սեռի պատկանելիութիւնը։

Մեղմալոյս հրատու (124, Ա.) = մեղմ–ա–լոյս։ Պատկերաւոր բառակազմութիւն։

Մեծալուրջ սրտնեղութիւն (164, Ա.) = մեծ–ա–լուրջ։ Շինծու բառազուգորդում, որ սակայն, լեզուականօրէն ընդունելի է։

Կայթատօն (186, Ա.) = կայթ–ա–տօն։ Պատկերաւոր բառակերտում։

Կրկնամուսնութիւն (195, Հ) = կրկ(ն)–ա–ամուս(ն)–ութիւն։

Ցանուցիր ընկերութիւն (196, Ա.) = ցան–ու–ցիր։ Ցիրուցան բառի չրջումով ստեղծուած բառ։

Շղթայապիրկ (259, Ա.) = շղթայ–ա–պիրկ։ Պատկերաւոր բառ մը։

Անդրաչուել (265, Հ) = անդր–ա–չու(ել)։ Տրամաբանական բառակերտում։

Աշնանազարդ ծառեր (310, Ա.) = աշուն–ա–զարդ։ Ամբողջ տեսարան մը ներկայացնող արտայայտիչ բառակերտում։

Թախծերանգ վայլ (310, Ա.) = թախիծ–երանգ։ Բանաստեղծական ցայտուն բառակապակցութիւն։

Դալար դափնեստան (311, Ա.) = դափնի–ստան։ Անհրաժեշտութեան միտումով ստեղծուած բառ։

25· Առարկայացնող իմաստ կ'արտայայտէ ակ վերջածանցը, որ կը դրուի ածականներու, բայարմատներու, բայահիմքերու, թուականներու ու մակբայներու վրայ։

Ոսկրագիր պատմութիւն (312, Ա.) = ոսկոր–ա–գիր: Տխրութիւն ու ողբերգութիւն արտայայտող փոխաբերական իմաստով կերտուած բառ:

Հասոյթի դրամերակ (315, Ա.) = դրամ–երակ: Արհեստական բառ, որ սակայն գործածուած է տեղին:

Նօսրավազ (315, Ա.) = նօսր–ա–վազ: Պատկերաւոր բառակերտում:

Մեծազայրոյթ բարկութիւն (317, Ա.) = մեծ–ա–զայրոյթ: Բարկութիւնը ընդգծելու նպատակով կերտուած բառ:

Խաւարակերտ եկեղեցականութիւն (320, Ա.) = խաւար–ա–կերտ: Իր օրերու հոգեւորականութեան դիմագիծը ցայտուն կերպով արտայայտելու համար ստեղծուած բառ, որ կ'արտացոլէ հեղինակին ցաւումը այդ դասին նկատմամբ:

Մթաստուեր ամիրայութիւն (320, Ա.) = մութ–ա–ստուեր: Նոյն մտահոգութեամբ կազմուած նորակերտ բառ:

Ձիրանաթափ բռնակալութիւն (325, Ա.) = ճիրան–ա–թափ: Բռնակալ իշխանութեան մը անզօրութիւնը չեշտող պատկերաւոր բառ:

Նոր ժամանակներու թշնամութիւնն է որ կը տխրափայլի (327, Ա.) = տխուր–ա–փայլ: Վիշտի ու տխրութեան տրամադրութիւն բացայայտող նորակերտ բառ:

Ուրեմն իրենք ամէնքը ծռախօ՞ս էին (328, Ա.) = ծուռ–ա–խօս: Տրամաբանական բառակերտում մը:

Մեղմաւաչ (329, Ա.) = մեղմ–աւաչ: Հանդարտութիւն ու լռութիւն խորհրդանշող նուրբ բառ մը:

Անոնց ազեղութիւնը աւերակրկիտէն չեն հարցներ (330, Ա.) = աւեր–ա–կրկիտ: Կազմուած է մանրակրկիտ բառին առնմանութեամբ, որ այնքան ալ յաջող բառակերտում մը չէ:

Մխրճած ազնուաձար (331, Ա.) = ազնիւ–ա–քար: Կարելի է գործածել նիւթի մը արժէքաւոր ըլլալը մատնանշելու համար:

Ջերմատագնապ ժողովուրդ (332, Ա.) = ջերմ–ա–տագնապ: Հաւաքականութեան մը մոլեգնութիւնը արտայայտող բառաքարոզում մը:

Վերերեւակ (332, Ա.) = վեր–երեւ–ակ: Մէկ բառով արտայայտուած իմաստակիր տեղին բառակերտում:

Հերոսերգակ բանաստեղծներ (336, Ա.) = հերոս–երգ–ակ: Գրականագիտութեան մէջ չրջանառութեան ատակ դուներ բառ:

Մոլորահետ ճամբայ (336, Ա.) = մոլոր–ա–հետ: Շրջանառութեան իրաւունք ունեցող անհրաժեշտ բառ:

Օձասոյլ *խնդուք* (334, Ա.) = *օձ–ա–սոյլ*։ *Դիպուկ բառակերտում՝ վերագրելի նենգամիտ ու կեղծաւոր ժպիտներու կամ քմծիծաղներու*։

Արուեսակաբկաք *սիրտ* (341, Ա.) = *արիւն–ա–կաթ–կաթ*։ *Ողբերգութիւն մը ներկայացնելու բառազուգորդում*։

Ցեղասիրական *վայրագ տրամաբանութիւն* (346, Ա.) = *ցեղ–ա–սէր–ական*։ *Ցեղի մը պատկանելու մոլեռանդութիւնը բացայայտող տեղին բառազուգորդում*։

Ծաղկաճուաճ (353, Ա.) = *ծաղիկ–ա–նուաճ*։ *Զախող եւ անհմաստ բառակերտում մը. սակայն այս ձեւով կարելի է կերտել պատկերալի այլ բառեր, որոնք կրնան տպաւորիչ նշանակութիւն ունենալ (օրինակ՝ մարտաճուաճ)*։

Խելատուփ (357, Ա.) = *խել(ք)–ա–տուփ*։ *Այլաբանական իմաստով ստեղծուած դիպուկ բաղադրութիւն մը*։

Փողայարոյց *համարել* (362, Ա.) = *փող–ա–յարոյց*։ *Ցաջող բառակերտում մը*։

Հոգեքեւ *թափառայածիլ* (377, Ա.) = *հոգի–թեւ*։ *Բանաստեղծական բառ*։

Րոպէավազ *արագութիւն* (377, Ա.) = *րոպէ–ա–վազ*։ *Ի պահանջել հարկին գործածելի բառ մը*։

Դրամապահանջ (381, Ա.) = *դրամ–ա–պահանջ*։ *Աւրհեստական բառակերտում մը, որ սակայն կարելի է ըստ պահանջի գործածել*։

Մտախարխաք (385, Ա.) = *միտ(ք)–ա–խարխաք*։

Դիակենակոյտ *չեղջ* (385, Ա.) = *դիակ(ն)–ա–կոյտ*։ *Ճիշդ բառակապակցութիւն մը, որ սակայն, իմաստային առումով ժամանակավրէպ է*։

Նապաստակաճետ *դիւցազնից սրտին* (388, Ա.) = *նապաստակ–ա–ճետ*։ *Փոխաբերական ու հեղնական նշանակութեամբ ստեղծուած տրամաբանական բառ մը*։

Ազգայնայեղձ *ինքնամոլութիւն* (390, Ա.) = *ազգ(այն)–ա–յեղձ*։ *Բովանդակալի բառազուգորդում մը*։

Հրաշապանծ *առաքելութիւն* (390, Ա.) = *հրաչ(ք)–ա–պանծ*։ *Իմաստակիր եզակի բառակերտում մը*։

Առատապաշար *նիւթ* (412, Ա.) = *առատ–ա–պաշար*։ *Ցոյժ կենսունակ եւ անհրաժեշտութիւն ներկայացնող բառ*։

Կովկասառաք *պատգամաւոր* (413, Ա.) = *Կովկաս–առաք*։ *Շինծու բառ մը, որ կազմուած է ըստ անհրաժեշտութեան*։

Հոմերաճուագ *հերոս* (417, Ա.) = *հոմեր–ա–նուագ*։

Գաղափարատարածում (418, Ա.) = գաղափար–ա–տարածում։

Փառամոլուցք (419, Ա.) = փառ(ք)ա–մոլուցք։ Տեղին կազմված արտայայտիչ բառակերտում մը։

Երիտասարդները կ'իյնան հաւատախաբ (424, Ա.) = հաւատա–ա–խաբ։ Բովանդակալի, դիպուկ բառ։

Ցայտարարեց խօսակիցը խստակարծ (438, Ա.) = խիստ–ա–կարծ։ Պատկերաւոր կենսական բառ մը։

Ազգավրէժ բողոքարկու (438, Ա.) = ազգ–ա–վրէժ։ Ըստ անհրաժեշտութեան կերտուած իմաստալից բառ։

Ինչպէս է յայտ կու գայ վերոյիշեալ օրինակներէն, Արփիարեան սոսկ ձեւապաշտ բառակերտիչ մը չէ եղած, ընդհակառակը՝ լեզուաղարգացման չինիչ նպատակներով, մասնաւորապէս հայոց լեզուի բառակազմական ճկուն միջոցներու նկատառումով, ան լաւագոյնս կրցած է օգտագործել բառակերտումը՝ հարստացնելով հայոց լեզուի բառապանծը։ Աւելին՝ պէտք է ըսել, թէ վերոյիշեալ բառերուն առաւելագոյն տոկոսը այսօր կարելի է չրջանառութեան մէջ մացնել։

Մեր ուսումնասիրութեան ընթացքին, Արփիարեանի լեզուին մէջ նկատած ենք բառակերտական հետաքրքրական այլ երեւոյթ մը. հեղինակը կարդ մը բառ–արմատներէ երբեմն կազմած է նորակերտ բառակապակցութիւնները, որոնք իրենց բնոյթով յատկանշական տեղ կրնան ղրաւել ընդհանրապէս լեզուաչինութեան ու մասնաւորապէս բառաչինութեան մարզին մէջ։ Այսպէս.

Նուրբ բառէն կազմուած բառեր են՝ նրբահեծիւն (13, Ա.), նրբահածիւն (316, Ա.) ու նրբաժպիտ (436, Ա.) բառակապակցութիւնները, որոնք անտարակոյս, կրնան ստեղծել սքանչելի իմաստակիր պատկերներ ու զաղափարներ։

Արծ արմատէն՝ ուսարծարծ (13, Ա.) եւ հաւատարծարծ(26) (88, Ա.) բառակապակցութիւնները։

Շունչ բառէն՝ փրանիսաշունչ (320, Ա.), համայնաշունչ (335, Ա.), զեփիւռնաշունչ (387, Ա.), յեղափոխաշունչ (422, Ա.)։ Բացի ա–ռաջինէն, միւս երեք նորակերտ բառերը հոյակապ ներդրում մըն են մեր բառապաշարին մէջ։

26· Այս բառը հասած է որոշ յաճախականութեան մը՝ հաւատք ներշնչելու իմաստով։

Բորբ *արմատէն*՝ բոցաբորբ (12, Ա.) եւ խաւարաբորբ(27) (313, Ա.) *բառերը*:

Բեկ *արմատէն*՝ վաստակաբեկ (22, Ա.), հոգեբեկ (365, Ա.), կորովաբեկ (439, Ա.) *բառերը*:

Հար(28) *արմատէն*՝ շրջահար (25, Ա.) եւ կռահար (341, Ա.) *բառերը*:

Կուռ *արմատէն*՝ բազմակուռ (313, Ա.) եւ *մթակուռ* (313, Ա.) *բառերը*:

Կղեր *բառէն*՝ կղերաբոյր (320, Ա.), կղերագիշատ (320, Ա.), կղերամագիլ (325, Ա.) *բառերը*:

Արիւն *բառէն*՝ արիւնաշող (347, Ա.), *արիւնամոլ* (377, Ա.) եւ արիւնոռոգ(29) (348, Ա.) *բառերը*:

Մարտ *բառէն*՝ գաղափարամարտ (384, Ա.) եւ *հզօրամարտ* (409, Ա.) *բառերը*:

Մահ *բառէն*՝ մահակերտել (312, Ա.), սաստկամահ(30) (366, Ա.), մահախինդ (389, Ա.):

Ծին(31) *արմատէն*՝ շնորհածին (213, Ա.) եւ ջախջախուածին (430, Ա.) *բառերը*:

Տրտում(32) *բառէն*՝ տրտմակոծ (112, Ա.) տրտմաթաթաւ (166, Ա.), տրտմախառն (369, Ա.) եւ տրտմաթաթախ (440, Ա.) *բառերը*:

Տխուր *բառէն*՝ տխրաճուն (416, Ա.), տխրամած (436, Ա.) եւ տխրաթրթիռ (440, Ա.) *բառերը*:

Միտ *արմատէն*՝ վեհիմամիտ (410, Ա.), ապուշամիտ (418, Ա.) եւ յանդգնամիտ (440, Ա.) *բառերը*:

---

27. Այժմ այս բառը հազուադէպ գործածութիւն ունի. կը նշանակէ ազօտ:

28. Այս արմատով գործածուած է նաեւ *կասկածահար* (332, Ա.) հազուադէպ գործածութիւն ունեցող բառը, որ կը նշանակէ կասկածի մէջ ինկած եւ *մըրահար* (340, Ա.) հին բառը, որ կը նշանակէ մուրճով զարնող:

29. Հազուադէպ գործածութիւն ունեցող բառ է, որ կը նշանակէ արիւնաշաղախ:

30. Հազուադէպ գործածութիւն ունեցող բառ՝ դժնդակ մահով մեռած իմաստով:

31. *Ծանկարծածին* (92, Ա.)՝ հինցած բառ է, որ կը նշանակէ յանկարծ առաջացած:

32. *Տրտմազգեաց* (436, Ա.)՝ հինցած բառ է, որ կը նշանակէ տրտմութեամբ համակուած, տրտմալի:

Պատում *բառէն՝* դիւցազնապատում (388, Ա.), փառապատում (388, Ա.) եւ խելապատում (388, Ա.) *բառերը*:

Նոր(33) *բառէն՝* նորաւետիս (390, Ա.) եւ նորափայլ (410, Ա.) *բառերը*:

Աբփիարեանի լեզուին յատուկ երեւոյթ է նաեւ ուկ եւ կեկ վերջածանցներու գործածութիւնը, որոնք յաճախ կը գրուին բառերու վերջաւորութեան, տալով զանազան իմաստափոխիչ նշանակութիւններ, սերելով առաւելաբար բարբառային չերտերէն: Այսպէս.

Ողորմ–ուկ (14, Ա.) = *Ողճալի, ողորմելի*
Անխօս–ուկ (15, Ա.) = *Չխօսող* (*բարբառային*)
Մարդ–ուկ (32, Ա.) = *Խեղճ մարդ* (*բարբառային*)
Պարզ–ուկ (40, Ա.) = *Շատ պարզ* (*բարբառային*)
Մակ–ուկ (56, Հ) = *Փոքր ծակ* (*հազուագիւտ*)
Հաս–ուկ (99, Ա.) = *Չափահաս* (*բարբառային*)
Կզպ–ուկ (112, Ա.) = *Գոցուած* (*բարբառային*
Կտոր–ուկ (133, Ա.) = *Կտորուած* (*բարբառային*)
Թախծ–ուկ (148, Ա.) = *Թախծոտ* (*նոր*)
Բարակ–ուկ (159, Ա.) = *Շատ բարակ* (*բարբառային*)
Նատ–ուկ (159, Ա.) = *Նստակեաց* (*բարբառային*)
Մինակ–ուկ (199, Ա.) = *Մենակեաց* (*բարբառային*)
Ազէկ–ուկ (211, Ա.) = *Լաւ* (*բարբառային*)
Աւազուկ (280, Ա.) = *Ողճալի* (*բարբառային*)
Պաղ–ուկ (295, Ա.) = *Հաճելի պաղութիւն ունեցող* (»)
Անանկ–ուկ (334, Ա.) = *Այնպիսի ձեւով* (*բարբառային*)
Լայն–կեկ (17, Ա.) = *Աւելի լայն* (*նոր*)
Ցած–կեկ (97, Ա.) = *Աւելի ցած* (*բարբառային*)
Կանուխ–կեկ (110, Ա.) = *Աւելի կանուխ* (*բարբառային*)
Դաժան–կեկ (158, Ա.) = *Աւելի դաժան* (*նոր*)
Խոշոր–կեկ (367, Ա.) = *Աւելի մեծ* (*բարբառային*)

Աբփիարեան նշանակալից աւանդ ունի ԺԹ. դարու ութսունական թուականներու գրական լեզուի զարգացման ու ժողովրդայնացման, բառապաշարի հարստացման ու ճոխացման, ինչպէս նաեւ

---

33. Նորանշոյլ (441, Ա.)՝ հազուադէպ գործածուող բառ է, իսկ նորաթեք (334, Ա.)՝ հինցած:

ոճաւորման հնարքներու կատարելագործման մարդին մէջ։ Մէկ կողմ դնելով կարգ մը բառապաշարային երեւոյթներ, անկարելի է երեւակայել այդ ժամանակահատուածի գրական լեզուին պատմութիւնը, առանց հաշուի առնելու Արփիարեանի լեզուական երախտաշատ ներդրումը, խօսքարուեստի մշակումը, որ բնորոշ է լեզուական բարձր մշակոյթով ու յատակօրէն դծագրուող ինքնատպութեամբ։

THE VOCABULARY OF ARPIAR ARPIARIAN

BAROUYR AGHBASHIAN

(Summary)

Arpiar Arpiarian (1852-1908), is one of the most talented leaders of the realistic school of Armenian writers in the second half of the 19th century. As a determined editor and prose writer, Arpiarian advocated the realistic approach to literature and the use of **ashkarabar**, as the best means to reach the common people. In spite of persisting «Old Armenian» elements in his diction, Arpiarian through his new words, new style and use of conversational Armenian, popularized and greatly contributed to the sound establishment of the Western Armenian dialect.

ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Վեր. Եղիա Ս. Քասունի

(1874 – 1959)

1959 թ.ի Մարտին, Ֆիլատելֆիոյ (ԱՄՆ) մէջ, 85 տարիներով բեռնաւոր կեանք մը կը չիջնէր վերջնականօրէն, ամբողջ 65 տարիներ անսակարկ նուիրումով ու հաւատարմութեամբ ծառայելէ ետք իր ժողովուրդին: Բազմավաստակ կրթական մշակ, եկեղեցական գործիչ ու պատմաբան Վեր. Եղիա Ս. Քասունի խաղաղօրէն կը հեռանար այս կեանքէն, իր ետին ձգելով անկրնչելի ժառանգութիւն մը, որուն, աւա՛ղ, ցարդ կը պակսի գիտական լիակատար գնահատանքի խօսքը:

Վեր. Եղիա Ս. Քասունի ծնած է 1874 թ.ի Փետր.ի 5–ին, Այնթապի մէջ, ուր նաեւ 1879–1888 տարիներուն կը ստանայ իր նախակրթութիւնը: Միջանկեալ, 1883–1884 տարիներուն, անտեսական դժուար պայմաններու բերումով կը ստիպուի հրաժարիլ ղպրոցէն, հետեւելու համար թաղեզործութեան: Այս տարիներուն՝ Վարդանանց ղպրոցի դիչերային դասընթացքներուն հետեւելով միաւեղ, իր իսկ վկայութեամբ՝ «Հօրս հետ տան մէջ կ'ուսումնասիրէինք Սուրբ Գիրք, Քրիստոնէական Վարդապետութիւն... ու Հայոց Պատմութիւն (այսինքն՝ Զամչեանի Պատմութեան «Կիւլիւզարի Թեվարիխ» անուն հայատառ համառօտագրութիւնը)...»:

1888–1895 թթ.ուն ան ուսանող է Այնթապի Գոլէճին մէջ: Յաջորդ երկու տարիներուն՝ ուսուցիչ Մարաչի Ամերիկեան Աբաստեմիի մէջ: 1908 թ.ին կ'անցնի Գերմանիա, ուր Պերլինի մէջ կը հետեւի մանկավարժական դասընթացքներու: 1910–1915 տարիներուն, ուսուցիչ՝ Մարաչի Գերմանական Մանչերու Վարժարանին մէջ, երբ միաժամանակ կը հետեւի Աստուածաբանական Վարժա-

բանի կարգ մը դասընթացքներուն։ Ցետոյ՝ աքսորի, տառապանքի ու բանտարկութեան տարիներ Սուրիոյ մէջ՝ Հաւրանէն մինչեւ Դամասկոս։ 1919–1937 թթ.ուն Վեր. Եղիա Ս. Քասունի որպէս հովիւ եւ ուսուցիչ յաջորդականօրէն բնակութիւն կը հաստատէ Պոլիս, Քեսապ, Դամասկոս, կրկին Պոլիս ու ապա՝ Հալէպ։ 1937–1944 տարիներուն Պէյրութի մէջ ան կը վարէ Հայ Աւետ. Բարձրագոյն Վարժարանի (Հայ Աւետ. Գոլէճ) տնօրէնութեան պաշտօնը։

1944 թ.ի Ապրիլին, Պէյրութի մէջ, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի նախաձեռնութեամբ տեղի կ'ունենայ Վեր. Եղիա Ս. Քասունիի 70–ամեակին նուիրուած յոբելինական հանդիսութիւնը։ Իսկ 1954 թ.ի Մայիսին՝ Հայ Աւետ. Մեսրոպեան Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ, ծննդեան 80–ամեակին նուիրուած յոբելինական հանդիսութիւնը։


1957 թ.ին Վեր. Եղիա Ս. Քասունի կը փոխադրուի ԱՄՆ.։

Որպէս եկեղեցական գործիչ, ան իր անխախտ հաւատքին մեծացուցած է անխարդախ նկարագիր մը, որուն խորթ էր ընկերութեան մէջ այնքան օգտագործուած «դիւանագիտութիւն»ն ու «առաձրզպականութիւն»ը։

Իր ուսուցչական ասպարէզի ամբողջ ընթացքին, Վեր. Եղիա Ս. Քասունի կը մնայ հայերէն լեզուի, հայ եկեղեցւոյ եւ հայկական մշակութային արժէքներու ջերմ պաշտպանն ու անձնուիրեալ քարոզիչը։ «Համիտի բռնակալութեան չրջանին ան մեզի կ'աւանդէր Հայոց Պատմութիւնը թէ՛ բերանացի եւ թէ՛ դրաւոր։ Աչխարհագրութեան դասի մէջտեղին իսկ առիթը կը գտնէր անդրադառնալու հայ պատմական դէմքերու եւ դէպքերու՝ խանդավառուած ոճով...», կը վկայէ իր ուսանողներէն՝ Տօքթ. Յ. Տէր Ղազարեան։

Կրթական ու եկեղեցական իր աչխատանքներու կողքին, Վեր. Եղիա Ս. Քասունի կը նուիրուի հայ ժողովուրդի քաղաքական ու մշակութային պատմութեան ուսումնասիրութեան։ Զինուած դիտական մտածողութեամբ ու անկաչառ պայծառատեսութեամբ, լինքնավըստահ բազմաթիւ լեզուներու (դրաբար, օսմաներէն, անգլերէն, գերմաներէն, ֆրանսերէն ու յունարէն) հմտութեամբ, բայց մանաւանդ համբերատար ու մանրազնին աչխատանքով, ան կը ձեռնարկէ հայ ժողովուրդի պատմութեան հին ու նոր բազմաթիւ հարցերու վերլուծումին ու լուսաբանման։

Հակառակ իր նիւթական անցուկ պայմաններուն, ու մինչեւ 1937 թ. ապրած անդաստական կեանքին, ու դեռ հակառակ Համաչխարհային Բ. Պատերազմին պարտադրած նոր անձկութիւններուն, ու 1944 թ.էն ետք թոչակառուի իր չատ համեստ կեցութեան,



Վ. ԵՐ. ԵՂԻԱ Ս. ՓԱՍՈՒՆԻ

Վեր. Եղիա Ս. Քասունի կը յաջողի յամառ ու մեթոտիկ աշխատանքով յաղթահարել բոլոր դժուարութիւնները եւ ստեղծել պատմագրական ու բանասիրական այն պատկառելի ժառանգութիւնը, որ աւելի քան երբեք կը մնայ իր ժողովուրդին հանդէպ անոր ունեցած սիրոյն ու հաւատքին անկորնչելի գրաւականը։

Իր առաջին քննական ուսումնասիրութիւնը՝ «Աբրահամ եւ Հայկ» *խորագրով, Վեր. Եղիա Ս. Քասունի կը հրատարակէ «Հանդէս Ամսօրեայ»ի 1907 Թ.ի Փետր.ի համարին մէջ, Սեպ տասրագրութեամբ, որուն կը յաջորդեն յիսունէ աւելի իր մեծ ու փոքր ուսումնասիրութիւնները, որոնք լոյս կը տեսնեն «Հանդէս Ամսօրեայ»ի (Վիեննա), «Բահինիւմա»ի (Պոլիս), «Ազետաքեր»ի (Պոլիս), «Կիլիկիա»ի (Ատանա), «Նոր Ազետաքեր»ի (Հալէպ), «Հայաստանի Կոչնակ»ի (Նիւ Եորք), «Զարքօնիֆ»ի (Պէյրութ), «Պատանեկան Արձագանգ»ի (Պէյրութ), «Ջանասէր»ի (Պէյրութ), «Ամենուն Նոր Տարեգոյցը»ի (Պէյրութ), «Մխիթարեան»ի (Պէյրութ), «Սիւան»ի (Հալէպ), «Ակօս»ի (Պէյրութ), «Հասկ» եւ «Հասկ Հայագիտական Տարեգիրք»ի (Անթիլիաս) մէջ, «Եղիա Պէհանիլեան», «Ե. Տիշոեան», «Ե. Քասունի» եւ «Եղիա Ս. Քասունի» տասրագրութիւններով*(1)։

Մամուլի մէջ լոյս տեսած իր բազմաթիւ ուշագրաւ ուսումնասիրութիւններէն կ'արժէ յիշել՝

«Գող Վասիլ» («Ակօս», 1949–1950, *գլուխ Իթ.*, *Լ.*, *ԼԱ.*)։

«Ժամանակագրական ճշդումներ Հեքաւնոս Հայ Արշակունեաց Պատմութեան» («Ակօս», 1956 *Թիւ* 10–12, 1957 *Թիւ* 1–7)։

«Հայոց Նպաստը Աշխարհի Քաղաքակրթութեան» («Հայաստանի Կոչնակ» 1959 *Թիւ* 7–42)։

Գր. Հ. Գալուստեանի խմբագրած «Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն» (*Նիւ Եորք*, 1934) *հատորին մէջ Վեր. Եղիա Ս. Քասունի գրչին կը պատկանին* «Մարաշի Պատմութիւնը» (*էջ* 193–219), *եւ* «Մարաշի Տեղագրութիւնը» (*էջ* 250–267) *բաժինները*։

Իսկ «Պատմութիւն Անթէպի Հայոց» *երկհատոր աշխատասիրութեան մէջ իր գրչին արդասիքն են հետեւեալ բաժինները՝*

«Անթէպի Աշխարհագրականն ու Տեղագրականը» (*Ա. հատ.* *էջ* 39–91)։

---

1. Մինչեւ 1951 թ. Վեր. Եղիա Ս. Քասունի մամուլի մէջ հրատարակած ուսումնասիրութեանց մատենագիտական ամբողջական ցանկին համար տես՝ Գէորգ Ա. Սարաֆեան (խմբ.), *Պատմութիւն Անթէպի Հայոց*, Բ. հատ., Լոս Անճելըս, 1953, էջ 626–629։

«Անթէպի եւ Շրջանակին Պատմութիւնը» (*Ա. հար.*, էջ 92–327)։

«Հայ Աւետարանականութիւնը Անթէպի Մէջ» (*Ա. հար.*, էջ 492–560)։

«Աստուածաբանական Ուսումը Անթէպի Մէջ» (*Ա. հար.*, էջ 804–808)։

«Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճի Պատմութիւնը» (*Ա. հար.*, էջ 809–858)։

«Աղջկանց Ամերիկեան Բարձր. Վարժարանը» (*Ա. հար.*, էջ 867–877)։

«Անթէպի Հայոց Բարբառը» (*Բ. հար.*, էջ 313–380)։

Առանձին հատորներով հրատարակուած վէր. եղիա Ս. Քասունիի աշխատասիրութիւններէն առանձնապէս կ'արժէ յիշատակել՝

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՑԸ («Կոմմագենացի» ծածկանունով), Հալէպ, 1930, 95 + ԺԶ էջ։

ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ ԵՒ ԻՐ ՇՐՋԱՆԻ ՀԱՑՈՑ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, Պէյրութ, 1939, 70 էջ։

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՑ ԿԻՆԵՐ (*Ա. հատոր*), Պէյրութ, 1945, 58 էջ։

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՑ ԿԻՆԵՐ (*Բ. հատոր*), Պէյրութ, 1946, 72 էջ։

ԼՈՒՍԱՇԱԽԻՂ – ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ 1846–1946, Պէյրութ, 1947, ԺԸ + 603 էջ։

ՆԱԽԱՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ (Հայաստանի Քննական Պատմութիւնը Նորբարայիի Շրջանէն 600 Ն. Ք.), Պէյրութ, 1950, Ի + 752 էջ։

ՀԱՑ ՄՇԱԿՈՑԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (Նորբարայիի Շրջանէն Միւնչեւ Ոսկեդար), Պէյրութ, 1954, 325 էջ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ, Պէյրութ, 1959, 316 էջ։

Վէր. եղիա Ս. Քասունիի աշխատասիրութիւններէն անտիպ կը մնան հետեւեալները՝

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ (*ե–ԺԷ. դարեր*)

ՊԱՏՄԱԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԻՆՉԵՒ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՑ ԱԶԳԻ ԾԱԳՈՒՄԸ

ՀԱՓԵԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՐՐԻ–ՄԻՏԱՆՆԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԱՅՈՐԻ ՅԵՂԻՆ ԴԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՄԻՆ ՀԵՏԱՋՕՏՈՒԹԻԻՆ ՄԸ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՑ ԿԻՆԵՐ (Գ. ՀԱՐՔ)
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(2)
ՀԱՑԿԱԿԱՆ ԵՐԿՈՒՆՔԸ ԺԱ–ԺԲ. ԴԱՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՆՈՐ ԱՐ–ԴԻՒՆՔԸ(3)։

ԵՐՈՒՄՆԴ Հ. ՓԱՍՈՒՆԻ

---

2. Վերոյիշեալ ձեռագիրները կը գտնուին Վեր. եղիա Ս. Փասունիի զուարկին՝ Տոբք. Տիգրան Ե. Փասունիի մօտ, Նիւ Եորք։

3. Վերոյիշեալ ձեռագիրը սեփականութիւնն է *Պէյրութի Համազգայինի Մշակութային Մխիթեան*։

Հայագիտական հրատարակութիւններ

ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ, «ԿԻԼԻԿԻՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՑԹԻՆ ՄԷՋ (1080–1137)», Պէյրութ; 1974, 245 էջ:

Հայերը միջնադարում օտարութեան մէջ բազմաթիւ գաղութներ են ստեղծել, բայց ինչքան ճիգ ու կամք էլ գործադրած լինեն, մի քանի սերունդ անց, հայկական մշակոյթի ու պատմութեան մէջ իրենց լուման մուծելով, անյայտացել են հրապարակից՝ ձուլուելով իրենց հիւրընկալած այս կամ այն ժողովրդի ընդհանուր կաթսայի մէջ: Բայց նրանցից մէկը կապէս տարբերւում է: Ստեղծուելով մայր հայրենիքից հեռու որպէս գաղութ, նա վերածուեց երկրորդ հայրենիքի, այն ժամանակ, երբ սեփական պետութիւնը կախկախուել էր արտաքին ոսոխների կողմից, դարձաւ հայկական պետութիւն, իր հովանու տակ առնելով արհաւիրքներից վախչող հազարաւոր ու հազարաւոր հայերի: Այդ պետութիւնը ամենադժուարին ու բարդ պայմաններում, տասնեակ ոխերիմ թշնամիների շրջապատման մէջ կարողացաւ դոյատեւել մօտ երեք հարիւր տարի, այսինքն՝ հարիւր տարի աւելի երկար քան հայոց Արտաշէսեան պետութիւնը, հարիւր չիսուն տարի աւելի, քան Բագրատունիների պետութիւնը, մօտ երկու հարիւր տարի աւելի, քան Արծրունիների թագաւորութիւնը եւ ընդամէնը չիսուն տարի պակաս, քան Արշակունիներինը: Դա Կիլիկիայի հայկական պետութիւնն էր:

Կիլիկիայի հայկական պետութեան պատմութեան մի դրուագին, նրա սկզբնական շրջանին է նուիրուած Երուանդ Քասունու այս աշխատութիւնը:

Երուանդ Քասունին նորեկ չէ հայագիտութեան ասպարէզում: Հակառակ իր երիտասարդ հասակին, նա արդէն յայտնի է իր մի շարք ուշագրաւ ուսումնասիրութիւններով, յատկապէս հայկական Կիլիկիայի պատմութեան վերաբերեալ: Գրախօսուող աշխատութիւ-

նը նրա քրանոլյան որոնումների ու պրպտումների արդասիքն է հանդիսանում:

Երուանդ Քասունին իր աշխատասիրութիւնը սկսում է հետեւեալ բառերով. «Կիլիկիոյ հայկական իշխանապետութեան, ու ապա՝ անոր յաջորդող թագաւորութեան ժամանակաշրջանը հազարամեակներու վրայ տարածուող հայ ժողովուրդի պատմութեան ամենէն բախտորոշ, հետաքրքրական, եւ առաւելագոյն ուշադրութեան ու հետազօտութեան կարօտ ժամանակաշրջաններէն մէկն է» (էջ 13): Եւ Քասունին իրաւացի է:

Չի կարելի ասել, որ Ե. Քասունին գործ է ունեցել խոպան դեանի հետ: Նրանից առաջ էլ իր բարձրացրած հարցերը հայ եւ օտար հայագէտների կողմից ուսումնասիրուել են (Ղ. Ալիշան, Եորկա, Գ. Միքայէլեան, Ս. Տէր Ներսէսեան, Ռուդտ Կոլլենբերգ եւ ուրիշներ), բայց ոչ այն լայնութեամբ ու խորութեամբ, ինչ գրաւոխօսուող աշխատանքի հեղինակն: Նա յատուկ ուսումնասիրութեան նիւթ է դարձրել Կիլիկեան պետութեան առաջին շուրջ վաթսուն տարիների պատմութիւնը, այն էլ, որ իր աշխատութեան հիմնաքարն ու եզակէտն է հանդիսանում, Մերճաւոր Արեւելքի ընդհանուր պատմութեան ընդարձակ ֆոնի վրայ: Նա միանգամայն իրաւացի է, երբ գրում է. «Առանց խորապէս ճանչնալու տուեալ ժամանակամիջոցի Մերճաւոր Արեւելքի քաղաքական անցուդարձերը, եւ առանց գնահատելու պատմական այդ դէպքերուն իրա՛ւ տարողութիւնը, անհնար է ճանչնալ ու արժեւորել այն, ինչ հայ ժողովուրդը՝ ակամայ, ու պարտադիր կերպով հեռացած իր պատմական հայրենիքէն, փորձեց իրագործել Կիլիկիոյ սահմաններուն մէջ: Եւ այս՝ անոր համար որ մեր ուսումնասիրութեան ենթակայ մօտաւորապէս վաթսուն տարիներուն, Կիլիկիոյ հայկական իշխանապետութեան պատմութիւնը օրկանապէս ու բազմաթիւ կողմերով անքակտելիօրէն կապուած է Մերճաւոր Արեւելքի նոյն ժամանակամիջոցի քաղաքական հոլովոյթին, որմէ զայն առանձնացնելը կը նշանակէ զայն մեկուսացնել պատմութեան ընդհանուր հունէն, ու ակամայ կերպով ստորագնահատել անոր իմաստն ու կարեւորութիւնը ինչպէս հայ ժողովրդի պատմութեան, նոյնպէս եւ համաշխարհային պատմութեան մէջ» (էջ 15):

Ե. Քասունու աշխատութիւնը աչքի է ընկնում մի կարեւոր հանգամանքով: Այն գրուած է սկզբնաղբիւրների հիման վրայ: Նպատակ ունենալով տալ Կիլիկիայի հայկական իշխանապետութեան առաջին վաթսուն տարիների պատմութիւնը Մերճաւոր Արեւելքի պատմութեան ընդհանուր ֆոնի վրայ, նա չի բաւարարուել միայն հայկական սկզբնաղբիւրներով, եւ չէր էլ կարող: Նա պարտաւոր էր օգ-

տպագրել բիւզանդական, վրացական, արաբական, ասորական, արեւմտաեւրոպական սկզբնաղբիւրները: Եւ նա քաջածանօթ լինելով նրանց, առատօրէն ու յաջողութեամբ օգտագործել է իր թեմայի լուսաբանման համար, ցուցաբերելով լուրջ ու քննադատական վերաբերմունք: Նա պարզ նկատում է արեւմտաեւրոպական մի քանի հեղինակների՝ Կիլիկիայի հայկական իշխանութեան, ինչպէս եւ Եդեսիայի հայկական իշխանութեան հանդէպ ունեցած կողմնապահութիւնը, համեմատելով նրանց տուեալները հայկական աղբիւրների ընձեռած նիւթի հետ, ցոյց տալիս իրերի իսկութիւնը: Հեղինակը քաջածանօթ է նաեւ յիշեալ շրջանի պատմութեան նուիրուած ուսումնասիրութիւններին, յաճախ վկայակոչում դրանք, հանդէս բերելով նոյնպիսի քննադատական վերաբերմունք ու մօտեցում:

Գրախօսուող աշխատութիւնը բաղկացած է Առաջաբանից (որտեղ համառօտակի խօսւում է թեմայի, նրա մշակուածութեան ներկայ վիճակի, աշխատութիւնը դրելու սկզբունքների մասին), եւ վեց գլխից:

Առաջին գլխում, որ վերնագրուած է «Ռուբինեան իշխանապետութեան հիմնադրութիւնը» (էջ 17–34), խօսւում է Կիլիկիայի հողի վրայ Ռուբինեաններին նախորդող Փիլարտոս Վարաժնունու իշխանութեան եւ նրա նչանակութեան մասին՝ Ռուբինեանների իշխանութեան հաստատման նախադրեալներ ստեղծելու տեսակէտից, Ռուբէնի որդի Կոստանդինի խաղացած հիմնական դերի մասին՝ Ռուբինեան իշխանութեան ստեղծման գործում:

Երկրորդ գլխում (էջ 35–62) խօսւում է ԺԱ. դարի վերջին սկիզբ առած խաչակրութիւնների մասին եւ խաչակիրների հետ Ռուբինեանների հաստատած կապերի, որոնք հեղինակը ընորոշում է որպէս հայկական այդ իշխանութեան արտաքին աշխարհի հետ ունեցած առաջին յարաբերութիւնները: Պէտք է ասել, որ հայագիտութեան մէջ այս հարցը առաջին անգամ է այսքան մանրամասն ու հանգամանալից ուսումնասիրութեան ենթարկւում: Քաոսնին քաջածանօթ է խաչակրութիւնների մասին եւրոպական վերջին լուրջ ուսումնասիրութիւններին եւ նրանց պատմութիւնը չարադրում է հայոց պատմութեան հետ սերտօրէն կապուած: Ի պաւիւ հեղինակի պէտք է ընդգծել, որ նա խաչակրութիւնների առաջացումը չի կապում Քրիստոսի գերեզմանը այլադաւանների ձեռքից ազատագրելու՝ Արեւմուտքի ժողովուրդի ջերմեռանդութեան հետ, այլ դրա մէջ տեսնում է խորը սոցիալ–տնտեսական դրդապատճառներ, գտնում, որ խաչակրութիւնները թելադրուած էին «տեղի ընկերային, հասարակական, տնտեսական ու քաղաքական պայմաններէն» (էջ 44): Նա

միաժամանակ ցույց է տալիս, որ խաչակիրների չարքային մասնակիցները այդ շարժման մէջ էին տեսնում մի պատեհութիւն աստուածաբանական ճնշումներից ձերբազատուելու, հեռանալու տառապանքներից եւ «Արեւելքի մէջ սկսելու բոլորովին նոր կեանք մը» (էջ 41)։

Երրորդ գլուխը (էջ 63–82) նուիրուած է խաչակիրների առաջին արշաւանքներին Կիլիկիա եւ Եդեսիայի լատին կոմսութեան հիմնադրութեան հարցերին։ Ցոյց է տրուած, թէ ինչպէս այդ շրջանների հայութիւնը, որ սկզբնական շրջանում դրկաբաց էր ընդունում խաչակիրներին՝ այլադաւանների դէմ հնարաւոր դաշնակիցներ ունենալու ակնկալութեամբ, շուտով տեսաւ նրանց իսկական դէմքը։

Զորրորդ գլուխը (էջ 83–96) նուիրուած է Ռուբինեան իշխանութեան հիմնադիր Կոստանդին Ա.–ին եւ նրա արտաքին քաղաքականութեան, որի էութիւնը կայանում էր բիւզանդական դերիշխանութիւնից ձերբազատուելուն, եւ խաչակիրների հետ սերտ փոխյարաբերութիւններ հաստատելու մէջ։

Ամենաընդարձակը աշխատութեան հինգերորդ գլուխն է (էջ 97–167), որ վաստօրէն ընդգրկում է հեղինակի կողմից ուսումնասիրուող ժամանակաշրջանի ուղիղ կէսը՝ 1100–1129 թթ., այսինքն՝ Թորոս Ա.–ի իշխանութեան ժամանակաշրջանը, որի ընթացքում Կիլիկեան հայկական պետութիւնը հզօրացաւ ու ամրապնդուեց։ Այստեղ հեղինակը հանգամանօրէն կանգ է առնում բիւզանդական կայսր Ալեքսիոս Ա.–ի եւ Բոհեմոնդի միջեւ 1108 թ. Դեւոլում կնքուած դաշնագրի վրայ, յատկապէս Կիլիկիայի հայկական իշխանութեան վերաբերող կէտերին, յիշեալ իշխանի փոխյարաբերութիւններին՝ արաբական աշխարհի հետ եւ ամենայն մանրամասնութեամբ խօսում 1101 թ.ին սկիզբ առած խաչակրութեան ընթացքի եւ նրա ունեցած հետեւանքների մասին Մերճաւոր Արեւելքում՝ ընդհանրապէս, եւ Գող Վասիլի ու Ռուբինեանների իշխանութիւնների՝ մասնաւորապէս։

Եւ վերջապէս վերջին, վեցերորդ գլուխը (էջ 177–215) նուիրուած է Լեւոն Ա.–ի (1129–1137 թթ.) եւ նրա օրօք Ռուբինեան իշխանութեան ժամանակաւոր անկման՝ բիւզանդական քանակների հարուածների տակ։ Բացի բուն Կիլիկիային վերաբերող հարցերից, այստեղ հանգամանօրէն ուսումնասիրուած է Եգիպտոսի հայկական գաղութի առաջացման ու բարգաւաճման պատմութիւնը, որ առանձին վերցրած հետաքրքիր է ու չհեկեան։ Գրախօսուող աշխատութիւնն ունի համառօտ վերջաբան, մատենագիտական ծանօթութիւններ սկզբնաղբիւրների մասին, հարցի վերաբերեալ հանգամանալից մատենագիտութիւն եւ ցանկեր։

Ահա համառօտ գծերով է· Քասունու ուսումնասիրութիւնը: Այն տալիս է տուեալ ժամանակաշրջանի պատմութեան վառ պատկերը, գրուած է գիտական բարձր մակարդակով, մաքուր ու յստակ, օտարաբանութիւններից զուրկ արեւմտահայերէն լեզուով: Այստեղ մի հանգամանք էլ պէտք է յատկապէս ընդգծել: Ե· Քասունին կիլիկիայի հայոց պատմութեան վրայ նայում է ոչ դրասենեակային ուսումնասիրողի սառը ակնոցներով: Նա սիրում է իր ուսումնասիրութեան առարկան, դեռ աւելին, նա սիրահարուած է դրան, բայց այդ բանը ոչ մի կերպ պատճառ չի դառնում հեռանալու գիտականութիւնից, զոհել գիտականութիւնը:

Բարձր գնահատելով երուանդ Քասունու գրախօսուող աշխատութիւնը, միաժամանակ պէտք է նշել, որ այն զուրկ չէ թերութիւններից, որոնք, գուցէ եւ մասամբ անխուսափելի են նման բարդ թեմայի համար:

Հեղինակը օգտագործել է ԺԲ·–ԺԴ դարի նշանաւոր ասորի ժամանակագիր Միքայէլի պատմական երկի հին հայերէն թարգմանութիւնը: Երբ դեռ յայտնաբերուած չէր Միքայէլ Ասորու ժամանակագրութեան ասորերէն բնագիրը, հայերէն թարգմանութիւնը քնարի արժէք ունէր: Բայց երբ անցեալ դարի վերջում յայտնաբերուեց խնդրոյ առարկայ ժամանակագրութեան ասորերէն բնագիրը, որը թարգմանուեց ֆրանսերէն՝ ասորագէտ Շաբոյի կողմից ապա, հասկանալի է, հայերէն մէջնադարեան թարգմանութեանը դիմելը դառնում է աւելորդ, քանզի ոչ հազուադէպ, հայ թարգմանչի կամ արտագրող գրչի արգասիքն հանդիսացող առանձին մաքեր, տողեր, հատուածներ սխալմամբ վերապրուում են Միքայէլ Ասորուն:

Հեղինակը մի քանի անգամ (էջ 17, 21) խօսում է Կապադովկիայի, Կիլիկիայի եւ «Եփրատացւոց աշխարհի» մէջ «Բիւզանդիոնի պարտադրանքով ստեղծուած հայկական փոքր թագաւորութիւններու» մասին եւ ի մէջի այլոց նկատի ունի նաեւ Սենեքերիմի ու նրա ժառանգների, եւ Գագիկ Բ·–ի կալուածները: Նա այդպէս էլ գրում է· «Պիզուի թագաւորութիւն» (էջ 21): Մենք ոչ մի հիմք չունենք Բիւզանդական կայսրութեան տարածքի վրայ հայկական թագաւորութիւններ ու թագաւորներ փնտռել: Նրանք ոչ այլ ինչ էին, քան պարզ բիւզանդական նահանգապետներ: Սենեքերիմի պաղեի մասին խօսելիս Թոմա Արծրունու Շարունակողը գրում է· «Փոխեցին զհայրենի տունն իւրեանց հայկազունքն Արծրունիքն Սենեքերիմ... եւ դէմ եղեալ զնացին յաչխարհն Յունաց... եւ արկան ընդ լծով ծառայութեանն Հոռոմոց· նոյնպէս եւ Բագրատունին Գագիկ» (Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ս· Պետերբուրգ, 1887, էջ 307–308): Ծառայութեան լծի տակ ընկնողը

չի կարող թագաւոր համարուել։ Ինչ խօսք, և՛ Սենեքերիմը, և՛ Գագիկը Բիւզանդիայում հայոց մի ջավայրում չարունակում էին յորջորջուել թագաւորներ, բայց դա պատուական յորջորջում էր եւ ոչ իրականութեան արտայայտութիւն։

Անդրադառնալով 1135–ից յետոյ լայն ծաւալ ստացած հայոց արտագաղթին դէպի Եվիպտոս, որտեղ այդ ժամանակամիջոցում ըստ աղբիւրների տուեալների հաւաքուեց 20–30 հազար հայութիւն, Ե. Քասունին այդ երեւոյթը բացատրում է «խաղաղ, ապահով ու տնտեսապէս բարգաւաճ հայկական կիլիկիայի» բացակայութեամբ, որ իբր «հայկական կիլիկիան այդ տարիներին չէր հրապուրեր հայերը» (էջ 214), չէր քաջալերում, որ նրանք «ամուր կայք հաստատեն անոր սահմաններուն մէջ»։ Ես չեմ կարող ասել, որ ընդհուպ մինչեւ իր կործանումը 1375 թ. հայկական կիլիկիան ապրեց խաղաղ, ապահով, տնտեսապէս բարգաւաճ վիճակում։ Հակառակ դրան կիլիկիան հայերին չատ էր հրապուրել։ Այդ դաղթից ընդամէնը տասը տարի անց, 1145 թ. հենց Ե. Քասունու իսկ խօսքերով ասած, «հայ ժողովուրդի անսակարկ նուիրումով զինուած (Թորոս Բ.–ը) կը յաջողէր վերականգնել Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը» (էջ 217)։ Նա նշանակում է, որ հայերը «ամուր կայք հաստատել էին արդէն նրա սահմաններում։ Ճիշդ է Քասունին երբ դրում է, թէ «Թորոս Բ.–ի ձեռք բերած յաջողութիւնը պատահականութեան չէր կարելի վերագրել։ Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը (ասել է՝ հայերը – Հ. Բ.)... որոշապէս յաջողած էր ամուր կռուան մը հաստատել այնտեղ» (էջ 217)։

Հեղինակը, կանգ առնելով Փիլարտոս Վարաժնունու տիրապետութեան տեղադրման հարցի վրայ, ցոյց է տալիս, որ այն տարածւում էր «Կիլիկիա անունով ծանօթ բիւզանդական բանակաթեմի վրայ»։ Բիւզանդական Կիլիկիա անունով բանակաթեմ գոյութիւն չի ունեցել։ Հռոմէական ժամանակաշրջանում եղել է Կիլիկիա պրովինցիա՝ պրոկոնսուլների կառավարման ներքոյ, որ վաղ բիւզանդական ժամանակաշրջանում բաժանուեց Ա, Բ, եւ Գ Կիլիկիանների։ Բայց պրովինցիա եւ բանակաթեմ հասկացողութիւնները միանգամայն տարբեր են։ Բանակաթեմերը, ինչպէս յայտնի է, առաջացան 7–րդ դարից սկսած, Հերակլիոս կայսեր ժամանակներից, այնինչ այն ժամանակ, երբ Կիլիկիան արդէն անցնում էր արաբների ձեռքը։ Երբ Նիկեփոր Բ. Փոկասի ժամանակ Կիլիկիան վերանուաճուեց, ապա այն ժամանակ էլ Կիլիկիա բանակաթեմ չստեղծուեց, այլ ստեղծուեցին աւելի փոքր վարչական միաւորներ՝ քաղաքներ եւ ամրոցներ՝ զօրավարի գլխաւորութեամբ, որոնք կոչուեցին բանակաթեմեր։ Դրանք են Տարսոնը, Անաբարզան, Մոպսուեստիան եւ այլն։

Հեղինակը բազմիցս անգամ յիշում է «Եփրատացւոց աշխարհը» որ ճիշդ չէ։ Գրականութեան մէջ այդ շրջանը ծանօթ է որպէս Եփրատեսիա, որը եւ պէտք է օգտագործել։

Գրախօսուող աշխատութիւնը վերնագրուած է. «Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի Քաղաքական Հոլովոյթին Մէջ (1080–1137)»։ Այս թուականներից վերջինը՝ 1137–ն միանգամայն հասկանալի է. 1137–ին Յովհաննէս Կոմնենոսը գերում է Լեւոն իշխանին եւ ժամանակաւորապէս վերջ տալիս Ռուբինեան իշխանութեանը։ Աշխատութեան բովանդակութիւնն էլ սահմանափակւում է այդ ժամանակաշրջանով։ Բայց ի՞նչ է 1080–ը։ Այստեղ պէտք է ընդգծել, որ հեղինակը տարբերում է Կիլիկիայի իշխանապետութիւն հասկացողութիւնը Ռուբինեան իշխանապետութիւնից։ Նա գրում է. «Ռուբէնի եւ Կոստանդինի Կիլիկիա ոտք դրած շրջանին երկրին տէրն էր Փիլարտոս» (էջ 26), «Նրանք սահպուած էին ընդունելու Փիլարտոսի գերիշխանութիւնը» եւ մի քիչ յետոյ աւելի յստակ. «Կիլիկիոյ մէջ հայկական իշխանապետութեան իրաւ հիմնադիրը կը հանդիսանար Փիլարտոս» (էջ 27)։ Արդ, եթէ խօսքը Կիլիկիայի հայկական իշխանապետութեան մասին է եւ ոչ Ռուբինեան իշխանապետութեան, ապա 1080 թ. ոչ մի կերպ չի բացատրւում ու արդարացւում։ Զէ՞ որ Փիլարտոսի պետութիւնը սկիզբ է առնում Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) անմիջապէս յետոյ, երբ Ռոմանոս Դ. Դիոգենեսը պարտւում, կուրացւում, գահընկէց է յայտարարւում, իսկ Փիլարտոսն էլ, օգտուելով առիթից իրեն վաստակն անկախ է յայտարարում։ 1080 թ. ասելով հեղինակը գուցէ Ռուբինեան իշխանութեան հիմնադրութեան թուակա՞նը նկատի ունի։ Սակայն նա գրում է այսպէս. «Ռուբէնի եւ Կոստանդինի Կիլիկիա ապաստանելուն թուականը կ'ընդգրկէ 1079–1081 թթ.–ու միջեւ» (էջ 22)։ Եթէ ճիշդը 1079 կամ 1080–ն է, ապա հնարաւոր է 1080–ին իշխանութիւն հաստատել։ Բայց եթէ ճիշդը 1081–ն է, ապա 1081–ին գաղթողը ինչպէ՞ս կարող է 1080–ին իշխանութիւն հաստատել։ Հետեւաբար 1080–ն էլ Ռուբինեանների իշխանութեան հաստատման թուական չի կարելի ընդունել, եթէ ելնենք հեղինակի դատողութիւններից։ 32–րդ էջում նա գրում է. «Իրապէս Վահկայի գրաւումով կը սկսի Ռուբինեան իշխանութիւնը Կիլիկիոյ մէջ»։ Վահկայի գրաւումը տեղի ունեցաւ, ինչպէս գրում է Քաստունին՝ 1091/1092 թ., հետեւաբար ըստ նրա՝ 1080–ը չի կարող համարուել նաեւ Ռուբինեան իշխանութեան հաստատման թուական։ Այդ բանը Քաստունին պնդում է 35–րդ էջում, գրելով. «ԺԱ. դարու վերջին տասնամեակին... Ռուբինեաններ իրենց իշխանութիւնը կը հաստատէին Կիլիկիոյ մէջ»։ Արդ, եթէ 1080–ը ոչ Փիլարտոսի իշխանութեան, ոչ Ռու-

բինեան իշխանութեան սկիզբը չէ, ապա ի՞նչ է։ Մնում է ենթադրել, որ պատմագրութեան մէջ Ռուբինեանների իշխանութեան հաստատման աւանդական սկիզբը ընդունուած 1080 թիւն է, որի հետ լռելեայն իր համամիտ չլինելը ընդգծելուց յետոյ հեղինակը չարունակում է ընդունել։

Բիւզանդական աղբիւրներից օգտագործուած է միայն Աննա Կոմնենայի երկի անդլերէն թարգմանութիւնը։ Դործին օգտակար կը լինէր, եթէ հեղինակը օգտագործած լինէր նաեւ Նիկետաս Խոնիատեսի եւ Կիննամոսի ժամանակագրութիւնները։ Հեղինակը նրանց նիւթին ծանօթ է Շալանդոնի՝ Կոմնենոսների մասին գրած ուսումնասիրութիւնից, բայց պիտի ասել, սկզբնաղբիւրին միջնորդով ծանօթանալը միշտ էլ թերի է։

Մեր խօսքը վերջացնենք տառադարձութեան վերաբերեալ մի քանի դիտողութիւններով։ Առաջին հայեացքից անկարեւոր այս հարցը, մեր համոզմամբ չատ կարեւոր է։ Հայատառանի պատմութիւնը գրող մատենագէտի համար տառադարձութեան հարցը խնդիր չէ, այդպիսի հարց փաստօրէն չի էլ ծագում, քանզի օտար անունների կամ տեղանունների հետ նա որպէս կանոն քիչ գործ ունի։ Մի քանի բիւզանդական կայսրերի կամ զօրավարների անունները դժուար չէ տառադարձել, քանի որ լինելով համընդհանուր՝ քրիստոնէական Միխայէլը գոնում է Միքայէլ, Կոստանդինոսը՝ Կոստանդին, Լէոնը՝ Լեւոն եւ այլն։ Բայց Կիլիկիայի պատմութիւնը գրող մատենագէտը կամայ ակամայ բախւում է այդ խնդրի հետ, որովհետեւ գործ ունի ոչ միայն հայ եւ բիւզանդական անունների ու տեղանունների հետ, այլ բազում այլ ժողովուրդների։ Արեւմտահայ պատմաբանի համար հարցը էլ աւելի է բարդանում, քանի որ բաղաձայնների արտասանութիւնը նրա համար, դասականը՝ ճիշդը չէ։ Ինչպէ՞ս նա վարուի։ Եթէ ընդունի դասական տառադարձութիւնը, ապա միանգամայն պիտի ազատուի արտասանութիւնը (խօսքը արեւմտահայ ընթերցողի մասին է)։ Հեղինակը հրաժարուել է դասական տառադարձութիւնից եւ անուններն ու տեղանունները գրի է առել այնպէս, ինչպէս որ պիտի արտասանի արեւմտահայ ընթերցողը։ Այդպէս էլ կարելի է, բայց ցանկալի էր, որ այդ դէպքում դոնէ առաջին անգամ այդ անունն ու տեղանունը յիշատակելիս, փակագծերի մէջ տրուէր անուան լատինատառ գրութիւնը, այնպէս ինչպէս որ է այն՝ տուեալ ժողովուրդի մօտ։

Թերութիւններն ինչ խօսք երկրորդական նշանակութիւն ունեն, ուղղելի են հեշտութեամբ, նրանք ոչ մի կերպ չեն կարող ազդել այն բարձր դնահատականի վրայ, որ մենք տալիս ենք Երուանդ Քասու-

Նու աշխատութեանը: Այն առաջալ թեմայի չուրջ մինչեւ օրս գրուած ամենահանգամանալից, մանրակրկիտ, ամենախոր ուսումնասիրութիւնն է, գրուած բազմալեզու ու բազմապիսի աղբիւրների եւ գրականութեան հիման վրայ: Յանկութիւն ենք յայտնում որ հեղինակը չարունակի այս ուղղութեամբ իր աշխատանքները, իր ուսումնասիրութեան առարկան դարձնի Կիլիկիայի հայկական պեռութեան պատմութեան հետագայ ժամանակաշրջանը եւս:

ՀՐԱԶ Մ. ԲԱՐԹԻԿԵԱՆ

PAOLO CUNEO, *«LE BASILICHE DI TUX, XNCORGIN, PASVACK, HOGEACVANK». Consiglio Nazionale Delle Ricerche, Studi di Architectura Medioevale Armena, No. 4, Roma, 1973, 127 p., 2 carte geografiche, 27 Rilievi degli edifici, 59 fotografi.*

PAOLO CUNEO, *«THE BASILICAE OF TUX, XNCORGIN, PASVACK, HOGEACVANK». Studies on Medieval Armenian Architecture, No. 4, Rome, 1973, 127 p., 2 maps, 27 surveys of buildings and 59 photographs. Translation in English by Vivian Volbach.*

ՓԱՕԼՕ ՔՈՒՆԷՕ, «ԹՈՒՔԻ, ԽՆՑՈՐԳԻՆԻ, ՓԱՇՈՒԱՆՑԻ ԵՒ ՀՈԳԵԱՑՎԱՆՔԻ ՊԱՀԻԼԻՔՆԵՐԸ». Ուսումնասիրութիւններ Միջնադարու Հայ Ճարտարապետութեան, թիւ 4, Հռոմ, 1973:

Հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութեան նուիրուած Consiglio Nazional Delle Ricerche *հրատարակութեանց չարքին այս չորրորդ հատորն է որ լոյս կը տեսնէ Հռոմէն:*

Իտալացի գիտնականներուն կը պարտինք վերջերս հայկական ճարտարապետութեան հանդէպ նորոգուած այս հետաքրքրութիւնը, որ համակած է Եւրոպոյի ճարտարապետական չրջանակները:

Հռոմի եւ Միլանոյի համալսարաններու առընթեր ստեղծուած այս գիտա-ուսումնասիրական մարմինները ոչ միայն սկսած են գիտաշխատներ կազմակերպել՝ տեղւոյն վրայ ուսումնասիրելու համար Արեւմտեան թէ Արեւելեան Հայաստանի յուչարձանները, այլ՝ նաեւ մասնագիտական եւ չքեղ հրատարակութիւններով լայն համակրութիւն եւ հետաքրքրութիւն ստեղծած են միջնադարու հայկական ճարտարապետութեան հանդէպ:

Ճարտարապետ Փաոլօ Քունէօ, հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրող իտալացի գիտնականներու այս նոր խմբակին ամենէն բեղուն դէմքերէն մէկն է, որ բազմաթիւ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ ստորագրած է «Revue des Etudes Arméniens»ի, «Պատմա-Բանասիրական Հանդէս»ի եւ այլ պարբերական մամուլի էջերուն մէջ: Գրախօսուող հատորի նիւթ եղող չորս եկեղեցիներէն երկուքին՝ Թուղի եւ Փաչուանցի մասին աւելի համառօտ ուսումնասիրութիւն մը ստորագրած է ան «Պատմա-Բանասիրական Հանդէս»ի մէջ (1972, թիւ 3), թարգմանուած՝ ճարտարապետ Արմէն Զարեանի կողմէ:

Ինչպէս այս շարքին առաջին հատորը՝ նուիրուած Սորատիրի Սբ. Էջմիածին եկեղեցիին (տես՝ «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Գ. հատ., 1972) այս ուսումնասիրութիւնը եւս հրատարակուած է երկու լեզուներով: Իտալերէն բնագիրը, ինչպէս նաեւ բոլոր բացատրագիրերը ունին իրենց անգլերէն ամբողջական թարգմանութիւնը, այն կարեւոր եւ իրաւացի մտահոգութեամբ որ նման գիտական աշխատասիրութիւն մը մատչելի ըլլայ մտաւորական աւելի լայն շրջանակներու ու մեկուսացուած չմնայ միայն որոշ ընթերցող հասարակութեան մը շրջագիծին մէջ:

Վաւերագրերը, յատակագիծերը եւ լուսանկարները կը կազմեն հատորին երկրորդ մասը, ուր նոյնքան զգալի է ամբողջականութեան ու կատարելութեան ձգտումը, որ հեղինակին գլխաւոր մտահոգութիւնն է ամբողջ աշխատասիրութեան մէջ:

Ուսումնասիրութեան առաջին մասին մէջ ի յայտ կու գայ այն մասնաւոր ճիգը՝ տալու ամենայարմար մանրամասնութիւնը, հիմնաւորելով հեղինակին այն տեսակէտը թէ ուսումնասիրուած եկեղեցիներու մակերեսային պարզութիւնը խոտոր կը համեմատի անոնց ունեցած կարեւորութեան, հայկական ճարտարապետութեան առաջին շրջաններու հանդուցային ուսումնասիրութեանց մէջ:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Այս բաժնին մէջ կը բացատրուին չորս եկեղեցիներու աշխարհագրական դիրքը (ընդհանրապէս, Վանայ Լիճին հարաւ-արեւմտեան կողմը), եւ իւրաքանչիւր կառոյցին առանձնայատկութիւններէն վեր, ընդհանուրին վերաբերեալ հասարակական ճարտարապետական կապը:

Հեղինակը հոս կը յայտնէ թէ հակառակ այս պազիլիքներու միանաւ-երկայնական նախագծային նմանութեան հայկական այլ

նմանօրինակ եկեղեցիներու, անոնցմէ երեքը՝ Թուղ, Փաչուանց եւ Հոգեացմանք, կը բնորոշուին իրենց մէկ այլ, յաւելեալ պատորոշիչ յատկութեամբ՝ առկայութեամբը կողմնակի, խորունկ ցցուածքներու, երկայնական պատերուն վրայ: Այսպէսով կը յատկանշուի անոնց կապը սասանեան ուշ շրջանի, եւ քրիստոնէական վաղ շրջանի քրիստոնէական ճարտարապետութեան սուրիական–միջագետքեան շրջանին հետ: Հետեւաբար անոնց կառուցման թուականը հեղինակը կը դնէ 5–րդ եւ 6–րդ դարաշրջանի մէջ, այսպէսով զանոնք կը նկատէ ժամանակակից՝ Հայաստանի քրիստոնէական ամենահին ճարտարապետական կառոյցներուն:

ԳԼՈՒԽ Ա.

ՎԵՐԱԲԱՂ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ԵՒ ՓՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ


Դժբախտաբար ոչ պատմական սկզբնաղբիւրները, ոչ ալ ժամանակակից ուսումնասիրութիւնները չունին մանրամասն նկարագրութիւններ, ոչ իսկ մասնակի յիշատակութիւններ ուսումնասիրուած այս չորս կառոյցներու մասին: Հետեւաբար հեղինակը կը պարտաւորուի յիշատակել պատմագիրներու բոլոր այն անցողակի եւ պատահական նշումները, որոնք որեւէ ձեւով առնչութիւն ունեցած են իւրաքանչիւր եկեղեցիի եւ կամ անոր պահուած վայրի մասին:

Նոյնիսկ անցած դարու ճանապարհորդները ժլատ եղած են իրենց նկարագրութիւններուն մէջ, եւ կամ՝ աննկատ անցած, անկարեւոր համարելով պահանք, ինչ որ սոսկած է հետաքրին հեղինակը քաղելու իր եզրակացութիւնները յենուելով միայն արուեստագիտական, քննական եւ բաղդատական իր միջոցներուն:


ԳԼՈՒԽ Բ.

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՁԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒ

Այս գլխուն մէջ հեղինակը մանրամասնօրէն կը նկարագրէ չորս եկեղեցիներէն իւրաքանչիւրը, տալով անոնց յատակագծային եւ ճարտարապետական չափագրութիւնը, կառուցման եղանակը, շինանիւթերը, բացուածքներն ու զարդային առանձնայատկութիւնները, դիտուած բոլոր անկիւններէն եւ կողմերէն: Ան կը նկարագրէ իւրաքանչիւր կառոյցի ժամանակագրական դասակարգումը ու այժմեան դրութիւնը: Այս նկարագրութիւններն ու քննական ուսումնասիրութիւնները կրկնապէս կարեւորութիւն կը ստանան երբ նկատի ունե-



Փաշուանցի ընդհանուր յատակագիծը



Փաշուանց – ամփոփումների հատված

նանք աղբիւրագիտական ու պատմագրական այն բացը, որուն կը հանդիպի հեղինակը, կարենալ հիմնաւորելու համար իր տեսութիւնները պագիլիքներու այս խումբին համար, եւ թուականօրէն տեղադրելու անոնց կառուցման ժամանակը:

ԳԼՈՒԽ Գ.

ՏԻՊԱՅԻՆ ԵՒ ՈՃԱՅԻՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Ուսումնասիրուած չորս եկեղեցիները՝ Թուղ, Մնցորկին Փաշուանց եւ Հոգեացվանք, ունենալով հանդերձ իրենց ինքնուրոյն տիպային եւ ոճային յատկանիշները, կ'իյնան աւելի լայն հատուածային նոյն դասին մէջ – որոնք կը կոչուին միանաւ–երկայնական պագիլիքներ:

Միանաւ պագիլիքները Հայաստանի մէջ կը կազմեն ամենահին ու ամենէն աւելի ընդհանրացած տիպային կառոյցները վաղ քրիստոնէական շրջանին: Անոնք չունենալով զմբէթ կամ ուրիշ գրաւիչ յատկանիշներ, սահմանած կ'ըլլան հաւատացեալներու ուշադրութեան կեդրոնը զարձնել դասը կամ խորանը, զայն բարձրացնելով ընդհանուր յատակէն, եւ անոր տալով կիսաբոլորակ պատ եւ կամարակապ տանիք, ի հակադրութիւն միւս պատերու ուղիղ գիծերուն: Ի դէպ, կիսաբոլորակ խորանի այս կամարակապ տանիքը, զանոնք կը զատորոշէ նոյն վաղ շրջանի սուրբիական նոյնօրինակ պագիլիքներէն, որոնք փոխան հայկական քարէ չինուած կամարակապ տանիքին, ունէին միայն երկ–թեք քարէ ծածկ, եւ կամ՝ իբր տանիք կը գործածէին փայտեայ չինուածքներ:

Ուրիշ մէկ իւրայատկութիւն նաեւ՝ երկյարկանի աւանդատուները, զետեղուած խորանի երկու կողքերուն, որոնք իբր միութիւն խորանի կիսաբոլորակին հետ, կը պարփակուին յատակագծային արտաքին ընդհանուր ուղղանկիւն–քառանկեան մէջ: Վերոյիշեալ աւանդատուներու բացուածքները, եկեղեցւոյ ներքին ծաւալին կու տային աւելի հետաքրքրութիւն՝ իրենց լոյսի եւ չուքի խաղերով:

ԳԼՈՒԽ Դ.

ԶԱՐԴԱՑԻՆ ՏԱՐՐԵՐ ԵՒ ՈՐՄՆԱՇԻՆԱԿԱՆ–ԳԻՏԱՐՈՒԵՍՏ

Ինչպէս Հայաստանի այլ հնագոյն կառուցուածքներուն մէջ, նոյնպէս եւ հոս, զարդային մանրամասները ոչ թիւով շատ են, եւ

ոչ ալ՝ աւելորդ ու խրթին: Անոնք օգտագործուած են յատուկ մասերու համար, ինչպիսին են՝ սիւներու խոյակներ, խարխխներ, մուտքերու եւ լուսամուտերու չրջանակներ, եւայլն:

Զարդաքանդակներու տեսակն ու նիւթերն են որ հեղինակը մղած են զանոնք բաղդատելու վաղ չրջանի քրիստոնէական ուրիչ օրինակներու հետ, ուր մանաւանդ սասանեան ազդեցութեանց ներկայութիւնը ուչագրաւ կը տեսնուի:

Որմնաչինական տեսանկիւնէն դիտուած, Թուղի, Փաչուանցի, Խնցորկինի եւ Հոգեացվանքի եկեղեցիները ունեցած են զանազան տեսակի չինուածքներ, գործածած երեսպատման տարբեր չափերու սրբատաչ քարեր, որոնք պարփակած են միջուկային չերտը: Գործածած են նաեւ ոչ հաւասար չափերու անտաչ քարեր: Իսկ վերաչինուածքներն ու նորոգութիւնները եղած են բազմազան եւ բազմատեսակ: Աչքարերու ներկայութիւնը հոս եւս դրոչմած է հայկական ճարտարապետութեան եւ քանդակագործութեան առանձնայատուկ կնիքը:

ԳԼՈՒԽ Ե.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ – ԱՌԱՋԱՐԿՈՒԱԾ ՏԱՐԵԹԻՒԵՐ

Ձեւ մասնագիտական վերլուչեալ քննութեանց, հեղինակը կու գայ այն եզրակացութեան թէ քննարկուած չորս եկեղեցիներէն երեքը՝ Թուղ, Փաչուանց եւ Հոգեացվանք, կը պատկանին արեւմտեան պազիլիքներու այն խումբին, որոնք կառուցուեցան Վասպուրականի եւ մօտակայ չրջակայքին մէջ, վաղ–քրիստոնէական չրջանին, այսինքն՝ 5–րդ եւ 7–րդ դարամիջերուն: Հեղինակը հոս նկատի ունի սկզբնաղբիւրներու յիչատակութիւնը եւ կարգ մը անուններու հաւանական նոյնութիւնները (Հոկիլ – Հոգեաց – Վանք, եւայլն) առաւել, ճարտարապետական այն զանազան յատկանիչները, որոնք իբր հիմք կը ծառայեն հեղինակին եզրակացութեան:

Վերաչինութիւններ, նորոգութիւններ եւ յաւելումներ, որոնց ենթարկուած են ուսումնասիրուած եկեղեցիները դարերու ընթացքին, աւելի եւս բարդացուցած են կառուցման թուականը ճչդորոչելու հեղինակին ճիգը, նկատի առած այն իրողութիւնը որ որեւէ յիչատակարան, գրութիւն կամ արձանագրութիւն չէ պահուած դէպքերը քնորոչող:

Իբր վերջաբան, հեղինակը իր չնորհակալութիւնը կը յայտնէ Փրոֆ. Կէզա տէ Ֆրանքովիչի, որ ընդունած է հովանաւորել եւ կազմակերպել 1967–73 տարիներու ընթացքին իտալացի ճարտարա–

պետներու պիտաբշաւները՝ տեղւոյն վրայ ուսումնասիրելու հայկական ճարտարապետական յուշարձանները: Եւ ապա՝ կը չնշակ դերը ճարտարապետ Արմէն Զարեանի, որուն նախաձեռնութեան արդիւնք եղած է խալը–հայկական այս գործակցութիւնը ընդհանրապէս, եւ այս հատորի անմիջական հրատարակութիւնը՝ մասնաւորապէս:

ԳՈՒՐԳԷՆ ԴԱՍԱՊԵԱՆ

ՀԱՃԿ ՊԱՐԻԿԵԱՆ, ՅՈՎՆԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ՏՊԱՐԱՆՆԵՐՈՒ»: Հրատ. Հ. Բ. Ը. Մ.ի «Մատենագիտական Ցանկնախումբ»ի: Հալէպ, տպ. «Հալէպ», 1974, 264 էջ: Տպաճանակ՝ 250:

Հայ դպրութիւններու պատմութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւէ Հալէպը: Իսկ դպրութի մը պատմութեան վերականգնումին մէջ՝ հոն հրատարակուած մամուլն ու գիրքերը: Ուրեմն, երբեք պատահական չէ, որ Սուրիահայ դպրութի պատմութեան գծով, առաջին հերթին, Հալէպի Հ. Բ. Ը. Մ.ի «Մատենագիտական Ցանկնախումբ»ը լոյս կ'ընծայէ «Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպարաններու» հատորը: Հատորը պատմութիւնն է վառաւոր անցեալ ունեցող այս հայահոծ դպրութին մէջ գործող հայ տպարաններուն, հայերէն լեզուով հրատարակութիւններ ունեցած տեղական տպարաններուն, հայ մամուլին, գիրքերուն, մշակութային ու քաղաքական երեւոյթներուն:

Երեք տարուան «սպառիչ վազք ու յողնութիւն», ինչպէս նաեւ «վանականի խստակրօն աշխատանք եւ բծախնդրութիւն» հարկ եղած են գիրքը պատրաստողներուն, որպէսզի կարելի դառնայ հրատարակութիւնը այսքան կարեւոր գիրքի մը: Անկախ ամէն բանէ, նման գիրքի մը պատրաստութեան դպաւիտրը ինքնին գնահատանքի արժանի երեւոյթ մըն է: Վարակիչ դառնալու է օրինակը յատկապէս լիբանանահայ դպրութին համար, որպէսզի օր մը, այս դպրութն ալ չգտնուի այնպիսի դժուարութիւններու առջեւ, զորս գիմագրաւած են «Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպարաններու» խմբագիրներն ու աշխատակիցները, մինչեւ իսկ մօտաւոր անցեալի պատկանող բազմաթիւ հրատարակութիւններ ստուգելու ժամանակ:

Մատենագիտական այս գիրքը, որ ըստ հեղինակներուն «կ'ընդգրկէ գարէ մը աւելի ժամանակաշրջանի մը (1869–1974) հայ տիպ ու տառին հոգեւոր ժառանգութիւնը» (էջ 8), իրականութեան մէջ մեզի կու տայ պատկերացումը վերջին 60–ամեակին: Որովհետեւ

19–րդ դարու մէջ կը պահենք մեկուսի եղելութիւն մը, յանձին «Ծըռաթ» թերթին (Հալէպի կուսակալութեան պաշտօնաթերթ), որ 1868 թ.ին ունեցած է հայատառ թրքերէն բաժին մը (ոչ թէ 1869 թ.ին, ինչպէս վերեւ մէջբերուած թուականին մէջ գրուած է):

Գիրքին ներածութեան մէջ (էջ 7–15) յիշատակուած են այն մատենագիտական աղբիւրները, որոնցմէ օգտուած են Հ. Պարիկեանն ու Յ. Վարժապետեանը: Ներկայացուած ցանկը ամբողջական չէ: Կան բազմաթիւ այլ օգտագործելի աղբիւրներ: Սակայն երկուքը անոնցմէ անպայմանօրէն օգտագործուելու էին նման աշխատասիրութեան մը պարագային: Անոնք են՝ Յովհ. Պետրոսեանի «Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոգրաֆիա», Բ. հար., (Երեւան, 1957) եւ Գարեգին Լեւոնեանի «Հայոց Պարբերական Մամուլը», (Բ. տիպ, Երեւան, 1934):

«Մեր ներկայ մատենագիտական աշխատութեամբ մենք յատկանուոութիւնը չունինք լիակատար գործ մը ներկայացնելու», կը գրէ պատասխանատու խմբագիր Հայկ Պարիկեան (էջ 14), իսկ քիչ մը անդին կ'աւելցնէ. «...Մեր առջեւ կ'ունենանք 456 անուն գիրք եւ 110 պարբերական հրատարակութիւններ: Մենք կասկած չունինք պարբերական մամուլի քանակական ճշդութենէն: Սակայն, նոյնը չենք կրնար ըսել տպագիր գիրքերու պարագային» (էջ 11):

Հակառակ այս հաստատումին, մինչեւ գրքին հրատարակութեան աւարտը, պարբերական մամուլի թիւը հասած է 113–ի... Եւ տակաւին այս նոր թիւը կարելի չէ վերջնական նկատել: Մատենագիտական աշխատանքներու պարագային, հարկ է ըլլալ չափահաս, ու միշտ լուսանցք մը թողուլ կարելի հաւանականութիւններու առջեւ: Աւսր լաւագոյն ապացոյցը ահաւասիկ. կը յիշատակենք մոռցուածի տրուած քանի մը թերթեր եւս.

Ա. ՆՈՐ ԹԵՐԹԵՐ

ՅԱՆՔ – Հրատ. Հայ Աւետ. Խմմանուէլ կիրակնօրեայ դպրոցի չրջանաւարտներուն: Հայկազեան Գոլէճի Հայագիտական դրադարանը ունի այս թերթին Ա. թիւը, Ա. տարի, Նոյ. 1961: Մեքենագիր բազմապրուած, 17 էջ: 32×21 սմ.:

L'Orpheline (Որբուհի) – Հալէպի Նախախնամութեան Որբանոցի եւ Սրբուհի Աննա Վարժարանի (Աներեսա Ցղութեան Հոյերուս) թերթը: Լոյս տեսած՝ 1926–1936, կանոնաւոր կերպով, տարին գրեթէ 12 թիւ: Լման հաւաքածոյ մը կը գտնուի Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Մատենադարանը: Ուրիշ մը, ոչ ամբողջական, կը գտնուի Հայկազեան Գոլէճի գրադարանը:

ԳԻՐ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ – Պարբերաթերթ Ուսումնասիրաց Վրժ.ի պատանիներու խմբակի: Ձեռագիր: Խմբակի պատասխանատու՝ Գեղամ Մխսեան: Խմբագիր՝ Լեւոն Վարդան (Պետիրեան): Միայն 2 թիւ: Պահպանուած օրինակներ չկան:

ՀԱ–ՊԱՊԱՄ – Օրկան Աստղիկը խնկարկող էրմապետներուն... Շաբաթաթերթ: Մէյտան Էքսփէզ (Սուրիա) լոյս տեսած: Խմբագիրը: 1918–1919: Երկիծական թերթ մը հրատարակուած հայ կամաւորներու կողմէ: Թիւ մը, կ'ըսուի ընթեռնելի, ունինք մեր տրամադրութեան տակ: Աչխատակիցներէն կը հանդիսանայ Գասպար Մեռակ: 8 էջ, 29×23 սմ.:

Ա. Տէր Խաչատուրեան «Սուրիահայ Մամուլի Պատմութիւն» ուսումնասիրութեան մէջ (տես՝ «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Գ. հատ., 1972) սուրիահայ մամուլի թիւը կը հաշուէ չուրջ 85: «Պատմութիւն Սուրիոյ Հայ տպարաններու» հատորին մէջ այդ թիւը նախ կը բարձրանայ 110–ի, ապա՝ 113–ի: Այս թիւին վրայ աւելցնելու է վերոյիշեալները, եւ մենք կ'ունենանք 117 անուն թերթ: Տակաւին այս թիւը կարելի չէ վերջնական նկատել: Հաւանական կը դանենք այլ թերթերու գոյութիւնը: Ի դէպ, մատենագիտական աշխատասիրութեան մը մէջ (A post–War Bibliography of the Near Eastern Mandates, 1919–1930. Publications of the American University of Beirut, Social Science Series, No. 1, Miscellaneous Fascicle, 1936) հանդիպած ենք երկու այլ պարբերաթերթերու յիշատակութեան ցանկի մը մէջ, որ ունի հետեւեալ խորագիրը. «Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հրատարակուած հայերէն թերթերու ցանկը, 1918–1930».

Կրթասիրաց. ամսագիր, 1923, 1 տարի, Հալէպ:

Պիծակ. ամսագիր, համօրատիպ, 1923, 6 ամիս, Հալէպ:

Վերապահութեամբ կու տանք այս անունները: Ցանկին մէջ տեղ գտած ակնարեւ սխալները պատճառ կը հանդիսանան այս վերապահութեան: Առաջին թերթի պարագային չատ հաւանաբար չըփոթ մը կայ Պէյրութի հրատարակուած «Կրթասիրաց»ին հետ (1925–1927 թթ.), քանի որ ցանկին մէջ այս վերջինը չէ յիշատակուած: Իսկ երկրորդին մասին կարելի է ըսել, թէ այդ թուականներուն նոյն անունով թերթի չենք հանդիպիր Լիբանանի մէջ. ուստի, կըրնայ նման անունով թերթ մը գոյութիւն ունեցած ըլլալ Հալէպի մէջ: Տակաւին, ցանկին մէջ, անդլերէնով գրուած է թէ «Պիծակ»ը լոյս տեսած է միայն 6 թիւ:

Բ. ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անկախ չյիշատակուած թերթերէն, հատորին մէջ տեղ գրաւած կարգ մը թերթերու մասին տրուած են սխալ տեղեկութիւններ, եղած են թերացումներ, երբեմն ալ ստեղծուած՝ չփոթ։ Տանք քանի մը համոզիչ օրինակներ.

ԳՐԱՄԷՐ – Հատորին մէջ կը կարդանք. «Նախ որպէս տարեգիրք 1942–1950, ապա վերածուած ամսաթերթի՝ 1050–1952» (էջ 176)։ Ապա տրուած է երկար ցանկ մը աշխատակիցներու եւ յիշատակուած՝ տպարանները, ուր տպուած է թերթը զանազան շրջաններու։ Այս կարճ հաստատումին մէջ տեղ գտած են բազմաթիւ անճշդութիւններ։

ԳՐԱՄԷՐը սկսած է հրատարակուիլ 1942 Յունուարին։ Առաջին թիւը՝ ձեռագիր։ Փետրուար, Մարտ եւ Ապրիլ ամիսներուն՝ մեքենագիր։ Առաջին տպագիր թիւը կը հանդիսանայ Յունիսի թիւը, որուն վրայ գրուած է՝ Թիւ 1(5)։ Առաջին չորս թիւերու մասին տեղեկութիւններ տրուած են այս տպագիր թիւին մէջ։ Ինչպէս կարելի է հետեւցնել վերեւի մանրամասնութիւններէն, ԳՐԱՄԷՐը առաջին չորս ամիսներուն լոյս տեսած է ամիսը անգամ մը, ապա դարձեր է տարեգիր, կամ՝ աւելի ճիշդ բնորոշում պիտի ըլլար «պարբերաթերթը» կամ «պարբերագիրքը», ինչպէս գրուած է թերթի ճակատին։ 1944, 1950 եւ 1951 տարիներուն ոչինչ թիւեր լոյս տեսած են։ Թերթը ընդամէնը լոյս տեսած է 16 թիւ։ 1948 թ.ի թիւը (թիւ 11) լոյս տեսած է Տպ. Տէր–Սահակեան, եւ ոչ թէ տպ. «Գոլէճ», ինչպէս կ'ըսուի հատորին մէջ։ Իսկ աշխատակիցներու ցանկին մէջ ի՞նչպէս կարելի է մոռնալ անունները Անդրանիկ Թերզեանի եւ Ստեփան Ալաջալեանի։

ՄՇԱԿՈՑԹ – Հատորին մէջ կը կարդանք. «Պարբերաթերթ Բեթէլ Եկեղեցւոյ Քրիստոնէականա Ջանից Միութեան, Հալէպ։ 1952 Ապրիլ – 1953։ 24 էջ, մեքենագիր, միայն 12 էջը, 30×22 սմ.։ Թերթին համարակիրին անունը չէ յիշատակուած։» (էջ 185)։

Զարմանք կը պատճառեն այս մանրամասնութիւնները մեզի։ «Մշակոյթ»ի 1952 թ.ի Ապրիլի թիւը (այսինքն՝ թիւ 1), կը բաղկանայ 32 էջերէ, լրիւ տպագիր, 27×19 սմ.։ Համարակալիչը տարբերած է Ա. Շանլեան, բան մը՝ որ ենթադրել կու տայ թէ ան է թերթին համարակիրը։

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԱԼՊՈՄ – Գրախօսուող հատորը կու տայ հետեւեալ մանրամասնութիւնները. «Պատկերազարդ եւ գրական բաժիններով։ Հրատ. Կիւլեսէր Տեմիրճեան գրատան։ Հալէպ, տպ. «Ալբարա» 1927–1929, երեք տարի։ 112–138 էջ, 20×14 սմ.։ Պատրաստեց՝ Եղուարդ Ոսկերիչեան։ ...Ալպոմը ունի նաեւ գրական բա-

ժին: ...1928 եւ 1929 տարիներուն ալպոմին աշխատակցած են...» (էջ 218):

Այս կարճ մէջբերումին մէջ կը վխտան բազմաթիւ սխալներ: Ա. հատորը կը բաղկանայ 72 էջերէ, տպագրուած՝ տպ. «Արաքս», պատկերազարդ ալպոմ մը, առանց գրական բաժնի կամ յօդուածներու: Չափ՝ 14×20 սմ.: Բ. եւ Գ. հատորները տպուած են տպ. «Արարա»: Բ. հատորը կը բաղկանայ 132 էջերէ, պատկերազարդ եւ կենսագրական ծանօթութիւններ կու տայ միայն: Գ. հատորը, որ կը բաղկանայ 176 էջերէ, ունի գրական բաժին մը եւ աշխատակիցներ: Գրական բաժին ըսելով պէտք է հասկնալ այլազան յօդուածներ, ոչ անպայման գեղարուեստական բովանդակութեամբ:

ԱԶԳԱՅԻՆ ԽԱՄԱՃԻԿՆԵՐ – Դամասկոս, 1918–1919:

Այս թերթին մասին առաջին տեղեկութիւնը կը հայթայթէ Յովհ. Պետրոսեան: Ան կը գրէ. «Ձաւէչտաթերթ: Դամասկոս, 1918:» («Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոգրաֆիա», հտր. 2, էջ 303): Միայն այդքան: Ա. Տէր Ներսէսեան կու տայ խմբագրին անունը՝ Արմենակ Տէր-Յակոբեան, վիմատիպ ըլլալը կը նշէ եւ զայն կը դնէ 1919 թ.ին («Հայկազեան Հայագիտական Հանդէս», Գ. հտր., էջ 222): Ա. Կիրակոսեան «Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւն» հատորին մէջ ասոնց վրայ կ'աւելցնէ «Ազգային խամաճիկներ»ուն չափաթաթերթ ըլլալը, տպ. «Ծկյհա» տպուիլը, 1 էջ (34×23) ըլլալը եւ խմբագրին անունը՝ Արմենակ Տէր-Յակոբեան: Թուական կու տայ 1918–1919-ը (էջ 191):

Կ'անդիմանանք վերոյիշեալ տեղեկութիւններուն ազբիւրը կամ ազբիւրները: Հիմնուելով «Ազգային Խամաճիկներ» թերթի թիւ 2-ի տուեալներուն, կարելի է մի քանի ճշդումներ եւ յաւելումներ ընել: Ազգաբեւ թերթը վիմատիպ է: Երկրորդ թիւին թուականն է Մարտ 23, 1919: Լոյս տեսած է Դամասկոս, կողմնակի պրուած է՝ տպ. «Ծկյհա»: Չափը՝ 35×23·5 սմ.: Թերթը կը բաղկանայ մէկ էջէ: Թերթին մէկ երեսին վրայ տպուած է: Գինն է՝ 40 փրդ.: Կայ առաջնորդի մը երդիծանկարը, Խարազան ստորագրութեամբ: Միակ պրուածքիւնը՝ 52 տողերէ բաղկացած երդիծական չափածոյ պրուքիւն մըն է, տպուած ծաղրանկարը ներկայացնող կրօնականին դէմ: Պրուքիւնը ստորագրած է Վահան Խլատալէրտեան, որ չատ հաւանաբար ալ կը հանդիսանայ թերթին խմբագիրը:

Դժբախտաբար սխալները, չփոթները, թիւրիմացութիւնները կը չարունակուին այլ թերթերու պարագային, եւ աւելի կը չեշտուին հրատարակուած դիրքերու առիթով:

Դիրքերու պարագային, կարելի է կատարել քանի մը հիմնական մատնանչումներ.


Պզտիկ խնամ
40 փոյ.
թիւ 2
մարտ 23
1919
Հանդէս

Ա. ՁԳԻՇԱՏԱԿՈՒՄ ԳԻՐՔԵՐ

Որքան ալ որ հատորը խմբագրողները ի սկզբանէ կը գրեն թէ իրենց ներկայացուցած 456 անուն գիրքերէն դուրս տակաւին կրնան գտնուիլ բազմաթիւ գիրքեր, անըմբռնելի կը մնայ չատ մը գիրքերու բացակայութիւնը, գիրքեր՝ որոնք մատչելի են, յաճախ լոյս տեսած անցնող երկու կամ երեք տասնամեակներուն: Անոնցմէ յիշենք՝

Արսէն Արծրունի, Հերոսամարտը· հրատարակուած Վանի Ապրիլեան Հերոսամարտի 16–րդ տարելիցի առթիւ: Տպ· Գոլէճ, 1931, 23 էջ: Վասպուրականի հայրենակից· միութեան հրատարակութիւն:

Նիկոլ Աղբալեանի Յիշատակին (մահուան Ա· տարելիցին առթիւ): Հրատարակութիւն Հալէպահայ ուսուցչական միութեան: Տպ· Նայիրի, 1948, 27 էջ:

Յակոբ Նորունի, Դողդոջ կայծեր, Հալէպ, 1943:

Ներսէս Աւդ· Քհնյ· Թաւուշճեան, Տեառնընդառաջ: Մուտքը (էջ 2–4) հայերէն: Բովանդակութիւնը՝ հայատառ թրքերէն: Տպ· «Արարա», 1932, 27 էջ:

Հրանտ Տէվէճեան, Աշխարհագրութիւն Սուրիոյ եւ Լիբանանի· բնական, քաղաքական եւ տնտեսական: Ա· տիպ: Տէր–Մահակեան, 1933, 69 էջ:

Սարգիս Տէմիրճեան, Պատմութիւն Ատիամանի, Յ· Ք· 898–1914: Հրատ· Ատիամանի երիտասարդաց Միութեան, Հալէպ: Տէր–Մահակեան, 1948, 66 էջ, պատկ·:

Յովհ·ի Տէր–Վարդանեան, Մարաշի ջարդը 1920–ին եւ պատմական համառօտ ակնարկ մը իր անցեալին վրայ: Տպ· Արաքս, 1927, 132 էջ:

Թէեւ այս վերջին գիրքին անունը յիշատակուած է, սակայն այլ մանրամասնութիւններ կը պակսին, քանի որ կարելի չէ եղած գտնել զայն:

Բ. ՍԽԱԼ ԱՐՏԱԳՐՈՒՄ ԳԻՐՔԵՐ

Բաւական մեծ թիւով գիրքեր յիշատակուած են թիւր ձեւով: կրկին տանք կարգ մը օրինակներ·

Էջ 66, թիւ 264 – «Սրտի կայլակներ», պիտի ըլլայ՝ «Սրտի Ալեակներ»:

Էջ 36, թիւ 90 – «Րապպէն հուզուրունտա պիր էօմիւր», պիտի ըլլայ՝ «Րապպէն հուզուրընտա պիր էօմր»:

Էջ 36, թիւ 89 – «Տէրոջը ներկայութեան կեանք մը», պիտի ըլլայ՝ «Տէրոջ ներկայութեան մէջ կեանք մը»:

Այս վերջին երկու գիրքերը ներկայացուած են որպէս մէկ

գիրք, լոյս տեսած 1939 թուականին: Մինչդեռ հայատառ Թրքերէնը լոյս տեսած է 2 տարի առաջ: Իսկ 1939 թ.ին լոյս տեսածը հայացուցած է Ղ. Մարանեան: Ուրեմն, կ'ունենանք երկու անջատ հատորներ:

Էջ 36, թիւ 92 – «Ցարութիւն պիրատէր Զարխըթեանըն մուխթասար թերճիմէ հալը». թերճիմէ պիտի ըլլայ՝ թէրճէմէի: Իսկ 192 էջը՝ 92 էջ:

Էջ 57, թիւ 216 – «Այնթապի Քրխտոնեասիրաց ընկերութիւն», պիտի ըլլայ՝ Քրխտոնեասիրաց: Իսկ 12 էջը՝ 62 էջ:

Էջ 40, թիւ 111 – «Օրագրութիւն ուղեւորութեան յԵւրոպա Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ», պիտի ըլլայ՝ Կաթողիկոսին:

Էջ 40, թիւ 107 – «Նոր ուղիներ. հասարակական, մանկավարժական գիրք», պիտի ըլլայ՝ «Նոր ուղիներ. հասարակագիտական–մանկավարժական»: Իսկ 87 էջը՝ ԺԴ, 184 էջ:

Գ. ԷՋԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Հատորը կազմողները աշխատած են իւրաքանչիւր գիրքի, հրատարակութեան պարագային տալ բոլոր մանրամասնութիւնները. անուն, վայր, ժամանակ, տպարան, ծաւալ, չափ, համրագիրներ, յօդուածագիրներ: Անշուշտ մատենագիտական աշխատանքի մը համար կարեւոր եւ կենսական մանրամասնութիւններ են ասոնք, որ գործ մը կը դարձնեն գիտական, անոր կու տան կշիռ, ծանրութիւն:

Գնահատելով հանդերձ այս ուղղութեամբ կատարուած ճիգը, հարկ է նշել որ յատկապէս էջագրութեանց պարագային սպրդած են բազմաթիւ սխալներ, եւ աւելի կարեւոր անտեսում մը՝ այս ուղղութեամբ հետեւողական մեթոտի մը բացակայութիւնը:

Առաջին հերթին, կարգ մը գիրքեր չեն ունեցած էջագրում: Նման պարագաներու, հատորը կազմողները իրենք հաշուած են էջերը: Մինչդեռ մատենագիտական օրէնքները կը պահանջեն, որ էջագրութենէ դուրս գիրքերու պարագային յիշատակուի իրողութիւնը, ապա տրուի էջերուն թիւը: Առանց էջագրութեան գիրքերու չարքէն տանք մի քանի օրինակ. Զարեհ Մելքոնեանի «Ես եւ Մարդիկ»ը, Պետրոս Պարզեւի «Մշուշոտ կատարներ»ը, «Սուրիական Ալպոմ»ը, Արամ Արմանի «Խաչբուռ»ը:

Երկրորդ պարագայ մը. երբ գիրքի մը էջերու թիւը պիտի տրուի, ուշադրութիւն պէտք է դարձնել, որ գիրքին սկիզբը կամ աւարտին, հայկական կամ հռոմէական թուանշաններ կրող էջեր չըլլան: Եթէ կան, մատենագիտական օրէնքները կը պահանջեն, որ էջաթիւի յիշատակութեան մէջ նկատի առնուին նաեւ անոնք: Իսկ եթէ կ'ուզենք որ մատենագիտական աշխատասիրութիւնը ըլլայ գի-

տական, պարտինք նաեւ յիշատակել գիրքին սկիզբին կամ աւարտին դրուած այն էջերը, որոնք էջադրուած չեն երբեմն:

Էջադրումի ուղղութեամբ այլ նշում մը. կարգ մը գիրքերու պարագային, գիրքին աւարտին դրուած բովանդակութիւնները էջաթիւ չունին: Մատենապիտական աշխատասիրութեան մը մէջ, երբ կարգ մը գիրքերու պարագային, էջաթիւերուն վրայ կ'աւելցնենք թիւը այդ էջերուն, չենք կրնար զայն անտեսել այլ գիրքերու պարագային: Հարկ է ճշդել ուղղութիւն մը եւ ըլլալ հետեւողական: Նման մեզանչումներ կարելի է գտնել Ժ. Համեանի «Բարձուճիճեռու կատարին» եւ «Մեր երգը» հատորներուն, Շահպանի «Վերջալոյս» եւ «Մոմեր», ինչպէս նաեւ բազմաթիւ այլ հատորներու պարագային:

Տակաւին, ասոնցմէ անկախ, կան գիրքեր, որոնց էջաթիւերը սխալ են տրուած: Մի քանի օրինակներու հանդիպեցանք նախապէս: Յիշենք մի քանի ուրիշներ. Ե. Ս. Թումասեանի «Զ. Թ. Սքըտ՝ Աւետարանիչ եւ Ռահվիրայ» հատորին էջերուն թիւը 21 է եւ ոչ թէ 22. Ե. Կ. Տէմիրճեանի «Աշակերտին երգարանը» հատորին էջերուն թիւը՝ 82 եւ ոչ թէ 120. Դ. Կ. Ճիզմեճեանի «Յոլֆեր կենաց Բանէն» Բ. հատորը 112 էջ կը հաշուէ եւ ոչ թէ 104: Ամմիան «Դրուագներ Նկարչական կեանքէս» հատորը ունի 136 հաշուուած էջ, եւ ոչ թէ 132: Շարքը հեշտօրէն կարելի է երկարել... Սակայն փակենք հետաքրքրական օրինակով մը. հրատարակուած գիրքերու չարքին յիշատակուած է նաեւ մեր կողմէ պրահօսուղ գիրքը, որուն էջերուն թիւը ներկայացուած է 235, մինչդեռ պիտի ըլլայ 264:

Դ. ՍՈՒՐԻՈՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԷՆ ԴՈՒՐՍ ՏՊՈՒԱԾ ԳԻՐՔԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՆ

Բանասէրներն ու մատենագիտական աշխատանքներով զբաղողները, ապագային, մինչեւ իսկ ներկայիս, չփոթութիւններէ զերծ կացուցանելու մտահոգութեամբ, հարկ է արձանագրել հետեւեալ իրողութիւնը. յատկապէս քաղաքական մտահոգութիւններով, կարգ մը գիրքերու վրայ որպէս հրատարակութեան վայր նշանակուած է Հալէպը, սակայն անոնց հրատարակութեան իրական վայրը հանդիսացած է Պէյրութը: Նման պարագաներու տպարանը չէ նշուած: Ասոնց չարքին կը պատկանի եղիա Նաճարեանի «Դաշնակ Ղեկավարութիւնը Օտարի Ծառայութեան մէջ» հատորը: Հակառակ որ ծանօթութեանց բաժնին մէջ կ'ըսուի թէ տպարանը չէ նշուած, գիրքը գետեղուած է տպարան «Շիրազ»ի հրատարակած գիրքերու ցանկին մէջ: Նաճարեանի այս գիրքը տպուած է Պէյրութ: Կան ուրիշ գիրքեր ալ, որոնց տպագրութեան վայրը նշուած է Հալէպը, սակայն

տպուած Պէյրութ, որոնց մասին հատորին մէջ ոչ մէկ ակնարկութիւն եղած է։ Անոնցմէ են՝ «Հնչակեան Պարբերագիրք»ը, 1952 թ.ին տպուած, եւ Հայրապետական (Ց. Մատէեան) «Հայրենադարձութեան Նոր Արշաւանքը Հայաստանեայց Եկեղեցիին դէմ» հատորիկը (34 էջ), 1949 թ.ին լոյս տեսած։ Շատ հաւանաբար տակաւին կան գիրքեր, որոնք նոյն պարագային մէջ կը գտնուին։

Ե. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԹՈՒԱԿԱՆԻ ՍԽԱԼ

Կարգ մը հրատարակութիւններու պարագային տպագրութեան թուականի սխալը շատ բացայայտ է։ Այլ պարագաներու՝ մէկ կամ երկու տարիներուն չփոթ մը կայ։ Ե. Ս. Թովմասեանի «Զ. Թ. Սքըտ՝ Աւետարանիչ եւ Ռահվիրայ» (այս է գրքոյկին լրիւ անունը, եւ ոչ թէ «Զ. Թ. Սքըտ») հատորը լոյս է տեսած 1929 թ.ին եւ ոչ թէ 1930 թ.ին։ Դ. Կ. Ճիզմէճեանի «Յոլֆեր կենաց Բանէն» ի. հատորը լոյս տեսած է 1960 թ.ին, եւ ոչ թէ 1953 թ.ին։ «Աշակերտին Երգարանը»՝ 1959 թ.ին, փոխան 1958 թ.ի։ Արամ Գիտակլեցի «Արաբական Աստղերու Տակ Հոգիս Կ'երգէ» հատորը՝ 1964 թ.ին եւ ոչ թէ 1963 թ.ին։

Կ'ուզենք չեչտել. իւրաքանչիւր պարագայի կատարուած նչումները հիմնուած են օրինակներու վրայ։ Այլապէս թերութիւններու, պակասներու, անճշդութիւններու ցանկը պիտի երկարէր...

Վերեւի սրբագրութիւնները, ճշդումները երբեք չեն ըլլար կատարուած աշխատանքը թերագնահատելու մտադրութեամբ։ Կատարուածը, որպէս առաջին փորձ, գնահատանքի արժանի աշխատանք մըն է։ Առանց այդ աշխատանքին կարելի պիտի չըլլային (առաջին հերթին, մեր կողմէ) կատարուած յաւելումները, սրբագրութիւնները եւ ճշդումները։ Դրուած է հիմը, որուն վրայ հարկ է կառուցել չէնքը, ճամբու ընթացքին կատարելով սրբագրութիւններ, ներմուծելով նոր տուեալներ։

Սակայն, քիչ մը աւելի բծախնդրութեամբ, նաեւ օգտագործումով առաջին հերթին Պէյրութ գտնուող մատենադարաններու, ապա՝ հայրենիքի եւ արտասահմանի այլ մատենադաններու կարելիութիւններուն, կարելի պիտի ըլլար խուսափիլ շատ մը տարբեր կան սխալներէ եւ յիշատակուած գիրքերու եւ թերթերու ցանկը կարելի պիտի ըլլար շատ աւելի լրիւ դարձնել։ Բազմահարիւր սըխալներու, անճշդութիւններու եւ թերիներու առկայութիւնը, ինչպէս նաեւ չյիշատակուած հրատարակութիւններու պատկառելի թիւը պէտք է մղեն հրատարակիչները վերատեսուած նոր հրատարակութեան մը պատրաստութեան։

ԺԻՐԱՑՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՍԻՐԱՔ ԳԻԼԼԻԽՏԱՂԵԱՆ, «ՀԱՅԵՐԷՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 1973, 430 էջ:

Հայոց լեզուի ուղղագրութեան պատմութեան ուսումնասիրութիւնը, ընդհանրապէս հայագիտութեան ու մասնաւորապէս հայ լեզուաբանութեան մէջ, մնացած է համարեայ խոպան մարզ մը՝ հակառակ ցարդ լոյս տեսած բազմաթիւ ու բազմաբնոյթ հայագիտական այլ ուսումնասիրութիւններու ու մենագրութեանց: Եւ ասիկա՝ երբ գիտենք թէ ուղղագրական հարցը կը հանդիսանայ լեզուաբանական ամենէն այժմէական ու հրատապ խնդիրներէն մէկը՝ կարօտ խորազնին ու համակողմանի ուսումնասիրութեան:

Ահա այս բացը դոցելու կու գայ հայրենի լեզուաբան–քերականն, բանասիրական գիտութիւններու Դոկտ. Սիրաք Գիւլլիւտաղեանի արժէքաւոր աշխատասիրութիւնը՝ «Հայերէնի Ուղղագրութեան Պատմութիւն»(*), որ իրաւամբ, իր գիտականութեամբ ու տարողութեամբ կը գրաւէ եզակի եւ ուրոյն տեղ հայ լեզուաբանութեան պատմութեան մէջ:

Սոյն ուսումնասիրութիւնը արդասիքն է վաստակաւոր ու հմուտ գիտնականի մը, որ իր գիտելիքներու լայնածիր պաշարով, նիւթին լիուլի տիրապետելու գիտողականութեամբ ու կարողութեամբ՝ կրցած է քննել ու բացայայտել հայերէնի ուղղագրութեան հետ կապուած համարեայ բոլոր հարցերը՝ սկսած Ե. դարէն մինչեւ մեր օրերը, ընդգրկելով աւելի քան 1500–ամեայ ժամանակաշրջան մը:

Աշխատասիրութեան հիմք ծառայած են վիմական արձանագրութիւնները, մատենադարանի ձեռագրերը, տպագիր գրականութիւնը, ինչպէս նաեւ արեւմտահայ եւ արեւելահայ մամուլը:

Հեղինակը իր աշխատասիրութիւնը բաժնած է չորս շրջաններու՝ Ե–Թ. դդ., Ժ–ԺԷ. դդ., ԺԸ–ԺԹ. դդ. եւ Ի. դ., ո՛չ անշուշտ բուռ հայերէն լեզուի պատմութեան շրջանաբաժանման, այլ՝ ըստ լեզուական «շրջադարձային փոփոխութիւններուն»:

Առաջին գլուխը կ'ընդգրկէ հայերէնի ուղղագրութիւնը Ե–Թ. դարերուն (էջ 12–65), ուր մանրամասնօրէն ուսումնասիրուած են տուեալ ժամանակահատուածի բազաձայններուն (էջ 12–33), ձայնաւորներուն (էջ 33–48), երկբարբառներուն (էջ 48–53), տառադար–

---

*) Ի դէպ, հեղինակը այս աշխատասիրութեամբ ստացած է իր Դոկտոր Բանասիրական Գիտութիւններու գիտական աստիճանը:

ձութեան (էջ 54–57), մեծատառերու գործածութեան (էջ 57–58) ու տողադարձի (էջ 58–65) ուղղագրական կանոններն ու չեղումները։

Այս գլխուն էական յատկանիշը կը հանդիսանայ այն, որ գիւղպիւտաղեան, գիտնականի համուրեամբ կրցած է գնահել այդ չրջանի ուղղագրութիւնը վիմական արձանագրութիւններու հիման վրայ, որուան ըլլալով, որ այդ ժամանակաչրջանի ուղղագրութեան համար վաւերագրական տուեալներ կը պակսէին։ Մէջբերումներն ու վկայակոչումները կը կատարէ օտար լեզուներէ (յունարէն, լատիներէն, ասորերէն, երբայերէն, եւայլն) եւ հռչակաւոր գիտնականներէ (Մէյէ, Հիւպշման, Աճառեան եւ ուրիչներ)՝ իր դրոյթները համոզիչ ու հաւաստի դարձնելու համար։

Լայնապարփակ այս հաչուառման լոյսին տակ, հեղինակը կը պարզէ թէ ե–թ. դարերու ուղղագրութիւնը եղած է հնչիւնային՝ «իւրաքանչիւր հնչիւնին տառ մը, իւրաքանչիւր տառին հնչիւն մը» սկզբունքին հիման վրայ։

Երկրորդ գլուխը նուիրուած է ժ–ժէ. դարերու ուղղագրութեան (էջ 66–177)։ Հոս՝ հեղինակը փաստական հարուստ նիւթերու հիման վրայ կը ներկայացնէ ուղղագրական իրավիճակը, միաժամանակ տալով կարգ մը լեզուաբաններու կարծիքներն ու տեսակէտները (Կարստ, Աճառեան, Ղազարեան)։ Այս բաժնին մէջ, նախորգ գլխուն նման, կան ենթաբաժանումներ – բաղաձայններ (էջ 66–114), ձայնաւորներու ուղղագրութիւն (էջ 114–154), թուական անուան ուղղագրութիւն (էջ 154–156), երկբարբառներու ուղղագրութիւն (էջ 156–159), տառադարձութիւն (էջ 159–164), մեծատառի կիրառութիւն (էջ 165–168), տողադարձ (էջ 168–173), ուղղագրական չեղումներ (էջ 174–175), որոնք ուսումնասիրուած են խըղճմըտօրէն։

Լեզուաբանը ցոյց կու տայ թէ այդ դարաչրջանին հետզհետէ լայն տարածում կը գտնէ ուղղագրութեան երկակի դրութիւնը՝ աւանդական (գրաբարեան) եւ հնչիւնային (արտասանական)։

Ուսումնասիրութիւնը կ'ընթանայ հարցին առնչութեամբ տեղի ունեցած ծաւալուած բանավէճերուն ու հայերէնի ուղղագրութեան մէջ կատարուած տեղաչարժերուն հիման վրայ։ Լրջութեամբ կը քննուին բաղաձայնական համակարգերը, ղ հնչոյթի պատմական հնչիւնափոխութիւնը (որ հին հայերէնի մէջ հանդէս կու գար որպէս լ–ի կոշտ տարբերակ), օ եւ ֆ տառերու փոխառութիւնը, յ տառի ուղղագրութեան պարագան, եւայլն։

Համաձայն աչխատութեան մէջ բերուած օրինակներուն՝ տրեալ չրջանին փոփոխութեան կ'ենթարկուի նաեւ հայերէնի տառա-

դարձութիւնը. լայն տարածում կը տանեան համառօտագրութիւնները, տողադարձի կանոնները:

Երրորդ գլուխը կը վերաբերի ԺԸ–ԺԹ. դարերու ուղղագրութեան քննութեանը (էջ 178–288), հետեւեալ բաժանումներով՝ ձայնաւորներու ուղղագրութիւնը (էջ 180–194), մեծատառի գործածութիւնը (էջ 195–198), տողադարձը (էջ 198–200), ԺԹ. դարու ուղղագրական բանավէճերը (էջ 200–221), մեծատառ (էջ 222–223), տողադարձ (էջ 225–227), ուղղագրութիւնը փոխելու փորձեր (էջ 227–253) եւ ձայնաւորներ (էջ 276–288), եւայլն:

Գիւլպիւտաղեան՝ տալով այդ ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը, եւ չեչտելով հայ մշակոյթին զարգացումը, կը ներկայացնէ մտաւորականութեան ձգտումները դարարը կանդուն պահելու կապակցութեամբ: Ահա այդպիսի պայմաններու մէջ է որ ուղղագրութեան հարցը առաջ կը քաշուի՝ գրութեան երեք սկզբունքներով՝ հնչիւնային, ստուգաբանական եւ աւանդական:

ԺԹ. դարու ուղղագրութեան վիճակին անդրադառնալով՝ լեզուաբանը ծաւալած բանավէճերու հիման վրայ քննած է ա՛յ միայն նախորդ դարերու դասական ուղղագրութեան մէջ կատարուած չեզոքումները, այլեւ գրական լեզուի երկու տարբերակներու զոյակցման հետեւանքով առաջացած ուղղագրական նոր անհամապատասխանութիւնները:

Վերոգրեալ ժամանակաշրջանի Մխիթարեան գրականութիւնը, բառարանագրութիւնը եւ չարք մը պարբերականներ երբ ուսումնասիրենք՝ պիտի նշմարենք որ անոնք հետեւած են աւանդական ուղղագրութեան:

Յատկանշական է որ ուսումնասիրութեան մէջ յատուկ տեղ տրուած է նաեւ Ն. Ռուսինեանի, Ստ. Մաթեւոսեանի եւ Ղ. Ագայեանի կողմէ առաջ քաշուած տեսակէտներու ու ծրագիրներու նախագիծերուն՝ հայերէնի աւանդական ուղղագրութեան վերափոխման առընչութեամբ: Այս բանավէճերուն կը մասնակցին արեւմտահայ եւ արեւելահայ մտաւորականութեան բազմաթիւ ներկայացուցիչներ:

Արծարծելով տառադարձութեան պարագաները՝ հեղինակը կը գրէ, թէ արեւելահայերէնը կ'որդեգրէ աւանդական տառադարձութիւնը, մինչ արեւմտահայերէնի մէջ փոխառեալ անուններու ուղղագրութիւնը կը պահպանուի նոյնութեամբ. իսկ նոր փոխառութիւններու պարագային, բառերը կը տառադարձուին համաձայն փոխառու լեզուի հնչիւնական օրինաչափութիւններուն:

Ընդարձակ բաժին յատկացուած է Ի. դարու հայերէնի ուղղագրութեան պատմութեան (էջ 289–410): Նախորդ չրջաններու մէջ

ծնունդ առած բանավէճերն ու տարակարծութիւնները աւելի խորացան այս շրջանին, եւ պատճառ դարձան 1922 թ.ի Մարտի 4–ի ուղղագրական նոր բարեփոխութեան՝ Մանուկ Աբեղեանի մշակած նախագիծին համաձայն, որուն դէմ իրենց խոր տարակարծութիւնն ու դժգոհանքը յայտնեցին հայ եւ օտար գրագէտներ ու գիտնականներ՝ ինչպէս՝ Շիրվանզադէ, Թումանեան, Իսահակեան, Մէյէ, Մառ, Աճառեան, Ադոնց, եւ ուրիշներ:

Մէկ կողմէն դժգոհութիւններն ու դժուարութիւնները, միւս կողմէն աւանդականէն զգալի հեռացումը եւ երկու հատուածներու անջրպետումը, պատճառ դարձան որ 1940 թ.ին վերափոխուի այդ ուղղագրութիւնը: Այս յեղաշրջումը գլխաւորեց նորակազմ «Տերմինաբանական Կոմիտէն», որ լեզուաչինական իր բարենպաստ դերը կը կատարէ մինչեւ այսօր:

Գիրքին հիմնական, ցայտուն արժանիքները կարելի է ամփոփել հետեւեալ կէտերուն մէջ.

ա. Աննախընթաց, խիստ այժմէական աշխատասիրութիւն մը, որ կու գայ դոցելու հայ լեզուաբանութեան մէջ դոյութիւն ունեցող բաց մը:

բ. Գիտականօրէն հիմնաւորուած, խզճամիտ, աքնաջան ու համբերատար աշխատանք:

գ. Պատմական ժամանակահատուածներու լայն ընդգրկում (գրաբար, միջին հայերէն, բարբառներ, աշխարհաբար՝ արեւելահայ եւ արեւմտահայ դրսեւորումներով):

դ. Հարուստ ու ճոխ փաստական օրինակներու ու տուեալներու առկայութիւն:

ե. Բացատրութիւններու, յաւելուածներու, ծանօթագրութիւններու հարուստ պաշար:

զ. Լեզուպիտութեան ու գրականագիտութեան մէջ չրջանաբաժանումը՝ ամենադժուար ու պատմական ճշգրտութիւն պահանջող գործ մըն է: Այս առումով եւս, հեղինակը չարժած է հարուստ ճշգրտութեամբ մը:

է. Այս բոլորին մէջ հեղինակը չէ մնացած սոսկ արձանագրողբանահաւաք մը, այլ գիտականօրէն գնահատող, արժեւորող եւ եզրակացութիւններու յանգող լեզուաբան:

Գիւլպիւտաղեանի ներկայ աշխատասիրութիւնը հայագիտութեան մէջ եզակի, խիստ արժէքաւոր ներդրում մըն է, որ որակական նոր բաբենիշ մը կ'արձանագրէ յօդուտ հայերէնագիտութեան՝ ի պատիւ անոր հեղինակին:

Այս բոլորէն յետոյ, թող ներուի մեզի հոս անցողակի արձանագրել փոքր նկատում մը, այն՝ որ հայրենի դիտնականին բազմակողմանի բարեմասնութիւններով օժտուած այս աշխատութիւնը, անկասկած, աւելի ամբողջական պիտի ըլլար, եթէ ան առաւել հանդամանօրէն անդրադարձած ըլլար արեւմտահայերէնի ուղղագրական մարդին։

ՊԱՐՈՑՐ ԱՂՊԱՇԵԱՆ

ՄԱՆԻԱ ՂԱԶԱՐԵԱՆ, «ՀԱՅ ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԸ ԺԷ–ԺԸ. ԴԱՐԵՐՈՒՄ», Երեւան, 1974, 284 էջ + նկարներու վերատպութիւն։

Հայկական կերպարուեստի պատմութիւնը չօշափող ցարդ լոյս տեսած ամենահամապարփակ հատորներէն մէկը կարելի է համարել Մանիա Ղազարեանի «Հայ կերպարուեստը ԺԷ–ԺԸ. Դարերում» աշխատասիրութիւնը, որ լոյս կը սփռէ 17–րդ եւ 18–րդ դարերուն ծաղկած՝ հայկական նոր ժամանակներու հիմքը կազմող արուեստին վրայ, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ հայկական որոշ գաղթօճախներու մէջ։

Հայաստանի կերպարուեստին ու մշակոյթի այլ բնագաւառներու զարգացումը հեղինակը արդարացիօրէն կը կապէ քաղաքական, ընկերային եւ անտեսական այն իրադարձութիւններուն, որոնք տեղի ունեցած են այդ շրջաններուն՝ Կովկասի մէջ ռուսական կայսրութեան տարածումով։ Այս վերածնունդը կը կանխուի սակայն այլ գաղթօճախներու մէջ ծաղկող ու զարգացող արուեստով՝ մասնաւորաբար նկարչութեան մարզին մէջ, որուն զարգացումը սակայն «մխուսարը չէր, ինչպէս ժամանակի, նոյնպէս եւ տեղի իմաստով», կ'եզրակացնէ Ղազարեան։

Ղազարեանի հատորը բաժնուած է երկու գլուխներու, որոնց կցուած է պահպանուած դեղանկարչական աշխատանքներու մատենագիտական ցանկ մը։

Առաջին գլխուն մէջ հեղինակը կ'անդրադառնայ այն գաղութներուն, ուր հայերը ունեցած են նաեւ դեղարուեստական այլազան գործունէութիւններ, մասնաւորաբար կեդրոնանալով Նոր Ջուղայի, Լվովի, Հռոմի, Երուսաղէմի, Եգիպտոսի, Հալէպի եւ Պոլսոյ գաղթօճախներուն վրայ։

Նոր Ջուղայի նուիրուած բաժնին մէջ Ղազարեան առանձին ուսումնասիրութեան առարկայ դարձուցած է նկարիչ Մինասը, Ցովհաննէս Մրքուզը եւ Պոկտան Սալթանովը։

Մանիա Ղազարեան աւելի ճշդրիտ նկարագիրը գծելու համար խնդրոյ առարկայ հայ նկարիչներուն եւ շրջանի արուեստին՝ կ'ընէ պատմական ակնարկը այդ դաղութի կազմութեան, եւ անոր ունեցած ազդեցութեան՝ պարսկական մշակութային կեանքին վրայ, մանաւանդ երբ արդարացիօրէն կը չեշտուի թէ Նոր Ջուղան հանդիսման վայր էր տեղական, արեւմտեան, եւ արեւելեան այլազան մշակութային ազդեցութիւններու։ Այս եռուն միջավայրին մէջ ծնունդ կ'առնէ նկարչական վաւերական դպրոց մը, որուն առաջին «փրոֆեսիոնալ» նկարիչը կը դառնայ անուանի Մինասը։

Բազմակողմանի յատկութիւններ ունեցող կղերական Ցովհաննէս Մրքուզի զեղանկարչական գործունէութիւնը ներկայացնելէ ետք՝ Ղազարեան կ'անցնի կարգ մը անյայտ եւ նուազ յայտնի նկարիչներու գործերու քննարկման, ինչպէս նաեւ այն գործերուն, որոնք զարդարած են Նոր Ջուղայի հայ խոջաներու ապարանքները։

Մօտ 47 էջերու մէջ Մանիա Ղազարեան բծախնդիր կերպով կու տայ պատկերը Պոկտան Սալթանովի արուեստին, նոր Ջուղայեցի այն վարպետին, որ իր բազմակողմանի տաղանդով ու զեղարուեստական գործունէութեամբ հիմնական դեր խաղացած է ռուսական զեղանկարչական դպրոցի հիմնադրման մէջ՝ մի քանի տասնամեակներ Ռուսաստանի մէջ աշխատած մինչոյն։

Երկրորդ գլուխին մէջ հեղինակը կ'անցնի ուղղակի Հայաստանի հողին վրայ ծաղկած նկարչութեան, ու Սահմաններուս Լեհացիի վրայ կեդրոնանալէ ետք, առանձին ստորաբաժանումներով կը ներկայացնէ Ցովնաթանեան նշանաւոր տոհմի արուեստագէտները, ի միջի այլոց քննարկելով այն ազդեցութիւնները, որ անոնք ունեցած են այլ եւ այլ նկարիչներու վրայ, որոնք աշխատած ու ստեղծագործած են այդ թուականներուն։

Գիրքի վերջաւորութեան, մի քանի էջերու մէջ, Ղազարեան եզրափակիչ ամփոփումով կը կենդրադառնայ 17–րդ եւ 18–րդ դարերու Հայաստանի եւ շարք մը դաղութներու մէջ հայկական արուեստի երեւոյթներուն եւ հիմնական հանդրուաններուն։

Հատորի ընթերցումէն ի յայտ կու գայ թէ Ղազարեան մանրակրկիտ զննումի, դատումի եւ վերլուծման ենթարկած է հայ կերպարուեստի վարպետներու կեանքը, անոնց գործունէութեան ընթացքը եւ ստեղծագործութիւնները. այս իսկ պատճառով անոր

տուած տեղեկութիւնները թանկարժէք են, ու անհրաժեշտ աղբիւր մը կը կազմեն անոր, որ կ'ուզէ յստակ գաղափար մը ունենալ հայկական դեղանկարչական զարթօնքի շրջանին մասին։

Հակառակ որ բազմաթիւ նկարչական գործեր անհետացած են, պարապայ մը որ մեծ դժուարութիւններ կը ստեղծէ շրջանի մը եւ կամ արուեստագէտի մը դեղարուեստական զարգացումն ու ստեղծագործական հանգրուանները հարազատօրէն գծել չնայացող արուեստաբանին համար՝ Մանիա Ղազարեան, ըստ երեւոյթին, բաւական մանրակրկիտ աշխատանքներէ ետք, կրցած է հետաքրքրական տըւեալներու ու եզրակացութեանց հասնիլ արուեստագէտներ՝ Պոկտան Սալթանովի, Յովնաթանեաններու եւ Հաննա (Յովհաննէս) Երուսաղէմացիի պարագային։

Հակառակ իր կարգ մը թերութիւններուն, – տարեթիւի սխալ, վերատպութիւններու անթուագրութիւն (ինչ որ արգելք կը հանդիսանայ անմիջական կապը գտնել անոնց եւ թեքստին միջեւ), վերարտադրութիւններու անբաւարար յստակութիւն՝ երբ Սալթանովի գործերը իրարմէ կը բաժնուին այլ վարպետներու նկարներով –, գիրքը խիստ հետաքրքրական է եւ ուսանելի։ Աշխատասրութիւնը մեզ կը տանի դեղարուեստական նոր աշխարհ մը, որ մեզի կը ներկայացուի իր բոլոր ճիւղաւորումներով եւ անմիջական նկարագիրով։ Սակայն հատորին հմայքը պիտի բազմապատկուէր եթէ ան ձեւաւորուէր, տպագրուէր եւ կազմուէր այնպէս՝ ինչպէս այլ դեղարուեստական բարձրորակ հատորներ, որոնք վերջերս լոյս տեսած են Ս. Մխիթեան մէջ։

Ա. ՊԵՐԵՃԻՔԼԵԱՆ

Մահագրութիւն



Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՃԱՆԱՇԵԱՆ

(1908 – 1974)

Հայր Մեսրոպ Վրդ. Ճանաչեան, աւազանի անունով Պետրոս, ծնած է Մնջքարա, 1908 թ.ի Յունուարի 11–ին: 1919 թ.ի Հոկտ.ին կ'անցնի Վենետիկ, եւ նոյն թուականի Նոյեմբերին կը հագնի վանական աշակերտի սքեմը: Քանի տարեկան հասակին կ'անդամակցի Մխիթարեան Միաբանութեան: Իմաստասիրութեան ու աստուածաբանութեան գծով համալսարանական իր ուսումը Հռոմի մէջ աւարտելէ ետք, 1934 թ.ին կը ստանայ քահանայական ձեռնադրութիւն: 1937–1939 թթ.ուն կը հետեւի Սորպոնի համեմատական գրականու–

թեան դասընթացքներուն։ 1939–1942 ԹԹ.ուն կը վարէ Մուրատ Ռափայէլեանի ուսումնապետի, եւ ապա՝ 1950–1952 տարիներուն, տեսուչի պաշտօնը։ Երկար տարիներ՝ 1942–1952, 1953–1956 եւ 1970–1973 կը վարէ «Բազմավէպ»ի խմբագրութիւնը, իսկ 1959–1969՝ տպարանի տեսչութիւնը։ Կը հիմնէ «Հայ Ընտանիք»ը, որուն խմբագրութիւնն ալ կը վարէ 1970–1973 ԹԹ.։

Ամբողջ կեանք մը նուիրուած կրթական, խմբագրական ու հրատարակչական աշխատանքներու, որոնց առընթեր Հայր Մեսրոպ Վրդ. Ճանաչեան հաւատարմօրէն կը ծառայէ հայ կիր ու բանին, գեղարուեստական ըրականութեան ու թարգմանչական աշխատանքներու հետ միատեղ ստորագրելով ըրականապիտական ու պատմաբանասիրական աշխատասիրութիւններ։ «Բազմավէպ»ի, «Գեղուհի»ի եւ «Հայ Ընտանիք»ի մէջ հրատարակած իր բազմաթիւ ուսումնասիրութիւններէն անկախ, առանձին հատորներով լոյս կ'ընծայէ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, Ա. հար., (1701–1900), Վենետիկ, Ս. Ղազար, 1953, ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (1701–1920), Վենետիկ, Ս. Ղազար, 1973։ ՍԱՁԵԱՓ–ՆՈՎԱ, Վենետիկ, Ս. Ղազար, 1964։ ԴԱՒԻԹ ԿԻՒՐԱՊԱՂԱՏ, Վենետիկ, Ս. Ղազար, 1973, եւլն. (Մատենագիտական ամբողջական ցանկին համար տես՝ «Բազմավէպ», 1974, թիւ 1–2, էջ 32–47)։

Հայր Մեսրոպ Վրդ. Ճանաչեան կը վախճանի 1974 Թ.ի Ապրիլի 13–ին։




ԼՈՒԻԶ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Լուիզ Նալպանտեան ծնած է ԱՄՆ։ 1959 թ.-ին Սթանֆորտ համալսարանէն կը ստանայ Դոկտոր Փիլիսոփայութեան Պատմական Գիտութիւններու դիտական աստիճանը։ Ապա՝ որպէս դասախօս կը պաշտօնավարէ Գալիֆորնիոյ Լոս Անճելըսի Համալսարանին մէջ, դասաւանդելով հայագիտական առարկաներ, ուր նաեւ կը կազմակերպէ Հայագիտական Ուսմանց ծրագիրը մը։ 1964 թ.-էն սկսեալ մինչեւ ինքնաչարժի արկածով իր կանխահաս մահը, Լ. Նալպանտեան կը դասախօսէ Ֆրեզնոյի Գալիֆորնիոյ Պետական Համալսարանին մէջ, ուր միաժամանակ կը վարէ Հայագիտական Ուսմանց Ամբիոնը, որուն կազմակերպման մէջ մեծ դեր կը խաղայ ան։

Որպէս պատմաբան, Դոկտ. Լ. Նալպանտեան իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ հայ ժողովուրդի նոր շրջանի պատմութեան վրայ։ 1963 թ.-ին, անգլերէն լեզուով կը հրատարակէ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ, որ կը վերահրատարակուի 1967 թ.-ին։ Վերջին տարիներուն ան լծուած էր պատրաստութեանը նոր աշխատասիրութեան մը՝ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ, ԾՆՈՒՆԴ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ (1887–1907)։

Լուիզ Նալպանտեան կը մահանայ 1974 թ.-ի Դեկտ.-ի 2-ին։



ՕՆՆԻԿ ԱԻԵՏԻՍԵԱՆ

(1898 – 1974)

Օննիկ Աւետիսեան ծնած է Պրուսա, 1898 թ·ի Նոյ·ի 20–ին։ Կ. Պոլսոյ մէջ միջնակարգ ուսումը ստանալէ ետք, 1921–1925 թթ·ուն կը հետեւի Վիեննայի «Կրաֆիկ Արուեստի Դպրոց»ի նկարչութեան ու քանդակագործութեան դասընթացքներուն։ 1925 թ·ին կը մեկնի Հռոմ, որուն Գեղարուեստական Ակադեմիայի ընթացքը կ'աւարտէ 1927 թ·ին։ Որպէս ուսուցիչ ան կը պաշտօնավարէ Գահիրէի «Ազգային Նուպարեան» եւ «Պէրպէրեան» վարժարաններուն (1929–1934 թթ·) եւ Կիպրոսի «Մելքոնեան Կրթական Հաստատութեան» (1936–1941 թթ·) մէջ։

Որպէս նկարիչ ու քանդակագործ, ստեղծագործական իր աշխատանքներուն առընթեր, Օննիկ Աւետիսեան կը լծուի հայկական տպագրական տառատեսակները բարեփոխելու գործին, ինչպէս նաեւ հայկական նկարչութեան ու քանդակագործութեան ուսումնասիրութեան։ Վերոյիշեալ զոյգ աշխարհներու ճամբով ան կը հրատարակէ ՓՈՐՁ ՄԸ ՀԱՅ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, (Գահիրէ, 1946), եւ Ֆրանսերէն լեզուով՝ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ ՈՒ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐ (Գահիրէ, 1959) չքեղ հատորը։

Օննիկ Աւետիսեան կը մեռնի 1974 թ·ի Նոյ·ի 23–ին։



ԳԷՈՐԳ ԵՐԵԻԱՆԵԱՆ

(1900 – 1974)

Գէորգ Երեւանեան ծնած է 1900 թ·ին, Բերրի։ Իր նախակրթութիւնը կը ստանայ Միացեալ Ընկերութեան վարժարանին մէջ։ Համաչխարհային Ա· Պատերազմին ստեղծած աղիտալի տարինեըուն ստիպումով ան կը զրկուի բարձրագոյն ուսման կարելիութենէն, թէեւ իր ամբողջ կեանքի ընթացքին ան կը մնայ հայ գիրի ու գիրքի հաւատաւոր մը, եւ ինքնազարգացումով կը յաջողի ձեռք բերել գրական ու պատմագրական ճաշակ ու պաշար։ Աքսորի ու հալածանքի տարիներէն ետք նախ կ'ապաստանի Հալէպ, ապա՝ Դամասկոս, ուր կէ, 1925 թ·ին վերջնականօրէն կը տեղափոխուի Պէյրութ, ուր կը զբաղի առեւտուրով։ Սփիւռքի տարածքին, հայրենակցական միութիւններու կողմէ հրատարակուած հայկական քաղաքներու ու գաւառներու նուիրուած պատմագրական ու տեղագրական աշխատասիրութիւնները կը խանդավառեն զինք ձեռնարկելու իր ծննդավայրին՝ Ծուփաց Աչխարհի Զարսանճազ գաւառի պատմութիւնը գրի առնելու, զոր կ'իրականացնէ նախանձախնդրութեամբ։ Համա–Զարսանճազի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան հրատարակութեամբ, Գ· Երեւանեանի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶԱՐՍԱՆՃԱԳԻ ՀԱՅՈՑ հատորը լոյս կը տեսնէ 1956 թ·ին, Պէյրութ։

Գէորգ Երեւանեան կը մեռնի 1974 թ·ի Ապրիլի 7–ին։

ԽՄԲ·

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Էջ

ԶԱԻԷՆ ՄՍԵՐԼԵԱՆ
Հայկական Հարցի Հոլովոյթը 1921 թ·ի Լոնտոնի եւ Մոսկուայի խորհրդաժողովներուն 9

ԶՕՐ· Ա· ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ
Հայկական Լեգէոնը Պատմական, Իրաւական ու Քաղաքական Հարցերու Լոյսին Տակ եւ Վաւերագրեր 39

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ, ՄՈՒՐԱՏ ՀԱՍՐԱԹԵԱՆ
Գանձասարի Վանքը 91

ՇԱՀԷ ՏԷՐ–ԳԷՈՐԳԵԱՆ
Հայ եւ Ռուս Գիտնականներուն Կարծիքները Հայաստանի եւ Սիբիրայի Վաղ Քրիստոնէական (Դ–Է· դդ·) Ճարտարապետութեան Առնչութիւնների Հարցի Շուրջ 125

ՊԵՐՃ ՍԱՊՊԱՂԵԱՆ
Հայ–Արաբական Դրամագիտութեան Մէկ Քանի Հարցերու Շուրջ 161

Լ· Գ· ՄԻՆԱՍԵԱՆ
Համառօտ Ակնարկ Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի Շրջափակում Գտնուող Տապանաքարերի Վրայ 183

ԱՒԵՏԻՍ Գ· ՍԱՆՃԵԱՆ
Միջնադարեան Երեք Անտիպ Տաղեր 199

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՑԵԱՆ
Յովհան Մայրագոմեցի՝ Միջնադարու Մեծ Ճառագիրը 213

էջ

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Արփիար Արփիարեանի Լեզուական Հայեացքներն ու Բառապաշարը 225

ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ

Վեր. Եղիա Ս. Քասունի 249

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կը Գրախօսեն՝ Հ. Բարքիկեան, Գ. Գասապեան, Ժ. Դանիէլեան, Պ. Ադպաշեան, Ա. Պերեճիէլեան 255

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ 287

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 293

CONTENT

Page

ZAVEN MESSERLIAN

The Armenian Question in the Conferences of London and Moscow in the Year 1921 9

GEN. A. KARAMANOUKIAN

The Armenian Legion 39

PAKRAD OULOUPAPIAN, MOURAD M. HASRATIAN

The Monastery of Kandzassar 91

SHAHE DER-KEVORKIAN

Armenian and Russian Authorities on the Question of the Correlation of Armenian and Syrian Architecture of 4-7th centuries 125

BERJ SABBAGHIAN

Some Questions Regarding Armeno-Arab Numismatics 161

L.K. MINASSIAN

The Tombstones in the Courtyard of New Julfa's All-Saviour Monastery 183

AVEDIS K. SANJIAN

Three Unpublished Medieval Armenian Poems 199

MINAS KOJAYIAN

Hovhan Mairagometsi: A Great Medieval Homilist 213

Page

BAROUYR AGHBASHIAN

The Vocabulary of Arpiar Arpiarian 225

YERVANT H. KASSOUNY

Rev. Yeghia S. Kassouny 249

ARMENOLOGICAL PUBLICATIONS

Reviewed by :

H. Partiguian, K. Kassabian, J. Tanielian,

A. Aghbashian, A. Berejiklian 255

NECROLOGY 287

CONTENT 295

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՏՊԱՔԱՆԱԿ՝ 500

ԳԻՆ Լիբանան 15 Լ· Ոսկի
Արտասահման 8 Տոլար

ՀԱՍՑԷ HAIGAZIAN ARM. REVIEW
HAIGAZIAN COLLEGE
P. O. Box 1748
BEIRUT, LEBANON

Տպարան ԱՏԼԱՍ — Նամակատուփ 2745 — Պէյրութ, Լիբանան
PRINTED IN LEBANON ATLAS PRESS

هَايْكَازيان

مَجَلة الدّراسَات الارمنيَة

بـــيروت ١٩٧٤